

902.6

Z-24

Հ Ա Յ Ա Գ Ի Տ Ա Կ Ա Ն
Հ Ե Տ Ա Ջ Ո Ս Ո Ւ Ռ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

Ա



АРМЕНОВЕДЧЕСКИЕ
ИССЛЕДОВАНИЯ

ВЫПУСК
I

902.6 (7uy)

Հ Ա Յ Ա Գ Ի Ի Տ Ա Կ Ա Ն
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

620

ՊՐԱԿ
Ա



ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԽՈՒՄԲ՝

Կ. Գ. ՂԱՖԱԴԱՐՅԱՆ, Ա. Գ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ,
Հ. Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ, Տ. Ա. ԽԱԶԱՏՐՅԱՆ, ՅՈՒ. Ի. ՄԿՐՏՈՒՄՅԱՆ,
Պ. Մ. ՄՈՒՐԱԴՅԱՆ


РЕДАКЦИОННАЯ КОЛЛЕГИЯ:

К. Г. КАФАДАРЯН, А. Г. АБРАМЯН, А. А. ПЕТРОСЯН,
Т. С. ХАЧАТРЯН, Ю. И. МКРТУМЯН, П. М. МУРАДЯН

Պրակի խմբագիր՝ Պ. Մ. ՄՈՒՐԱԴՅԱՆ
Редактор выпуска П. М. МУРАДЯН

$\frac{704-73-33}{1-6-4}$ 23-73

© Издательство Ереванского
университета, 1973 г.



Ե Ր Կ Ո Ւ Խ Ո Ս Ք

Առաջարկվող հայագիտական ուսումնասիրությունների ժողովածուն Երևանի պետական համալսարանի հնագիտության, աղբյուրագիտության և ազգագրության ամբիոնի անդրանիկ հրատարակումներից է: Նրանում գերազանցապես ամփոփված են 1971 թվականի դեկտեմբերի 8—9-ին կայացած և ակադեմիկոս Հ. Ա. Օրբելու հիշատակին նվիրված գիտական նստաշրջանի նյութերը՝ անհրաժեշտ որոշ լրացումներով: Հրատարակվող ուսումնասիրություններն ընտրելիս նկատի են առնվել հայագիտության այսօրվա առաջադրած խնդիրները՝ անցյալի դասական հայագետների ժառանգության պատշաճ գնահատություն, նրանց գիտական անտիպ հետազոտությունների հրատարակում, մատենագրական ու հնագիտական նորահայտ նյութերի ուսումնասիրություն, տեղեկատվություն ընթացիկ պեղումների արդյունքների վերաբերյալ, գիտական լայն հետաքրքրություն ներկայացնող բնագրերի տրւպագրություն, այլազան աղբյուրների նոր մեկնաբանություններ ու ճշգրտումներ և այլն:

Կարծում ենք, աղբյուրագիտական, հնագիտական ու ազգագրական ուսումնասիրությունների համադիր տպագրությունը կնպաստի հայագիտության տարբեր բնագավառներում կատարվող հետազոտական աշխատանքների առավել ամբողջական պատկերացմանը: Ժողովածուի բնույթը հիմնականում պայմանավորված է ամբիոնում տարվող գիտական աշխատանքների փաստական վիճակով: Հետագայում, թերևս, հնարավոր կգիտվի և նյութերի նեղ-թեմատիկ հրատարակություն՝ առանձին պրակներ հատկացնելով հարցերի որոշ խմբի:

Ամբիոնի համոզմամբ, սույն ժողովածուն նշանակալի նորություն է բերում՝ ընդհանուր հայագիտական-արևելագիտական քիչ կամ ամենևին չուսումնասիրված խնդիրներ արծարծելով, ինչպես նաև՝ վիճաբանական ու մատենագրական բնագրեր հրատարակելով:

ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ, ԱՂԲՅՈՒՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ
ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

Կ. Գ. ՂԱՏԱԳԱՐՅԱՆ

Հ Ո Վ Ս Ե Փ Օ Ր Բ Ե Լ Ի

20-րդ դարի աշխարհի մեծ գիտնականների շարքում իր առանձնահատուկ տեղն ունի սովետական ականավոր գիտնական, հայ ժողովրդի զավակ Հովսեփ Աբգարի Օրբելին, որի գիտական գործունեությունը և սխրանքներով լի կյանքը շատ ուսանելի կողմեր ունեն մեզ համար:

Ամենից առաջ նշենք, որ Հովսեփ Օրբելին իր աշխատանքի շորս պատերի մեջ պարփակված, ինչպես ասում են, կաբինետային գիտնական չէր: Նա ծայրահեղ անհանգիստ և հետաքրքրասեր մարդ էր, ամեն ինչ մանրամասնորեն գիտենալու, իր աչքերով տեսնելու ձգտում ուներ: Գուցե այդ էր պատճառը, որ կիզիչ արևի տակ, քամու, անձրևի ներքո էր գրում իր աշխատությունները՝ Հայաստանի մեռած քաղաքներում, ավերակ վանքերում և դամբանադաշտերում, այնտեղ էլ քննական բովից անցկացնում հավաքած նյութերը և կազմում ծանրակշիռ եզրահանգումներ: Միայն այդ բոլորից հետո վերադառնում էր իր աշխատանքը՝ ուսումնասիրության լեզուն ու մտքերը շտկելու և հրատարակության պատրաստելու համար: Այդ նույն աշխատության համար նա կրկին ու կրկին այցելության էր գնում նույն վայրը՝ ստուգելու այս կամ այն փոքրիկ մանրամասնությունը, որի մասին կասկածել էր իր աշխատանքում: Շատ անգամ վիճակական արձանագրությունների մեկ ելուստի կամ գրի մի ստեղծի գիրքը ճշտելու համար նա մեծ տարածություններ էր անցնում՝ տեղում ստուգումներ կատարելու նպատակով:

2. Օրբելու բնավորության բնորոշ գծերից մեկն էլ այն էր, որ նա մեկուսացված չէր կատարում իր ուսումնասիրությունները: Որտեղ էլ լիներ և ինչով էլ զբաղվեր, նրա շուրջն էին հավաքվում երիտասարդ ու տարեց գիտնականներ, լսում նրա խոսքը և հետաքրքրությամբ մասնակից դառնում նրա ձեռնարկած նոր գործին: Հովսեփ Օրբելին անգերազանցելի կազմակերպիչ էր և ձևերից գործիչ:

Հովսեփ Օրբելին Սովետական Միության մեջ թանգարանային գործի մեծագույն գիտակ էր: Առաջինը նա կարողացավ աշխարհին ցույց տալ, որ ոչ միայն լավ գրված գրքերի միջոցով կարելի է քննարկման դնել և լուծել մշակույթի և պատմության գիտական առեղծվածները, այլ այդ նույն խնդիրները կարելի է լուծել թանգարանային ցուցահանդեսի միջոցով: Սովետական Միության, ինչպես նաև շատ այլ երկրների թանգարաններ այսօր կիրառում են Հովսեփ Օրբելու հիմնադրած, մեր կարծիքով, միակ ճիշտ մեթոդը՝ իրենց

ընդգրկած տեղի և ժամանակի մշակույթն ու պատմությունը, անցյալի հերոսական դրվագները լուսաբանելու համար:

Օրբելին շատ էր սիրում արվեստի, պատմության, ազգագրության հետ առնչվող նյութական մշակույթի մնացորդները, ուրիշ խոսքով՝ թանգարանային առարկաները: Հաճախ ինքն իր ձեռքով էր մաքրում, շտկում, ամբողջացնում այդ առարկաները, խոսում էր նրանց հետ ճիշտ այնպես, ինչպես մայրը խոսում է իր դեռևս ոչինչ չհասկացող երեխայի հետ:

Հովսեփ Օրբելին Արևելքի ժողովուրդներին վերաբերող միջազգային մեծ գիտաժողովների մշտական կազմակերպիչն ու զլխավոր անձնավորությունն էր Սովետական Միության մեջ:

Սովորաբար մեծ գիտնականներից շատերը ցրված մարդիկ են լինում, իրենց մասնագիտությունից դուրս ոչ մի բանով չեն հետաքրքրվում, անգամ կյանքի տոբոյային անտեղյակ են լինում և կենցաղում ուրիշների խնամքին ենթարկվում: Այդպես չէր Օրբելին: Նա կյանքի մարդ էր. իր ուժեղ բնավորությամբ՝ ամեն տեղ իշխողն ինքն էր լինում, և բոլորը սիրով ենթարկվում էին նրա բարի կամքին: Նա մեծ, կարելի է ասել, ահավոր հիշողություն ուներ: Բավական էր որ մեկին մի անգամ տեսներ, այլևս երբեք չէր մոռանա նրան: Բոլորին գիտեր անունով, հայրանունով, գիտեր պաշտոնը, գործը, ծանոթ էր բնավորության գծերին, անգամ ընտանեկան գործերին:

Օրբելին շիտակ մարդ էր և շատ բարի, բայց ինչքան որ բարի էր, նույնքան էլ խիստ: Չէր սիրում կեղծավորներին, բծնողներին և թուլամորթներին: Անսահման սիրում էր իր աշակերտներին և շրջապատի մարդկանց: Ուրախանում էր նրանց հաջողակ քայլերով և տխրում անհաջողությունների համար: Չէր սիրում մեծամիտներին, լինելին և քրիտասարդ թե տիտղոսավոր տարեց մարդիկ, հեռանում էր նրանցից:

2. Օրբելին մեծ հայրենասեր էր, ամբողջովին հայրենական գիտությունը նվիրված. նա միշտ գլուխը բարձր էր պահում Արևմտյան Եվրոպայի գիտնականների առաջ, սիրելով Արևելքը, նրա ճնշված ժողովուրդներին, նրա տաղանդներին:

Օրբելին խոսքի մեծ վարպետ էր, իսկական հռետոր: Նրա ելույթները միշտ զարդարված էին լինում թևավոր խոսքերով, գեղեցիկ օրինակներով և սրամտություններով: Նրա գեղեցիկ և լավ առողանությամբ ռուսերենը բոլորին հիացնում էր: Ավելի հաճելի էին զեկուցումների, դասախոսությունների մեջ գրաբար կամ մոկաց հայերենով մեջբերումները՝ բարբառային կատարյալ արտասանությամբ:

Էրմիտաժում լույս տեսնող գրեթե բոլոր գրքերը, Օրբելու ղեկավարության շրջանում, ինքն էր խմբագրում, նրա կատարած փոփոխությունները հեղինակները համարում էին անվիճելի և ընդունում էին անվերապահորեն: Այստեղ տեղին է նշել, թե ինչքան մարդկանց նա լավ գրքերի տեր է դարձրել:

Հովսեփ Օրբելին ռուսների և հայերի, ինչպես նաև Կովկասի ժողովուրդների բարեկամության գաղափարակիրն էր: Եվ երբ գործը վերաբերում էր Անդրկովկասի ժողովուրդների դարավոր բարեկամությանը, առաջին խոսքը

միշտ տրվում էր Օրբելուն: Հովսեփ Օրբելին քաջատեղյակ էր վրաց, Աղ-վանք-Աղբրեջանի պատմությանն ու մշակույթին, գրեթե հայերենին հավասար շարժում: Քաջածանոթ էր նաև իրանյան մշակույթին և շատ այլ արևելյան և արևմտյան մշակույթներին: Նա միջնադարյան Արևելքի և նրա ժողովուրդների խոշորագույն գիտակ անձնավորությունն էր, թեև առաջին տեղը միշտ վերապահում էր հայագիտությանը: Հովսեփ Օրբելին առաջին հերթին հայագետ էր և աշխարհին ծանոթ արևելագետ, որի ուսումնասիրած Արևելքի կենտրոնը միշտ եղել է Հայաստանն իր բազմադարյան մշակույթով:

* * *

Հովսեփ Օրբելին ծնվել է 1887 թվականի մարտի 8-ին (նոր տոմարով մարտի 21-ին) Վրաստանի Քուլթայիս նահանգային քաղաքում, նշանավոր հայ ընտանիքում: Պապը՝ Հովսեփ ավագ քահանա Օրբելին, իր ժամանակի ճանաչված մարդկանցից մեկն էր: Ավարտելով կազարյան ճեմարանը, նա հայկական դպրոցներում ուսուցիչ էր և հեղինակ դպրոցական կրոնուսույց դասագրքի:

Հայրը՝ Աբգարը, դարձյալ իր ժամանակի ճանաչված մարդկանցից էր: Նա ավարտել էր Պետերբուրգի համալսարանի իրավաբանական ֆակուլտետը՝ իրավագիտության թեկնածուի աստիճանով: Աբգարն ունեցել է երեք որդի, որոնց բոլորին էլ բարձրագույն կրթության է տվել: Մեծը՝ Ռուբենը ավարտել է Պետերբուրգի համալսարանի իրավագիտության ֆակուլտետը, բայց հետագայում զբաղվել ստորջրյա հնագիտությամբ և հնագիտության այդ ճյուղի հիմնադիրներից մեկը դարձել Սովետական Միությունում: Նա վախճանվել է 1943 թվականին:

Միջնեկը՝ Լևոնը, ֆիզիոլոգ էր, ակադեմիկոս և երկար տարիներ ղեկավարեց գիտության այդ բնագավառը մեղանում: Վախճանվեց 1958 թվականին: Նա հիմնադիր անդամ էր նաև Հայաստանի գիտությունների ակադեմիայի: Նրա աշակերտների և հետևորդների թվում կային անվանի հայ ֆիզիոլոգներ:

Կրտսերը Հովսեփն էր:

Հովսեփի մայրը՝ Վարվառան, Թիֆլիսի աչքի ընկնող մտավորական հայ կանանցից մեկն էր, ծնված Երկայնաբազուկ-Արղույանների իշխանական ընտանիքում: Նա Թիֆլիսում ֆրանսերենի ուսուցչուհի էր և հասարակական գործիչ: Նշել է Թիֆլիսի քաղաքային խորհրդի անդամ:

Օրբելին 1904 թվականին ավարտել է Թիֆլիսի ռեալական միջնակարգ դպրոցը և նույն տարին ընդունվել Պետերբուրգի համալսարանի պատմա-բանասիրական ֆակուլտետը: Համալսարանում նա լսել է և մտերմացել շատ նշանավոր գիտնականների՝ Ս. Ա. Ժեբելյովին, Մ. Ի. Ռոստովցևին, Ֆ. Ֆ. Զելինսկուն, Բ. Վ. Ֆարմակովսկուն, Վ. Ա. Ժուկովսկուն, Վ. Վ. Բարտոլդին: Սակայն ամենից շատ մտերմացավ Յակով Սմիրնովի, Նիկոլայոս Ադոնցի և մանավանդ՝ Նիկոլայոս Մառի հետ: Վերջինիս նկատմամբ Օրբելու հարգանքը պաշտամունքի էր հասնում: Իր ելույթներում կամ մասնավոր զրույցների ժամանակ Հովսեփ Օրբելին Մառին հաճախ էր հիշատակում, օրինակներ էր բերում

նրա գործերից: Շատ անգամ անունն էլ չէր տալիս, այլ ասում էր «Իմ հանգուցյալ ուսուցիչն ասում էր, թե...» («Мой покойный учитель говорил...») և ուրորը հասկանում էին, որ խոսքը Մառի մասին է:

1911 թվականին Օրբելին արդեն ավարտել էր համալսարանի երկու ֆակուլտետները՝ պատմա-բանասիրականը, որտեղ սովորել էր արևմտյան կլասիկ երկրների լեզուն ու մշակույթը, և արևելյան լեզուներինը, որտեղ հայ-վրացական բանասիրության հետ միասին ուսումնասիրել էր իրանյան, արաբական, միջինասիական լեզուներն ու մշակույթը:

* * *

Հ. Օրբելին գիտության խնդիրներով զբաղվել է համալսարանի ուսանողական նստարանից սկսած: Իր պրոֆեսորների հանձնարարությամբ, ուսանողական տարիներին Բրոկհաուզ-Նիֆոնի «Նոր հանրագիտական բառարանի» համար նա գրեց «Հայկական արվեստ», «Վրացական արվեստ», «Մուսուլմանական արվեստ» ծավալուն հոդվածները: Նույն տարիներին նա գրեց նաև այլ աշխատություններ: Դրանցից մեկը նվիրված էր մի դաշույնի նեֆրիտե երախակալին, որի վրա հայերեն արձանագրություն կար, մյուսը՝ Խաչենի իշխան Հասան-Ջալալին, որ և դարձավ Օրբելու ավարտական շարադրությունը: Այդ երկուսն էլ տպագրված են Ռուսաստանի գիտ. ակադեմիայի տեղեկագրում (1909 թ.): Նույն տարիներին Օրբելին գրեց նաև «Կովկասի ազգագրությունն ըստ անտիկ հեղինակների տեղեկությունների» աշխատությունը, որ, ղժբախտաբար, անտիպ մնաց:

Ավարտելուց հետո, Ն. Մառի պահանջով ու հանձնարարությամբ, Օրբելուն համալսարանում պահեցին, և նրա առաջ գիտական գործունեության լայն ասպարեզ բացվեց: Շնորհիվ իր տաղանդի, եռանդի, ստացած կրթության, առանց մեծ դժվարությունների հաջորդաբար նվաճեց գիտության բարձունքները, ղեկավարեց գիտական մեծ հաստատություններ, արժանացավ տիտղոսների և պետական բարձր պարգևների: Թվե՛նք դրանցից մի քանի կարևորները.

1912 թ. ընտրվեց Ռուսական Հնագիտական ընկերության անդամ Պետերբուրգում:

1913 թ. հանձնեց մագիստրոսական քննություններ Պետերբուրգի համալսարանում:

1914 թ. նշանակվեց Պետերբուրգի համալսարանի պրիվատ-դոցենտ:

1917 թ. պրոֆեսորի պաշտոն ստացավ կազարյան ճեմարանում:

1918 թ. ընտրվեց Մոսկվայի հնագիտական ընկերության իսկական անդամ:

1919 թ. նշանակվեց Պետրոգրադի համալսարանի արևելյան արվեստների պատմության ամբիոնի պրոֆեսոր: Նույն թվականին հաստատվեց Մառի

* Աշխատությունն այժմ պատրաստված է հրատարակության և լույս կտեսնի «Հայագիտական հետազոտությունների» հաջորդ պրակում: Խմբ.:

հիմնադրած նյութական կուլտուրայի պատմության պետական ակադեմիայի իսկական անդամ:

1920 թ. նշանակվեց Պետական էրմիտաժի Կովկասի, Իրանի և Միջին Ասիայի բաժնի վարիչ: 1926 թ. նա կազմակերպեց Արևելյան մեծ բաժինը և եղավ նրա վարիչը:

1924 թ. ընտրվեց ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ, իսկ 1935-ին՝ իսկական անդամ:

1940 թ. ընտրվեց ՍՍՀՄ ճարտարապետության ակադեմիայի իսկական անդամ:

Օրբելին պատիվների է արժանացել նաև արտասահմանյան գիտական հաստատություններում. նա 1944 թ. ընտրվեց հնագետների լոնդոնյան ընկերության պատվավոր անդամ, իսկ 1945 թվականին՝ Իրանի գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ:

* * *

Մի քանի խոսք Հովսեփ Օրբելու գիտական աշխատությունների մասին: Շատերը Օրբելուն ճանաչում են միայն նրա տպագիր գործերով և կարծում են, որ նա քիչ բան է գրել: Ինչ խոսք, Օրբելու կենդանության օրով քիչ բան էր տպագրվել նրա աշխատություններից, բայց մոտիկից նրան ճանաչողները գիտեին, որ նա քիչ չի գրել: Նա շատ է գրել, բայց քիչ տպագրել: Հարցն այն է, որ Օրբելին ուներ ավարտած և կիսատ մնացած բազմաթիվ աշխատություններ, որոնք պահվում էին նրա ղիվանում: Նա տրամադրության մարդ էր: Հաճախ ոգևորվում էր գիտական որևէ հարցով, ամեն ինչ մոռացած՝ միայն այդ գործին էր նվիրվում, բայց երբեմն, չավարտած այդ աշխատանքը, ընդհատում էր և նույն ոգևորությամբ մի այլ ուսումնասիրություն սկսում: Ավարտած աշխատություններն էլ նա մոռացության էր տալիս, բոլորովին հոգ չէր տանում տպագրելու մասին, և պատրաստ գործերը տասնյակ տարիներ մնում էին ձեռագիր վիճակում: Երբեմն էլ իր պատրաստ աշխատությունները հետագայում տալիս էր ուրիշներին օգտագործելու, նրանց միջից նյութեր քաղելու համար:

Հնագետների շրջանում տպագիր աշխատության չափ հայտնի է Օրբելու՝ Անիի սեղեմանների ուսումնասիրությանը նվիրած պատրաստ գործը, որ նա գրել է անիական տարիների, Հոկտեմբերյան հեղափոխությունից շատ առաջ: Դա մի կարևոր ուսումնասիրություն է առեղծվածային ձևով հաստատեցի անոթների մասին, որ մինչև օրս անտիպ է, բայց բազմաթիվ այլ հեղինակներ Օրբելու այդ գործից մեջբերումներ են կատարում և իրենց տեսակետները հիմնում են նրա եզրահանգումների վրա:

Հայտնի է մուսուլմանական հիջրայի տոմարի վերաբերյալ Հովսեփ Օրբելու կազմած համադրական տախտակների գիրքը, որով հնարավոր է հիջրայի տոմարի յուրաքանչյուր ամսի մեկը համադրել մեր տոմարի ամիսների ճիշտ օրերի հետ, հիջրայի առաջին տարեթվից մինչև 1400 թվականը (մերով՝ 622-ից մինչև 1980 թվականը):

Այժմ հայկական մեծ տոմարով ճիշտ հաշիվներ անելը դժվար է, այժմյանի փոխադրումը կատարում ենք մոտավորապես՝ հայկականի վրա գումարելով 551, իսկ ըստ ոմանց կարծիքի՝ 552: Օրբելին կազմել է համադրական աղյուսակներ, որ յուրաքանչյուր տարվա հայոց ամիսների սկիզբը փոխադրված է Հուլյան ու Գրիգորյան տոմարների, և առանց դժվարության կարելի է իմանալ ոչ միայն յուրաքանչյուր տարվա սկիզբը, այլև ամսվա օրերն ու շաբաթվա ինչ օր լինելը: Օրբելու այդ աշխատությունը կարևոր մի համադրական ցանկ է հայկական տոմարով ճիշտ հաշվումներ կատարելու համար, բայց տասնյակ տարիներ մնացել է ձեռագիր վիճակում: Մեզ ծանոթ մի քանի այլ աշխատություններ ևս Օրբելու հնագրանում պահվում են ձեռագիր վիճակում: Այդպիսիներից են, օրինակ, Հաղարծնի և Նոր Գետիկի, Կոշի վիճակյալ արձանագրությունների ժողովածուները:

Օրբելու մահվանից հետո հրատարակվեցին նրա լավագույն ուսումնասիրություններից երկուսը: Դրանցից մեկը Անիի վիճակյալ արձանագրությունների ժողովածուն էր, որ 1924 թվականին լույս էր տեսնելու Լենինգրադում, բայց աշխատության կլիշեները և շարվածքը զոհ գնացին Նևա գետի բարձրացման ժամանակ առաջացած ջրհեղեղին, որից հետո հեղինակը այլևս չուզեց տպագրության հանձնել այդ գործը: Ժողովածուն, որ գիտության համար օրինակելի մի գործ է, տպագրվեց Երևանում, հեղինակի մահվանից հետո, 1966 թվականին և կազմեց «Դիվան հայ վիճագրության» մատենաշարի առաջին պրակը:

Օրբելին ներկա դարի 11 և 12 թվականներին տեղում ուսումնասիրել ու նկարագրել էր Աղթամարի տաճարը, որ, ինչպես հայտնի է, 915 թ. իր պալատի հետ միասին կառուցել է Գագիկ Արծրունին: Օրբելին հետագայում այդ տաճարի մասին տարբեր առիթներով զեկուցումներ էր կարդացել՝ նրա նշանակության, ճարտարապետական հորինվածքի, նրա պատերի վրա քանդակված պատկերների աշխարհիկ արմատների վերաբերյալ: Այդ բոլորով հանդերձ, իր աշխատությունը ավարտված չէր համարում: Այն հրատարակվեց գիտնականի մահվանից հետո, «Ընտիր աշխատությունների» առաջին հատորում: Պարզվեց, որ Օրբելին ոչ միայն Աղթամարի տաճարն է ընդգրկել իր ուսումնասիրության մեջ, այլ թովմա Արծրունու հոյակապ նկարագրության հիման վրա, ինչպես նաև վասպուրականի ժողովրդական տան ձևերը նկատի առնելով, վերականգնել է Գագիկ Արծրունու պալատի տեսքը, որի հետքն անգամ չի պահպանվել տեղում: Ահա նրա այդ ուսումնասիրության բացառիկ արժանիքներից մեկը, իսկ ընդհանրապես, Օրբելու այդ գործը Աղթամարի մասին գրված մյուս ուսումնասիրություններից տարբերվում է իր լայն և բազմակողմանի ընդգրկումներով, յուրաքանչյուր երևույթի ուսումնասիրության մեջ նրա արմատների ու ծագման որոշումով:

* * *

Հնագիտական դաշտային աշխատանքները Օրբելին սկսել է Անիում, 1906 թվականին, որից հետո նա ամեն տարի կանոնավոր կերպով մասնակցել է

այդ պեղումներին, մինչև պեղումների վերջնական դադարը (1917 թ.): Առաջին օրվանից Օրբելին շատ սիրեց Անին և ամբողջ ողով կապվեց նրա հետ, պեղումների դեկավար ն. Մառի թև ու թիկունքը դարձավ, նրա լավագույն աշխատակիցն ու օգնականը: Անիում Օրբելին ոչ միայն պեղումներ էր կատարում քաղաքի տարբեր մասերում, այլև զբաղվում էր գտնված առարկաները մաքրելու, կոտրվածներն ամբողջացնելու և ուսումնասիրելու աշխատանքով: Նա շատ էր սիրում հնագիտական պեղածո առարկաները, նրա այդ սերը գրեթե պաշտամունքի էր հասնում, և այդ մղումով Օրբելին ինքնաբերաբար դարձավ Անիի հնագրանի թանգարանապետը: Սակայն հնագիտական առարկաները ինչպես Մառի, այնպես էլ Օրբելու համար ինքնանպատակ գոյականներ չէին, որոնցով կարելի էր հիանալ և զարմացնել ուրիշներին, այդ առարկաների միջոցով նրանք գիտական կարևոր խնդիրներ էին առաջ քաշում և լուծում:

Օրբելու խնամքի ու ջանքերի շնորհիվ Անիի փոքրիկ հնագրանը հետզհետե մեծացավ և հանրահայտ դարձավ: Դրան մեծ չափով նպաստեց այն հանգամանքը, որ ն. Մառը այդ հնագրանի անունից սկսեց հրատարակել հնագիտական առանձին և մատենաշարային գրքեր:

1910 թ. լույս տեսան Օրբելու գրչին պատկանող երկու գրքուկ. գրանցից մեկը Անիի հնագրանի առաջին բաժնի առարկաների համարական նկարագրին է նվիրված («Անվո շարքի» 3-րդ գրքուկը), իսկ երկրորդը՝ Անիի ավերակների հանրամատչելի նկարագրին, որ մինչև այժմ էլ օգտագործվում է ամենուրեք (կազմում է «Անվո շարքի» 4-րդ գրքուկը):

«Անվո շարքի» գրքուկներից մի քանիսը վերաբերում են Անիի հետ կապ չունեցող նյութերի: Դրա պատճառն այն է, որ Մառը Անին ուզում էր դարձնել ընդհանրապես Հայաստանի հնագիտության կենտրոն և, արշավախումբը մեծացնելով, ուզում էր հետադառնել Անիի շրջապատն ու Անիի հետ առնչություն չունեցող շատ հեռավոր վայրեր: Այդ է պատճառը, որ Անին պեղող գիտնականները հաճախ գնում էին ուսումնասիրելու Տեկորի տաճարը, Երեբունյքի բազիլիկը, Հոռոմոսի վանքը և այլն:

Օրբելին 1911—1912 թվականներին գործուղվեց Արևմտյան Հայաստան: Նա եղավ Վանում, Կարնո քաղաքում, Բայազետում, Մոկսում, Աղթամարում: Բացի հնագիտական ուսումնասիրություններից, նա Արևմտյան Հայաստանում հետազոտեց Մոկսի բարբառն ու բանահյուսությունը, քրդերի լեզուն և ազգագրությունը:

Երկրորդ անգամ Օրբելին Արևմտյան Հայաստան գնաց 1916 թ., Մառի հետ միասին, երբ ուսական զորամասերը գրավել էին Վան քաղաքը: Այդ ժամանակ Մառը պեղումներ կատարեց Թոփրակ կալեոմ, իսկ Օրբելին՝ Վանա ժայռի հյուսիսային լանջին, որտեղ խորշի մեջ ի հայտ բերեց ուրարտական Սարդուր 2-րդ թագավորի 400 տողանոց տարեգրությունը, որ մինչև օրս գտնված մի քանի հարյուր սեպագիր արձանագրությունների մեջ ամենամեծն է և Ուրարտուի պատմության համար բացառիկ արժեքավորը:

Այդ արշավի արդյունքները հրատարակվեցին Մառի և Օրբելու համատեղ

հաշվետվությունների մեջ, որ լույս տեսան 1922 թ. Պետրոգրադում, մի մեծադիր հատորով:

Հետագայում էլ Օրբելին հնագիտական շրջագայություններ և պեղումներ ձեռնարկեց Հայաստանի մի քանի վայրերում: Այսպես, 1929 թ. եղավ Գառնիում, Պաղնիում, Աշտարակում, Փարպիում, Ամբերդում: Այդ ժամանակ, հուշարձանների ուսումնասիրությունից բացի, մեզ թվում է, նա որոնումներ էր կատարում պեղման հարմար վայր գտնելու համար, մի այնպիսի տեղ, որը կարողանար այս կամ այն չափով փոխարինել նրա սիրած Անիին: Եվ Օրբելին կանգ առավ Անիին ժամանակակից Ամբերդի անառիկ ամրոցի վրա, որ Պահլավունիների նստոցն է եղել, իսկ 1200 թ. Զաքարե ամիրսպասալարը գրավել է սելջուկ թուրքերից, մեծ ջարդ տալով նրանց: 1936 թ. մեծ պատրաստություններից հետո (տեղանքի հանույթ, պեղման գործիքներ, արշավի պարագաններ, տնտեսական պիտույքներ, արշավախմբի կազմի ընտրություն և այլն) Օրբելին ըսկրսեց Ամբերդի սիստեմատիկ պեղումները, որոնք կատարվում էին Հայաստանի պատմության և գրականության ինստիտուտի ու էրմիտաժի համատեղ ուժերով: Պեղումներին մասնակցում էին էրմիտաժի մեծ թվով աշխատակիցներ և Հայաստանի այն ժամանակվա բոլոր հնագետները՝ թվով 10 մարդ:

Ամբերդի պեղումներին մասնակցում էին Հայաստանից (այբբենական կարգով) Վալենտինա Աբրահամյանը, Եվգենի Բայբուրդյանը, Սեդրակ Բարխուդարյանը, Հովսեփ Եղիազարյանը, Սուրեն Երեմյանը, Կարո Ղաֆադարյանը, Արտաշես Վրույրը, Մմբատ Տեր-Ավետիսյանը, Լևոն Քալանթարը, էրմիտաժից՝ Ալիսա Բանկը, Անդրեյ Բորիսովը, Հայկ Գուլամիրյանը, Իգոր և Միխայիլ Դյակոնովները, Տատյանա Իզմայլովան, Անտոն Հաջյանը, Անատոլի Յակոբսոնը, Բորիս Պրոտրովսկին, Նիկոլայ Տոկարսկին (տեղակալ), Կամիլա Տրեբեր և կարճ ժամանակով եկած ուրիշները: Այդ տարիներ պեղումներ կատարվեցին Պահլավունյաց պալատում, ամրոցի բաղնիքում և նրա շրջապատում, ուսումնասիրվեց ջրամատակարարման համակարգը: Միաժամանակ այլ տեղերում ստուգողական պեղումներ կատարվեցին՝ ամրոցի սահմաններում և նրանից դուրս:

Օրբելին ամեն քայլափոխում հիշում էր Անին, ամեն մի առարկա համեմատում էր Անիում գտնված իրերի հետ: Հաջորդ տարին, որ ավելի մեծ թափով պետք է վերսկսվեին պեղումները, Օրբելին չեկավ և պեղումները տեղի չունեցան: Զգալու պատճառաբանությունն այն էր, որ Օրբելին շատ էր ծանրաբեռնված այլ աշխատանքներով: Կարծում ենք, հիմնական պատճառն այդ չէր. նա նույնքան ծանրաբեռնված էր և նախորդ տարին, երբ կարողացավ գալ պեղումներին: Նրա շգալու իսկական պատճառն այն էր, որ Ամբերդում նա չբազմավոր սիրած Անին, թեև Ամբերդի պեղումների արդյունքները գոհացուցիչ էին:

Նույն պատճառով էլ նա չիրագործեց իր մյուս մտադրությունը (խոսքը Գառնիի պեղումների մասին է). մի քանի տարի հետաձգելուց հետո, բոլորովին հրաժարվեց:

* * *

Օրբելու աշխատանքի կարևոր բնագավառներից մեկն էլ հայերեն վիճակա-
 կան արձանագրությունների վերծանությունն է և, մեզ թվում է, նա այդ գոր-
 ծին ավելի շատ ժամանակ և ջանք է նվիրել, քան մի այլ աշխատանքի: Օրբե-
 լին, իր ուսուցիչ Մառի հետ միասին, հայերեն վիճակա-
 կան արձանագրությունների գիտական հրատարակության հիմնադիրը եղավ: Մինչև Մառի և Օրբելու հանդես
 գալը վիճակա-
 կան արձանագրությունները պարզապես արտագրվում էին պատե-
 րի վրայից և հրատարակվում: Այդ պատճառով էլ հին հրատարակությունների
 մեջ տեղ են գտել այնքան շատ աղավաղումներ և անճշտություններ, որ այդ
 հրատարակություններն անհնարին է օգտագործել, մանավանդ որ արձանա-
 գրությունների լեզուն ղզալիորեն տարբերվում է դասական գրոց լեզվից: Ար-
 ձանագրությունների ժամանակը որոշելու համար մեծ կարևորություն ունեն
 նաև գրերի հնագրական ձևերը, որոնց մասին նախկինում հավաքողները ան-
 հրաժեշտ պատկերացում չունեին:

Մառը և Օրբելին առաջին անգամ հայերեն վիճակա-
 կան արձանագրություն-
 ների հրատարակության գիտական եղանակ մշակեցին: Այդ եղանակով նրանք
 արձանագրության արտագրությունը կատարում էին տառաձևերի և տողերի
 ճիշտ պահպանմամբ, ընդօրինակելով փակագրերն ու համառոտագրու-
 ները: Դրան կցում էին նաև արձանագրության լուսանկարը, որպեսզի կաս-
 կածողը կարողանա որոշ բան ստուգել լուսանկարով, և վերջում՝ արձանա-
 գրության վերծանությունը և մեկնաբանությունները: Այդ եղանակը, փոքր
 փոփոխություններով, այժմ էլ է կիրառվում: Այդ գործը մանրակրկիտ և տա-
 ժանելի աշխատանք, մեծ զգուշություն է պահանջում: Մաշված քարերի վրա
 անսխալ կարդալ փակագրերով իրար հետ միացած և համառոտագրված ան-
 սովոր, այժմ չգործածվող անձնանունները, տեղանունները, բառերը, որոնք
 հաճախ ջնջված են լինում, մեծ հատություն է պահանջում վերծանողից: Օրբե-
 լին ոչ միայն լավագույն վերծանողներից մեկն էր, այլև սխալներից ու վրի-
 պակներից զերծ մնալու համար գրաշարությունն էլ ինքն էր անում: Օրինակ,
 այդպես է տպագրվել նրա Մարմաշենի վիճակա-
 կան արձանագրությունների ժո-
 դովածուն («Надписи Мармашена», Петроград, 1914), ինչպես նաև Ա-
 նանիա Շիրակացու «Հարցմունք և լուծմունք» մաթեմատիկական աշխատու-
 թյունը, որ Օրբելին ուսուցիչի է թարգմանել և տպագրել Պետրոգրադում
 1918 թ.:

Օրբելին «Христианский Восток» հանդեսում տպագրեց մի շարք շինա-
 րարական ու այլ բնույթի արձանագրություններ իր և Մառի հիմնադրած գի-
 տական նոր եղանակով, որոնք էլ օրինակ հանդիսացան այլոց համար:

Նրա արխիվում, բացի Անիի արձանագրություններից, որոնք, ինչպես նը-
 շեցինք, նրա մահվանից հետո տպագրվեցին, պահպանվում են բազմաթիվ վայ-
 րերի արձանագրությունների դեռևս ձեռագիր ժողովածուներ: Այդ ժողովածու-
 ներում Օրբելին ընդգրկել է մինչև վերջին կենտ գիրը:

* * *

Հովսեփ Օրբելին չգերազանցված թարգմանիչ էր: Թեև նրա կատարած
 թարգմանությունների մեծ մասը դեռևս անտիպ է, բայց արդեն տպագր-
 վածների հիման վրա կարելի է ասել, որ գրաբարից ու միջին հայերենից կա-
 տարած նրա թարգմանությունները գեղեցիկ են և ճիշտ: Հայկական առակնե-
 րը բավականին մեծ ծավալ ունեն նրա ընտիր երկերի լեռնագրադյան հրատա-
 րակության մեջ, որոնցից մի փոքրիկ ժողովածու էլ առանձին հրատարակվեց
 իր կենդանության ժամանակ:

Օրբելին ուսուցիչի է թարգմանել նաև մեր մի քանի պատմագիրների
 գործերը, այսպես, օրինակ՝ Նղիշեի, Ղազար Փարպեցու, Հովհան Մամիկոն-
 յանի, Թովմա Արծրունու, կեղծ Շապուհ Բագրատունու պատմությունները, ո-
 ռոնցից միայն Նղիշեն ու Թովմա Արծրունուց քաղվածքներ է տպագրել (Աղ-
 թամարի ուսումնասիրության մեջ):

* * *

Օրբելին մեծ թանգարանագետ էր: Էրմիտաժում կատարած իր գործերով
 նա հայտնի դարձավ ամբողջ աշխարհին: Անիի փոքրիկ հնագրանից հետո,
 որտեղ ստացավ իր առաջին մկրտությունը, Օրբելին իր տաղանդը փայլեցրեց
 աշխարհիս մեծագույն թանգարաններից մեկում, ինչպիսին է Լենինգրադի պե-
 տական էրմիտաժը, որտեղ նա աշխատեց 30 տարուց ավելի, նախ իբրև բաժ-
 նի վարիչ, իսկ հետո իբրև ընդհանուր տնօրեն:

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունից հետո, Չմե-
 ոային պալատը բաժանված էր բազմաթիվ մանր ու խոշոր հիմնարկների մի-
 ջև: Էրմիտաժը ևս այնտեղ բաժին ուներ: Տասնյակ տարիներ պետք եղան, որ-
 քանի որ Օրբելին կարողանար նվաճել պալատի ամբողջ շենքը: Փաստորեն Օր-
 բելին ստեղծեց և մեծացրեց Արևելքի բաժինը, այնտեղ կուտակելով անբավ
 հարստություն: Այդ բաժնով էրմիտաժը այսօր կարող է մրցել աշխարհի բոլոր
 թանգարանների հետ, իսկ իր մի քանի ենթաբաժիններով (Կովկաս, Հայաստան,
 մեծիասիական երկրներ և այլն) էրմիտաժը առաջինն է ամբողջ աշխարհում:

Էրմիտաժը պատկերասրահ էր, մինչ Օրբելին դարձրեց արվեստի և մշա-
 կույթի թանգարան: Էրմիտաժը նույնիսկ ուսական բաժին չունեց, այն ևս
 Օրբելու օրոք ստեղծվեց և այսօր էրմիտաժի հիմնական բաժիններից մեկն է:

Օրբելին էրմիտաժում պատրաստեց թանգարանային գործի խոշոր մաս-
 նագետներ, որոնցից շատերը համաշխարհային ճանաչում ունեցան:

* * *

Հովսեփ Օրբելին նշանավոր էր իբրև մեծ տոնահանդեսների և հոբելյան-
 ների կազմակերպիչ: Այսպես, 1930 թ. նա գործուղվեց Լոնդոն՝ Իրանի արվես-
 տի և հնագիտությունը նվիրված միջազգային երկրորդ կոնգրեսին մասնակ-
 ցելու: Այնտեղ նա փառավոր երույթ ունեցավ՝ կոնգրեսի առթիվ կազմակերպ-

ված ցուցահանդեսի համար Սովետական Միությունից տարած թանգարանային առարկաների մասին:

1934 թ. Օրբելին ղեկավարեց Ֆիրդուսու 1000-ամյակին նվիրված գիտա-ժողովը և այդ առթիվ էրմիտաժում կազմակերպեց հոբելյանական մեծ ցուցահանդես: Հանդիսավոր նիստը տեղի ունեցավ Մոսկվայում, որտեղ ղեկուցողը Հովսեփ Օրբելին էր:

1935 թ. Մոսկվայում և Լենինգրադում հրավիրվեց իրանական արվեստի ու մշակույթի հերթական 3-րդ կոնգրեսը: Օրբելին այդ կոնգրեսի նախագահներից մեկն էր և հոբելյանական ցուցահանդեսի կազմակերպիչը: Կոնգրեսում նա հանդես եկավ սելջուլյան արվեստին նվիրված ղեկուցումով և հետո էլ խմբագրեց կոնգրեսում կարգադրված ղեկուցումների սովոր ժողովածուն: Կոնգրեսը լավ կազմակերպելու համար Իրանի շահը Օրբելուն պարգևատրեց «Գիտական վաստակի համար» առաջին կարգի շքանշանով, և նա (Օրբելին) ընտրվեց Թեհրանի համալսարանի պատվավոր ուսուցչապետ:

1937 թ. Սովետական Միությունում մեծ շուքով տոնվեց վրաց բանաստեղծ Շոթա Ռուսթավելու ծննդյան 750-ամյակը: Օրբելին մեծ մասնակցություն ունեցավ այդ հանդիսություններին: Նրա խմբագրությամբ լույս տեսավ «Լնձենավորի» ռուսերեն թարգմանությունը: Էրմիտաժում կազմակերպեց Ռուսթավելու դարաշրջանին նվիրված մեծ ցուցահանդես և հրատարակեց մի ժողովածու, որի մեջ նրա գրչին են պատկանում վրաց ու արևելյան մշակույթին վերաբերող յոթ հոդված: Այդ ժողովածուի ներածականը ևս Օրբելին գրեց:

1939 թ. Սովետական Միությունում տոնվեց «Սասունցի Դավիթ» դյուցազնավեպի 1000-ամյակը: Տոնակատարության կենտրոնը Երևանն էր: Օրբելին իր մերձավոր աշխատակիցների հետ միասին եկավ Երևան և գլխավորեց հանդեսները: Նա խմբագրեց էպոսի համահավաք տեքստը և ռուսերեն թարգմանությունը: Գրեց էպոսի իր նշանավոր առաջաբանը, էրմիտաժի աշխատակիցների հետ միասին օգնեց պատմության թանգարանին՝ կազմակերպելու «Սասունցի Դավիթ» դարաշրջանին նվիրված ցուցահանդեսը, ղեկավարեց տոնական հանդիսությունները և բազմաթիվ ելույթներ ունեցավ այդ առթիվ:

1940 թ. Օրբելու մասնակցությամբ տոնվեց Ադրբեջանի մեծ բանաստեղծ Նիզամիի 800-ամյակը, իսկ 1941 թվականին, պատերազմի դաժան օրերին, էրմիտաժի նկուղում, Օրբելու ղեկավարությամբ տոնվեց ուզբեկ մեծ գրող Ալիշեր Նավոյիի 500-ամյակը:

Օրբելին բազմաթիվ տոնահանդեսների, գիտական կոնգրեսների և այլ միջոցառումների է մասնակցել ու ղեկավարել, որոնց միայն թվարկումը մեզ հեռու կտաներ:

* * *

Օրբելին իր հերոսական աշխատանքով աչքի ընկավ Հայրենական մեծ պատերազմի տարիներին: Նրա ղեկավարությամբ գլուխ եկավ էրմիտաժի գանձերի տեղափոխումը Սվերդլովսկ, որով կործանումից փրկվեցին համա-

մարդկային մշակույթի լավագույն արժեքները: Պատերազմի տարիներին Օրբելին զորամասերում, բանվորական կոլեկտիվներում և ժողովրդի առաջ 200-ից ավելի սրտասնդիչ ու ոգևորող ելույթներ է ունեցել Լենինգրադում, Երևանում և այլ վայրերում: Նրա ջանքերով 1943 թվականին, պատերազմի ժամանակ, Հայաստանում կազմակերպվեց գիտությունների հայաստանյան ակադեմիան, որի առաջին նախագահն ինքն եղավ: Պատերազմից հետո լծվեց պատերազմի ավերիչ հետևանքները վերացնելու դժվարին գործին ոչ միայն էրմիտաժում, այլև Լենինգրադի մյուս թանգարանային վայրերում:

Իբրև վկա նա ելույթ ունեցավ նաև նյուրնբերգյան դատավարության ժամանակ: Հայտնի են նրա սրամիտ պատասխանները ֆաշիստ գեներալներին:

Հովսեփ Օրբելին վախճանվեց Լենինգրադում, 1962 թ. փետրվարի 2-ին, ծանր հիվանդությունից հետո:

Օրբելին իր կենդանության օրով արժանացել էր պետական բարձր պարգևներ՝ շքանշանների և պատվավոր կոչումների: Մահվանից հետո էլ նրա հիշատակը պետական մարմինները և գիտական հաստատությունները հավերժացրել են բոլոր հնարավոր միջոցներով: Աշխատությունները տպագրվում են, նրա անունով փողոցներ կան Լենինգրադում և Երևանում (Օրբելի եղբայրների անունով), օվկիանոսային մի մեծ նավ կոչվում է «Академик Юсиф Орбели», էլ շխտենք նրա անունով սահմանված թոշակների և այլ միջոցառումների մասին: Ինչպես ասացինք, Օրբելու աշխատությունները հրատարակվում են, բայց այստեղ մի դժվարություն կա: Հայրենական մեծ պատերազմի սկզբին պարզվեց, որ կա մի արկղ, որի բովանդակությունը հայտնի չէ, և երբ բացեցին, տեսան, որ Օրբելու ելույթների սղագրություններն ու զբրառումներն են, որ տարիների ընթացքում կատարել է ՍՍՀՄ ԳԱ թղթակիցանդամ, պրոֆ. Կամիլա Տրեբերը: Ծրագրել էին, որ այդ բոլորը Օրբելին պետք է մեկ առ մեկ ստուգեր, ուղղումներ կատարեր և ստորագրեր այն բանից հետո, երբ իր ձեռքով գրած անտիպ գործերը վերջացած կլինեին: Ե՛վ մեկը, և՛ մյուսը անավարտ մնացին:

Օրբելու հիշատակը առանձնապես թանկ է Երևանի պետական համալսարանի ուսանողների և դասախոսների համար, որովհետև նա որտեղ էլ լիներ, ինչ պաշտոն էլ զբաղեցներ, մշտական կապ էր պահպանում մեր համալսարանի հետ, հաճախ հանդիպումներ էր ունենում, դասախոսություններ էր կարդում, ասպիրանտների էր ղեկավարում, դիսերտացիաների պաշտպանություն կազմակերպում և երբեմն էլ ընդդիմախոս լինում: Նա մշտապես օգնում էր Հայաստանի հնագետներին:

Սովետահայ մտավորականությունը և մեր համալսարանը երբեք չեն մոռանա երախտավոր գիտնականի հիշատակը:



К. Г. КАФАДАРЯН

АКАДЕМИК ИОСИФ АБГАРОВИЧ ОРБЕЛИ

Резюме

В ряду крупнейших востоковедов XX века особое место занимает советский ученый, сын армянского народа, академик Иосиф Абгарович Орбели. Он родился 8(20) марта 1887 года в городе Кутаиси, в известной семье Орбели. Среднее образование получил в Тифлисе. В 1904 году он поступил в Петербургский университет, два факультета которого (историко-филологический и восточный) окончил с отличием в 1911 году.

И. А. Орбели со студенческой скамьи ежегодно принимал деятельное участие в раскопках столицы средневековой Армении—города Ани, которые велись под руководством его любимого учителя Н. Я. Марра. И. А. Орбели фактически стал первым помощником и неизменным соратником археологических начинаний Н. Я. Марра.

В 1914 г. И. А. Орбели начал свою педагогическую деятельность на восточном факультете Петербургского университета, где он читал различные курсы по истории культуры Востока, арменоведению, курдскому языку и др.

В 1919 году И. А. Орбели был утвержден в звании профессора Петроградского университета, в 1924 г. он был избран чл.-корр. АН, а в 1935 г.—академиком АН СССР.

И. А. Орбели не был замкнутым, кабинетным ученым и не любил таких ученых. Он обладал исключительным талантом организаторской работы и вокруг себя всегда собирал перспективную молодежь.

Многочисленные труды И. А. Орбели, посвященные археологии, эпиграфике, этнографии, фольклору, литературе, истории культуры Армении и других соседних стран (Иран, Кавказ, Грузия, Кавказская Албания), имеют большую ценность и являются лучшими образцами советского востоковедения.

И. А. Орбели был крупнейшим музееведом. В годы его руководства отделом Востока (1920—1934) и всем музеем (1934—1953) Эрмитаж обогатился многочисленными ценностями. Он был организатором многих международных конгрессов и юбилейных торжеств, на заседаниях которых выступал с блестящими докладами.

В первые годы Советской власти и в годы Великой Отечественной войны И. А. Орбели вел большую пропагандистскую работу в частях Советской армии, среди рабочих и интеллигенции Ленинграда и

Еревана. В первые дни войны 1941 г. сотрудники Гос. Эрмитажа с помощью интеллигенции и военных частей, во главе с И. А. Орбели, в кратчайший срок сумели образцово организовать эвакуацию и консервацию музейных ценностей не только самого Эрмитажа, но и других музеев Ленинграда, и этим спасли сотни тысяч памятников мировой культуры от гибели.

И. А. Орбели всегда был тесно связан с учеными Армении и Ереванским университетом. В тяжелые годы войны (1943 г.) в Армении была создана Академия наук, и И. А. Орбели был избран ее первым президентом.

И. А. Орбели выполнил ряд переводов средневековых авторов с древнеармянского на русский язык. Его переводы отличаются высокой филологической точностью.

Иосиф Орбели скончался 2 февраля 1962 г., на 75-ом году жизни.

Правительство и общественность СССР высоко оценили научную и активную общественную деятельность академика Иосифа Абгаровича Орбели; Академиями наук СССР и Армянской ССР посмертно издаются его неопубликованные труды. Светлый образ Иосифа Орбели навсегда сохранится в благодарной памяти людей.

Ա. Գ. ԱՐՐԱՀԱՄՅԱՆ

Հ. ՕՐԲԵԼԻՆ ԾԻՐԱԿԱՑՈՒ «ԽՆԴՐԱԳՐՔԻ» ԹԱՐԳՄԱՆԻՉ ԵՎ ՄԵԿՆԱԲԱՆ

Սովետական պատմագրության ականավոր դեմքերից մեկը՝ ակադ. Հ. Ա. Օրբելին, մեծ ներդրումներ ունի հայագիտության բնագավառում: Նա մեղավաջան աշխատանք է կատարել հայ միջնադարյան մշակույթի լավագույն նմուշները գրաբարից ուսերեն թարգմանելու և գիտական լայն շրջանառության մեջ դնելու ուղղությամբ: Հ. Օրբելին թարգմանել է Մխիթար Գոշի ու Վարդան Այգեկցու «Առակաները»¹, Նղիշեի «Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին» աշխատությունը² և շատ այլ հուշարձաններ:

Օրբելու վաստակները գիտության տարբեր բնագավառներում հանգամանորեն գնահատված են Կ. Յուզբաշյանի մենագրության մեջ³: Ներկա հաղորդմամբ մենք ցանկանում ենք անդրադառնալ Հ. Օրբելու աշխատանքներից միայն մեկին՝ Ծիրակացու «Խնդրագրքի» ուսերեն թարգմանության և այդ առթիվ նրա առաջ քաշած մի շարք հարցերին, որոնք մեծ արժեք ունեն սնական գիտությունների պատմության համար Հայաստանում:

Նախապես կուզենայինք նշել, որ Անանիա Ծիրակացին, որի «Խնդրագրքի» ուսումնասիրությամբ զբաղվել է Օրբելին, հայ մատենագրության ապարատ այն հեղինակներից է, որի ստեղծագործությունը ըստ արժանվույն չի գնահատվել ոչ իր ապրած ժամանակում, ոչ էլ նրանից հետո միջին դարերում: Հիշենք Ծիրակացու դառնության խոսքը՝ ուղղված իր ժամանակակիցներին. «...ոչ ոք եղև շնորհակալ և մեծարալ իմոյ աշխատութեան»⁴: Միջնադարյան խավար իրականության մեջ եղել են անգամ ժամանակներ, երբ Ծիրակացու աշխատությունները արգելքի տակ են դրվել իբրև պաշտոնական գաղափարախոսությանը հակադիր, խորթ ստեղծագործություններ: Եվ այդ արվել է այնքան անարդարացի, որ դրա դեմ իր բողոքի ձայնն է բարձրացրել 11-րդ դարի գիտնական Գրիգոր Մագիստրոսը: Մեզ է հասել նրա բողոքագիրը՝ ուղղված ժամանակակից կաթողիկոս Պետրոս Գետադարձին: Ինչպե՞ս կարելի է արգելանքի տակ դնել Անանիա Ծիրակացու գիտական ստեղծագործությունները, զրել է նա, երբ այդ գիտնականը «...բազում աշխատութեամբ և

յաշածու խոնջմամբ հաւաքեալ ի բազմազանազան և յոքնաբեղուն մատենից յորում և ենթակայացեալ են ոչ միայն քառիցն արհեստք, այլ բոլոր էակացն խոկմունս. որ են այժմ ի տան տէրունեանս՝ զոր նախքան զքեզ խրթնացեալ և թագնի ընդ գրուանաւ ծածկէին»⁵:

Պետք է ասել, որ Ծիրակացու աշխատություններն առանձնահատուկ ուշադրության առարկա չեն դարձել հայագիտության: մեջ նաև մոտիկ անցյալում: Նման վերաբերմունքը մասամբ բացատրվում է նրանով, որ Ծիրակացու աշխատությունները միջին դարերում շատ են ենթարկվել անդամահատման, ու նրանց բնագրերը ցրված են տարբեր բովանդակության ձեռագրերում: Զարմանալի չէ, որ Ծիրակացու «Խնդրագրքը» անցյալում հայագիտությանը հայտնի է եղել միայն երկու ընդօրինակությամբ, որոնց հիման վրա և Գ. Տեր-Մկրտչյանը կազմել է իր հրատարակած բնագիրը⁶: Այժմ մեզ հայտնի է այդ բնագրի 19 ընդօրինակություն, որից ինը Մաշտոցի անվան մատենադարանի սեփականությունն է, հինգը՝ Երուսաղեմի Հակոբյանց մատենադարանի, մեկը՝ Վենետիկի Մխիթարյանների, երկուսը՝ Վիեննայի Մխիթարյանների, մեկը՝ Օքսֆորդի մատենադարանի և մեկը՝ Տյուբինգենի համալսարանի մատենադարանի⁷:

Ծիրակացու աշխատությունների նկատմամբ անցյալում հայագիտության մեջ նկատվող այս անտարբերությունն ունի այլ պատճառ ևս. նրանք, հիմնականում, վերաբերում են բնական գիտություններին, իսկ վերջիններին զարգացման այն ժամանակվա ցածր մակարդակն առանձնապես չի խրախուսել այդ բնագավառով զբաղվելու: Գիտության բուն զարգացումը Սովետական Հայաստանում, բնականաբար, մեծ հետաքրքրություն առաջացրեց դեպի գիտությունների պատմությունը, և առանձին բնագավառներում մի շարք արժեքավոր ուսումնասիրություններ կատարվեցին (նկատի ունենք պրոֆ. Գ. Բ. Պետրոսյանի (մաթեմատիկա), պրոֆ. Լ. Լ. Սեմյոնովի (աստղագիտություն), պրոֆ. Ա. Տեր-Պողոսյանի (կենսաբանություն), մաթեմատիկական գիտությունների թեկնածու Հ. Բաղալյանի (տոմարագիտություն) և այլոց աշխատությունները):

Ծիրակացու մատենագրության ուսումնասիրությամբ զբաղվող գիտնականներից ակադ. Հ. Օրբելին առաջինն է, որ նրա աշխատությունների վրա նայել և դրանք գնահատել է գիտությունների պատմության տեսանկյունով: Ծիրակացու «Խնդրագրքի» ուսերեն թարգմանության առթիվ գրած իր առաջաբանում նա դիտել է. «Անանիայի խնդրագրքը աննկատ չի մնացել հայագիտական գրականության մեջ. մինչև այժմ նրա վրա նայել են գլխավորապես հայ ժողովրդի պատմության տեսանկյունով... մոռացության է տրվել Անանիայի աշխատությունների կարևորությունը այն գիտությունների պատ-

1 Иосиф Орбели, Басни средневековой Армении, М.-Л., 1956.
2 Егишэ, О Вардане и войне армянской, перевод с древнеармянского акад. И. А. Орбели, Ереван, 1971.
3 К. Н. Юзбашян, Акад. Иосиф Абгарович Орбели, Москва, 1964.
4 Անանիա Ծիրակացու մատենագրությունը, Երևան, 1944, էջ 208.

5 Գրիգոր Մագիստրոսի թղթերը, հրատ. Կ. Կոստանյանցի, Ալեքսոլ, 1910, էջ 8:
6 Անանիայի վարդապետի Ծիրակուն[ւ]ոյ [Յաղագս] հարցման և լուծման (տե՛ս Գ. Տեր-Մկրտչյան, Անանիա Ծիրակացի, Վաղարշապատ, 1896, առանձնատիպ «Արարատ» ամսագրից, էջ 20—29):
7 Տե՛ս Հ. Անասյան, Հայկական մատենագիտություն, հ. Ա, Երևան, 1959, էջ 735—738:

մության համար, որոնցով նա զբաղվել է: Անանիայի Խնդրագիրքը... ոչ պակաս շարժվել, քան հայ ժողովրդի պատմաբանին, հետաքրքիր կարող է լինել նաև մաթեմատիկոս պատմաբանին»⁸: Արժեքավորելով Շիրակացու գիտական ստեղծագործությունները ամբողջությամբ վերցրած, նա գրել է. «Անանիան, որպես մաթեմատիկոս, տիեզերագետ, օդերևութաբան, բացառիկ տեղ է զբաղեցնում: Նրա անվան հետ կապված բազմաթիվ աշխատություններից առանձնահատուկ ժողովրդականություն են վայելել շափերի ու կշիռների և տոմարագիտական աշխատությունները»⁹:

Ուշագրավ է այն, որ Օրբելին իր հրատարակության բնաբան է ընտրել մաթեմատիկայի մասին Շիրակացու կենսագրականում ասված հետևյալ խոսքերը. «Յոյժ կարատեսալ արուեստի համարողութեանն, խորհեցայ՝ եթէ ոչինչ յարմարի առանց թոռց՝ մայր կարծելով ամենայն իմաստից»¹⁰ (И, сильно возлюбив искусство числительное, помыслил я, что без числа никакое рассуждение не философское не слагается, всеї мудрости матерью его почитая):¹¹

Օրբելու թարգմանությամբ հրատարակված Շիրակացու այդ աշխատությունը փոքր-ինչ մեծ է գրպանի օրացույցից: Պարունակում է հրատարակչի գրած առաջաբանը, Շիրակացու գրաբար բնագիրը, այդ նույն բնագրի թարգմանությունը ռուսերեն, վերջում Օրբելու կազմած ծանոթագրություններն են, առարկայական ցանկը և վերջաբանը: Բոլորը միասին կազմում է 80 էջ:

Ահադ. Հ. Օրբելու ծավալով փոքրիկ այս գրքույկի մեջ, սակայն, առաջ են քաշված հայագիտական մի շարք հարցեր, որոնք ունեն աղբյուրագիտական մեծ արժեք: Անդրադառնանք նրանցից մի քանիսին:

Առաջին հարցը, որի լուսաբանությունը զբաղվել է Հ. Օրբելին, այն է, թե Շիրակացու «Խնդրագիրքն» ամբողջական ձևով է մեզ հասել, թե՞ թերի: Բնագիրը, ինչպես հայտնի է, մեզ է հասել ուշ դարերի ընդօրինակություններով, որոնք ունեն երեք տարբեր վերնագիր.

- ա) «Անանիայի Շիրակայնոյ Յաղագս կատարման համարողութեան և կերպից հարցման»,
- բ) «Անանիայի Շիրակացույ ըստ ճանաչական հանելուկ»,
- գ) «Անանիայի վարդապետի Շիրակունույ Յաղագս հարցման և լուծման»¹²:

⁸ Вопросы и решения вардапета Анании Ширакца, армянского математика VII века, издал и перевел И. А. Орбели, Петроград, 1918, стр. 10. աշխատության վերահրատարակությունը տե՛ս И. А. Орбели, Избранные труды, Ереван, 1963, էջ 512—537: Շիրակացու «Խնդրագիրք» Օրբելու թարգմանությունը վերահրատարակել է նաև Լ. Մելիքսեթ-Քեկը (տե՛ս նրա՝ «К истории точных наук в Армении и Грузии» աշխատությունը, Тбилиси, 1930, էջ 224—232):

⁹ Նշված աշխատ., էջ 10:
¹⁰ Անանիա Շիրակացու մատենագրությունը, էջ 206:
¹¹ «Вопросы и решения», стр. 7.
¹² Գ. Տեր-Մկրտչյան, Անանիա Շիրակացի, էջ 12:

Հիմք ունենալով այս վերնագրերից առաջինը, Հ. Օրբելին արել է հետևյալ եզրակացությունը. «Անանիայի Խնդրագիրքը, ինչպես և նրա մյուս աշխատությունները, մեզ է հասել ոչ ամբողջական ձևով. Խնդրագրի փոքրիկ ծավալը, խնդիրների ընտրությունը և միօրինակությունը հիմք են տալիս ենթադրելու, որ այն հատված է միայն մի դասագրքի, որը, դատելով խորագրից ու առաջաբանի ընդհատումից, բովանդակել է և տեսական մաս: Սույն ենթադրության իրավացիությունը հաստատվում է Խնդրագրի պահպանած երկու անվանումներով, մեկ խմբում՝ «Յաղագս հարցման և լուծման», մյուսում՝ «Յաղագս կատարման համարողութեան և կերպից հարցման»¹³:

Ներագույն ուսումնասիրությունները, ինչպես հայտնի է, լիովին արդարացրին գիտնականի սրամիտ կռահումը. Մաշտոցի անվան մատենադարանի № 1770 ձեռագրում հայտնաբերվեցին Շիրակացու թվաբանական շորս գործողությունների աղյուսակները, որոնցից երեքն ունեն հեղինակային ներածություններ: Ահա այս բնագրի շարունակությունն է հանդիսացել Օրբելու թարգմանած Խնդրագիրքը, որը հետագա դարերում, ընդօրինակողների մեղքով, անջատվել է նրանից¹⁴: Պարզվում է, որ «Խնդրագրին» կցված առաջաբանը, որը հայտնի է եղել ինչպես Գ. Տեր-Մկրտչյանին, այնպես և Օրբելուն, ուշ դարերի ընդմիջարկով է, ավելացված այլ հեղինակների կողմից: Ուշագրավ է, որ ընդմիջարկողը Շիրակացու աշխատությունը տեսել է իր ամբողջության մեջ, ուստի անհրաժեշտ է համարել իր կողմից նշել. «Ձամենայն[ն] ասաց իմաստուն[ն], թէպէտ և սակաւ ի բազմաց, եթէ զինչ ընդունելութիւնն, զինչ բացատրութիւն, զինչ բազմապատիկ և բոլորովին յաղագս բաժանմանց»:

Հայտնի է, որ Շիրակացու գումարման գործողությունը կոչվում է «ընդունելութիւն», հանումը՝ «բացադրութիւն», բազմապատկումը՝ «բազմապատիկ»: Ընդմիջարկողի խոսքն այդ մասին է: Ինչ վերաբերում է «բոլորովին յաղագս բաժանման» արտահայտությանը, ապա ընդմիջարկողը, ինչպես երեւում է, իր ձեռքի տակ ունեցել է Շիրակացու այնպիսի մի թվաբանական բրնագիր, ուր բացակայել է «վեցհազարչակը», որը բաժանման գործողություն է, և կամ նա չի հասկացել «վեցհազարչակի» իմաստը: Տվյալ ընդմիջարկության մեջ «զամենայն ասաց իմաստունը» ասելով նկատի ունի, անշուշտ, Անանիա Շիրակացուն: Իսկ առաջաբանի այն արտահայտությունը, թե՛ «Ձամենայն ասաց իմաստունն, թէպէտ և սակաւ ի բազմաց», վերցված է Շիրակացու «Ընդունելութեան» առաջաբանից, որը հեղինակը հանձնարարել է աշակերտներին, ասելով. «Ուսուցանիչիք իմոցս գծագրեալացս, թէպէտ և կարճառոտ կարգիցի զսակաւս ի բազմաց, (ընդգծումը մերն է—Ա. Ա.) զի մի ձանձոյթ ձեզ յաճախելն առնիցեմ»¹⁵:

¹³ И. А. Орбели, Вопросы и решения, стр. 10.
¹⁴ Տե՛ս «Յոթերորդ դարի հայ գիտնական Անանիա Շիրակացու թվաբանության դասագիրքը» (Երևանի պետական համալսարանի գիտական աշխատությունների ժողովածու, հ. XI, Երևան, 1939, էջ 245—274):
¹⁵ Անանիա Շիրակացու մատենագրությունը, էջ 210:

Ի դեպ, Շիրակացու նորահայտ աշխատությունը, ինչպես պարզված է, թվաբանական հնագույն բնագրերից մեկն է մաթեմատիկայի պատմության մեջ: Շիրակացու մաթեմատիկական աշխատությունները ըստ արժանվույն գնահատված են Սովետական Միության մի խումբ աչքի ընկնող մաթեմատիկոսների խմբագրությամբ հրատարակված «История отечественной математики» գրքում: Ավելորդ չենք համարում մեջ բերել նրանց տված գնահատականը. «Շիրակացու աշխատությունը, ամբողջությամբ վերցրած, հանդիսանում է մեզ հայտնի հնագույն թվաբանական դասագրքերից մեկը և պարունակում է մեզ հասած ամենահնագույն ուսումնական աղյուսակները՝ թվաբանական գործողություններ կատարելու համար: Այն վկայում է թվաբանական բարձր գրագիտության մասին Հայաստանում նշված ժամանակաշրջանում»¹⁶:

Այսպիսի կարծիք է հայտնել նաև մաթեմատիկայի պատմության հայտնի մասնագետ պրոֆ. Ի. Դեպմանը. «Ըստ մաթեմատիկական կուլտուրայի հնություն, Սովետական Միության ժողովուրդների մեջ առաջին տեղում գրտնըվում են հայերը: Հայերի մոտ 7-րդ դարում հանդես եկած հրաշալի գիտնական Անանիա Շիրակացին եղել է մաթեմատիկոս, աստղագետ, օդերևութաբան, պատմաբան և աշխարհագրագետ: Իր աշխատություններում, բացի զուտ մաթեմատիկական խնդիրներից, արժարժում է նաև այլ հարցեր՝ երկրի գնդաձևության, լուսնի և արեգակի խավարումների, մաթեմատիկայի մեջ զրոյի օգտագործման, բազմանկյուն թվերի, օրացուցային հաշվումների, արեգակնային ժամացույցների մասին: Եվ այդ բոլորն արել է այն էսոթիսայում, երբ եվրոպական ժողովուրդների մոտ գրեթե ոչ ոք այդ հարցերի ուսումնասիրությամբ չի զբաղվել»¹⁷:

Ո՞վ է եղել Շիրակացու թվաբանության այս «հնդրագրքի» պատվիրատուն: Այս հարցին անդրադարձել են ինչպես Գ. Տեր-Մկրտչյանը, այնպես էլ Հ. Օրբելին: Դժբախտաբար, աշխատությունը չունի առաջաբան, և դժվար է այդ մասին հաստատուն խոսք ասել: Գ. Տեր-Մկրտչյանը, սակայն, փորձել է ենթադրություն անել այն փաստի հիման վրա, որ հնդրագրքի մի շարք հարցումների մեջ օրինակներ են բերվում Կամսարականների նախարարական տան ներկայացուցիչների գործունեությունից, ուստի հնարավոր է համարել, որ տվյալ աշխատությունը Շիրակացին գրած լինի Կամսարականների պատվերով: Այդ կապակցությամբ նա գրում է. «24 խնդրից վեցում՝ հիշատակություն կա Կամսարականների մասին (Ա, է, Ը, Թ, Ի, ԻԱ.), մնացածների մեծ մասումն էլ գործողությունը կատարվում է նրանց շուրջը, նրանց կալվածներում, Շիրակում, Նրասիսի, Ախուրյանի ափին, այնպես որ այս թվաբանական խնդիրների ժողովածուն կարելի է համարել Կամսարականների գիրքը, թերևս գրված նաև Կամսարականների համար: Եթե Մամիկոնյանների, Բագրատու-

¹⁶ «История отечественной математики», Киев, 1966, стр. 495.
¹⁷ И. Демман, Рассказы о математике, Ленинград, 1954.

նիների, Արծրունիների նման շունեցյան նրանք իրենց պատմիչը, այս ժողովածուն մասամբ լրացնում է այդ պակասը»¹⁸:

Օրբելին համաձայնում է Գ. Տեր-Մկրտչյանի հետ. նա իր կազմած թեմատիկ ցանկում խնդիրներից առանձնացրել և ի մի է հավաքել այնտեղ հիշվող Կամսարական իշխանների անունները: Այդ ցանկում են Արշավիր Կամսարականը (21-րդ խնդիր), Զորակ Կամսարականը (1 և 8-րդ խնդիրներ), Հրահատ Կամսարականը (21-րդ խնդիր), Ներսեհ Կամսարականը (20 և 21-րդ խնդիրներ), մյուս Ներսեհ Կամսարականը (21-րդ խնդիր), Սահակ Կամսարականը (21-րդ խնդիր)¹⁹:

Օրբելին աշխատության առաջաբանում անդրադարձել է «հնդրագրքի» աղբյուրների հարցին: Ինքնակա՞ են, արդյոք, Շիրակացու խնդիրները, թե՞ թարգմանված են հունարենից: Այդ հարցի լուսաբանումն անհրաժեշտ է, քանի որ բնական գիտությունների բազում հարցեր առանձին անհատների ստեղծագործության արգասիք չեն, այլ ստեղծվել են տասնյակ դարերի և տասնյակ սերունդների կողմից: Հայտնի է, որ Շիրակացին իր տիեզերագիտական և տոմարագիտական երկերը գրելիս օգտվել է հույն գիտնականների աշխատություններից: Օրբելին, քննության առնելով Շիրակացու «հնդրագրքը», գալիս է հետևյալ եզրակացություն. «Խնդիրների թեման մեծավ մասամբ վերցված է Անանիայի շրջապատի կենցաղային իրականությունից, գործողության վայրը գերազանցապես հանդիսանում է նրա հայրենի գավառը՝ Շիրակը և նրան սահմանակից վայրերը, գործող անձինք, երբ նրանք հիշվում են անուններով՝ տեղական իշխաններն են, Կամսարականները, այդ թվում և Անանիային ժամանակակից Ներսեհը»²⁰:

Օրբելու կարծիքով, հունականից փոխառություն կարելի է համարել 2-րդ, 4-րդ և 23-րդ խնդիրները: Հարցականի տակ է դնում 3-րդ խնդիրը, որը, ըստ Շիրակացու, գրի է առնված իր ուսուցչի՝ Տյուբիկոսի տեղեկության հիման վրա, Շիրակացու մյուս բոլոր 20 խնդիրները Օրբելին համարում է հեղինակի կազմածը՝ տեղական նյութերի հիման վրա:

Հ. Օրբելին հատուկ ուշադրություն է դարձրել Շիրակացու «հնդրագրքի» մեջ հիշված պատմական մի շարք իրադարձությունների, որոնք կարևոր են Հայաստանի սոցիալ-տնտեսական և քաղաքական պատմության համար: Բերենք երկու օրինակ: Շիրակացին իր 21-րդ խնդրի համար նյութ է վերցրել Ներսեհ Կամսարականի գերեվարությունը: Ահա այդ խնդիրն ամբողջությամբ. «Ներսեհ Կամսարական որդի Արշալուի, անուանակից և նախնի այսմ Ներսեհի, ի յաղթել պատերազմաւ Բահլճացն առնու գերի սաստիկ յոյժ: Եւ հասեալ ի դունն արքունի ընծայեցուցանէ թաղաւորին պարսից զհասարակ գերույն: Եւ թուեալ զհասարակն՝ ևս ընծայէ որդույ արքայի զեալթներորդ մասն: Եւ հրաժարեալ ի նոցանէ, դառնալ յայշխարհն իւր: Եւ եկեալ ի տուն

¹⁸ Գ. Տեր-Մկրտչյան, Անանիա Շիրակացի, էջ 16—17:
¹⁹ Տե՛ս И. А. Орбели, Вопросы и решения, էջ 72:
²⁰ И. А. Орбели, նշված աշխատ., էջ 12—13:

դարիկպետի՝ յոյժ մեծարի ի նմանէ, ոչ որպէս զնախարար, այլ որպէս զմի որ ի թագաւորաց: Եւ սա տայ նմա զութերորդ մասն գեր[ւ]ոյն: Եւ եկեալ առ սպայապետն, զոր Խորաւարանն կոչեն, և առաւել ևս ի նմանէ մեծարեալ՝ տա[յ] նմա զչորերտասաներորդ մասն գեր[ւ]ոյն: Եւ ևս յառաջ եկեալ՝ հասանէ յաշխարհ իւր՝ և ընդ առաջ լինի նմա եղբայր իւր կրտսեր Հրահատ, և տա[յ] նմա զերեքտասաներորդ մասն գերուոյն: Եւ ևս յառաջ եկեալ՝ ընդ առաջ լինին նմա ազատք հայոց և տայ նոցա զինն մասն գերուոյն: Եւ եկեալ ի Վաղարշապատ՝ տայ ի սուրբ եկեղեցիսն զվեշտասաներորդ մասն գերուոյն: Եւ եկեալ Սահակ աւագ եղբայր իւր՝ տա[յ] նմա զքսաներորդ մասն գերուոյն: Եւ իւր մնաց հինգ հարեւր և եաթանասուն անձն»²¹: Խնդրի վերջում Շիրակացին հարցնում է. «Արդ, գիտեա՛ս, թէ ընդ ամենայն քանի՞ է լեալ»:

Շիրակացու այս խնդրի լուծումից երևում է, որ Ներսէհ Կամսարականի վերջրած գերիներ թիվը եղել է ընդամենը 2240 հոգի, որից 1120 հոգի նա նվիրել է պարսից թագավորին (իմա՝ Պերոզին՝ 457—484 թթ.), 160 հոգի տվել է նրա տղային, 120 հոգի տվել է դարպետին (Օրբելին այդ անունը համապատասխան է համարում բյուզանդական *καυροπαλατις*-ին)²², 60 հոգի նվիրել է Խորավիրանին (սրան Օրբելին համարում է Պարսկաստանի արևելյան աշխարհամասի կառավարիչ), 60 հոգի նվիրել է իր եղբայր Հրահատին, 80 հոգի՝ հայ ազատներին, 40 հոգի հայկական եկեղեցիներին, 30 հոգի իյմյուա եղբորը՝ Սահակ իշխանին և վերջում իր մոտ մնացել է ընդամենը 570 գերի:

«Խնդրագրքի» համար փաստ ծառայած այս իրադարձությունն ինքնին հետաքրքիր է Հայաստանի սոցիալ-տնտեսական հարաբերությունները լուսաբանելու տեսանկյունից: Ակադ. Հ. Մանանդյանը իր «Ցեղալիզմը հին Հայաստանում» աշխատությունում մեջ կարևոր է համարել օգտագործել այս փաստը՝ վաղ ֆեոդալիզմի շրջանում ստրկատիրական կացութաձևի առկա-

²¹ Անանիա Շիրակացու մատենագրությունը, էջ 25—26: Խնդրը աշխարհաբար թարգմանվում է՝ «Արշավիրի որդի Ներսէհ Կամսարականը, որն այս Ներսէհի անվանակիցն ու նախահայրն էր, բահլաճների դեմ մղած պատերազմում հաղթելով նրանց, հույժ մեծ թվով գերիներ է վերցնում: Երբ հասնում է արբունի դուռը՝ գերիների կեսը նվիրում է պարսկական թագավորին, իսկ մնացածի յոթերորդը՝ նրա որդուն: Ապա նրանց հրաժեշտ տալով, վերադառնում է իր երկիրը: Ծանապարհին գալով դարիկպետի տունը, նրա կողմից անչափ մեծարվում է ոչ իբրև նախարարի, այլ՝ թագավորի պատվասիրությամբ, և սա տալիս է նրան մնացած գերիների ութերորդ մասը: Հետո գալիս է սպարապետի մոտ, որին, Խորավարանի սպարապետ են ասում: Նրա կողմից ավելի ևս մեծարանքի արժանանալով, նվիրում է մնացած գերիների տասներորդ մասը: Ավելի ևս առաջ անցնելով, հասնում է իր երկիրը: Նրան դիմավորելու է դուրս գալիս իր կրտսեր եղբայրը՝ Հրահատը: Նրան տալիս է մնացած գերիների տասներեքերորդ մասը: Առաջ անցնելով, նրան դիմավորելու են դուրս գալիս հայոց ազատները, որոնց տալիս է մնացած գերիների իններորդ մասը: Գալով Վաղարշապատ, սուրբ եկեղեցիներին տալիս է մնացած գերիների 16-րդ մասը: Նրա մոտ է գալիս իր Սահակ մեծ եղբայրը, և նրան տալիս է մնացած գերիների քսաներորդ մասը: Նրան մնում է ընդամենը 570 գերի»:

²² Աբրահամի մոտ այդ բառը դարձել է հատուկ անուն (տե՛ս Կ. Ա. Օրբելի, նշված աշխատություն, էջ 63):

լուծությունը ապացուցելու համար²³: Պարզվում է, որ վաղ ֆեոդալիզմի շրջանում դեռևս ստրկական տնտեսություններ ունեին ոչ միայն իշխաններն ու բարձրաստիճան զինվորականները, այլև՝ եկեղեցին, որոնց և գերիներ է նվիրաբերել Ներսէհ Կամսարականը:

Ի դեպ, Օրբելին, հետևելով Գ. Տեր-Մկրտչյանին, իրավացի նկատել է, որ Ներսէհ Կամսարականը կուվել է ո՛չ թե Հյուսիսային Կովկասի բահլաճների դեմ, ինչպես ենթադրել է պրոֆ. Գ. Խալաթյանցը, այլ Բահլի բնակիչների դեմ²⁴:

Իր ծանոթագրությունների մեջ Օրբելին հատուկ տեղ է հատկացրել նաև «Խնդրագրքում» հիշված պատմական այն իրադարձություններին, որոնք կապված են հայ ժողովրդի մղած ազատագրական պատերազմների հետ՝ ընդդեմ Սասանյան Պարսկաստանի: Այսպես, օրինակ, Շիրակացու առաջին և ութերորդ խնդիրներում Օրբելին մատնացույց է արել Զորակ Կամսարականի քաջագործությունը, որը սպանել է պարսից մարզպան Սուրեն Վշտասպին: Շիրակացու տեղեկություններից երևում է, որ Զորակ Կամսարականը գլխավորել է հայկական զորագնդերից մեկը, հաղթանակ տարել՝ պարսկական զորքերից կոտորելով 1760 հոգի: Ուշագրավ է այն, որ այդ տեղեկությունը, ինչպես հայտնում է Շիրակացին, իրեն է հայտնել իր հայրը՝ Հովհաննեսը. «Այսպես լուայ ի հօրէ իմմէ»²⁵,— գրում է նա:

Այն փաստի հիման վրա, որ Զորակ Կամսարականի ղեկավարած ճակատամարտում պարտված պարսիկները փախել և ապաստանել են Նախճավանում, Օրբելին ենթադրել է, որ ճակատամարտը տեղի պետք է ունեցած լինի Արարատյան դաշտում, հավանական է՝ Դվին քաղաքի մոտակայքում:

Օրբելին ուշադրություն է դարձրել հին հայկական մատենագրության մեջ թվաբանական հաշվումներ կատարելու և գրառումների ձևի վրա՝ հիմք ունենալով գլխավորապես Գ. Տեր-Մկրտչյանի կատարած պարզաբանումները: Այսպես, թվական մեծ միավորներ արտահայտելու համար գործ է ածվել «բյուրի» հատուկ նշանագիր, որը ցանկացած թվանշանի վրա դնելիս, այն մեծացնում է տասը հազարով: Օրինակ, «Ա»-ն հավասար է 1-ի, իսկ այդ նշանը Ա-ի վրա դնելիս (Ա̅) այն դառնում է տասը հազար, «Ժ»-ի վրա դնելիս դառնում է հարյուր հազար և այլն²⁶: Կեսը արտահայտելու համար գործածության մեջ է եղել լատինական Շ տառի նման մի նշանագիր:

Շիրակացու «Խնդրագրքում» գործ են ածվել մեկ համարիչով կոտորակներ: Այսպես, 19-րդ խնդրի պատասխանը պետք է լինի 21⁷/₈. 7⁷/₈ կոտորակը

²³ Տե՛ս Հ. Մանանդյան, *Ցեղալիզմը հին Հայաստանում*, Երևան, 1932, էջ 236:
²⁴ Տե՛ս Կ. Ա. Օրբելի, *Вопросы и решения*, էջ 60: Օրբելին ուշադրություն է դարձրել այն փաստին ևս, որ «Խնդրագրքում» հիշված Կամսարական եղբայրները այն անձնավորություններն են, որոնց մասին տեղեկություններ է հաղորդել նաև Ղազար Փարպեցին:
²⁵ Անանիա Շիրակացու մատենագրությունը, էջ 230:
²⁶ Այս մասին տե՛ս Ա. Գ. Աբրահամյան, *Հայոց գիր և գրություն*, Երևան, 1973, էջ 89—95:

կարելի է եղել տալ կոտորակային երեք միավորով $c(1/2) + \eta > (1/4) + \epsilon > (1/8) = 7/8$:

Ծանոթագրության մեջ Օրբելին վերծանել է «Խնդրագրքում» գործածված ծանրության և երկարության չափերը՝ հիմք ունենալով Շիրակացու «Յաղագս չափոյ, չափոց և պատարաց» և «Յաղագս կշոոյ, կշոոց և կըշոորդաց» աշխատությունները: Օրբելու մոտ վերծանված չափական միավորները հետևյալներն են.

Դանեկանը լիտրի 72-րդ մասն է, 96 գարեհատը ներկա կշռով հավասար է մոտ 4,5 գրամի: Արծաթ դրամով համապատասխանում է դինարին:

Դրամը լիտրի 80-րդ մասն է, հավասար է մոտ շորս գրամ ծանրության:

Կայտը կշռային միավոր է. 23 կայտը հավասար է 414,720 գարեհատի, այսինքն՝ 60 լիտրի:

Կենդիւնարը ծանրության չափ է, հավասար է 100 լիտրի, մոտ 32,4 կիլոգրամի: Դրամական հաշվումներով հավասար է 7200 դահեկանի:

Լիտրը ծանրության չափ է, համապատասխանում է հոռմեական ֆունտին, հավասար է 72 դահեկանի, 80 գրամի, բյուզանդական գործածության մեջ՝ 324 գրամի (319,28 գր.—328,32 գր.):

Մղոնը երկարության չափ է, հավասար է 7 ասպարեզի, 749 քայլի, իսկ պարսկական չափով՝ 1000 քայլի:

Գիտնականը Մ. Կ. Օրբելու օգնության մասին և ուղղումներ է կատարել Շիրակացու 15 և 24-րդ խնդիրների հաշվումների մեջ և այդ հիման վրա սրբագրություն կատարել Գ. Տեր-Մկրտչյանի հրատարակած բնագրում: Այսպես, Գ. Տեր-Մկրտչյանի բնագրի 15-րդ հարցադրման մեջ ծախված ազնվացեղ ձիու գնի չորրորդ մասով կովեր է գնվել, յոթերորդ մասով՝ այծեր, և տասներորդ մասով՝ եզներ, 318 դահեկան էլ վճարվել է ոչխարներին: Եզներին վճարված 10-րդ մասը ճիշտ ձևով ուղղված է 11-րդ մասի: Այդ ուղղումն ընդունել է պրոֆ. Գ. Բ. Պետրոսյանը²⁷: Նման մի այլ սխալ ուղղված է 24-րդ խնդրում:

Աշխատության վերջում Օրբելին դետեղել է առարկայական ցանկ, որը գյուրացնում է «Խնդրագրքի» յուրացումը: Առարկայական ցանկը նա բաժանել է հետևյալ խմբերի. 1. մաթեմատիկական տերմիններ, 2. անձնանուններ, 3. էթնիկական և աշխարհագրական անուններ, 4. տիտղոսներ, կոշումներ ու պաշտոններ, 5. տնտեսական կենցաղ, 6. արհեստագործական կենցաղ, 7. որսորդական և ռազմական կենցաղ, 8. նավագնացություն, 9. ֆինանսական և առևտրական տերմիններ, 10. չափեր և դրամներ, 11. բնակավայրեր, 12. շենքեր և կառույցներ, 13. կենդանիների անուններ, 14. բույսերի անուններ, 15. մարմնի մասերի անուններ, 16. բարեկամական հարաբերությունների անվանումներ և 17. այլք:

Կարելի է կանգ առնել Շիրակացու «Խնդրագրքի» կապակցությամբ ահադ.

²⁷ Տե՛ս Գ. Բ. Պետրոսյան, Մաթեմատիկական Հայաստանում հին և միջին դարերում, Երևան, 1959, էջ 71:

Հ. Օրբելու առաջ քաշած և լուծած այլ խնդիրների վրա ևս, սակայն մատնացույց արածները, կարծում ենք, բավական են ըստ արժանվույն գնահատելու մեծանուն գիտնականի ներդրումները հայկական աղբյուրագիտության, մասնավորապես՝ բնական գիտությունների պատմության բնագավառում:

А. Г. АБРАМЯН

И. А. ОРБЕЛИ — ПЕРЕВОДЧИК И КОММЕНТАТОР
«ЗАДАЧНИКА» ШИРАКАЦИ

Резюме

В данной работе рассматривается перевод И. А. Орбели «Задачника» ученого VII века Анания Ширакаци на русский язык и ряд вопросов, выдвинутых им в связи с этим, представляющих большую важность для истории естественных наук в Армении.

И. А. Орбели был первым ученым, по достоинству оценившим труд Ширакаци для истории науки. Впервые он поставил вопрос о том, дошел ли до нас первоначальный текст «Задачника». Орбели предположил, что сохранившийся в рукописях текст этого произведения является частью более обширного труда. Предположение масти того ученого полностью подтвердилось последующими исследованиями. В рукописи № 1770 Матенадарана им. М. Маштоца были обнаружены математические таблицы, являющиеся частью того же сочинения Ширакаци.

На основании развернутой аргументации И. А. Орбели подтвердил предположение Г. Тер-Мкртчяна о том, что «Задачник» был составлен Ананией Ширакаци по заказу князей Камсаракан. Исследуя источники «Задачника», И. А. Орбели предположил, что Ширакаци заимствовал из греческих оригиналов только три задачи, а остальные принадлежат перу самого ученого.

Разносторонне подойдя к произведению Анании Ширакаци, И. А. Орбели остановился и на математических вычислениях, и на метрологических данных, и на исторических сведениях, сообщаемых «Задачником», показав тем самым образец источникововедческого подхода к древним письменным памятникам.

Հ Ո Ղ Վ Ա Ծ Ն Ե Ր
Տ Դ Ա Դ Ե Ի

И. А. ОРБЕЛИ

НАДПИСИ МРЕНА*

Развалины городка Мрена находятся в Кагызманском окр. Карсской обл., верстах в 25 на юг от Ани, на правом берегу Ахуряна. В настоящее время развалины совершенно пустынно и служат местом летнего кочевья жителей селения Пакран, древнего Багарана.

Мрен как населенное место упоминается впервые Лазарем Парбцем. При Багратуни и позже Мрен, летнее местопребывание царей и анийских князей, славился садами и виноградниками, упоминаемыми в надписях; сохранились многочисленные изгороди из дикого черного камня и развалины сооружений, которые могли служить давяльнями для винограда.

Большинство городских построек было возведено из этого дикого черного камня, вследствие чего стены многих домов стоят и по настоящее время; ясно видны улицы и переулки, заваленные обрушившимися камнями.

Главное из сохранившихся зданий—величественный собор, построенный согласно показаниям историков, стратилатом Армении и Сирии Давидом Сахаруни, что подтверждается надписью I; согласно надписи постройка окончена в 638—639 гг. В XIII в. храм был возобновлен, заново построены или облицованы юго-западный угол, средняя часть южной и западной стен; в кладке были использованы многочисленные древние и позднейшие крестные камни, стелы и камни с надписями. Наряду с возобновлением производилось умышленное разрушение собора, и при выламывании грабителями больших камней из стен собора пострадали надписи 18 и 19.

* Издание настоящей работы И. А. Орбели намечалось в серии «Памятники армянской эпиграфики», в качестве второго выпуска. В 1917 г. она была сдана в печать, набрана и даже отпечатаны прилагаемые три таблицы, но она, к сожалению, так и не вышла из печати и сохранилась лишь в единственном корректурном экземпляре у автора. К концу своей жизни И. А. ее передал ныне покойному эпиграфисту С. Г. Бархударяну, очевидно, для включения в «Свод армянских надписей», издаваемый Институтом археологии и этнографии АН Арм. ССР под руководством названного ученого. Однако и С. Г. Бархударяну не было суждено осуществить за-

К юго-востоку от храма возвышается уцелевший портал совершенно разрушившегося дворца, построенного, согласно надписи 28, в 1275—1286 гг. бароном Сэнопом Сахмадином, купившим, согласно той же надписи, в 1262 г. Мрен у Арташира сына Шахшаха и в 1276 г. скупившим у частных владельцев сады и виноградники.

Недалеко от портала находится небольшая базиличная часовня, возведенная, согласно надписи 29, в 1217 г. вардапетом Мыхитаром.

К востоку от собора находится своеобразный памятник в виде обособленной высокой стены, сооруженной из нескольких крестных камней на постаменте из украшенных резьбою плит; использованный материал—XII—XIII вв. Другой такой же памятник, но меньших размеров, находится неподалеку, к северу от первого.

Среди развалин домов и давлен разбросаны остатки других, умышленно разрушенных архитектурных памятников, части бытовой кладки с ободранной облицовкой, обломки облицовочных плит, капитель монументального здания и т. п.

Неподалеку от собора расположено несколько кладбищ, на которых сохранились обломки крестных камней и их постаментов, плоские могильные плиты и двускатные надгробные памятники; большая часть надгробных сооружений Мрена умышленно уничтожена, камни вывезены.

Тринадцать вошедших в этот выпуск надписей и их фрагментов—5, 9, 10, 12, 16, 20, 21, 22, 23, 24, 25, 26, 27—издаются впервые, остальные были уже напечатаны Саргисяном, Алишаном, Н. Я. Марром, Орбели и еп. Г. Овсепяном.

Фотографии надписей, воспроизведенные на таблицах, сняты А. М. Вруйром при посещении нами Мрена в августе 1913 года; надпись 29 воспроизведена по фотографии, снятой Н. Н. Тихоновым летом 1908 года.

ветное поручение своего друга-учителя акад. И. А. Орбели, и работа осталась неизданной.

В связи с подготовкой издаваемого сборника мы обратились к вдове С. Г. Бархударяна К. Т. Асатрян-Бархударян с предложением предоставить работу И. А. для публикации, что она и сделала с любезностью.

В издании учтены все имеющиеся корректурные поправки И. А., а чтение надписей сверено с отпечатанными таблицами 1917 г., нужные же коррективы оговорены. В публикации не сочли нужным сохранить набор текста лигатурным шрифтом, ибо он нуждается в значительной корректуре, а подобного шрифта ныне нет. К большому нашему сожалению, из трех указанных выше таблиц сохранились только две, но и их воспроизвести не удалось, хотя были предприняты надлежащие попытки. Абсолютную точность издаваемых текстов с чтениями и таблицами И. А. Орбели редакция гарантирует. (Ред.).

1. Собор¹. Снаружи, на западной стене, на средней части, по обе части, по обе стороны верхнего окна вырезана надпись в три строки; камни первый, последний и первый в правой половине надписи заменены новыми. Начало надписи помещалось отдельно на первом камне. На север от окна:

На юг от окна:

Ի ԱՄԻՈՅՆ ՔՍԱՆ ԵՒ ԻՆՆԵՐԴ (ԴԵՐԵՍՆԵՐԴ) / ՈՐԳԻ ԶԵՐԱԿՂԻ ԲԱՐԵՅԱՂԹՈՂ
ԹԱԳԱՒՈՐԻ ՅԴԵՇԻՆԱՆՈՒՌԹԵԳԱՆ ԳԱԹԹԻ ԱՄԵՆԱԳՈՎ ՊԱՏՐԿԻ ԿՈՒՐԱՊԱ-
ՂԱՏԻ ԵՒ ՍՊԱՐԱԴՊԵՏԻ ԶԱՅԴ/ՈՅ ԵՒ ԱՍՈՐԻՈՅ ԵՒ ՅԵՊԻՍԿՈՊՈՍՈՒԹԵԱՆՆ
ՍՐԲԱԴՍԷՐ² ՏԵԱՌԵ ԹԵՂՈՎՓԻՂՈՍԻ ԵՒ Ի ՏԱՆՈՒՏԵՐՈՒԹԵԱՆ ՆԵՐՍԵԴԻ ՇԻ-
ՐԱՄ/ԿԱՅ ԵՒ ԱՇԱՐՈՒՆԵԱՅ ՏԵԱՌԵ ՇԻՆԵՅԱԻ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՅԴԻՍ Ի ԲԱՐԵ-
ԽԱՒՍԴԻԹԻՐԻՆ ԿՍՄՍԱՐԱԿԱՆԱՅ ԵՒ ՄՐԵՆՈՅ ԵՒ ԱՄԵՆԴԱՅՆ ԶԱՅՈՅԴ:

Изд. Алишан, А., 114; Орбели, Б., 133, 138; Овсепян, 173; ср. Орбели, III, 88—89.

2. Собор. Снаружи, на западной стене, у северного угла, надпись вырезана в девять строк.

✠ ՅԱՆՈՒՆ ԱՅ ԱՅՍ ԻՄ ԶՐԱՄԱՆԵ ԵՆ ԳԱԳԿԱ ՇԱՀԻԱԶՆ ՇԱՀԻ/ԱԶՍԵԱՂ ԵՄ
ԶՄՐԵՆՈՅ ԶԿՈՌԵ ՈՐ Ի ՆԱԽԱՃԱԻԱՆԻ ԷՐ ԶՄԱՐԳՈ/ԵՒ ԶԵԶԻՆ Ի ԶԵՌՆ ԽԵԴՐՈՅ
ԱՄՊԱՍԻԻ ՏԵԱՌԵ ՍԱՀԱԿԱ ԱՇԱՐՈՒՆ/ԵԱՅ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՈՐ ԱՆՄԱԼԻՂՈՅ
ԽԵԴՐԵ Ի ՔՐԻՍՏՈՍԷ ԹՈՂՈՒԹԻՐԻՆ ԼԻՆԵ/Լ ՄԵՂԱՅ ԻՄՈՅ: ԱՐԳ [ԱՒ] ԼՈՂ ՈՔ
ԸՆԻԻՄԱՆԱ ԻՄ [Ա.] ԶՐԱՄԱ[Յ]ՆԱՅՍ ԿԱՄ/ՅԻՄ ՅՈՐԳԵԱՅ ԿԱՄ ԱՅԼ ՈՔ ԵՒ
ԻՅԵ ՊԱՐՏԱԿԱՆ ԼԻՅԻ ՄԵՂԱՅ ԻՄՈՅ ԵՒ/ԻՄ ԱՄԵՆԱՅՆ ԱԶԳԻ ԵՒ ՍՊԱՆՄԱՆ
ԱՐԵԱՆՆ ՔՐԻՍՏՈՍԻ. ԻՍԿ ԼԿՂԱՏԱՐԻԶ ԳՐՈ/ՅՍ ԱԻՀՐԵՆԱ ԼԵՂԻՅԻ ԼԻՂ ՔՐԻՍ-
ՏՈՍԷ: ՍՈՒՐԲ ԿԱԹԱՂԻԿԷ ԵՒ ՍՈՒՐԲ ՆՇԱՆՍ ԼԻՅԻ ԿՆԻՔ ԳՐՈՅՍ/ԵՂԱԻ ԱՌԱՋ-
ՆՈՐԳ ԲԱՐՈՅՍ ԶԱՐՊ ԶԱՅՈՅ ՏԱՆԱՒՏԵՐ:

Изд.: Саргисян, 197; Алишан, III, 138—139³.

3. Собор. Снаружи, на западной стене, на северной части, вырезана надпись в одну строку.

ՎԱՀԱՆ ՔԱՀԱՆԱ ԳԾՈՂ

¹ Описание дано дважды—на стр. 1 и 10—11, в первом случае с указанием «Текст см. ниже, на стр. 8—9»; вкралась ошибка: следовало указать на стр. 10—11. Описания сведены. Имеется ссылка: «Фот. см. табл. I», но эта таблица, как было сказано, не сохранилась.

² В предыдущем издании И. А. Орбели (Б., 138) налицо *ՍՐԲԱՍԻՐԻ*, таково слово и в наборе, но И. А. корректурным знаком исправил *ՍՐԲԱՍԷՐ*.

³ Имеется указание на фото: табл. I.

Изд.: Саргисян, 197; Алишан, Ш, 139.

4. Собор. Снаружи, на западной стене, на северной части, надпись вырезана в семь строк.

+ՆՂ ԹՈՒԱԿԱՆՈՒԹԵԱՆՍՅ՝ շԱՅՈՑ Ի շԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՏԵԱՌԵ ՊԵՏՐՈՍԻ ԵՒ ԽԱՉ/ԿԱ շԱՍՅ ԿԱԹՈՂԻԿՂ ՈՂՍՍՅ, ԱՅՍ ԻՄ ՀՐԱՄԱՆՔ ԵՆ ԳԱԳԱՍ ՇԱՀԱՆՇԱՀԻ ՈՐԴՈՅ Ա/ՇՈՏՈ. ԱՁԱՏԵՂ ԵՄ ՁՄՐԵՆՈՅ ՁՀԱՐԿԵ ՁՄՈՒԾ ԵՒ ՄՐՈՒՐ ԶԿԱՊԻՃՔԵ ԻՆ./ԻՋՈՒՑԻ ԵՒ ԲԱԳՐԵՒ շԱՅՆ ԵՒ ՁԴՐԱՄԵ: ԵԹԵ ՈՔ ԸՆԳԻՄԱՆԱ ՀՐԱՄԱՆՅԱՅ ԻՄՈՅ /ՅԻՄՈՅ ԿԱՄ ԱՂՅՂՂ ՈՔ ՈՎ ԻՑԵ ՊԱՐՏԱԿԱՆԵՆ ԵՂԻՑԻ ՍՊԱՆՄԱՆ ԱՐԵԱՆԵ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՒ ԻՄ ԱՄԵՆԱՅՆ/ ԱՁԳԻ ՄԵՂԱՅ ՏԵՐ Ի ՅԺԸ շԱՅՐԱՊԵՏԱՅՆ ՆՁՈՎԵԱՂ ԵՂԻՑԻ ԿԵՆԱԻՔ ԵՒ ՄԱՀՈՒ: ԵՂԵՒ ԱՌԱՋՆՈՐԳ ԴԲԱՐՈՂՅՍ ԳՐԻԳՈՐ շԱՈՅ ՏԱՆՈՒՏԵՐ:

Строка 3 по-видимому вырезана поверх стерттого.
Изд.: Саргисян, 197; Алишан, Ш, 139.

5. Собор. Снаружи, на западной стене, на месте первого камня надписи 1, вставлен крестный камень с вырезанной надписью в две строки.

ՏԵՐ ԱԻՂՈՐՄ/ԵԱՅ ՍԱՀԱԿԻ

6. Собор. Снаружи, на западной стене, на южной части, вырезана незаконченная надпись в одну строку.

Ի ՅԱԲԵԳԱԿԱՆ ՏՈՂԻՄԻՍ ՏՈՄԱՐԻՍ ԵՒ Ի ԹՎԼԻՆՂ ՀԼԱՅՈՅՂ Ի ՇԺԲ ԱՄԱՅ ՇՐԼՁԱՆԻՂ...

Изд.: Саргисян, 197; Алишан, Ш, 139.

7. Собор. Снаружи, на западной стене, на южной части, вырезана надпись в семь строк.

+ՅԱՆՈՒՆ ԱՅ Ի ՆԵՍ ԹԻՂՎԱԿԱՆԵՆ ԵՍ ԴԱՎԹ ՎԱՐԴԱ ՈՐԴԻ ԷՏՈՒ ՁԻՄ ԱՅԳԻՆ ՁԱՅՆ /ՈՐ Ի ԳԵՏԵՁՐԵ ԻՄ ՁԵՌԱՅ ԱՐԿԵԼ ԱՂԼ Ի ՍՈՒՐԲ ԿԱԹՈՂԻԿԵ Ի ՁԵՌՆ ԱՌԱՊԱՏԻՎ/ ԵՒ ՀՈԳԵՒՈՐ ՏԵԱՌԵ ՍԱՀԱԿԱՆԻՑԻ ՊԱՐՏԻՍ ԵՄ ԸՆԳԵՑԵԱՂ ՄԻՆՁ Ի ՄԻՒՍ ԱՆ[ԱՆ]ԳԱՄ ԳԱՂՈՒՍՏ. ՁԲԱՐ/ԵԿԵՆԳԱՆԵՆ ՈՒՐԲԱԹ ԱԻՐՆ ՊԱՏԱՐԱԿԵ ՅԱՄԵՆԱՅՆ ԵԿԵՂԵՑԻՍ ՅԱՄԱՆՈՒՆ ՄԱՏՈՒՑԱՆԵՆ: /ԵՒ ՈՐ ՈՔ ՍՏԵ ԿԱՄ ՅԱՊԻՇՏԱԿԵԼ Լ ՁԱՆԱՂԻՄ ՄԵՂԱՅՍ ԵՒ ԻՄ ԱՁԳԻ ՄԵՂԱՅ ՊԱՐՏԱԿԱՆ ԵՂԻՑԻ ԱՌԱՋԻ ԱՅ ԵՒ/ ՅԱՅ ԳԱՏԱՊԱՐՏԱԿԱՆ ԵՂԻՑԻ [ԻՍԿ] ԵՒ ՄԱՍՆ ԵՒ ԲԱԺԻՆ ԸՆԳ ԽԱՉԱՀԱՆՍ ԿՐԵՑԷ. ԻՍԿ ԿԱՏԱՐԻՉԼՔՂ ԳՐՈՅՍ/ ԱԻՐՀՆԵԱՂ ԵՂԻՑԻՆ ՅԱՅ ԵՒ ՅԱՄԵՆԱՅՆ ՍՐԲՈՅ:

3^a В наборе у И. А. ԹՈՒԱԿԱՆՈՒԹԵԱՆ.
4 В тексте с лигатурным шрифтом читается ՍԱՀԱԿԱ.

В стр. 2 после *ՈՐ* около 8 букв стерто и замазано известью.—В стр. 3 слово *Ան[Ան]ԳԱՄ* прервано крестиком метки на камне, лишние буквы *Ան* подтерты.

Изд.: Саргисян, 196—197; Алишан, Ш, 138.

8. Собор. Снаружи, на западной стене, на южной части вырезана надпись в девять строк.

+ԵՒ ԵՍ ՍՈՓԻ ԳՈՒՍՐ ՄԵԾԻՆ ԱՇՈՏՈՅ ՇԱՀԱՆ/ՇԱՀԻ ՀԱՂՅՂՈՅ ԵՒ ՎՐԱՅ ԹԱԳՈՒՀԻ ՏՎԵԱՂ ԵՄ ԵՒ /ՀԱՍՏԱՏԵԱՂ ՁԴԱՎԹԻ ՁԱՅԳԻՆ Ի ՍՈՒՐԲ ԿԱԹ/ԱՂԻԿԵ ԵՒ Ի ՏԵՐ ՍԱՀԱԿ ԵՒ Ի ՆՈՐԻՆ ԱԹՈՌԱԿԱՂՍ ՁՈՐ ԻՆՔԵ ԻԼՆՂ ԱՆԳԱՐՁ ԵՐ ԱՐԱՐԵԱՂ ՎԱՍՆ ԳԱՎԹԻ/ ՀՈԳՈՅՆ ԵՒ ՎԱՍՆ ԻՄ ԵՒ ՎԱՍՆ ԳԱԳԱՅՅ ՇԱՀԱՆ/ՇԱՀԻ ԱՐԵԻՇԱՏՈՒԹԵԱՆ: ԵՒ ՈՐ ՈՔ ՅԱՊԸՇՏԱԿԵԼ ՁԱՆ/Ա ՅԱՅ ԲԱՆ ԷՆ ՆՁՈՎԴԵԱՂ ԵՂԻՑԻՆ, ԻՍԿ ՀՐԱՄԱՆԱ/ԿԱՏԱՐՔՍ ԱԻՀՐԵԱՂ ԵՂԻՑԻՆ ՅԱՅ:

Изд.: Саргисян, 197; Алишан, Ш, 138.

9. Собор. Снаружи, на западной стене, на южной части, под надписью 7⁵ вырезана незаконченная надпись в одну строку.

ԵՒ ԵՍ ՍՈՓԻ ԳՈՒՍՐ ՇԱՀԱՆՇԱՀԻ շԱՅՈՅ ԹԼԱԳՈՒՀԻՂ...

10. Собор. Снаружи, на западной стене, на южной части, фрагмент недописанной надписи в одну строку очень крупными буквами.

////ՅԻՍՈՆԿԻՐԿԷ

11. Собор. Снаружи, в южной стене, у западного угла, встроено камень с фрагментом вырезанной надписи в пять строк.

...Ա ԵՒ ԱՅԼ ԱԹՈՌԱԿԱՂԱՂԱՅՆ ՄԻՆ/...Ն ԵՒ ԻՄ ՀՈԳՈՅՍ ՅԻՇԱՏԱԿ Ի /...ԱԿԵՆ ՄԻՆՁ Ի ՔՐԻՍՏՈՍ: ԵՒ ՈՐ ՈՔ Հ/ԴԱԿԱՌԱԿԻ ԻՄՂ ՄԵՂԱՅ ԵՒ ԻՄ ԱՁԳԻ ՄԵՂԱՅ ԴՊԱՐՏԱԿԱՆ ԵՂԻՑԻՂ...

Изд.: Мapp, 88.

12. Собор. Снаружи, в южной стене, в западной части, встроено крестный камень с вырезанной надписью в две строки.

+ՏԵՐ ԱԻՂՈՐՄԵԱՅ:

13. Собор. Снаружи, на южной стене, на западной части вырезана надпись в шесть строк.

⁵ В оригинале—9.

+ ԿԱՄԱԻՆ ԱՅ՝ [Ի]ՊԱՐՈՆՈՒԹԵԱՄԲՆ ՍԱՐԳՍԻ ԵՒ ԻՎԱՆԻԱԹՈՒՆԻՆՆԵՑ /ԵՒ ԱՆԱ-
 ԿՈՐԱՅ ԵՒ Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ Ի ՏԷՐՑ ՎԱՐԴԱՆ ԵՍ ԻԻԱՆԻԿՍ ԻՄ ԱՄԻ-
 ԲՈՒԹԵԱՆՍ ԵՒ ԱԻՏԱՇԻՆ ՁԵՌՆԱԻՈՐՈՒԹԵԱՆ ՁԱՅՍ ԱՐՁԱՆ ՀԱՍՏԱՏ/ԵՅԱՔ ՈՒ
 ԶԶԻԹՀԱԿՆ ԵԿԵՂԵՑՈՅՍ ԸՆՁԱՅ ՏՎ/ԱՔ ՄԵՐ ՀՈԳՈՅՍ ՀԱՄԱՐ ԱՆԽԱՐԱՆ:
 ԹՐՎԴԻՆՆԵՑ ԶԿԹ:

Фот. см. табл. III.
 Изд.: Марр, 88-89.

14. **Собор.** Снаружи, на южной стене, на средней части, вырезана надпись в восемь строк.

ԹՐՈՒՆՆԵՑ ՀԼԱՅՈՅՆ ԶԼԷ: /ՅԱՆՈՒՆՆ ԱՅ՝ ԵՒ ՄԻՋՆՈՐԴՈՒԹԵԱՄԲ ԱՄԵՆԱՅՆ
 ԵՐԿՆԱԻՆ ԵՒ ԵՐԿՐԱԻՆ ՁԱԻ/ՐՈՒԹԵԱՆ: ԵՍ ՊԱՐՈՆ ՍԷՆՈՊ ՍԱՀՄԱԳԻՆՍ ԵՒ
 ԱՄՈՒՍԻՆ ԻՄ ՈՏՈՐՏԱ ՎԱՍՆ ՓՐԿՈՒԹԵԱՆ/ՄԵՂԱՅ ՄԵՐ ԵՒ ՎԱՍՆ ՅԵՐԿԱՐ
 ԿԵՆԳԱՆՈՒԹԵԱՆ ՁԱԻԱԿԱՅ ՄԵՐՈՅ ԵՒ ՎԱՍՆ ՇԻՆՈՒԹԵԱՆ ՀԱՄ/ԱՐ ՄՐԵՆՑ
 ՀԱՅԻՆ ՇԱՐԻԱՏՆ ԹՈՂԵԼ ԷԱՔ: ԵՒ ՀԱՅՄ ԱՅԼ ԹՈՂԱՔ ԶԷԳԵՅՆ/ԳԻՆՈ ԵՒ ԽԱՂՈ-
 ՎԻ ԽԱԼԷՆ ՈՐ ԱՅԼ ՈՉ Ի ՄԵՐՈՅ ԵՒ ՈՉ ՅԱԻՏԱՐԱՅ ՈՉ ՈՎ ՁԵԱՌՆԷ:/ՈՎ ՀԱԿԱ-
 ԻԱԿԻ ԵՒ ՁՄԵՐ ՅԻՇԱՏԱԿՍ ԽԱՓԱՆԷ ՆՁՈՎԻ ՅՄՅ ԵՒ ՅԹԸ ՀԱՅՐԱՊ/ԵՏԱՅՆ ԵՒ
 ՄԱՍՆ ԵՒ ԲԱԺԻՆ ՆՈՐԱ ԸՆԴ ՈՒԳԱԻ ԵՒ ԸՆԴ ԿԱԷՆԻ ԵՒ ԸՆԴ ՍԱՏԱՆԱԻ ԵԼԻՆ
 ԸԼՆԻՆ...

Фот. см. табл. III.
 Изд.: Саргисян, 199; Алишан, III, 140.

15. **Собор.** Снаружи, на южной стене, на средней части, вырезана надпись в четыре строки.

ԹՐՈՒՆՆԵՑ ԶԽԷ: /ԿԱՄԱԻՆ ԱՅ՝ ԵՍ ԳԱԻԹ ՄԻԱՐԱՆԵՅՍ ՍՈՒՐԲ ԿԱԹՈՂԻԿԵՍԻՍ
 ԵՒ ԱՐԱՐԻ ԱՐԳԻՆԷՔ: ՏԷՐ ՅՈՎԱՆԷՍ ԵՒ ԱՅԼ ՍՊԱՍ/ԱԻՈՐՔ ԷԿԵՂԵՑՈՅՍ
 ՓՈԽԱՐԷՆ ՀԱՏՈՒՑԻՆ ՄԵՂ Ի ՏԱՐԻՆ Բ ԺԱՄ Ի ՏԱԻՆԻ ԳԱԻԹԻ ԵՒ Յ/ԱԿՈՐԱՅ.
 Ա ԻՆՁ ԱՌՆԵՆ ԳԱԻԹԻ ԵՒ ԱՍՈՒՍՆՈՅ ԻՄՈՅ ԷԼԽԱԹՈՒՆԻՆ: ԿԱՏԱՐՈՂՔՆ
 ԱՒՐՀՆԻՆ ՅՄՅ:

Фот. см. табл. II.
 Изд.: Саргисян, 199; Алишан, III, 140.

16. **Собор.** Снаружи, на южной стене, на восточной части, вырезана надпись в три строки; надпись незаконченная.

⁶ В лигатурном наборе— ԷՍԱՆԻԱԹՈՒՆԻՆ

⁷ В тексте— ԵԻԱՆ ԱԿՈՐԱՅ

⁸ В тексте—ՏԵՐ, в лигатурном наборе—ՏՐ. Описка отмечена И. А.

ՔՐԻՍՏՈՍՍՈՒՐ ԾԱ/ՌԱՅ ԱՅ՝ ԵՒ ՍՐԲՈ ԵԿԵՂԵՑՈ/ԴԱՆԿԱՅ ՈՐԴԻ ՇԱՏՇ.....

17. **Собор.** Снаружи, на южной стене, на средней части, вырезана надпись в одиннадцать строк.

ԹՈՒՐԱԿԱՆԻՍ /ԶԼԷ:/ԿԱՄԱԻՆ ԱՅ՝ ԱՄԵՆԱԿԱԼԻՆ ԱՅՍ ՄԵՐ ԱՐՁԱՆԱԳԻՐ Է
 ՊԱՐՈՆ ՍԷՆՈՊ ՍԱՀՄԱՏԻՆԷԼԻՍ ԱԷՏԵԼԱՅՆ ՈՐԴՈՅՍ ԵՒ ԿԵՆԱԿԻՑԼԻՆ Ի-
 Մ[Ո] ՈՒՐՏՈՒՐԻՏԱՅՈ: ՅԱՌԱՁ ԳԵ/ԵՅԻ ՁՄՐԵՆ ՅԻՄ ՀԱԼԱԼ ԱՐԳԵԱՆՑ ԵՒ
 ՀԱՍՏԱՏԵՅԱՔ ԱՐՁԱՆԱԳՐՈՎ ԵՒ ԹՈՂԱՔ Զ/ՄՐԵՆՈՅ ՏԱՍՆԱԿՆ ՀԱՅԻՆ ՈՐ Է
 ՇԱՐԻԱՏՆ ՆԱԽ ՄԵՂ ԱՐԵԻՇԱՏՈՒԹԻՆ ԵՒ ՈՐԳԵԱՅ Մ/ԵՐՈՅ ԵՒ ՅԻՇԱՏԱԿ ՅԵՏ
 ԵԼԻՑ ԱՍՏԻ ԿԵՆԱՅՍ ԵՒ ՄԵՂ ՄԵՂԱՅ ԹՈՂՈՒԹԻՆ ԵՒ ԱՐՁԱՆ Մ/ՆԱԼ ՄԻՆՁ Ի
 ԳԱԼՈՒՍՏ ՔՐԻՍՏՈՒ: ԱՐԳ ԷԹԷ ՈՔ Ի ՄԵՐՈՅ ԿԱՄ ՅԱԻՏԱՐԱՅ ԶՀԱՍՏԱՏ
 ԱՐՁԱՆՍ/ ՄԵՐ ԽԱՓԱՆԵԼ ՁԱՆԱՅ ՊԱՐՏԱԿԱՆ ԼԻՑԻ ՍՊԱՆՄԱՆ ԱՐԵԼԱՅՆ ՈՐ-
 ԿՈՅ ԱՅ՝ ԵՒ ԿԱՏԱԻՂ ՆՈՐԱՅ ՍԱ/ՏԱՆԱ ԼԻՑԻ ԵՒ ՁՅԱԻՏԵՆԻՑ ԱՆԷՍՆ ԺԱՌԱՆ-
 ԿԵՍՑԷ ՁՈՒԻԱԻ ԵՒ ՁԿԱՆԵՆ. ԵՒ ՀԱՍՏԱՏ/ՊԱՀԱԻՂՔՆ ԱՒՐՀՆԻՆ ՅՄՅ: ԿԻԿԼԻ-
 ՁԱՆԱՅ ԱՄԻՐՈՒԹԵԱՄԲՍ ԳՐԵՅԱԻ:

Фот. см. табл. II.
 Изд.: Саргисян, 198—199; Алишан, III, 139—140.

18. **Собор.** Снаружи, на южной стене, на средней части, вырезана надпись в шесть строк, последняя строка длиннее других и выступает влево.

ԹՈՒՐԱԿԱՆԻՆՆԵՑ /ԶԻԲ:/ ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲՆ ԱՅ՝ ԵՍ ՊԱՐՈՆ ՍԱՀՄԱԳԻՆՍ Ա-
 ԶԱՏԵՑԻ ՁՍՈՒՐԲ ՈՒԽՏՆ ԱՐՁՎԱՐՈՋԻ/Ո ԱՅԳԻՔՆ ՄՐԵՆՈ ԵՒ ԱԻՇԱԿԱՆՈ
 Ի ԽԱԼԱԷՑ ԵՒ ՅԱԻԵԼՈՐԴ ՀԱՐԿԷ ՈՐ ԲԵԱԿԱՆ ԱՁԱՏ ԷՐ: ՈՉ ԱՄԻՐԻՆ/ՈՐՉ
 ՁԵԻ/ՈՆԱԻՈՐԻՑ՝ ՈՉ ՈՒՄ ՁԵՌՆ ՁԿԱ Ի ՎԵՐԱ ՎԱՍՆ ԱՐԵԻՇԱՏՈՒԹԵԱՆ ՈՆԳԵԱՅ
 ԻՄՈՅ ԵՒ ՔԱԻՈՒԹԵԱՆ ՄԵՂԱՅ ՄԵՐՐՈՅ: /ԱՐԴ ԱՁԱՏ Է ՄԻՆՁ Ի ԾԱԳՈՒՄՆ
 ՔՐԻՍՏՈՒ: ԱՐԳ ԹԵ ՈՔ Ի ՄՐԵՐՐՈՅ ԿԱՄ՝ ՅԱԻՏԱՐԱՅ ՄԵՍ ԴԿԱՄ ՓՈՔՐ ԵՒ
 ԱՐԻՆԻՆՍ ԿԱՄԻ ԼԻՆ ՎԱՆԱՅՆ ՀԱՆԷՑ ՅԱՅ ԴՐԱՏԱՊԱՐՏԱԿԱՆ ԵՂԻՑԻՆ:

Фот. см. табл. II.
 Изд.: Саргисян, 198; Алишан, III, 139.

19. **Собор.** Снаружи, на южной стене, на средней части, вырезана надпись в восемь строк.

⁹ В тексте ՀԱԼԱԼ.
^{9a} В тексте ԿՐՈՆԱԻՈՐԻ. В наборе с лиг. шрифтом И. А. исправил ՁԵՌՆԱԻՈՐԻ, что подтверждается и таблицей II.
¹⁰ И. А. усомнился в правильности ՀԱՆԷ, очевидно предполагая форму ՀԱՆԵԼ. Он исходил из норм классического грабара, в надписи же налицо фиксация разго-
 ворного оборота ԿԱՄԻ Ի ՎԱՆԱՅՆ ՀԱՆԷ.

ԹՈՒՍԿԼԱՆԻՆ՝ /Չ/ 3ԱՄՍ ՄԾԱՊԱՏԻՒ ՏԵԱՌՆ ԿՈՍՏԱՆԳԵԱ ՀԱՈՑ ԿԱԹՈ-
ՂԻԿՈՍԻ | ՀՐԱՄԱՆԱԻ ՄԵԾԻՆ ՇԱՀԱՆՇԱՀԻ ԵՒ ՅԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԵԱՆ | ՏԷՐ
ԳՐԻԳՈՐՈ: ԵԹԵ ՈՔ ՅԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ ԿԱՇԱՌԱԻՔ | ԱՌՆԷ ԿԱՄ ԱՆՄՈՒՐՈՒ
ԿԱՄ ԱՌԱՆՑ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ՝ ՄԱՍՆ ԶՈՒԴԱԻՆ ԱՌՅԷ ԵՒ ԶՍԻՄՈՆԻ ԿԱԽԱՐ-
ԴԻ: ՈՎ ԶԳԻՐՍ ԶՆՋԷ ԻԴՆՔՆԻ/ԶՆՋԻ Ի ԿԵՆԱՑ ԳՐՈՅՆ:

Фот. см. табл. II.
Изд.: Саргисян, 198; Алишан, III, 139.

20 Собор. Снаружи, на северной стене, у западного угла, вырезана надпись в три строки.

ԶԱԻՈՒՐՏ ՅԻ/ՇԵՑԷՔ ՄՐԵՆ/ՈՅ ԳԵՂՋ ԵՐԷՅ:

Фот. см. табл. II.

21. Собор. Внутри, на восточной стене, на западной стороне пилястров, вырезана надпись в одну строку.

на северном: на южном:

ՏԷՐ ՄԻՐԴԱՏ Ի ԳՈԳՈՐԱՆ///ՈՒՐԻՆ ԿԻՇԵՑԷՔ

22. Собор. Внутри, на восточной стене, на средней части, на арке аспиды, краской по штукатурке надпись в одну строку очень крупными буквами; сохранилась вторая половина надписи.

Ո || | Ն || || | Գ Պ Ր | Ա Ի Ո Ւ Ր Ս¹²

23. Собор. Внутри, на восточной стене, на южной части, на штукатурке надпись краской, имевшая не менее 32 строк. Правый край первых 12 строк и почти все остальное поле надписи отбиты; строки 9—11 размазаны мокрой тряпкой; в строках 13—32 видны только отдельные буквы или группы в 2—3 буквы; сохранившиеся части потемнели от копоти, забрызганы чем-то белым и поцарапаны.

ՅԱՄԻ...ԵՐՈՐԴԻ/ ...ԴՐՈՐԴԻ ԹՎԱԿԱՆՈՒԹԵՂԱՆՍԻ /ՀԱՅՈՑ ՏԱԻՄԱՐԻՍ
ՅԷՊԻԴՍԿՈՊՈՒ/ՍՈՒԹԵԱՆ ՍՐԲԱՍԷՐ ՏԵԱՌՆ... /ԱՇԱՐՈՒՆԵԱՑ ԴԷՊԻՍԻԿՈՊՈ-
ԴՍԻ/ ՆՈՐԻՆ ՀՐԱՄԱՆԱ՝ ԻՆ¹³.../ԹԵԱՄԲ ԲԱՐԷՊԱՇՏ...

¹¹ Слово подчеркнуто красным карандашом, но на табл. II совершенно четко читается именно *ԸՆՏՐՈՒԹԵՆ*

¹² В оригинале дан лишь набор с лиг. шрифтом.

¹³ И. А. усомнился в необходимости предлагаемой им вставки, почему и подчеркнул слово.

24. Собор. Внутри, на западной стене, на северном пилястре, краской на штукатурке надпись в десять строк.

ՅԱՆՈՒՆ ՄՅ ԱՅՍ ԻՄ ՀՐԱՄԱՆՔ ԵՆ ՍՄԲԱՏԱ /ՇԱՀԱՆՇԱՀԻ ԱԶԱՏԵԱԼ ԵՄ
ԶՄԲԵՆՈՅ ԶՈԶ/ԽԱՐԻ ՀԱՍՆ ՎԱՍՆ ԻՄ ԱՐԵՒՈՅՍ ԵՒ ԻՄ ՄԵՂԱՅՆ Թ/ՈՂՈՒԹԵԱՆ
ՈՐ ԶԿԱ ՈԶ ԻՆԶ ԱՂՄԱՆ ԲԱԳՐԷ /ՈԶ ԱՆՈՅ ՎԵՐԱ ՄՐԵՆՈՅ ՎԱՍՆ ՈԶԽԱՐԻ:
ԵԹԵ /ՈՔ ԸՆԴԴԻՄԱՆԱ ՀՐԱՄԱՆԱՑ ԻՄՈՑ ՅԻՄՈՑ /ԿԱՄ ԱՅԼ ՈՔ ՈՎ ԻՅԵ
ՊԱՐՏԱԿԱՆ ԵՂԻՅԻ ՍՊԱՆ/ՄԱՆ ԱՐԵԱՆՆ ԲՐԻՍՏՈՍԻ ԵՒ ԻՄ ՄԵՂԱՅՍ ԵՒ ԻՄ
ԱՄԵՆ/ԱՅՆ ԱԶԳԻ ՄԵՂԱՅ ՏԷՐ Է ՅԺԸ ՀԱՅՐԱՊԵՏ/ԱՅՆ ՆԶՈՎԵԱԼ ԵՂԻՅԻ ԵՒ
ԴԱՏՈՂ ՆՈՐԱ ՏԷՂՐ Է՛:

25. Собор. Внутри, на западной стене, на северном пилястре, на штукатурке краской надпись в семь строк.

+ ԵՒ ԵՍ ՅՈՎԱՆՆԷՍ ՇԱՀԱՆՇԻԱՆ/Հ ՀԱՍՏԱՏԵԱԼ ԵՄ ԶԻՄ ՀԱՐ/ԱՆՅՆ ՀՐԱ-
ՄԱՆՔՍ ՈՐ ԶԿԱՐԷ/ՈՔ Ի ՄՐԵՆՈՅ ՈԶԽԱՐԷ ՈԶ ԻՆԶ ՀԱԿԱՌՈՒԼ: ԵԹԵ ՈՔ ԸԴՆԴ-
ԴԻ/ՄՂԱՆԱ ԻՄ ՀԱՐԱՆՅԴՆ ՀՐԱՄԱՆ/ԱՑ...

26. Собор. Внутри, на западной стене, на средней части, на штукатурке краской надпись в девять строк.

ԴԱՅՍԻ ԻՄ ՀՐԱՄԱՆՔ ԵՆ ՅՈՎԱՆՆԷՍԻ/Դ ՇԱՀԱՆՇԱՀԻ ԱՆԶԱՏԵԼ ԵՄ ԶՄԲ/ԴԵՆՈՅ
ԶՈԶԽԱՐԻ ՀՂԱՍՆ ԵՒ ԶԱՓՆ Ե/ԴԻ... ՎԱՍՆ՝ ԻՄ ԱՐԵՒՈՅՍ ԵՒ Վ/ԴԱՍՆ ԻՄ ԱԶԳԻ
ՄԵՂԱՅ ԹՈՂՈՒԹԵԱՆ:/ ԵՒ ԹԵ ՅԵՏ ԻՄՈՑ ԵԼԱՆԵԼՈՅ ՅԱՇԽԱ/ԴՐՀԷՍԻ ԱՅԼ ՈՔ
ԸՆԴԴԻՄԱՆԵՂԱՑ ՅԻՄՈՅ ԿԱՄ ՅԱԻՍԱՐԱՑ ԵՒ.../...

27. Кладбище, группа могил, на ЮВ от собора. На части поста-мента крестного камня фрагмент вырезанной надписи в пять строк; сохранилась правая часть надписи.

...ԻՄՈՅ ՇՈՒՇԹԱՐԷ/... ԿԱՆԳՆԵՅԻ ԶԽԱԶՍ/...ԻՆԶ ԵՒ ԿՆՈԶ ԵՒ ԾՆԱԻՂԱՑ
Ի ԻՄՈՅԻ¹⁵:

28. Дворец Сахмадина. На портале, наверху, вырезана надпись в четыре строки.

Ի ԹՎ ԻՆ՝ ԶԹ: Ի ՏԻԵԶԵՐԱԿԱԼՈՒԹԵԱՆ ՀՈՒԱՌԻ ՂԱՆԻ ԵՍ ՍԱՀՄԱԳԻՆ ՈՐԴԻ
ԱԻՆՏԵԱՑ ԿՆԵՅԻ ԶԹԱԳԱԻՐԱՆԻՍՏ ՏԵՂԻՍ ԶՄԲԵՆ Ի ՅՂԱՐՏԱՇՐԷ ՈՐԴՈ
ՇԱՀԱՆՇԱՀԻ Ի՝ ՀԱԼԱԼ ԸՆԶԻՅ ԻՄՈՑ Ի ՎԱԵԼՈՒՄԸ ԻՆԶ ԵՒ ՈՐԴԻՆՅԱՑ ԻՄՈՅ
ՄԾ ՇՆԱՀԱԻՈՐ ԱՐԱՍՅԷ ՅԱԻՏԵԱՆՍ ԺԱՄԱՆԱԿԱՑ: Ի ԹՎ ԻՆ՝ ԶԻԵ ՅԱՇԽԱՐ-
ՀԱԿԱԼՈՒԹԵԱՆ ԱՊԱՂԱ ՂԱՆԻՆ ԵՍ ՍԱՄՏԻՆ ՈՐ ՊԱՐՈՆԻՆ՝ ՆՍՏՈՑ ՈՒ

¹⁴ Так у И. А.

¹⁵ Слово почему-то издателем подчеркнуто.

ԿՍՐԱՊԱՍ ՉԿԱՅՐ ՉԱՍՍ¹⁶ ԱՅԳԻՍ ՈՒ ԶԳՐԱ/ԽՏՍ ՈՐ ԿՈՉԻ ԱՐՔԱՅՈՒԹԻՒՆ
ԳՆԵՅԻ ՉԱՄԷՆ ՄԵԿ ՅԻՐ ՏԻՐՈՉԷՆ¹⁷ ԵՒ ՅԻՄ ՄՏԱՅ ԴՈՒՍ ԱՌԱՆՅ ՎԱՐԴՊԵՏԻ
ՉԵԻՅԻ ՈՒ ՀԻՄՆ ԶԳԵՅԻ ԴԱՐԱՊԱՍԻՍ ՈՒ ԴՐԱԽՏԻՍ: Ի Ժ ՏԱՐԻՆ ԿԱՏԱՐԵՅԻ:
ՄԾ/ ՇՆԱՀԱԻՈՐ ԱՐԱՍՅԷ ՍԱՀՄԱՏԻՆԻՆ ՈՐԴԻՅ Ի ՅՈՐԴԻՔ: ՈՒ ԽԱՐՃ ՈՐ
ԵՂԱԻ ԴԱՐԱՊԱՍԻՍ ԽՈՒ ԴՈՒԿԱՏ ԴԱՀԵԿԱՆ:

Изд.: Марр, 83—85.

29. Часовня. Снаружи, на обрамлении западной двери вырезана надпись в одну строку.

Ի ԹՎ. ԻՆ 18 ՉԻՉ: Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԵՒ ԹԱԳԱԻՈՐՈՒԹԵԱՆ ՀԱՈՅ ՏԵԱՌՆ¹⁹
ՅԱԿՈՐԱ ԵՒ ԼԵՒՈՆԻ ԵՒ Ի ՊԱՐՈՆՈՒԹԵԱՆ ՍԱՀՄԱԴԻՆԻՆ²⁰ ՎԵՐԿԱՌՈՒՅԵԱԼՍ²¹
ՉԱՅՍ ԽՈՐԱՆՆ²² ՅԱՆՈՒՆԱԴՐՈՒԹԻՒՆ ՅԻՍՈՒՍԻ ՓՐԿՉԻՆ ՄԵՐՈ ՈՐ Է ՊԱՏՃԱՌ
ԱՂԱԻԹԵԼՈՅՏ Ի ՍՄԱ: ԵՒ ԶԻՍ ԶՄԽԻԹԱՐ ՎԱՐԴԱՊԵՏՍ ԵՒ ՈՐՔ ԱԻԳՆԵՅԻՆ
ՅԻՇԵՅԻՔ:

Фот. см. табл. II.

Изд. Саргисян, 200; Алишан, Ш., 140.

Сокращения в ссылках:

Алишан, А. *Ալրարատ. բնաշխարհ Հայաստանեայց: Տեղագրեաց հ. Գ. վ. Մ. Ալիշան*, Венеция, 1890.

Алишан, Ш. *Շիրակ. տեղագրութիւն պատկերացոյց: Հաւաքեաց հ. Գ. վ. Մ. Ալիշան*, Венеция, 1881.

Марр, Новые материалы по армянской эпиграфике. Зап. Вост. Отд. Русск. Археол. Общ., т. VIII, 1893.

Овсебян: *Գ. վ. Յովսէփեան. Բարտեզ հայ հնագրութեան*, Вагаршапат, 1913.

Орбели, Б., Багаванская надпись 639 г. и другие армянские надписи VII века. Христ. Вост., II.

Орбели, Ш. Шесть армянских надписей VIII—X века. Христ. ост., III.

Саргисян: *Տեղագրութիւնք ի Փոքր և ի Մեծ Հայս հ. Ներսիսի Սարգիսեան*, Венеция, 1864.

¹⁶ Так в наборе, в тексте с лиг. шрифтом—*ՉԿԱՅՉՍԱՅԳԻՍ*, что замечено и И. А.

¹⁷ Так в текстах.

¹⁸ Вставка не отмечена издателем. Нами проверена по таблице.

¹⁹ В наборе *ՀԱՅՈՅ ՏԵԱՌՆ*. Неточность отмечена И. А. вопросительным знаком.

Чтение проверено по таблице.

²⁰ У И. А. *ՍԱՀՄԱՏԻՆԻՆ*, но в фото читается *ՍԱՀՄԱԴԻՆԻՆ*.

²¹ Возможно, лигатурно высеченная *Ա* имеет повторное чтение, т. е. *ՎԵՐԱԿԱՌՈՒՅԵԱԼՍ*

²² Скорее всего — *ԽՈՐԱՆ*.

Условные знаки:

Скобками [] отмечены восстановления, в подлиннике—лакуна.

Скобками [] отмечены вставки, в подлиннике—пропуск.

Скобками [] отмечены восстановления по старым чтениям.

Скобками [] отмечены лишние буквы, в подлиннике—повторение.

Скобками () отмечены возможные варианты раскрытого чтения.

Значками /// отмечены лакуны, независимо от числа букв.

Точками . . . в раскрытом чтении отмечены лакуны, независимо от числа букв.

Точкой над буквой отмечены исправления в раскрытом чтении описок подлинника.

«ՀԱԿ» ՀԱՐԿԱՅԻՆ ՏԵՐՄԻՆԸ ՎԻՄԱԿԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Հակ-ը իբրև հարկ, տուրք բառի հոմանիշ բազմաթիվ վկայություններ ունի Ժ—ԺԴ դարերի վիճակագրական հուշարձաններում, առանձին, ինքնուրույն գործածություններ կամ ավելի հաճախ բարդության երկրորդ եզրում՝ այս դեպքում արտահայտելով հարկերի կամ տուրքերի այլ և այլ տեսակներ, նայած թե ինչ իմաստ է արտահայտում առաջին բաղադրիչը: Բառիս ծագումը հայագետները դնում են արաբ. hagg արմատից, որ նշանակում է իրավունք, վարձ, հետնաբար նաև՝ հարկ, տուրք¹: Միջին դարերի գրական հուշարձաններում հակ-հակք բառը մի քանի հիշատակություններ ունի, սակայն ոչ հարկ, տուրք կամ իրավունք, վարձ իմաստներով, այլ՝ իբրև բեռի կապոց, ծանրոց, բեռնահակ, որ առաջանում է հին հայերենի հակ=հակառակ արմատից՝ իմաստի նեղացումով, իբրև գրաստի երկու հակառակ կողմերին գրված բեռան կապոցներ (հմմտ. «Անասուն մի բեռնակիր բարձեալ ունէր յինքն մէկ հակն մահադեղ, եւ մէկն՝ սուսեր սպանման»²):

Հակ բառը իրավունք, վարձ, պահանջ իմաստով միայն մեկ անգամ հիշատակված է Հանրապետության ԺԳ դարասկզբի մի նվիրատվական արձանագրությունից մեջ, որ, հրատարակված չլինելով, անծանոթ է գիտությունը. «Ես՝ Գրիգոր միաբանեցա ի սբ ուխտս, ուր մեռանեմ, զիմ հակն կատարեն անպատճառ, ով լինի...»³:

Այստեղ հակ-ը, տուրք, հարկ չի արտահայտում, այլ՝ մատուցված նրավերների դիմաց նվիրատուին խոստացած հատուցում, վարձ, պարտավորություն, որ հավանաբար առաջանում է hagg—վարձ, իրավունք իմաստից:

Այլ վիճակներում առանձին հիշատակված հակ-ը հոմանիշ է հարկ բառին և գործածվում է նրա հետ զուգահեռ, երբեմն միևնույն արձանագրության մեջ հանդիպում է երկու ձևն էլ, իսկ հաճախ էլ հակ-ը կիրառվում է հարկային մյուս անվանումների հետ: Այսպես, Վայոց ձորի Ամաղու Նորավանքի ՉԴ (1275) թվականի հայտնի արտոնագիր-կալվածագրում Տարսա-յիճ Օրբելյանը հետևյալ կերպ է սահմանում Հալիճոր գյուղի հարկային վի-

¹ Հ. Անադյան, Արմ. բառարան, Ա., էջ 149, J. Karst, Sempadscher Kodex, էջ 12, նույնի՝ Wörterbuch des Mittelarmenischen. Մատենադարանում պահվող ձեռագիր, հակ բառի տակ:
² Հ. Անադյան, Արմ. բառարան, Գ. էջ 30, նշ՝ Բ, էջ 4:
³ Առնում ենք մեր հավաքածուից:

ճակը. «զՀալիճորոյ հակն սահմանէցաք ի տարումն վացսուն սպիտակ տա, այլ ազատ է յամէն հարկաց...»: Կամ նորատուսի ԺԳ դ. արձանագրություններից մեկում գյուղի դեմքաբը (գյուղապետ) սահմանում է. «Ի վեր կալաք Աւագին արեւին համար ոչ գզրին տան հակ, ոչ...» (անընթեռնելի)⁴: Ակնհերև է, որ այստեղ հակ-ը առանձին հարկի նշանակություն չունի, այլ արտահայտում է հարկի, տուրքի, բնագնանուր իմաստ (զՀալիճորոյ հակն, ոչ գզրին տան հակ):

Սակայն Ժ—ԺԴ դարերի վիճակագրական արձանագրություններում ավելի մեծաթիվ են այն դեպքերը, երբ հակ բառը վկայված է իբրև որոշյալ՝ գոյակահով արտահայտված որոշի հետ, և այս դեպքում ամբողջ կապակցությունը ցույց է տալիս տվյալ հարկի կամ տուրքի բովանդակությունը, նրա տեսակը կամ ում օգտին գանձվելը: Այդպիսի կապակցություններից նշելի են.

Ա. Բամբակի (բնագրում՝ բարակի) հակ կարդացվում է Հոսիսիմեհի տաճարի հարավային ավանդատան պատին փորագրված Չնծ (1296) թվականի արտոնագրում, որով տեղի իշխանավորները վերացնում են վանքից առնվող բամբակի հարկը: «...Թողաք զՀոսիսիմուցս զբարակին շարիատն եւ զՀահնաին բարակի հակն», այսինքն վերացվել է վանքից գանձվող հողային արդյունավճարը՝ բամբակի շարիատը, ինչպես նաև հարկահավաք պաշտոնյայի՝ շահնայի օգտին հավաքվող բամբակի լրացուցիչ հարկը, հասույթը:

Այս վերջին կապակցությունը՝ զՀահնաին բարակի հակն տարակարծությունների տեղիք է տվել որոշ ուսումնասիրողների մոտ. պրոֆ. Ս. Պողոսյանը և Խ. Ավետիսյանը, օրինակ, տվյալ կապակցության մեջ հակ-ը հասկանում են ոչ թե հարկի կամ տուրքի իմաստով, այլ՝ իբրև բամբակի հակ, կապոց, փաթեթ, որոշ կոռային միավոր, այսինքն բամբակի քանակություն, որ մասհանվում էր շահնային, ըստ որում վերջինիս Խ. Ավետիսյանը առանց որևէ հիմքի ֆաղափապեա է համարում:

Պրոֆ. Ս. Պողոսյանը հենց այդպես էլ գրում է. «Հակը մի որոշ չափ է եղել, բայց թե ինչքան քաշ է ունեցել, հայտնի չէ»⁵: Մենք չենք տալիս այս վարկածի հերքումը, քանի որ հետագա շարադրանքը, որտեղ հակը հիշատակվում է այնպիսի վճարումների հետ, որոնք կոռով կամ փաթեթով չեն արտահայտվում (գլխահակ, հարսանեհակ, բալխահակ և այլն) լավագույնս ապացուցում է այդ մեկնաբանության անհիմն լինելը:

Բ. Չքի հակ: Գանձվում էր ձիթատու բույսերի ցանքերի տերերից: Չքի

⁴ Ս. Բաբխուդարյան, Դիվան հայ վիճակագրության, պր. 3, Երևան, 1967, էջ 235: Նորատուսի բնագիրը մեր հավաքածուից:
⁵ Կ. Հովսեփյան, Կոնիտաս կաթողիկոսի մի նոր արձանագրություն, «Արարատ», 1398, էջ 441: Ընդօրինակությունը ստուգել ենք տեղում և արձանագրության հստակ լուսանկարով, որ հրատարակված է Կ. Բասմաջյան, Հայոց հին դեղարվեստի վարպետները, Փարիզ, 1926, էջ 61:
⁶ Ս. Պողոսյան, Գյուղացիների ճորտացումը..., էջ 22: Խ. Ավետիսյան, Բամբակագործության զարգացումը Հայաստանում 19-րդ դարում և 20-րդ դ. սկզբներին, «Նյութեր Հայաստանի գյուղատնտ. և գյուղացիության պատմության», Երևան, 1964, էջ 194:

հակ հարկային տերմինի առաջին վկայությունը գտնում ենք Մրենի տաճարի հարավային պատին ՉԿԹ (1320) թ. փորագրված մի արտոնագրում, որով հարկահան պաշտոնյաներ Իւանիկ ամիրան և Աւտաշ ձեռնաւորը ձրի հակը (ձեքի հարկ) նվիրում են եկեղեցուն: Արձանագրությունը գիտությունը հայտնի է ն. Մառի եզակի ընդօրինակումը, որ մանրամասն մեկնություններով հրատարակվել է 1893 թ. «Նոր նյութեր հայ վիմագրություն» շարքում. «Ի պարոնութեն Սարգսի եւ էվանիաթունին Նւան Ակոբայ եւ ի հայրապետութե ի տր վարդանայ, ես՝ Իւանիկս իմ ամիրութես եւ Աւտաշին ձեռնաւորութե զայս արձան հաստատեցաք ու զձրիհանն եկեղեցոյս ընծայ տվաք մեր հոգոյս համար...»⁷:

Բնագրի հնչյունական ու լեզվական անհետևողականությունների շարքում Մառը մատնացույց է անում նաև զձրիհանն բառը, որը նրա կարծիքով արտացոլում է զձիրահանն գրական ձևի ժողովրդական արտասանությունը, ըստ որում հեղինակի վերծանությունից ստացվում է, որ Մրենի վարչական և հարկային պաշտոնյաները վանական կենտրոնին ընծայել են մի ձիրահանն: Նկատի ունենալով միջին դարերի նվիրատվական վիմագրերի և արտոնագրերի համանման դեպքերը, հարկադրված ենք որոշ վերապահումով ընդունել Մառի զձրիհանն ընթերցումը, քանի որ բնագրում իբրև նվիրատուներ հանդես են գալիս վարչական կամ հարկահան պաշտոնյաներ (եւան, ամիրա, ձեռնաւոր), որոնք հազիվ թե որևէ ունեցվածք ընծայեին վանքին. ավելի հավանական է և սովորական, որ նվիրատվության նպատակով նրանք զիջեին կամ թեթևացնեին հողեր կենտրոնի հարկերը, տուրքերը կամ վանքերին ընծայեին բնակչությունից հավաքվող որոշ հարկեր, որոշ ժամանակաշրջանում: Բարեբախտաբար Պատմական թանգարանում պահպանվում է Մրենի այս արձանագրության սևապակին, որը հնարավոր է դարձնում ավելի հավաստի վերծանել ըննության ենթակա տառաշարքը: Այստեղ պարզ կարգացվում է. «...ու զձրի հակն եկեղեցոյս ընծայ տվաք...», ըստ այդմ, վերականգնվում է ձրի հակ (= ձեքի հարկ) տերմինի միակ վկայությունը: Բացի դրանից, Մառի զձրիհանն ընթերցումը անհավանական է նաև բառակազմական առումով. ձիրահանն, ձեք հանելու հաստատությունը նշանակելու դեպքում պետք է ունենայինք բառաբարդություն ա հողակապով՝ ձեք > ձիր—ա + հանն կամ՝ ձեք > ձրա + հանն, մինչդեռ փրականում, քարի վրա առկա է որոշչի և որոշչալի կապակցություն՝ ձրի հակն = ձեքի հարկն:

Միջին դարերում ձիրատու բույսերի ցանքերի տերերից առնվող ձեքի հատուկ հարկի՝ ձիրահարկի գոյությունը հաստատվում է նաև Մարմետի մատուռի հյուսիսային պատին փորագրված Բեսուտա իշխանի հետևյալ արտոնագրով: «Չե՛ր կամալն այ, Բեսուտին հրամանաւն արձանագիր եղեւ, որ զձիրին հարկն ի սբ Ածածինս տան անխաբան...»⁸:

Գ. Ձիրահաննաց հակ (ձիրահաննի հարկ) — Միայն մեկ անգամ հիշա-

⁷ Տե՛ս Н. Март, Новые материалы по армянской эпиграфике, СПб, 1893, էջ 88—89:

⁸ Ալիշան, Այրարատ, էջ 61, այստեղ սխալմամբ գիտված է հատուկ անուն:

տակվում է Հովհաննավանքի ՊԱ (1352) թ. արձանագրության մեջ. «Մեք՝ Յոհանայվանից միայբանքս տվաք ձիրայհաննաց հակէ կէս լիտր ձէթ սբ Կարապետիս»⁹:

Դ. Ոչխարի հակ (ոչխարի հարկ) — Միայն մեկ անգամ հանդիպում է Մրենի տաճարի հնագույն, անթվակիր արտոնագրերից մեկում: Համապատասխան հատվածը մեջ ենք բերում Հ. Օրբելու «Մրենի արձանագրությունները» անտիպ ժողովածուից. «Եւ ես Յովանէս շահանշահ հաստատեալ եմ զիմ հարանցն հրամանքս, որ չկարէ որ ի Մրենոյ ոչխարէ ոչինչ հակ առու...»¹⁰: Արձանագրության ժամանակագրական սահմանները որոշվում են Հովհաննես-Սմբատ թագավորի գահակալության տարիներով՝ 1020—1042 թթ. ըստ այդմ, այստեղ գործ ունենք հակ տերմինի նախնագույն վկայության հետ, որ կողմնակի ապացույց է, թե բառս չի կարող ուղղւերերենից կամ շաղաթայերենից փոխառված լինել, ինչպես կարծում են ոմանք:

Կարևոր է նշել, որ Մրենի տաճարի նույն ժամանակների այլ արտոնագրերում ոչխարի հակ հարկային տերմինի փոխարեն նույն իրադրության մեջ հիշատակվում են ոչխարի հաս կամ ոչխարի հաս եւ շալի կապակցությունները, որոնք հավանաբար նույնական են իրենց բովանդակությամբ: Ահա այդ հատվածները Հ. Օրբելու հիշյալ ժողովածուից. «Այս իմ հրամանք են Սմբատա շահանշահի, ազատեալ եմ զՄրենոյ հասն», կամ՝ «Այս իմ հրամանք են Յովաննէսի շահանշահի, ազատել եմ զՄրենոյ զոչխարի հասն եւ շալն...»¹¹:

Հակ բառը հարկ, հասույթ, տուրք ընդհանուր նշանակությամբ հանդես է գալիս մի շարք հարկային տերմինների մեջ ոչ թե առանձին, ինքնուրույն կիրառությամբ, այլ իբրև բարդության երկրորդ բաղադրիչ: Այդպիսի բաղադրյալ հարկային բառերի վկայությունները վիմական արձանագրություններում նախկինում ընդօրինակվել ու հրատարակվել են զգալի անճշտություններով, հաճախ էլ անվերծանելի համարվելով, շեն ընդօրինակվել և մընացել են անհայտության մեջ: Այստեղ ներկայացնում ենք այդ տերմինների հիշատակությունները՝ անհրաժեշտ շտկումներով և մեկնաբանություններով:

1. Հակ բառով բաղադրություններ, որոնց առաջին բաղադրիչը հայերեն բառ է: Ա. Գլխահակ — Կազմված է գլուխ և հակ բառերից, գլխահարկ (գլխի հարկ) փմաստով: Օձունի տաճարի ՉԻԴ (1275) թվականի մի արտոնագրում երկու անգամ նույն գրությունը վկայված է այս բառը՝ իբրև խոշոր եղջերավոր անասունների գլխահանակի համեմատ զանձվող հարկ, որ ինչպես հայտնի է, արևմտյան Շիրակի վիմական արձանագրություններում վկայված է զեզին եւ զկովին համբրել է կամ համարել է անվան տակ (Անի, Շիրակավան), իսկ Բջնիի ԺԳ դարի մի արձանագրության մեջ՝ իբրև կովայհամար: Օձունի տաճարի շատ կողմերով ուշագրավ այս արձանագրությունը զգալի չափով եղծված է, դժվար է վերծանվում և այդ պատճառով Ս. Զալալյանցի

⁹ Կ. Ղաֆաղարյան, Հովհաննավանք..., էջ 81:

¹⁰ И. Орбели, Надписи Мрена, անտիպ, էջ 9:

¹¹ նույն տեղում, էջ 8, 9:

միակ ընդօրինակությունը թերի է և անճանաչելի աղավաղված¹², ուստի մեջ ենք բերում բնագրի հիմնական մասը մեր վերծանությունը, որ ստուգվում է լուսանկարով. «Թվին ՉԻԴ, ես՝ Դեղս, որդի Անգղէցոյն, ծառա մեծին Իվանէի, էս ժամս որ գեղս է հատաւ ի անասնէ, վս Իվանի ու իր որդեացն արեւշատութե համար իմ ձեռնադրութե ղեզին ու կովի գլխահակ վեր էկալաք, վս որ տառապելն անասունն շկամեր պահեալ, որ գլխահակ առու նզոված է...»:

Արտոնագրի ավելի հավաստի վերծանությունը՝ բնագրի գծագրական ընդօրինակությամբ և մանրամասն վերլուծականով վերջերս հրատարակվեց հանգուցյալ Ս. Բարխուդարյանի «Սոցիալ-տնտեսական բովանդակության արձանագրություններ և դիտողություններ» հոդվածում: Հեղինակի վերծանությունը մեր ընդօրինակության հետ ունի մի քանի տարբերություններ. այսպես, երկրորդ տողում կարգացվել է Անգղացոյն, պետք է լինի՝ Անգղէցոյն, 4—5-րդ տողերում վերծանվել է՝ ես Իվանէի որդեացն արեւշատութեան համար, քարի վրա փորագրված է վս (=վասն) Իվանի ու իր որդեացն արեւշատութեան համար, 7-րդ տողում՝ տառապելն բառը պետք է կարդալ՝ տառապելն: Արտոնագրի անեծքի ձևակերպման հատվածը վերծանվել է. որ գլխահակ առուն ով խափանէ նզոված է, քարի վրա փորագրված է, որ գլխահակ առու եւ խափանէ նզոված է և այլն:

Անգրագրանալով բնագրի Անգղացոյն աղգանվանը, Ս. Բարխուդարյանը իրավամբ այն ծագած է համարում Անգղ, Անգեղ գյուղանունից, որը ըստ հեղինակի, գտնվելիս է եղել այժմյան Կողբ գյուղի մերձակայքում, այն վայրում, որին տեղացիները մինչև այժմ էլ կոչում են Ագեղցի¹⁴:

Այս ստուգաբանության հետ հաղիվ թե հնարավոր լինի համաձայնել: Ագեղցի ձևը ծագում է եկեղեցի բառի բարբառային արտասանությունից և ոչ մի կերպ չի առնչվում Անգեղ, Անգեղացի ձևերի հետ: Հիրավի, Հայաստանի հյուսիսային շրջանների մի քանի խոսվածքներում (Նոյեմբերյան, Թումանյան, Իջևան, Կրասնոսելսկ) հին հայերենի եկեղեցի շատ գործածական բառը ավանդված է խիստ փոփոխված ձևերով՝ եղծի, կեղցի, եկեղցի, որոնցից մեկն էլ ագեղցի է: Կողբից մոտ 2 կմ արևմուտք կա Ագեղցի անունով մի գյուղատեղ այսպես անվանված դեռևս կանգուն հին եկեղեցու անունով, իսկ այստեղից ոչ հեռու պահպանված հին բազիլիկ եկեղեցին տեղացիների շրջանում հայտնի է Տվարագեղցի անունով, որ հավանաբար առաջանում է տավարածի եկեղեցի բառերից: Սակայն եկեղեցի > ագեղցի անցումը ավելի ցայտուն երևում է Մակագեղցի անվան մեջ, որով հայտնի է Իջևանի շրջանի Սարիգյուղից մոտ 5 կմ արևելք կանգնած հուշարձանը: Պահպանվել է հնագույն սրբատաշ տաճարի միայն արևելյան պատը՝ խոշոր որմնանցքով, որը և պատճառ է դարձել Մակ ագեղցի (= ծակ եկեղեցի) անվանման:

¹² Տե՛ս Ս. Ջալալյանց, Ճանապարհորդություն ի Մեծն Հայաստան, Ա., Տիփլիս, 1842, էջ 91:
¹³ Տե՛ս «Էջեր հայ ժողովրդի պատմության և բանասիրության», հոդվածների ժողովածու և վերված ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյանի ծննդյան 80-ամյակին, Երևան, 1971, էջ 92—94:
¹⁴ Նույն տեղում, էջ 93:

Ս. Բարխուդարյանը Դեղ Անգղեցու այս արձանագրությունը մեջ է բերում իբրև ձեռնավորահարկի վերացման օրինակ, հիմք ընդունելով այն պարագան, որ Դեղը գրում է՝ իմ ձեռնադրութեմ գեզին ու կովի գլխահակ վեր էկալաք¹⁵:

Ակներև է, որ այստեղ Դեղը զիջում է ոչ թե ձեռնադրահարկը, այլ խոշոր անասունների գլխահարկը, որը հավաքվում էր միայն դերագաս վարչական իշխանությունների, տվյալ դեպքում Ջաբարյանների օգտին: Բացի դրանից, արտոնագրի նախաբանում ասված է, որ մեծն Իվանէի ծառա Դեղը գլխահակը վերացնում է վս Իվանի ու իր որդեացն արեւշատութեան համար, որ հազիվ հնարավոր լիներ ասել, եթե խոսքը վերաբերեր սոսկ ձեռնադր Դեղին հասանելի ձեռնավորահարկին:

Բ. Հարսնէհակ, հարսանէհակ — բարդությունն առաջանում է հարսն > հարսանիք բառերի հարսն կամ հարսան ձևերի և հակ բառի միացումից՝ հարսանիք + ա + հակ = հարսանիք — ա — հակ = հարսանէհակ կամ հարսնիք + ա + հակ = հարսնէհակ և նշանակում է հարսանիքի հարկ, պսակի հարկ, որ միջին դարերում ամուսնացողները վճարում էին տեղական վարչական իշխանություններին: Մատենագրական աղբյուրներում հարսնահարկի մասին հիշատակություններ չեն ավանդվել:

Վիմագրական հուշարձաններում այս հարկը մինչև վերջերս հայտնի էր Բջնիի 1325 թ. մի արձանագրությունից, որով Սահր Դիվանի և Խոշաքի որդի, աթաբեկ Ավագի թոռ Ջաբարիան այլ հարկերի ու պարտությունների թվում զիջում է և գհարսանէհակ-ը: Ահա այդ արտոնագրի համապատասխան հատվածը. «Ի վեր կալա, որի Բջնի այլ մարդոյ տիրութիւն չէլնի. եւ թողի զամէն հարկ. զամիրահակն, զհարսանէհակ, զկովայհամարն, զկալայթաղարն, զսայլին սպիտակն, զմահականէն...»:

Մի քանի տարի առաջ անվանի վիմագրագետ Ս. Բարխուդարյանի ղեկավարած վիմագրական արշավախումբը հայտնաբերեց և վերծանեց այդ հարկի մի նոր վկայություն, որը փորագրված է Անիի շրջանի Բարձրաշեն գյուղում կանգնած հին եկեղեցու հյուսիսային պատին: Բնագիրը մասամբ եղծված, խաթարված է և սպառիչ վերականգնման չի ենթարկվում, սակայն զհարսնէհակ տերմինը ընթերցվում է հավաստի կերպով և կասկածի տեղիք չի տալիս: Ահա այդ կարևոր բնագրի մեղ հետաքրքրող հատվածը մեր վերծանությամբ. «Ես՝ ամիրսպասալար Ջաբարիա... թողի զհարսնէհակ եւ զշարիա...»:

Մեկնաբանելով Բջնիի հարսանէհակ և Բարձրաշենի հարսնէհակ տերմինները, Ս. Բարխուդարյանը վերջերս հրատարակված հոդվածում այն համոզմանն է հանգում, որ դրանցից առաջինը՝ հարսանէհակ-ը հարսանյաց, հարսանիքի, պսակի թույլտվության հարկն է, որ վճարվում էր տեղական վարչական իշխանությունը, մինչդեռ Բարձրաշենի հարսնէհակ-ը հարսանիքի հարկ չէ, այլ «նշանակում է հարսի հարկ»¹⁶: Ավելի առաջ տանելով այս

¹⁵ Նույն տեղը, էջ 94—95:
¹⁶ Տե՛ս Ս. Բարխուդարյան, նշվ. հոդվածը, էջ 90—91:

միտքը, հեղինակը հարսնէհակը կամ հարսի հարկը համարում է «հայոց մէջ երբեմն գոյութիւն ունեցած առաջին գիշերվա իրավունքը, որ հետագայում փոխարինվել է նյութական այլ բարիքներով կամ դրամով և հաստատուն տուրքի բնույթ ստացել»:

Հարսնէհակ, հարսնէհակ տերմինների այս մեկնաբանությունը այնքան էլ համոզիչ չէ: Նախ բարդության բառակազմության մասին. հարսն բառը բաղադրյալ կազմութիւնների մեջ կարող է հանդես գալ երկու ձևով՝ հարսն ու հարսան, ըստ այդմ, հաճախ արտահայտելով երկու իմաստ՝ և՛ հարսին վերաբերող՝ հարսական, և՛ հարսանիքին վերաբերող՝ հարսանեկան: Այսպես, հարսն, հարս ձևերով ունենք՝ հարսնութիւն, հարսնանալ, հարստես, բայց նաև՝ հարսնիւր, հարսնիւր, հարսնալօշ, հարսնետուն, հարսնատուն (=տուն հարսանեաց), որտեղ հարս, հարսն արտահայտում են ոչ թե հարսին վերաբերող, հարսնական, այլ հարսանիքին վերաբերող՝ հարսանեկան¹⁷: Նույն ձևով էլ հարսնէհակ-ը կարող էր ունենալ թե՛ հարսի հարկի և թե՛ հարսանիքի հարկի իմաստ, այսինքն նույնանալ հարսնէհակ-ի հետ: Մյուս կողմից, հարսնէհակ > հարսնէհակ կարող էր առաջանալ առանց իմաստային տարբերակման, սոսկ հնչյունափոխությամբ, այն է՝ ա ձայնավորի սղումով կամ ը-ի վերածվելով նախաշերտ դիրքում, որ բարբառային արտասանության ազդեցությամբ օրինաչափորեն դիտվում է միջին դարերի վիմական բնագրերում և ձեռագրերի հիշատակարաններում (հմմտ. Ապարանք > Ապրնուց, անբակ > անբկով, ֆարհատ > ֆարհտին, Քաղափողաշտ > Քաղափողաշտի և այլն)¹⁸, ըստ այսմ, հարսնէհակ-ը կարող էր առաջանալ հարսնէհակ-ից և ինքնուրույն, նախնական տերմին (հարսի հարկ) չլինել, ինչպես ենթադրում է Ս. Բարխուդարյանը¹⁹:

Ավելի բնական է մտածել, որ հարսնէհակը առաջանում է հարսանէհակ-ից հնչյունափոխությամբ և երկուսն էլ արտահայտում են միևնույն՝ հարսանիքի, ամուսնության հասույթը, որ միջին դարերում ամուսնացողները պետք է վճարեին տեղական աշխարհիկ իշխանավորներին: Բջնիի արձա-

¹⁷ Տե՛ս Հր. Անտոյան, Արմ. բառարան, Գ, 1930, էջ 193—195, Ստ. Մալխասյանց, Բացարական բառարան, Գ, էջ 44, 72:

¹⁸ Տե՛ս Հ. Օրբելի, Դիվան, I էջ 58, 63:

¹⁹ Ինչ մնում է այն աղբյուրին, որ հեղինակը նկատում է առաջին գիշերվա իրավունքի և հարսնէհակ պարտավորության միջև, այս հարցի քննությունը այս հոդվածի շրջանակներից դուրս համարելով, հարկ ենք համարում միայն նշել, որ առաջին գիշերվա իրավունքը հայոց մեջ ոչ հնում և ոչ էլ նոր ժամանակներում չի դիտված, և այս կապակցությամբ Անիի ԺԳ դարի արձանագրությունը հեղինակի կողմից այնքան էլ ստույգ չի մեկնաբանված: Այդ արձանագրության մեջ Անիի հոգևոր առաջնորդ Սարգիս եպիսկոպոսը սահմանում է պակի թույլտվությունն ստանալու պարտավորությունը հարսի հարազատներից վերցնելու և փեսայի հարազատների վրա դնելու մասին և բնականաբար ոչ մի ընդհանուր բան չունի հարսնէհակի կամ առավել ևս առաջին գիշերվա իրավունքի թեկուզ և հեռավոր արձագանքի հետ (տե՛ս Դիվան, I, էջ VII, 19):

նագրության հարսանէհակ վկայության հիմամբ պրոֆ. Բ. Առաքելյանը ենթադրում է, թե միջին դարերում հարսանէհակը հոգևոր տուրք էր և վճարվում էր եկեղեցուն²⁰: Սակայն այդ հարկի երկու վկայությունները հաստատում են, որ հարսանէհակը տեղական վարչական իշխանության վճարվող աշխարհիկ հարկ էր և այդ պատճառով էլ այն երկու դեպքերում էլ թողնում կամ վերացնում են ոչ թե հոգևոր հայրերը, այլ աշխարհիկ իշխանավորները, սովյալ դեպքում Զաքարյան իշխանները: Այլ է պակի կամ հարսանիքի արարողությունների սպասարկման համար եկեղեցուն վճարվող հասույթը, որ հարսանէհակ չի կոչվում, այլ պսակադրամ կամ՝ ի պսակի: Վահրամ Պահլավունու՝ Ամբերդի եկեղեցու բարավորին փորագրած 1026 թ. նշանավոր օրինականացման մեջ հականե հանվանե թվարկվում են նոր ստեղծված հայրապետական աթոռին տրվելիք հասույթների շափերը (պտուղ), սահմանվում են եկեղեցական արարողությունների դիմաց բնակչությունից առնվելիք գումարները: Հիշատակվում են հողադրամի, կնֆադրամի, տնաւահնէֆի, ձեռնադրելէ, ի պսակի շափերը²¹: Ինչպես տեսնում ենք, կան բոլոր հասույթները և արարողությունները, սակայն հարսանէհակի մասին չի հիշատակված: Կա ի պսակի՝ Գ. դահեկան, որ անշուշտ, ոչ թե հարսանէհակ է, այլ հարսանիքի ծիսակատարությունների սպասարկման համար եկեղեցուն կամ նրա սպասավորներին վճարվող վարձ, հատուցում:

Գ. Ձեռնաւորահակ—Բարդութիւնն առաջանում է ձեռնաւոր=գյուղական շրջաններում հարկահավաք պաշտոնյա, հարկահան, գործակատար և հակ=հարկ բաղադրիչներից և նշանակում է ձեռնավորի, հարկահան պաշտոնյայի օգտին հավաքվող հարկ, տուրք: Բառիս նախնագույն հիշատակությունը պահպանվել է Հաղբատից 5 կլմ. հարավ-արևելք, Բերդիկ հնավայրում կանգնած խաչքարի ՈԿՍ (1212) թ. հիշատակագրության մեջ. «Ես՝ Գրիգոր, որդի Յիսէի, թողի զձեռնաւորահակս Բերդկա վասն Շահնշահի արեւշատութե ևւ ինձ մեղաց թողութե...»²²: Մյուս վկայությունը փորագրված է Օձունի տաճարի հարավային մույթի վրա ԺԳ դարի վերջերին, գիտությունը հայտնի է Ս. Զալալյանցի միակ, շատ աղավաղ ընդօրինակությամբ, որի մեջ ի շարս այլ տարբերությունների, քննվող ձեռնաւորահակ բառը չի կարդացվել: Համապատասխան հատվածը բերում ենք մեր վերծանությամբ. «Ես՝ Սմբատ, ծառա մեծին Իվանէի ևւ Մխարրաձէլին, որդի Ճոռննց Պողոսո, որ արժանի էլա Ուձնա ձոնվորութե, պարոնացն արեւշատութե համար զձեռնվորահակ... անշահ ու զեն վեր կալա...: Ով խափանէ նզոված է...» և այլն:

Բառիս մի վերջին հիշատակությունը հանդիպում է Օշականի եկեղեցու ներսի արձանագրություններից մեկում, որ այժմ ծածկված է ծեփով և գիտությունը հայտնի է անցյալ դարի կեսերին Հ. Շահխաթունյանցի կատարած հետևյալ ընդօրինակությունից. «Ի թուականին Չլէ, ես՝ Գէշմարդս էի ամիրայ

²⁰ Տե՛ս Բ. Առաքելյան, Քաղաքներ..., Բ, էջ 222:
²¹ Տե՛ս Ե. Տեր-Մինասյան, Ամբերդաձորի հույժությունները և արձանագրությունները, «Էջմիածին», 1961, Ե, էջ 50—51:
²² Կ. Ղաֆաղարյան, Հաղբատ, էջ 252:

եւ Հաւիկս ձեռնաւոր թողար զսբ Կարապետին այգեացն զԱւշականու, զՄիրինու զձեռնաւորին զհարկն, զինչ որ կայր...»²³:

Գիտական գրականութեան մեջ ձեռնաւոր, ձեռնաւորահակ տերմինների իմաստը ստույգ չի հասկացվել, որի հետևանքով երկար ժամանակ անհայտ էր մնում նրանց իրական բովանդակությունը: Մ. էմինն, օրինակ, ձեռնաւոր հասկանում է՝ նարպիկ, ձեռնաս մարդ և բոսս թարգմանում исправный сын²⁴, МАК-ի հեղինակներ Սիսոևը և Քուչուկ-Հովհաննիսյանը նույն բառը հասկանում են՝ իշխող (властвующий)²⁵: Մաուր Մրենի արձանագրության մեկնությունն մեջ ձեռնաւոր պայմանական կերպով թարգմանում է բարձր-աստիճան իշխանավորի օժանդակող, օգնական (подручный)²⁶: Ըստ այս մեկնությունների էլ հասկացվում էր այդ պաշտոնյաների օգտին զանձվող տուրքը՝ ձեռնաւորահակը, ձեռնաւորի հարկը:

Գիտելի է, որ մեջ բերված օրինակներում ձեռնաւորահակ-ը վերացնում են հենց նրանք, ում օգտին զանձվում էր այդ հարկը՝ ձեռնավորները կամ հարկահանները: Սակայն, չպետք է հարկի զիջումը ձեռնավորների բարեգր-թությամբ բացատրել. պարզապես, նրանք նախապես այն քանակութեամբ են զանձել իրենց հասանելի տուրքերը, որ երբեմն առանց զգալի վնաս կրելու կարող էին հրաժարվել մեկ տարվա հարկից:

2. Հակ բառով բարդություններ, որոնց առաջին բաղադրիչը այլ լեզու-ներից փոխառյալ բառ է:

Ա. Աղիակ, աղլահակ: Բառս եզակի հիշատակությամբ ավանդված է Անիի Առաքելոց եկեղեցու 1301 թ. արտոնագրում, որով Զաքարյան Աղբու-զան վերացնում է քաղաքի բնակիչներից զանձվող մի քանի հարկեր, որոնց թվում և աղլահակը: Արձանագրության այդ մասը Հ. Օրբելու հավաստի վեր-ծանուցմամբ կարգացվում է. «Ես՝ Աղբուղայս... թողը զեզինն հաղրն, զկովին համբրելէն, զոշխարին աղլահակն»²⁷: Բառս կազմված է ուլղուր. աղլ փարախ և հակ արմատներից, վկայված ժամանակաշրջանում նշանակել է ոշխարի տարեկան հարկ²⁸:

Բ. Ամիրահակ: Բաղադրված է արաբ. amir, amira=պետ, հրամանա-տար, կուսակալ, իսկ վկայված ժամանակաշրջանի համար միայն՝ քաղաքի կառավարիչ. քաղաքապետ, և հակ=հարկ բառերից՝ ամիր-ա-հակ՝ ամիրայի. քաղաքապետի օգտին բնակչությունից հավաքվող վարչական հարկ, հասույթ: Բառս հայտնի է եզակի վկայությամբ Բջնիի 927 (1325) թ. մեզ ծանոթ ար-տոնագրում, որով Զաքարյան, այլ հարկերի ու պարհակների թվում, իր տի-րույթների բնակիչներին ազատում է նաև ամիրահակ-ից. «Ես՝ Զաքարէ, որ-

²³ Հ. Ծանխարունյանց, նշվ. աշխ. Բ., էջ 79: Ալիշան, Այրարատ, էջ 190, վիճական տա-րեգիր, էջ 130:

²⁴ Н. Эмин, Армянские надписи в Карсе, Ани и в окрестностях последнего, М., 1881. էջ 51:

²⁵ Sht'a «Материалы по археологии Кавказа», т. XIII, М., 1916, էջ 171:

²⁶ Н. Март, Новые материалы, էջ 89:

²⁷ Հ. Օրբելի, Գիվան, I, էջ 28:

²⁸ J. Karst, Sempadscher Kodex, էջ 12, Հ. Անխոյան, Արմ. բառարան, Ա., էջ 149:

զի Սահիպ Գիվանին եւ պարոն Խաչաքին, թոռն աթաբակ Աւագին ի վեր կալայ, որ Բջնի այլ մարդոց տիրութիւն չէլնի. և թողի զամէն հարկ. զամի-րայնակն, զհարսանէհակ, զկովայհամարն, զկալայթաղարն, զսայլին սպի-տակն, զմահականէն...»²⁹:

Գ. Բալախահակ: Վկայությունը հանդիպում է Գառնիի հեթանոսական տաճարի մուտքի պարակալին 1291 թ. փորագրված մի ընդարձակ արտոնա-գրում, որով Զաքարյան Խոշաքը և իր որդի ամիր Զաքարիան վերացնում են իրենց տիրույթների բնակիչներից առնվող մի շարք հարկեր: Բնագիրը 1910 թ. հրատարակել է Գ. Հովսեփյանը, սակայն նրա ընդօրինակությունը, հակա-ռակ սպասածի, այնքան էլ հաջող չէ և ունի մի քանի մութ տեղեր: Հենց քննվող բառը այնտեղ արտագրվել է բալախանի, որ հեռու է իրականից³⁰: Ավելի հավաստի նույն բնագիրը հրատարակել է պրոֆ. Բ. Առաքելյանը, Գառնիի պեղումների արդյունքներին նվիրված իր գրքում: Այստեղ մեզ հետաքրքրող հատվածը կարդացվում է. «Գիր տուաք Գառնո մեր սեփական հայրենեցն, որ եղն: ԺԱ: ՄՊ շարիատ, էր եւ: Ի: ոշխարն, Ա: բալախահակ եւ մեք վերուցաք զայս հարկ, ազատեցաք զեզն եւ զոշխար յամենայն հարկաց»... և շարադրվում է անեծքի ձևակերպումը:

Պրոֆ. Բ. Առաքելյանը, իր գրքի նպատակներից ելնելով, չի տալիս այս կարևոր արձանագրության մեջ վկայված տերմինների բառաքննությունը, սակայն, հիմնվելով վրացի գիտնականներ Ա. Շանիձեի և Ն. Բերձենիշվիլու բանավոր ցուցումների վրա, բալախահակը մոնղոլական շրջանի հարկային տերմին է համարում, համապատասխան այդ շրջանի վրաց գրականության մեջ հայտնի սաբալախո նույնիմաստ բառին, որ նշանակում էր անասուններ արածացնելու կամ արոտների հարկ³¹:

Բալախահակ տերմինի ստուգաբանությունը հաստատում է այդ կոա-հումը, ըստ այդմ, բարդությունը կազմված է վրաց. balaxi=խոտ և հակ (հարկ) արմատներից և վկայված ժամանակաշրջանում կարող էր նշանակել այն հարկը, որ բնակիչները վճարում էին տեղական իշխաններին՝ նրանց ա-րոտներում անասուններ արածացնելու համար:

Գ. Դեմէքարահակ: Այս հարկային տերմինը վկայված է Մարտունու շրջանի Ն. Գետաշեն գյուղում (պատմական Կոթ ավան) գտնվող Կոթավանք հնագույն տաճարի 1275 թ. մի արձանագրության մեջ, որի առաջին վերծա-նությունը և մեկնաբանությունը տալիս է Ս. Բարխուդարյանը իր վերոհիշյալ հոդվածում:

Արձանագրությունը փորագրված է տաճարի արևելյան որմնախորշի մեջ հետազայում ազուցված մի կարմրավուն քարի վրա, անկանոն շղագրով և խիստ հողմնահարված է, այդ է պատճառը, որ նույնիսկ Ս. Բարխուդարյանի վերծանությունը ընդհանուր առմամբ չի ամբողջանում և ունի մի քանի մութ

²⁹ Հ. Ծանխարունյանց, նշվ. աշխ., Բ., էջ 183, Ալիշան, Այրարատ, էջ 273, վիճական տա-րեգիր, էջ 227:

³⁰ Sht'a Գ. Հովսեփյան, Գառնիի ավերակները, «Հովիտ», 1916, 8, էջ 120—122:

³¹ Sht'a Բ. Արաքելյան, Гарни, I, Ереван, 1951, էջ 84:

կետեր: Այլ առիթով լինելով հուշարձանի մոտ, մենք նորից ընդօրինակեցինք բոլոր կողմերով շատ կարևոր այս բնագիրը, աշխատելով հնարավորին չափ ստույգ արտագրել քարի վրա պահպանված տառաշարքերը և պարզել Բարխուդարյանի վերծանության մեջ բաց կամ անորոշ մնացած հատվածները: Ահա ամբողջ արձանագիրը մեր ընդօրինակության մեջ և վերծանության մեջ:

Թ. ՉԻԳ. յաշխարհ
այկալուրե Ապ
աղանին և և և
նոխին պարոն Տար
այինին: Ես Ջուրէկ
գայս բողի դէմէր
արայիակն: գողչն գ
մշակն գործիքն: Ժ:
գրի հաց ի գեղս: Ա: Եգ
Ա: կով իմ գրուխ այլ ի գե
ղս: Ով գ
այս, խափ
անէ Յ: Ժ:Բ
նգոված է

բուին: ՉԻԳ: (1275) յաշխարհակալու-
րեան Ապաղա Դալին և և և և և և
խին, պարոն Տարայինին, Ես՝ Ջուրէկ
գայս բողի դէմէրա(յ) հակն՝ գողչն,
գմշակն, գործիքն, :Ժ: գրի հաց ի
գեղս, :Ա: Եգ, :Ա: կով, իմ գրուխ: Այլ
ի գեղս...
Ով գայս խափանէ :Յ: Ժ:Բ նգոված է:

Բնագրի ոչ էական տարբերությունները զանց առնելով, կարելի է նշել միայն մեր ընդօրինակության երկու կարևոր տարբերությունը Բարխուդարյանի հրատարակածից.

ա) Ս. Բարխուդարյանի ընդօրինակությունը թերի է և ավարտվում է արձանագրության 10-րդ շարքով, ըստ հեղինակի այն անավարտ է մնացել՝ «նույն քարի վրա այլևս տեղ չլինելու պատճառով»: Մենք ընթերցել ենք ևս շորս տող՝ անհժքի ձևակերպումը, որով և ամբողջանում է արտոնագիրը:

բ) 7-րդ շարքում, դէմէրաբայիակն բառից հետո Բարխուդարյանը կարդացել է շղոչն անորոշ բառը, մենք նույն տառաշարքը վերծանել ենք՝ գողչն: Շղոչն անստույգ բառը Բարխուդարյանը ենթադրաբար համարում է Անիի մայր տաճարի պատին փորագրված՝ Բաղրատ մագիստրոսի արտոնագրում հիշատակված նստո (=ի նստո ինկարլեն կամ՝ ինստոին կարլեն) հարկային տերմինի հետ, որը նույնպես ցայժմ ստուգաբանված չէ:

Սակայն Կոթավանքի քննվող արձանագրության մեկնաբանության դժվարությունները միայն այս տարբերությունների մեջ չեն: Ս. Բարխուդարյանի վերծանությունից ստացվում է, որ ոմն Ջուրէկ, որ հավանաբար Կոթավանի կառավարիչը կամ դեմեթարն է, այս արտոնագրով իր նախաձեռնություններ (... իմ գրուխ) վերացրել է ոչ միայն գյուղապետի կամ ավանապետի օգտին գանձվող հատուկ հարկը՝ դեմէրաբայիակը, այլև մի քանի ուրիշ տուրքեր ու պարհակներ, այն է՝ շղոչ, մշակ, գործիք, 10 գրի հաց, մեկ Եգ, մեկ կով³²: Այսպես կարելի էր հասկանալ, եթե բնագրում սովորականի նման ասված լի-

³² Տե՛ս Ս. Բարխուդարյան, նշվ. հոդվածը, էջ 80—81:

ներ «Ես՝ Ջուրէկ բողի դէմէրաբայիակն, շղոչն, գմշակն, գործիքն» և այլն: Մինչդեռ քարի վրա պարզ փորագրված է. «Ես՝ Ջուրէկ գայս բողի դէմէրաբայիակն շղոչն, գմշակն», և այլն:

Այստեղից ակներև է, որ Ջուրէկը ինքնակամ սահմանում է դեմէրաբայիակն այն շափը, որ գյուղի համայնքը պարտավոր էր վճարել գյուղապետին: Ըստ այդմ, գայս բողի դէմէրաբայիակն կապակցությունից հետո թվարկվող արժեքները՝ շղոչն (=գողչն), գմշակն, գործիքն: Ժ գրի հաց, :Ա: Եգը, :Ա: կովը գյուղապետի պահպանության համար համայնքից հավաքվելիք հասույթն է և ոչ թե առանձին տուրքեր, ինչպես ենթադրել է վերծանողը:

Հավանական է մտածել, որ միջնադարում վերագաս վարչական իշխանությունների կողմից սահմանված է եղել գյուղապետի կամ տվյալ դեպքում դեմէրաբի օգտին գյուղական համայնքից գանձվող հարկ-հասույթի որոշակի քանակություն, և այս դեպքում դեմեթար Ջուրէկը ինքնակամ (... իմ գրուխ) որոշել է զեղչել, նվազեցնել այդ հարկը՝ հականե հանվանե թվարկելով ամբողջ հասույթի իջեցումից հետո մնացած, գանձման ենթակա արժեքները: Մյուս կողմից, անհնար է բնագրի՝ շղոչն (=գողչն), գմշակն, գործիքն, 10 գրի հաց, մեկ Եգ, մեկ կով առանձին, ինքնուրույն հարկեր կամ պարհակներ համարել, քանի որ միջնադարյան Հայաստանի հարկացանկում այդպիսիները չեն վկայված և միանգամայն ակներև է, որ թվարկված արժեքները որոշակի աննշուն պետք է ունենային նախորդ՝ գայս բողի դէմէրաբայիակն նախագասության հետ, այլապես անբացատրելի կմնա, թե ո՞ւմ օգտին էին գանձվում այդ տուրքերը, և Ջուրէկի հրամանագրով սահմանվում, թե զեղչվում էին դրանք:

Գանահնք վիճելի շղոչն տառաշարքին: Ինչպես տեսանք, Բարխուդարյանը այստեղ ենթադրաբար վերականգնում է նրա (կարող էր առաջանալ շ, ն շղաղի տառերի շփոթումից) բառը և այն նույնացնում Անիի ԺԱ դարի արձանագրության նստո (=նստոին) հարկային տերմինի հետ, առանց մեկնաբանելու նրանց բովանդակությունը³³: Այս համարությունը անհամոզիչ է ոչ միայն այն պատճառով, որ հնչյունական օրինաչափություններով նստո-ն (կամ նստոին) ոչ մի կերպ չէր կարող հնչյունափոխվել շղոչ-ի կամ նրոչ-ի, այլև նրանով, որ Անիի բյուզանդական ժամանակաշրջանի հարկային տերմինը հազիվ թե կիրառություն ունենար ավելի քան երկու դար անց՝ մոնղոլական տիրապետության տարիներին:

Մեր վերծանության մեջ տվյալ տառաշարքը կարդացվում է գողչն, որտեղից բառի ուղիղ ձևը դոչ (գ-դոչ-ն, հմմտ. շարունակության մեջ՝ գ-մը-չակ-ն, գործիք-ն, դէմէրաբայիակն): Արդ ի՞նչ է նշանակում գ-դոչ-ն: Այս բարբառային բառի դիմաց բառարանները դնում են՝ կուրծք, կրծքի միս, կրծամիս³⁴, ըստ այսմ, կարելի է մակաբերել, որ վկայված ժամանակամիջոցում (1275 թ.) գոյություն է ունեցել գյուղապետի օգտին սահմանված, ի

³³ Տե՛ս Ս. Բարխուդարյան, նշվ. հոդվածը, էջ 79—80, Դիվան, 1, էջ 37:

³⁴ Տե՛ս Ստ. Մալխասյանց, Բացատրական բառարան, Ա., 1944, էջ 547:

թիվս այլ հասույթների, նաև մորթվող անասունների (խոշոր թե մանր անորոշ է) կրծքի մսից որոշ քանակություն հատկացնելու պարտավորություն: Այս հասույթը հիշեցնում է նույն ժամանակներում եկեղեցական տոներին զոհաբերվող անասունների որոշ մասերը (ազդրը՝ վերին մասով, էրին, գլուխը, փորոտիքը) հոգևորականներին բաժին հանելու պարտավորությունը: Անիի 1217 թ. մի արտոնագրից տեղեկանում ենք, որ «Սահման էր ի սկզբբանէ յամենայն գեղէ երկու գրիւ հաց յաթոոս տալ, եւ քաղաքիս ամենայն եկեղեցիս մորքի մին զատկին տաին»³⁵, այսինքն վանքերն ու եկեղեցիները, բացի սահմանված պտղից կամ աթոռահարկից, վերցնում էին նաև իրենց համայնքների մորթած անասունների մորթիների որոշ մասը՝ մագաղաթ և այլ առարկաներ պատրաստելու համար:

Միջին դարերի մատենագրական աղբյուրներում վարչական իշխանության օգտին սահմանված այսպիսի պարտավորության մասին վկայություններ չեն պահպանվել, և մեր կուսումը դոշ-ի (կրծամիս) մասհանման առթիվ կարող է թեական համարվել: Բարեբախտաբար, Կոթավանքի մերձակայքի մեկ այլ վիճակաւն արձանագրության մեջ միանգամայն որոշակի հիշատակություն կա նույն պարտավորությունը վերացնելու մասին, որը և հավանական է դարձնում դոշ-կրծամիս պարտավորության գոյությունը միջնադարյան Հայաստանում: Այդ ընդարձակ արձանագրությունը փորագրված է եղել Մարտունու շրջանի Աստղածոր գյուղի կենտրոնում կանգնած խաչքարի հյուսիսային կողմն ու պատվանդանին և անցյալ դարի վերջերին վերծանվել, հրատարակվել է Մ. Սմբատյանցի կողմից: Ներկայումս տեղում պահպանվել է բուն խաչքարը իր բնագրով, իսկ նրա արձանագրված պատվանդանը, ցավոք, անհետացել է: Խաչքարի բնագիրը ըստ մեր վերծանություն հետևյալն է «Ի թվ. հայոց: ՉԺԹ: (1270) ես՝ Շահանշահ որդի Ջոհէ կանգնեցի զխաչս յիշատակ հոգոյ իմոյ: Ով կարդէք, յաղաթս յիշեցէք»:

Սակայն արձանագրության էական մասը եղել է պատվանդանի վրա, որը և մեջ ենք բերում Սմբատյանցի ոչ այնքան հաջող ընդօրինակությունը. «Ես Շահանշահ եւ իմ որդի Աւագ զՈրբումն քողաք...» շարունակությունը մի քանի անկապ բառեր³⁶: Ռբումն բառը վերծանողը դնում է մեծատառով, այսինքն նրանում տեղանուն է տեսնում: Սակայն այս դեպքում անհասկանալի կդառնա զՈրբումն քողաք կապակցությունը, որ այլ արտոնագրերի համանմանությամբ, պետք է արտահայտեր ինչ-որ պարտավորություն կամ հարկ, տուրք, որ թողնում են արձանագրողները: Մեզ հավանական է թվում մտածել, որ Շահանշահը և իր որդի Ավագը թողնում են ոչ թե ինչ-որ տեղանուն կամ հանգամաս, այլ որբումը, սրա պարտավորությունը: Իսկ ի՞նչ է արտահայտում որբումը: Թվում է, որբումը կամ հին հայերենի երբում բառի հնչյունափոխված, բարբառային տարբերակն է, կամ քարի վրա փորագրված

³⁵ Տե՛ս Չ. Օրբելի, Դիվան, I, էջ 16, Կանոնագիրք Հայոց, Բ, 1971, էջ 234—235:
³⁶ Մ. Սմբատյանց, Տեղագիր Գեղարքունի ծովազարդ գավառի, Վաղարշապատ, 1895, էջ

է եղել զերբումն քողաք... և վերծանողն է սխալմամբ այն կարգացել զՈրբումն քողաք, շփոթելով բառակերպի ե, ո գրերը: Հին հայերենի գրական հուշարձաններում երբում հոմանիշ է դոշ բառին և նշանակում է նույնպես՝ կուրծք, կրծքի միս, կրծամիս³⁷: երբում > որբում փոփոխությունը օրինաչափ երևույթ է խոսակցական լեզվում և այդ պատճառով բառս բարբառներում ավանդված է հենց այդ փոփոխված՝ որբոց, որփուց ձևերով, բայց նույն նշանակությամբ: Այսպես, ըստ Հր. Աճառյանի Զեյթունի բարբառում որբոց (< որբում < երբում) նշանակում է «Հարսանիքի համար մորթված տավարէն քահանային հանված բաժինը, այն է գլուխը և կուրծքէն լիտի մը շափ միս»³⁸:

Այստեղից ակներև է, որ ինչպես Կոթավանքի, այնպես էլ Աստղածորի արձանագրության մեջ հաղորդվում է նույն պարտավորության՝ մորթված անասունի կրծամիսը հատկացնելու մասին, այն տարբերությամբ միայն, որ Աստղածորի արտոնագրում այն վկայված է որբում (< երբում) գրաբարյան ձևով, իսկ Կոթավանքի բնագրում՝ նույն բառի բարբառային հոմանիշով՝ դոշ-ով: Եվ դա միանգամայն օրինաչափ է. ինչպես նկատվում է, Կոթավանքի արձանագրությունը շարագրված է ժամանակի գրաբարից զգալի շեղումներով և բարբառային ներթափանցումներով՝ յաշխարհայկալուրե < յաշխարհակալուրե, դէմէքարայհակն < դէմէքարահակն, ի գեղս < ի գեղջ, իմ գլուխ < ինքնագլուխ, ինքնակամ (հմմտ. Մրենի 1276 թ. բնագրում «Յիմ մտաց դուս՝ առանց վարդպետի ձեռքի ու հիմն ձգեցի դարապասիս ու գրախտիս»), ուստի և բնական է այստեղ գրաբարյան երբում-ի փոխարեն գոյանվանումը:

Վերը շարագրված դիտողություններից հետո Կոթավանքի արտոնագիրը կարելի է մեկնաբանել այն իմաստով, որ Կոթ գյուղի կամ ավանի դեմեքար (= գյուղապետ, գեղջուագ, ուխտ) Ջուրեկը փր նախաձեռնությամբ, ինքնակամ, բարեգործական նկատառումներով վերադաս իշխանությունների սահմանած դեմեքարահարկը պակասեցնում, դարձնում է հետևյալը. երբումի պարտավորություն (դոշն), դեմեքարի հողերը մշակելու համար մշակներ և գործիքներ առամաղբելը, 10 գրի հաց՝ հավանաբար սերմացուի համար, մեկ եգ, մեկ կով: Սրանից հետո հեղինակը փորագրել է՝ այլ ի գեղս, ըստ երևույթին նպատակ ունենալով սահմանել՝ այլ ի գեղս հարկս ոչ առնուն, բայց անհայտ պատճառներով խոսքը կիսատ է թողել և շարունակության մեջ շարագրել անեծքի ձևակերպումը:

Դեմեքար, դեմեքարահակ բառերի ստուգաբանությունը տալիս է Ս. Բարխուդարյանը, ըստ այդմ, բառս կազմված է պարս. deh (dih) = գյուղ, երկիր, կողմ և mehtar = մեծ, ավագ արմատներից և վկայված ժամանակաշրջանում կարող էր նշանակել՝ գյուղի ավագ, գյուղապետ, ուխտ: Այստեղից,

³⁷ Տե՛ս ՆԶԲ, Ա, էջ 672, Ստ. Մալխասյանց, Բացատրական բառարան, Ա, էջ 574:
³⁸ Հր. Աճառյան, Հայերեն գավառական բառարան, Թիֆլիս, 1913, էջ 863, Ստ. Մալխասյանց, Բացատրական բառարան, Գ, էջ 581: Թվում է, Ստ. Մալխասյանցը սխալվում է որբոց (< որբում < երբում) բառը որք բառի հոգնակի սեռական հոլովածը համարելով: Ավելի հավանական է ե > ո անցումը համարել ու հնչյունի հտընթաց առնմանության արդյունք:

դէմքաբահակը այն հասույթն է, տուրքը, որ գյուղի համայնքը պետք է վճարեր դէմքաբահին, գյուղապետին, իբրև ոռճիկ³⁹:

Պատմագիտական գրականության մեջ գյուղի առաջնորդների օգտին հավաքվող առանձին հարկի, տվյալ դեպքում դէմքաբահակի մասին կոնկրետ հիշատակություններ չկան և հետազոտողները այգպիսի հարկի գոյությունը ընդունում են լոկ տեսականորեն, ենթադրաբար: Մեր մեջ բերած օրինականացման արժեքը մեծանում է նաև նրանով, որ այդտեղ ոչ միայն առաջին անգամ վկայվում է գյուղավագի, ռախի օգտին գյուղի բնակչությունից գանձվող հատուկ հարկը, այլև մոտավոր ճշտությամբ ներկայացվում է այդ հասույթի շահիր, քանակությունը, որ կարևոր նշանակություն է ստանում մոնղոլական տիրապետության շրջանում հայ գյուղի հարկային վիճակի մասին մեր պատկերացումների ընդլայնման համար:

Ե. Շահնահակ: Բարդությունը բաղադրվում է պարս. sahna = օստիկան, վկայված ժամանակաշրջանում՝ հարկերի ու տուրքերի գանձման և պարհակների կատարման հսկող ոստիկանական պաշտոնյա և հակ բառերից, որ նշանակում է՝ շահնայի, հարկահավաք պաշտոնյայի օգտին գանձվող վարչական հարկ: Շահնահակ հարկահան պաշտոնյայի և նրա օգտին սահմանված հատուկ հարկի՝ շահնահակ-ի գոյությունը հաստատվում է Քանաքեռի խաչարձանի ՉԺԵ (1266) թ. և Հոփսիմեի տաճարի ՉԽԵ (1296) թ. արձանագրություններով, որ այլ առիթով արգեն հիշատակել ենք: Օրինակ, Հոփսիմեի տաճարի արտոնագրում ասված է. «Թողաք զՀոփսիմեուցս զբարակի շարիատն եւ զշահնային բարակի հակն...»: Ակներև է, որ վանքը վճարել է ոչ միայն բամբակի շարխատ, այլև շահնայի, հարկահանի օգտին հավաքվող բամբակի հարկ, որը վերացրել են զավառի տերերը:

Քանաքեռի խաչարձանի արձանագրության մեջ խոսքը ոչ թե շահնայի օգտին հավաքվող հարկի մասին է, այլ սեփականության փոխանակային կամ վաճառքի գործառնություններից շահնայի և մեղունայի (°) օգտին կատարված որոշ մասհանման մասին: Ըստ այդմ, 3200 սպիտակի վաճառքի ընդհանուր արժեքից տեղի պարոնին մասհանվել է այդ գումարի տասանորդի (դահակ) շահիրով՝ 320 սպիտակ, իսկ շահնային և մեղունային՝ միայն 50 սպիտակ...⁴⁰:

Սակայն տվյալ դեպքում մեր քննության նյութը ոչ թե շահնայի հարկն է ընդհանրապես, որի գոյությունը հաստատվում է հենց Հոփսիմեի տաճարի արձանագրությամբ, այլ շահնահակ տերմինը, որ գրական աղբյուրներում չի ավանդված և հանդիպում է նորագավթի եկեղեցուց Երևանի պատմության թանգարանը տեղափոխված սրբատաշ քարաբեկորի անթվական արձանա-

³⁹ Տե՛ս Ս. Բարխուդարյան, նշվ. հորվածը, էջ 79—80:

⁴⁰ Բնագիրը էական տարբերություններով հրատարակվել է քանիցս, առնում ենք մեր հավաքածուից: Հմմտ. Մ. Սմբատյանց, Գեղարքունիք..., էջ 208, Հ. Շահխարունյանց, նշվ. աշխ. Բ, էջ 159, Ալիշան, Այրարատ, էջ 298: Ավելի մանրամասն տե՛ս Թ. Ավդալբեկյան, Մթ գաղտնիք..., ՀեՍՀ Գիտության և արվեստի ինստիտուտի տեղեկագիր, № 2, Երևան, 1927, էջ 11:

գրության մեջ: «Ես՝ Շահինշահ թողի զշահնայհակն գեղիս...»⁴¹: Նույն գրությանը տերմինը վկայված է նաև Ուրծի եկեղեցու պատին փորագրված մի խաթարված արձանագրության մեջ. «Յուսովն անմահին այ ես՝ Արղոնս պարոն Այլակումին ողորմութբն զձեռնաւորութի եւ զշահնայհակն...»⁴², շարունակությունը չի պահպանվել:

Այստեղ հիշատակված Այլիկումը (<ելիկում, էլիկում) Օրբելյան Ջալալի որդի և Տարսայիճ իշխանաց իշխանի թոռ էլիկումն է, որի ժառանգական տիրույթները տարածվում էին Վեդի գետակի միջին հոսանքում, Ուրծ և Արած գավառակներում, որտեղ Ջալալ Օրբելյանը դեռևս ՉԾ (1301) թ. կառուցել էր տոհմի հոգևոր կենտրոնը և տապանատունը՝ Սպիտակավոր Կարապետի վանքը: Ըստ այդմ, շահնայհակ-ի մասին ոմն Արղոնի այս արձանագրությունն էլ ԺԴ դարի կեսերին է վերաբերում, երբ չկար արդեն Ջալալը և նրան փոխարինում էր որդին՝ էլիկումը, որի ընդարձակ նվիրագիրը՝ փորագրված նույն Սպիտակավոր վանքի հյուսիսային պատին ունի ՉՂԵ (1346) թվագիրը⁴³:

Հակ հարկային տերմինի վերը հիշատակված վկայությունները միջնադարի մատենագրական աղբյուրներում չեն հիշատակվում և այդ պատճառով տեղ չեն գտել հայագիտական գրականության մեջ: Այս տերմինի ուսումնասիրությունը կարևոր նշանակություն է ստանում միջնադարյան Հայաստանի սոցիալ-տնտեսական վիճակի, հարկային համակարգերի մասին մեր պատկերացումները ընդարձակելու գործում:

С. А. АВАКЯН

ПОДАТНЫЙ ТЕРМИН ՀԱԿ В АРМЯНСКИХ НАДПИСЯХ

Резюме

Податный термин հակ (=налог, подать, дань) в письменных источниках средних веков не засвидетельствован и поэтому не нашел отражения в специальной литературе и словарях.

В эпиграфических текстах X—XIV вв. термин часто встречается в самостоятельном употреблении или в составных податных образованиях (բամբակի հակ, ձրի հակ, ոչխարի հակ, ու—գլխահակ, հարսանեհակ բալխահակ и т. д.).

В научной литературе многие эпиграфические свидетельства термина հակ не были достоверно установлены и интерпретированы, а тер-

⁴¹ Կ. Ասատրյան, Մի էջ նորագավթի պատմությունից, ՊՐԶ, 1968, № 4 էջ 250—251:

⁴² Գ. Հովսեփյան, Տարսայիճ Օրբելյանի և Մինա խաթունի սերունդը, Անթիլիաս, 1947, էջ 22—23:

⁴³ Նույն տեղը, էջ 24, Հ. Աճառյան, Անձն. բառարան, Բ, էջ 101:

мины դեմքարահակ, հարսանեհակ, ձեռնաւորահակ получили неверные толкования.

В данной работе на основании новых, более идентичных дешифровок надписей предлагаются этимологии и толкования всех известных свидетельств термина, имеющих важное значение для исследования податной системы средневековой Армении периода монгольского господства.

Պ. Մ. ՄՈՒՐԱՂՅԱՆ

ՎՐԱՅԵՐԵՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Չ ա ն գ լ ի

Չանգլիում վրացերեն արձանագրությունների գոյությունն առաջին տեղեկանքը տվել է Ղ. Ալիշանը. «Յարեմտից հիւսիսոյ Ղարաւանից և յահեկէ նրասխայ կայ փոքրիկ լճակն Չանկլի առ համանուն գիւղիւ բարձու ի լերանցամէջս, յորում եկեղեցի հոյակապ և գմբեթաւոր ի սեպոյն քարանց, 62¹ երկայն, 44¹ լայն, վրացի արձանագրութեամբք, որք բուին ի սկզբան պայտապատութեան Բագրատունեաց դրոշմեալք: Ի լճակէն, որոյ կիսածամաւ է շրջապատ և խոր յոյժ, ելանէ վտակն Կապոյտ...»¹: Ալիշանի սույն խոսքերն ավելի շուտ են հրատարակված, քան Ն. Սարգիսյանի ստորև բերվող նկարագրությունը, բայց անկասկած է, որ սկզբնաղբյուրը Ն. Սարգիսյանի նյութերն են: Ղ. Ալիշանն իր «Առաջաբան»-ում նշում է. «... ի ձեռին ունելով զպատուականագոյնն և զչեւ ևս հրատարակեալ վաստակ մերոյս արդոյ և հոգեկից եղբօր Հ. Ներսիսի վարդապետի Սարգիսեան, բազմամեայ ուղեւորի ի մասն Փոքուն և Մեծաց Հայոց, և հաւատարմագոյն ընդօրինակողի հայ արձանաց տեղեացն յորս շրջեցաւ...»²:

Այստեղից կարող ենք եզրակացնել, Ն. Սարգիսյանը Չանգլի է այցելել իր ճանապարհորդության սկզբնական շրջանում, քանի որ Ղ. Ալիշանի վերոբերյալ խոսքերը գրված են 1855 թվականին³:

Քանի դեռ անհայտ էր վրացերեն այդ արձանագրությունների բովանդակությունը, այսինքն՝ քանի դեռ Մ. Բրոսեն չէր վերծանել այն ըստ Ն. Սարգիսյանի պատճենումների, Ղ. Ալիշանը չէր կարող նրանց մասին որևէ մասնագիտական խոսք ասել և, ներկա դեպքում, Բագրատունյաց պայտապատության շրջանի վիճակը համարելը ընդհանուր բնույթի կոահում է՝ գոյության փաստից բխող: Ն. Սարգիսյանը, ինչպես մյուս վրացերեն արձանագրությունների դեպքում, Չանգլիում եղածը ևս հրապարակել է ահադ. Մ. Բրոսեի վերծանությունամբ ու թարգմանությունամբ, հաղորդելով և վերջինիս երկբայությունը գլխավոր արձանագրության վերծանության ճշտության

¹ Ղ. Ալիշան, Տեղագիր Հայոց Մեծաց, Վենետիկ, 1855, էջ 35—36:

² Ղ. Ալիշան, նշվ. աշխ., էջ 4, հմմ. նույնի՝ Այրարատ, Վենետիկ, 1890, էջ 48 և 545:

³ Երկու հեղինակներն էլ վանքն ու գյուղանունը «Չանկլի» են գրում, մինչդեռ Ն. Բաղաշովը մոտ «Չանգլի» է. նախընտրելին ու ճիշտը ներկա արտասանության համար երկրորդն է, քանի որ այդպես էին կարդում և Ալիշանն ու Սարգիսյանը:

վերաբերմամբ⁴: Երախտավոր գիտնականն իր հերթին փորձել է լուսաբանել վրացերեն արձանագրությունների առկայության պատճառը. «վրացի արձանագիրք եկեղեցույս, զորոց տեսցի ստորե, կարծիս տան ինձ, թէ ըստ հին աշխարհագրութեան ի սահմանին Կարուց անկանէր գիւղս, և յորժամ անց քաղաքն այն առ վիրս՝ յայնժամ շինեցաւ և եկեղեցիս այս. ոչ սակաւ պատճառք են և մեծին Երասխայ ընդ մէջ անցանելով, որ բաժանէ յիրերաց զսահմանս Կաղզուանայ և Կարուց»⁵: Ինչպես ստորև կտեսնենք, վրացերեն արձանագրությունների գոյությունը ոչ վրացաբնակ միջավայրում բոլորովին այլ պատճառաբանություն ունի: Բնական է, որ Ն. Սարգիսյանը պետք է բացատրեր միայն վրաստանի սահմաններում գտնվելու պարագայով: Ակադ. Մ. Բրոսեն Չանգլիի մասին որևէ լրացուցիչ տեղեկություն չունի: Նա թարգմանաբար վկայակոչում է Ղ. Ալիշանի մեզ ծանոթ տողերը, իսկ ապա՝ վերծանում արձանագրությունները, որոնց մասին ստորև հանգամանորեն կխոսվի⁶:

Տեղիս արձանագրություններից մեկի պատճենը ժամանակին եղել է Գ. Տեր-Մկրտչյանի ձեռքին, բայց քանի որ բովանդակությունը նրա համար անծանոթ է մնացել (այդ պարագայում անվանի հայագետի համար դժվար էր ճշտել նրա հրատարակված լինելը Ն. Սարգիսյանի ու Բրոսեի կողմից), ուստի նամակով ուղարկել է Ն. Մառին⁷: Բավական անհաջող պատճենավորված լինելու հետևանքով, դատելով մակագրություններից, Ն. Մառը փորձել է նույնիսկ «արքայուն» բառ կարդալ, բայց այդպես էլ անավարտ է մնացել:

Գարասկզբին, ինչպես երևում է Ն. Թաղաշվիլու մի հաղորդումից, Չանգլիում է եղել Ստ. Մալխասյանցը, ընդօրինակել է գլխավոր արձանագրության երկրորդ կեսը (ժամանակին այս մասը դիտվել է իբրև առանձին միավոր) և ի վերծանության տրամադրել նորից ակադ. Ն. Մառին: Մենք առանձնակի ուշագրությամբ ծանոթացանք Ն. Մառին հասցեագրած Ստ. Մալխասյանցի նամակներին, բայց արձանագրությունը պատճեննելու պարագաների մասին որևէ տեղեկություն մեզ չհանդիպեց: Ն. Թաղաշվիլու խոսքով՝ Ն. Մառը Ստ. Մալխասյանցի պատճենածը իրեն է տրամադրել 1907 թվականի ուղևորությունից շատ առաջ. «Вторую часть надписи, снятую от руки Стефаном Малхасянцем, передал мне Н. Марр для разбора задолго до моей поездки в Чангли, но по этому снимку немного можно было исправить в чтении Броссе»⁸.

⁴ Ն. Սարգիսյան, *Տեղագրութիւնք ի Փոքր և ի Մեծ Հայս, վեներիկ, 1864, էջ 218—219:*

⁵ *Նշվ. աշխ., էջ 218—219:*

⁶ M. Brosset, *Inscriptions géorgiennes et auters, recueillies par le P. Nersès Sargisian...* (Mémoires de l'Académie Impériale des Sciences de St.—Petersbourg, VII e. série, tome VIII, № 10, p. 22—24).

⁷ ՍՍՀՄ ԳԱ արխիվի կենտրոնական բաժանմունք (ՂՕ Արխ. ԱՊ ՍՍՀՄ), ֆոնդ 800, Բ—1456, թ. 61—63 (նամակի հրատ. տե՛ս Պ. Հակոբյան, Գալուստ Տեր-Մկրտչյանի նամակները Նիկողայոս Մառին, «Մառը և հայագիտության հարցերը», Երևան, 1968, էջ 212):

⁸ E. Такайшвили, *Храм в Чангли и его грузинские надписи* (рук.), стр. 9.

1907 թվականի ամռանը Չանգլի է այցելել վրացագետ Ն. Թաղաշվիլին, ինժեներ Անատոլի Կալզինի և Թիֆլիսի արական գիմնազիայի ֆրանսերեն լեզվի դասատու (ներկա դեպքում լուսանկարիչ) էդուարդ Լիոզենի ուղեկցությամբ: Փորձված հնագետը տեղում վերծանել է արձանագրությունները, տվել վանքի (ճիշտ կլիներ՝ տաճարի) մանրամասն ճարտարապետական նկարագրությունը: Սակայն բավական երկար ժամանակ Ն. Թաղաշվիլու ուսումնասիրության արդյունքները անտիպ էին: Նրանք լույս տեսան Փարիզում՝ 1938 թվականին⁹: Հեղինակի ծանոթագրությունից տեղեկանում ենք, որ այդ հրատարակումից շատ առաջ (1922 թ.), ի թիվս այլ հոգվածների, նա Ն. Մառին է ուղարկել «Храм в Чангли и его грузинские надписи» վերտառությամբ իր ուսումնասիրությունը: Մեզ անհայտ պատճառներով հոգվածներն անտիպ են մնացել¹⁰: Թեև վրացերեն աշխատության մեջ պրոֆ. Ն. Թաղաշվիլին արդեն հրատարակել էր իր վերծանությունը, մենք անհրաժեշտ համարեցինք գտնել և ռուսերեն անտիպ հոգվածը, որովհետև, հրատարակված տեղեկությամբ, նրան առկից եղել են մի քանի արժեքավոր լուսանկարներ, այդ թվում և մեզ հետաքրքրող արձանագրությունները: Նամակներում ու տպագիր աշխատություններում հիշատակված 6 հոգվածն էլ գտնվեց ակադ. Ն. Մառի արխիվում¹¹: Ն. Թաղաշվիլու առկից գրության մեջ թվարկված 19 լուսանկարներից ու գծագրերից տեղում են 14-ը:

Լուսանկարները մեծացված են արտակարգ պայծառությամբ, որը և հրնարավորություն տվեց արձանագրության վերծանությունն ստուգել ըստ ամենայնի:

Ն. Թաղաշվիլու այցելության տարիներին Չանգլին «հայոց խոշոր գյուղ» է եղել¹², որի բնակիչներն աստանդական եղան 1915 թվականի եղեռնի ժամանակ¹³: Ավելորդ չէր լինի այստեղ վկայակոչել Ն. Թաղաշվիլու նկարագրության մի մասը՝ Չանգլիի շրջապատին ծանոթանալու համար: Նա գրում է.

⁹ Ե. თაყაიშვილი, «რქეოლოგიური ექსპედიცია კოლა-თლთისში და ჩანგლში 1907 წელს, ჰაბიტი», 1938.

¹⁰ 1928 թվականին Ն. Մառին հասցեագրած նամակով (տե՛ս ՂՕ Արխ. ԱՊ ՍՍՀՄ, ֆ. 800, օր. 3, № 903), Ն. Թաղաշվիլին խնդրում է ետ վերագրվել անտիպ մնացած հոգվածները: Ն. Մառը նրան տեղեկացրել է, թե հոգվածները ուղարկված են Թրիֆիսի, հնագիտության ինստիտուտ, ի տպագրություն: Մառի հանձնարարությամբ նրանցով հետաքրքրվել է Ի. Զավրիեր և պատասխանել հեղինակին, թե հոգվածները եղել են հիշյալ ինստիտուտում, բայց այժմ ում մոտ գտնվելը անհայտ է մնում, «ինչ-որ մեկը վերցրել է» (տես Ե. თაყაიშვილი *նշվ. աշխ.*, էջ 79, ծան.):

¹¹ ՂՕ Արխ. ԱՊ ՍՍՀՄ, ֆ. 800, օր. 6 (E) №№ 721—727: Ն. Թաղաշվիլու սույն հոգվածները վաղուց մենք տպագրության ենք պատրաստել (տե՛ս Ս. Մ. Մուրադյան, *Комментарии Я. Смирнова к поэме Шавтели, «Царские записки» 1967, № 10, էջ 107*):

¹² Ե. თაყაიშვილი, *ნշվ. աշխ.*, էջ 80:

¹³ Չանգլի գյուղի մասին տողերիս հեղինակին պատմել են Թիֆլիսաբնակ մտավորական, այժմ հանգուցյալ Կ. Աղբյուրյանն ու նրա տիկինը:

«Цель нашей поездки в Чангли состояла в том, чтобы ближе познакомиться с этим памятником старины, сделать обмеры, фотографические снимки и проверить надписи, разобранные Броссе. В Карс мы приехали из Мерденека Гельского участка 10 августа. Переночевав в гостинице «Империял», на другой день 11 августа в омнибусе поехали по Кагизманской дороге и не доезжая Кагизмана, остановились на почтовой станции Кетак, где имели ночлег; 12 утром на лошадях выехали в Чангли. Проехали селение Джамушли-Козлы против Кизил-Верона, где смотрели остатки небольшой армянской церкви крестного плана с куполом, с разными парусами. Восточные углы креста были застроены. Церковь была облицована тесаными камнями. За исключением небольшой восточной части, она вся оказалась разобранной. Отсюда поднялись мы на высокое плоскогорье у подошвы Алладага, проехали кочевье, пастбищные места, рядом с которыми виднелись и пашни. Хлеба казались хорошими. Вид на большое армянское селение Чангли и в особенности на небольшое продолговатое озеро с чистой прозрачной водой к западу от селения был великолепен, но большой храм с высоким куполом, расположенный посреди деревни на невысоком круглом холме, нам показался издали в виде высокой черной и мрачной башни. Около барабана и в боковых частях храма были нагромождены камни. Очевидно храм был превращен в турецкое время в оборонительный пункт, как это мною было замечено в Бане, Урте и Цкароставе той же Карсской области. С приближением к селению, когда яснее вырисовывались фронтоны храма и глаз привык к черному цвету, вид стал более привлекательным. Спуск был не особенно крутой»¹⁴.

Ն. Թաղաշվիլին առավել մանրամասնությամբ ու իրեն հատուկ հմտությամբ նկարագրում է և տաճարի ճարտարապետական կառուցվածքն ու որոշում նրա տեղը համանման կառույցների շարքում, մանավանդ Տալբի միջավայրից: Մասնագիտական այդ խնդիրը ներկա դեպքում մեզ չի վբաղեցնում, ուստի և չենք անդրադառնում տաճարիս ճարտարապետական զուգահեռը այլ միջավայրում որոնելու խնդրին:

Չանգլիում, փաստորեն, վրացիներն երեք արձանագրություն կա.

1. Տաճարի արևմտյան դռան վերևում: Արձանագրությունը բաղկացած է երկու մասից՝ առաջին վեց տողերը բարավորի վրա են, իսկ շարունակությունը (9 տող) «направо от наличника на 12 камнях, причем последние 4 строки помещены еще правее и начинаются в уровень линии 11-ой строки»¹⁵:

Ահադ. Մ. Բրոսեն արձանագրությանս երկու մասերը սկզբնապես ընկալել է առանձին-առանձին, այդ պատճառով էլ համարակալել է՝ № 26, 27, կալել է

¹⁴ E. Такайшвили, նշվ. աշխ., էջ 3—4 (էջանամարները ըստ մեքենագրված տեքստի)

¹⁵ E. Такайшвили, նշվ. աշխ., էջ 8:

բայց տեքստը վերծանելիս ու թարգմանելիս ստիպված է եղել դիտել իբրև ամբողջություն (շարունակաբար 15 տող): Պիտի ենթադրել, որ Ն. Սարգիսյանին տրամադրած իր վերծանությունն ու թարգմանությունը Բրոսեն հետագայում վերանայել է՝ գոնե նույն 1864 թվականի ֆրանսիերեն իր հրատարակության մեջ¹⁶: Ն. Սարգիսյանի հրատարակած բնագրում և Բրոսեի մոտ կան հետևյալ տարբերությունները.

Ն. Սարգիսյան	Մ. Բրոսե
2 Լտոնագան	2 Թեոլորեցան(?)
3 ...յանի ...Պոլլեթե	3 ... (Լրո)յանի ...Պոլլեթե
4 Թրաքեքեցան	4 Թրաքեքեքեցան
5 Նշտա	5 Ներոնտա
6 Վեցալեն ալ..րոնա	6 Վեցա մոնաստրոնա
8 Յիրոտա	8 Վեկոտա
9 Վեցա ցե	9 Վեց ցե
10 Ելլետա	10 Ելլետա

Ն. Սարգիսյանի գրքում եղած թարգմանությունը չի բխում այնտեղ իսկ հրապարակված վրացիների բնագրից, քանի որ առկույված էական տարբերությունները չեն արտացոլված: Պիտի կարծել, որ Մ. Բրոսեն երկբայությամբ (բառս դործածված է Ն. Սարգիսյանի մոտ) թարգմանել է Ն. Սարգիսյանին տրամադրած իր վերծանությունից, իսկ այնուհետև, հրապարակելիս վերանայել է բնագիրը, վերծանություն ներմուծելով թարգմանության մեջ կատարած իր ճշգրտումներ-վերականգնումները: Սրան պետք է ավելացնել և սրբագրական աղավաղումները՝ միմյանցից անկախ կատարված (Ն. Սարգիսյան, տող 2, 4, 5, Մ. Բրոսե, տող 9):

Բարեբախտաբար, մեր ձեռքի տակ է ոչ միայն Ն. Թաղաշվիլու տեղում կատարած հմուտ վերծանությունը, այլ նաև՝ արձանագրության լուսանկարը, ըստ որի և կատարել ենք մեր վերծանություն-թարգմանությունը.

յ(րոնի)յ(ոն)ն Ե. Ն(ա)Ն(ց)լիտա Լ(Մրոնա)ձտա Ձե/ցլ(ա)ն(ա)յ(ա)ն ցց(ա)ժ(ո)ձ
 Գլեղ Թ(եոլոր)եց(ա)ց(ա)ն/ Լ(րո)յանի Կ և Գալլեթե միսլա / Նալլոցալ Թրա-
 քեքեց(ա)ն Լոր/տա Կ(ա)Մտա Քուրի Պոլլեթե Մեքո/տաժե. Վ(ե)Մ Լեմո-
 ռոնա// Քաթրոնի Իլոս և Վ(ե)Մձլաուրի Լ(ա)Նա Նեց(ա)նի ժժ(ա)նի/ Գալլեթե
 Լեյանոնա և Մեմֆ(որ)լեյան Կ(ց)լիտա մեյ/ցեմոլե. Վ(ե)ն ցե Նայմարի
 Մեցց(ա)լ(ո)ն Կ(ր)լա Յ(ո)րոտա / Լ(Մրոնա)ձտա, Ելլետա Կ(ր)ց(ա)ձտա Մ(ա)լ-
 Լ(ո)տա և Ն(տ)տա Յ(ա)ժ(ո)յ(ա)յ(ա) Ջ(ա)րոտա և Թորթ(ց)տա Մ(ո)յ(ո)յ(ա)լ-
 Լ(ո)տա և Մ(ա)լլետա, // Վ(ե)ն Լաթթ(ո)լե Գ(ա)րի Կ(ր)լա և Կ(ր)թ(ո)ն(ց)ց(ա)՝.

Թարգմանություն.— Քրոնիկոնի 50-ին (= 1312 + 50): Հանուն աստու ևս նվաստս էգնատոյ (= Իգնատիոս) ստացա (վերցրի) Թեոլորեից (Թեոլորոսից) 450 դանեկան և հաղորս նրա՝ տրապեզից մշտապես երկու օտար մարդու համար հաց կարգեցի (հաստատեցի): Ով էլ Լեմամորի պատրոն (տեր) և

¹⁶ M. Brosset, նշվ. աշխ., էջ 23—24:

Հաջորդ կարևոր սրբագրությունը վերաբերում է 3-րդ տողի **ԸՐԱՅԿԱՆ** ՊՆ-ին: Մ. Բրոսեն կարդացել է «ԸՐԱՅԿԱՆ, ԼՈՐՑՅԱ ՄԵՍԵՍԵՄ ՄԻՆ ԸՐԱՅԿԱՆ»-ի: Նախ բաց է թողած գումարն արտահայտող մասը (ՊՆ), իսկ ապա՝ «ԸՐԱՅԿԱՆ ՄԻՆ ԸՐԱՅԿԱՆ» -ի փոխարեն, ելնելով բովանդակությունից ու նախադասության տրամաբանական թեկադրանքից, կարդացել է «ԼՈՐՑՅԱ ՄԵՍԵՍԵՄ ՄԻՆ ԸՐԱՅԿԱՆ»: Իհարկե, դրանից բովանդակությունը շատ չի տուժում, բայց խաթարվում է ճշգրիտ վերծանությունը՝ դառնալով հարմարեցված և ոչ իրական, եթե չասենք, որ «ՄԵՍԵՍԵՄ ՄԻՆ» արտահայտությունը չի համապատասխանում վրացերենի շարահատությանը: Նույնքան թյուր է Բրոսեի «ԳԱՆՎԵՐՎԵՆ ԸՐԱՅԿԱՆՄԱՆ, ՉԵՐԱՅԵՄՆԻՆԱ ՅԵՐԵՄԻԱՆ ԸՐԱՅԿԱՆ» վերծանությունը. **ԸՐԱՅԿԱՆՄԱՆ** -ին (այդպես է վերծանվել հայավման և ենթադրվող բովանդակության պատճառով), իսկ **ՉԵՐԱՅԵՄՆԻՆԱ** -ն առհասարակ անհասկանալի է, մանավանդ տվյալ համապատկերում (կոնտեքստում): Անհրաժեշտ ենք համարում կրկնել, որ նման թյուր վերծանությունը բխում է ձեռքի տակ սոսկ պատճեն ունենալուց, այն էլ դժվար վերծանելի լինելու պարագայում: Առկա բոլոր ճշգրտումների համար, որոնց մի մասը չենք թվարկում, բացառապես **Ե. Թաղաչվիլուն** ենք պարտական՝ տեղում կատարած վերծանության և մեր ձեռքի տակ եղած հստակ լուսանկարի համար:

2. Հաջորդ արձանագրությունը վիճարկված է հարավային պատի քիվի վրա: **Ե. Թաղաչվիլուն** հաղորդման և առկա լուսանկարի համաձայն տառերը բավական խորն են, հստակ ու անխաթար:

Արձանագրության երկրորդ տողը դժվար է իմաստավորվում ու թարգմանվում. երեք բառերից և ոչ մեկի անվերապահ բացումը դեռևս հայտնի չէ: **ԱԿԱԳ. Մ. ԲՐՈՍԵՆ** կարդացել է իբրև. ...**ՄԱԼԱԿՈՅԻԱ**, **ՐՈՄԵԼՄԱՆ ԵՎԼԵ**[...], թարգմանելով՝ Malakozia (a bâti cette eglise — Մալաքոզիա [չինդի] եկեղեցույս)²²: Որքան էլ այս վերծանությունը պատշաճեր արձանագրությանը և ոչ թե պարսկերենից եկող **چنگال**—**چنگال** նիսան, մագիլ, ակիշ (հմմ. **Չ. Նանկ-ճանկել**), այլ **چنگال** անառո բառից, ուստի **čengel-li** նշանակում է անառոտ, որ իրապես թարգմանություն է հայերեն «եղենամայր»-ի: Թիերի վկայությամբ այս գյուղը թուրքերը հիմա կոչում են **Çanlı köy**, ստուգարանելով իբրև «զանգակատան գյուղ» (REArm., III, 79): Իվերիա բանակաթեմի բարտեղում ակադ. Ս. Նրեմյանը տեղանունս վերականգնել է Նեղզեամուր: Թերևս **Չանգալի**-ն սերում է թուրք. **չանգալ** (եղենուտ) բառից: Երկու դեպքում էլ հիմքը հայերենն է:

²² M. Brosset, նշվ. աշխ., էջ 24, հմմ. Ն. Սարգիսյան, նշվ. աշխ., էջ 220, հմմ. Ղ. Ալիշան, Այրարատ, էջ 48:

գրության ենթադրվող բովանդակությունը, այնուամենայնիվ, այն բացառվում է, որովհետև անխաթար պահված փորագրությունը նման սրբագրում չի հանդուրժում: Տողավերջի **ՎՈ** հայավմումը ոչ մի դեպքում **ԵՎԼԵ**նա չի կարող կարդացվել, իսկ այդ դեպքում դժվարանում է և հայավյալ **ՐՆ**-ի սովորական **ՐՈՄԵԼՄԱՆ** վերծանությունը: **Ե. Թաղաչվիլուն** իրավացիորեն **ԿՐԿԱՏՈՒՄ** է, որ « в последней группе из трех букв **ՎՈ** титло имеется на первой, поэтому в группе можно подразумевать или **ԿԱՏԱԼԻԿՈՅԻ**—**ԿԱՏԱԼԻԿՈՅԻ** или **ԿԱԼԱՏՈՅԻ**, скорее мн. число **ԿԱԼԱՏՈՅԻ** — **КАЛАТОЗНИ** т. е. каменщики. Правда, это слово в надписях большею частью попадает в форме **ԳԱԼԱՏՈՅԻ**, но мы имеем пример передачи слова в такой же форме **ԿԱԼԱՏՈՅԻ** в надписи Убнесской церкви»²³:

Կարծում ենք, որ **ԿԱՏԱԼԻԿՈՅԻ** վերծանությունը իրավամբ է մերժվում, որովհետև այդ դեպքում նախադասությունը կիսավարտ է մնում, եթե չասենք՝ անհեթեթություն է ստացվում՝ «Քրիստոս ողորմա Մալաքոզիայ, որը կաթողիկոս»: Ոչ սակավ կարևոր է և այդ անունով (Մալաքոզիա-Մաղաքիա ?) կաթողիկոս շունենալը՝ ոչ Վրաստանում և ոչ էլ Հայաստանում: Դեռ ավելին. կաթողիկոսի անունը չէր հիշատակվի քիվի ոչ առանձնապես նկատելի տեղում, երբ ողորկ պատերը գրեթե առանց արձանագրության են: Թերևս առավել հավանականը **Վ(Վ)Լ(ՎՆՆ)** կարդալն է: Այս դեպքում անձնանունս պետք է փնտրել և **ՐՆ** հայավման մեջ, բայց ի՞նչ նախընտրել—հայտնի չէ՝ **ՌՈՒՐԵՆ**, **ՌՈՍՏԱՆ**, **ՌԱՎԱՆ**²⁴: Ինչ վերաբերում է **ՉԻԱ** հայավմման, ապա **Ե. Թաղաչվիլուն** նախընտրում է **ՉՅՈՒԴԱ** անձնանուն ենթադրել²⁵, Առայժմ արձանագրությանս վերծանությունը մնում է պայմանական—**Վ(Վ)Լ(ՎՆՆ)Ե (ՅԵ)ՄԵՍԵՍԵՄ** **ՄԱԼԱԿՈՅԻ** **Վ ԳՐՆՎՈ** «Քրիստոս, ողորմա Մալաքոզի **Մ. ԳՆՆՆՆՆ**»:

Երկրորդ տողի իմաստավորման դժվարությունը կայանում է նրանում, որ հայավման նշանը դրված է **Վ**-ի վրա, իսկ հաջորդ տառանիշը խիստ կասկածելի է իր գրչությամբ: **Ե. Թաղաչվիլուն** այն համարում է **Չ**, թեև անբացատրելի է մնում վերին կեռ **Կ**լուստը: Հիրավի այն կարելի էր կարդալ իբրև «մխեղրուլի» գրչության **Յ**, բայց հարց է առաջանում՝ հստակ փորագրված «մրդրուլանի» արձանագրության մեջ ի՞նչ թեկադրանքով կարող էին «մխեղրուլի» մեկ նիշ գործածել: Կա և երրորդ ենթադրության հնարավորություն. գուցե դա «աստիճանավորուլի» **Ը**-ն է՝ վերին սյունադիրքը կիսավարտ թողած: Վերջին դեպքում կարելի կլիներ այդ ողջ տառակապակցությունը իմաստավորել իբրև տերմին՝ **ԸՐՆ(Վ)Վ(Վ)ԼՈ**—**ՈՒՆԱԿԱԿ**, **ՀՈՒՄԱՆԻՉ** «իսկականլի», իսկ հայավման նշան ունեցող **Վ**-ն կարդալ իբրև թվական՝ **ՅՈՒՐՅԵԼՈ**—առաջին: Սույն վարկածի դեպքում արձանագրությունը կա-

²³ Տե՛ս E. Такайшвили նշվ. աշխ., էջ 17:
²⁴ Հմմ. E. Такайшвили, անդ:
²⁵ Անդ:

րելի է թարգմանել այսպես. «Քրիստոս, ողորմա Մալաքոզ առաջին դոնակալին»: Կրկնում ենք, այս ամենը վարկած է և ոչ ավելին:

3. Ե. Թաղալվիլին տաճարում երրորդ արձանագրությունն չի գտել, թեև ձեռքին ունեցել է Մ. Բրոսեի և Ն. Սարգիսյանի հրատարակությունը: Գուցե Ն. Սարգիսյանի և Ե. Թաղալվիլու այցելության արձանագրում ընկած հիսուն տարիների ընթացքում տաճարի ներսում կատարված որևէ փոփոխության պատճառով այն կամ տեղափոխվել է, կամ առհասարակ վերացել, քանի որ գրված է եղել «առ աստիճանաւ բեմին»²⁶: Ասենք, որ այն որևէ կարևոր բովանդակություն չի ունեցել, նույնիսկ արձանագրություն չի եղել, այլ երկու բառ՝

Յ(ԹԻՅ)Ե Յ(ԵՈՏԿԱԼ)Ե

Թարգմանություն. —Քրիստոս, ողորմյա:

Ինչպես տեսնում ենք, առկա երեք արձանագրություններից ոչ մեկը հընարավորություն չի տալիս որոշելու տաճարի շինության ժամանակը: Անկասկած է միայն, որ քիվի վրա եղածը ժամանակակից պետք է լինի բուն շինարարությանը. վարպետները, սովորաբար կառուցելիս ընթացքում կամ ավարտելուց հետո, ոչ շատ նշանավոր տեղում թողնում էին իրենց նշանները, իսկ երբեմն էլ՝ համառոտ արձանագրություն: Թե հնագրական ինչ հարաբերություն կա հիշյալ արձանագրություններից երրորդի և առաջին երկուսի միջև՝ չգիտենք, որովհետև չկա այդ երրորդ լուսանկարը կամ պատճենը՝ (համառոտության ու ոչ կարևոր լինելու պատճառով Մ. Բրոսեն այն չի հրատարակել): Մնում է քննության առնել առաջին երկուսը, որոնց լուսանկարները կան մեր ձեռքի տակ: Հենց առաջին համեմատությունից պարզ է դառնում, որ այս երկու արձանագրությունները նույն ձեռքով չեն վիճարկված, ոչ էլ միաժամանակ: Քիվի վրա եղածը, ինչպես արդեն նշել էնք, ունի խոր վիճարկում, տառաձևերի առավել ճշգրիտ արտացոլում և կանոնավորություն, քան հարավային դռան վերևում գտնվողը: Միաժամանակ ակներև է, որ վարպետների խնդրած «ողորմին» ժամանակակից է տաճարի շինությանը, բայց ե՞րբ է գրված՝ անհայտ է, ինչպես որ տակավին անհայտ է Եղևնամոր (Լենամոր) տաճարի կառուցման ժամանակը, նույնիսկ դարը²⁷: Տաճարիս հիմնական արձանագրության վերձանությունը այն շինարարական կամ շինությունը ժամանակակից համարելու կովաններ չի տալիս: Ե. Թաղալվիլին այսպես է պատասխանում իր հարցադրմանը. «Но как смотреть на пер-

²⁶ Ն. Սարգիսյան, նշվ. աշխ., էջ 220:

²⁷ Երկրորդ արձանագրության մասին խոսելիս մենք նկատի ունենք և այն, որ տաճարի վերակառուցված կամ նորոգված լինելու մասին որևէ տեղեկություն չկա և, Ե. Թաղալվիլու հավաստմամբ, նման վերակառուցման հետքեր չեն երևում կառուցելի վրա (տե՛ս Ե. Такайшвили, նշվ. աշխ., էջ 18): Թերևս շինարարական արձանագրության պակասը ինչ-որ պատճառարանություն պետք է ունենա, գուցե Կյուրիկեի աղջիկ Մարիամի պես (կառուցող Պղնձահանքի Ս. Աստվածածին վանքի) Եղևնամորի (Լենամորի) կառուցողն էլ ինչ-որ այլ տեղում է հիշատակում իր ձեռնարկության մասին, որ դեռևս հայտնի չէ գիտությանը:

вую надпись? Современна ли она постройке храма или появилась позже? Содержание надписи не дает основания для решения этого вопроса. Игнатий, хотя не упоминает, что он строил храм, но тем не менее он мог быть строителем Чангли, и когда нехватало средств на постройку, он взял 450 драканов у Феодора, взамен чего посвятил ему эту большую надпись на самом видном и лучшем фасаде храма с определением хлеба для его молитвы на вечное время. С другой стороны, Игнатий мог быть одним из поздних настоятелей монастыря, который получил солидную сумму для монастырских нужд с обязательством учинить такую надпись для молитвы Феодора. Таким образом, на основании надписи эпоху основания храма нельзя определить»²⁸.

Կիովին համաձայնելով Ե. Թաղալվիլու պատասխանի երկրորդ մասին, անհրաժեշտ ենք համարում դիտել, որ Իգնատիոսը չէր կարող, ըստ արձանագրության տեքստի, տաճարիս կառուցողը լինել, դա նույնիսկ կարելի է բացառված համարել: Հայտնի է, որ շինարարական արձանագրության մեջ, իբրև օրենք, նշվում է, թե այսինչս կառուցեցի, մանավանդ երբ խոսքը եկեղեցու շինարարությանն է վերաբերում, հիշատակում են իրենց հովանավորին՝ թագավորին, կաթողիկոսին, առաջնորդին կամ մի այլ անձնավորության: Անհնար է պատկերացնել, որ Իգնատիոսը (միաբանության առաջնորդը կամ վանահայրը) 450 դահեկան ստանար ի նպաստ շինարարության և այդ մասին որևէ խոսք չասեր, երբ նվիրաբերողը այդ իբրև առաջին պայման պիտի առաջարկեր: Ոչ մի նկատառումով չէր կարող արձանագրության մեջ շարտացրվել շինարարության փաստը, եթե այն տեղի ունենար վիճարկման հետ նույն շրջանում²⁹: Այդ պատճառով էլ ավելի հավանական ենք համարում Ե. Թաղալվիլու երկրորդ ենթադրությունը՝ Իգնատիոսը ուշ շրջանի վանահայր է, որ վանքի կարիքները հոգալու համար բավական խոշոր գումար է ստացել Թեոդորոսից և այդ մասին արձանագրություն թողել: Ուրեմն՝ 1362 թվականը չի վերաբերում տաճարի կառուցմանը, այլև՝ նվիրատվության հաստիս: Մնում է, որ տաճարի շինարարության ժամանակը որոշվի ըստ նարտարապետական սվյաչների: Ե. Թաղալվիլին դիտում է. «Обращаясь к другим признакам, мы должны заметить, что мотив украшений храма, его тяги, профиля, аркады, арочки, плетения и резьба с первого взгляда напоминают лучшие грузино-армянские храмы X—XII вв. Вначале мне так и казалось, что тут мы имеем постройку XI—XII веков, но ближе познакомившись со всеми деталями, приходится признать, что все это не совсем удачно подражание хорошим образцам классической эпохи строительства на Кавказе»³⁰.

²⁸ Ե. Такайшвили, նշվ. աշխ., էջ 19:

²⁹ Բացի դրա տրամաբանական հարցադրումից, մենք մասնավոր ուշադրությամբ վերանայեցինք հայկական ու վրացական շատ հուշարձանների շինարարական արձանագրություններ և նման երևույթ չգտանք:

³⁰ Ե. Такайшвили, նշվ. աշխ., էջ 19:

Ն. Թաղալուսիքի մասնավորապես նկատի ունի Իշխանի, Տրեթի, Նիկործմիդայի, Գեղաթի, Սավանի և վրացական այլ շինությունների հետ ունեցած որոշ ընդհանրությունը և այդ հիմամբ էլ եզրակացնում է, որ եթե Չանգլիի տաճարը 14-րդ դարի երկրորդ կեսին չի կառուցվել, ապա, համենայնդեպս, 13-րդ դարից հին չէ: Թե որքանով է այս եզրակացությունը իրավացի՝ դժվար է ասել, որովհետև դա մասնագիտական այլ խնդիր է՝ կարոտ հյուսկեն ուստի նախորդում:

Վերջին տարիներս (1966 թ.) Չանգլի ևն այցելել ու տաճարիս ճարտարապետական նկարագրի ուսումնասիրությունը զբաղվել ժ.—Մ. Թիերիները³¹: Նրանք դիտել են, որ Չանգլիի տաճարը իր կերտվածքի որոշ մանրամասնություններով մերձենում է Տայբ—Կղարջբյան դպրոցի հուշարձաններին (օրինակ՝ արձավազարդը), ընդհանրություններ ունի ինչպես Վրաստանի, այնպես էլ Հայաստանի որոշ հուշարձանների հետ: Վերջինիս օգտին խոսող պարագաներից է հարավային և հյուսիսային ճակատների նկատելի ոճական խստությունը (որ բնորոշ չէ Տայբ—Կղարջբյան դպրոցին), որմնանկարների բացակայությունը (համտ. Խծկոնք, Անի, Սանահին, Կեչառիս, Բջնի): Որոշ զարդանախշեր դուրահեռություն են գտնում Նորավանքի և Աղթամարի հուշարձաններում: Թիերիների կարծիքով, Չանգլիի տաճարը կառուցված պետք է լինի 10-րդ դարում և վերանորոգված՝ 1032 թվականին: Նրանց ենթադրությամբ, հայաբնակ այս միջավայրում հավանաբար վրացական համայնք է եղել, որը սերտ կապ է ունեցել Իշխանի թեմի հետ, թերևս և կառուցողը հանդիսացել այս տաճարի: Հողվածի վերջում հեղինակները ակնարկում են հայ քաղկեդոնականության գոյության փաստը, ելնելով Ն. Թաղալուսի տեղին արված վերապահությունից:

Ինչպես վերևում նկատեցինք, շինարար վարպետների թողած արձանագրությունը ժամանակակից պետք է լինի բուն տաճարի կառուցմանը, և որքան էլ նրա վերծանությունը թեկան լինի՝ ներկա դեպքում ժամանակակցությունը չի վերաբերում: Իսկ քանի որ շինարար վարպետները արձանագրությունը վրացերեն լեզվով են վիճաբերել, ուրեմն տաճարս ի սկզբանե քաղկեդոնական հաստատություն կարող էր լինել: Իհարկե, չի կարելի ասել, թե միայն արձանագրության լեզուն կարող է վերջնական փաստարկում լինել դավանության հարցում (Իշխանում վրացական երկու արձանագրություն հայկական թվագրություն կամ post scriptum ունեն): Բայց Չանգլիի (= Լենամոր = Եղենամոր) տաճարի քաղկեդոնական կենտրոն լինելը տվյալ դեպքում կասկածից դուրս է, քանի որ կան այդ հաստատող պատմական մի շարք պարագաներ: 10-րդ դարի վերջերից Դավիթ Կյուրոպաղատը (Մեծ) մի քանի անգամ վրացիներից ու հայերից քաղկեդոն իր զորքով առաջանում է դեպի հարավ և հարավ-արևմուտք: Այսպես՝ «Ի մեռանել Բատին կիրոպաղատն Հայոց (resp. Տայոց) Դավիթ պաշարեալ զՄանազկերտ քաղաք և սրով ու սովով առնու զնա, յորմէ հանեալ արձակեաց զՏաճկաստա-

31 J.—M. Tiery, A propos de quelques monuments chrétiens du vilayet de Kars (Turque), REArm., t. III, Paris, 1966, p. 73—90. Չանգլիի մասին էջ 79—90:

նեայան և ինքն ընու զբաղաքն հայ և վրացի բնակչօք ընդ իւրով իշխանութեամբ»³², իսկ 997 և 998 թվականներին նա արշավում է Խլաթ³³, հավանաբար այստեղ ևս ոչ քիչ վրացիներ ու հայեր բնակեցնելով: Անհավանական չէ ենթադրել, որ Կյուրոպաղատի զորքում ու վերաբնակեցված մարդկանց թվում գանվող հայերը տայցիներ պետք է լինեին և հիմնականում քաղկեդոնական: Ասողիկը պատմում է, որ Խլաթ քաղաքը շրջապատելիս վրաց (= վրաց և հայոց) զորքը իջեանում է հայոց եպիսկոպոսարանի ս. Խաչ և ս. Գամաղիէլ սրբարաններում և տաճկաց այն հանդիմանությունը, թե «զսրբութիւն քրիստոնէից այդպէ՞ս առնէք և դուք քրիստոնէակցք», Կյուրոպաղատի զորականները պատասխանում են. «Մեք զհայ եկեղեցին և զձեր մզկիթն միապէս ընդունիմք»³⁴: Դավանաբանական սուր վեճերի պարագայում նման արտահայտությունը շփազանցված չի ներկայանում: Բայց խոսքը վերաբերում է ոչ թե բոլոր հայերի դավանած եկեղեցուն, այլև՝ պաշտոնական միաբնակ դավանությանը, հետևաբար պատասխանող վրացիները ամենից առաջ քաղկեդոնականներ են՝ անկախ աղաչյին բուն պատկանելության: Նշանակում է՝ Ասողիկի մոտ արդեն կա «հայ» և «վրացի» հասկացողությունների դավանաբանական ընկալում, մի բան, որ 11-րդ դարի կեսերից սկսած առավել ընդգծված պետք է դառնար, ընդհուպ մինչև հայ գործիչների «ես վրացիս» արտահայտությունը (Գրիգոր Բակուրյան): Մեր այս եզրակացությունը հաստատվում է նույն Ասողիկի մի այլ հաղորդմամբ. խոսելով Դավիթ Կյուրոպաղատի մոտ ուղարկված Թոռնիկի մասին, նա ավելացնում է. «որ էր յազգէն վրաց» (զլ. ժե), մինչդեռ այդ նույն Հովհաննես-Թոռնիկը (Չորտվանեկի որդին) հայերեն արձանագրություն է թողնում (976—981 թվականների արանքում) Կարինից ոչ շատ հեռու (խաչքարի վրա)³⁵: Ն. Ալիյանը փաստալից բնությունը ապացուցում է նրա հայկական ծագումը³⁶: Ուրեմն՝ Ասողիկի մոտ իրոք առկա է էթնիկական տերմինի դավանական ընկալում: Սակայն դավանաբանական այդ հակամարտությունը ընդհանուր նպատակի և ազատագրական պայքարի հանդեպ տեղի պետք է տար: Եվ միանգամայն բնական է, որ Մանազկերտը ետ վերադարձնելու պահանջին ի հակադրություն, երբ «պարսիկք և տաճիկք» սկիզբ հասել են Մաղկոտն (Մաղկոյոտն) գավառի Կոստեանք գյուղը՝ բռնություններ տիրանալու Մանազկերտին, «...կիրոպաղատն Դավիթ և արքայն հայոց (ձեռագրում գրչական վրիպմամբ եղել է՝ Տայոց—Պ. Մ) Գագիկ և Աբաս ընդ նմա, և Բագարատ թագաւոր վրաց՝ գան ընդդէմ նոցա ի գաւառն Բագրևանդ, բանակ մեծ բոլորեալ ի Վաղարշակերտ քաղաքի (ձեռագրում եղել է վրացերենին համապատասխանող ձևը՝ վա-

32 Ստեփանոսի Տարօնեցոյ Ասողկան Պատմութիւն տիեզերական, Ս. Պետերբուրգ, 1885, էջ 266:

33 Ասողիկ, էջ 268:

34 Անդ:

35 Ն. Սարգիսյան, նշվ. աշխ., էջ 79, հմմ. Ն. Ալիևեան, Թոռնիկեանց ճիւղազրույթիւնը (տե՛ս նրա «Մատենագրական հետազոտություններ», հատ. Գ, Վիեննա, 1938, էջ 62):

36 նշվ. աշխ., էջ 62—65:

ղաշկերտ—Պ. Մ.)»³⁷: Այսպիսով, պատմական Հայաստանի Բագրևանդ, Կարս և նրանցից հյուսիս-արևմուտք գտնվող մի երկու գավառներում աստիճանաբար կարող էր վրացական որոշ բնակչություն լինել, մանավանդ որ կա Ասոզիկի ուղղակի վկայությունը՝ Մանազկերտում (արդեն Ապահունիքի սահմաններում) հայերի և վրացիների վերաբնակեցման մասին: Կասկածից դուրս է, որ վրացազգի որոշ բնակչություն կար նաև Վաղարշակերտում: Այդ առումով մասնագիտական քննության է արժանի Արիստակես Լաստիվերտցու հաղորդումը Վաղարշակերտի վրաց եպիսկոպոսի մասին: Այստեղ կարդում ենք. «Ի շորեքհարիւր եօթանասուն թուականին՝ (=1021 թ.) դարձեալ խաղաչ ինքնակալ թագաւորն [Վասիլ] ծանր զօրու և գայ յարևելա: Եւ եկեալ իջևանս առնէ յընդարձակ դաշտն Կարնոյ. և առաքէ դեսպանս առ Գէորգի վրաց իշխեցօղն՝ գալ ինքեան ի հնազանդութիւն: Քանզի և եպիսկոպոս ոմն վրացի ազգաւ, որ նստէր ի քաղաքն Վաղարշակերտ, երթեալ թագաւորին ընդառաջ, վստահութիւն տայր բանից, թէ՛ Յորժամ յեկեղեաց կամ ի Կարին ելանէս՝ քեզ ընդառաջ գայ: Եւ նա՛ նորա բանիցն հաւատացեալ, և յայն ապաստան՝ մնայր նորա գալստեան օթեանէ յօթեանս փոխելով: Այլ նա ոչ առնոյր յանձն գալ ի կոչ թագաւորին, քանզի բազումք ի նորայոցն ահարկանէին նմա, թէ ի տեսանելն զքեզ՝ կամ մեռանիս, կամ արգելական առնէ, և ոչ ժամանեսս ի քո պատիւն»³⁸: Մի քանի էջից հետո՝ «Այլ թագաւորն զաւուրսն զորս եկաց ի Սալքորայ, քանզի երիս բերդս իւրեանց դաստակերտօքն խնդրէր ի Գէորգէ, զոր Գուրգենայ տարեալ էր ի բաժնէն Կիրոպաղատին անիրաւաբար, առաքէր առ նմա դեսպանս, և քաղցրական բանիւք զրէր առ նա, թէ՛ Զոր քո չէ հայրենի ժառանգութիւն՝ թող և կաց խաղաղութեամբ ի քո բաժնիդ, և մի խափան առնէր իմ ճանապարհին որ ի Պարսիկս: Այլ նա ոչ առնու յանձըն. յետոյ առաքէ զԶաքարիա, զոր յառաջ սակաւ մի յիշեցաք, զեպիսկոպոսն Վաղարշակերտոյ. որոյ երթեալ և հաւանական բանիւք պատրեալ զԳէորգի, որում յանձն առնու, և զրէ առ թագաւորն տալ զոր խնդրէրն. որոյ առեալ զգիրն դարձաւ ուրախութեամբ: Եւ եկեալ օրագնաց մի ճանապարհ, ի յիջևանսըն՝ յոր օթեանս առնելոց էր, փութանակի հասին զկնի նորա սուրհանդակք ի խնդիր զրոյն, քանզի զղջացաւ անմիտն. և առեալ դարձան անդրէն: Իսկ նա երթեալ հանդիպի թագաւորին, և պատմէ զեղեալսն. ապա հարցանէ թագաւորն վասն զօրացն և վասն կազմ լինելոյ նոցա ի պատերազմական հանդեսս: Պատասխանի տուեալ Զաքարիայն ասէ, թէ բազում զօրս ունի որպէս ոչ այլ ոք, և հզօրս զօրութեամբ և պատրաստ առ ի պատերազմել: Զոր լուեալ թագաւորին, ի բարկութիւն շարժեալ ասէ, թէ՛ Եւ դու յապստամբիցն ես եկեալ, ահարկանեսս ինձ, եւ հրամայէ խաղացուցանել զնա ի Կոստանդնուպօլիս, ասելով. Երթ դադարեա անդ, մինչև ես փախստական ի քեզ եկից: Եւ հրամայէ

³⁷ Ասոզիկ, էջ 266—267:
³⁸ Պատմութիւն Արիստակիսի Լաստիվերտցու, աշխատասիրութեամբ Կ. Մ. Յուզրաշյանի, Երևան, 1963, էջ 28:

տարողացն հատանել զլեզու նորա: Որոյ երթեալ ոչ ևս դարձաւ ի տեղի իւր, այլ մնաց ի նոյն մինչ ցօր մահուան իւրոյ»³⁹:

Ներկա դեպքում մեզ հետաքրքրող Զաքարիայի ճակատագիրը չէ, թեև հայ պատմիչը սխալվում է նրա կյանքի վերջավորությունը ներկայացնելիս, այլ այն, որ Վաղարշակերտում վրաց եպիսկոպոսություն է եղել: Հաղորդման ճշմարտացի լինելը հաստատվում է «Քարթլիս ցխովրեբայի» մի տեղեկությամբ ևս, ուր թեև չի հիշատակվում միջնորդ ուղարկված Զաքարիայի անունը, բայց վկայվում է եղելությունը՝ «գեսպան» ուղարկելը⁴⁰, Ավելին, վրացական մի այլ փաստաթղթում, ուր թվարկվում են «Սամցխե-սարաթբագոյի քահանայապետներն ու հովվապետները», կարդում ենք.

Յալաշքերտցոյն Եմֆրոս Կալ-
 Յեցան Յեօտո, Յալաշքերտ Եթա-
 Եոն Յեօ Եւ Ելեցոն Եթեօ...
 Եմ Եթեօն Եթեօն Եթեօն Եթեօն
 Եթեօն Եթեօն Եթեօն Եթեօն Եթեօն
 Եթեօն Եթեօն Եթեօն Եթեօն Եթեօն
 Եթեօն Եթեօն Եթեօն Եթեօն Եթեօն

Վաղարշակերտի եպիսկոպոսի հոտն է
 Կաղակաճից վերև, Վաղարշակերտից
 այս կողմ խնուսն ու Դեբոյիցից
 այս կողմ [ընկած տարածությունը]...
 Այս եպիսկոպոսների ձեռնադրողն
 ու գերագահը Քարթլի կարողիկոսն է
 Ամենքը նրա ձեռին են⁴²:

Արագած լեռան լանջերը հատկապես հարուստ են երրորդ հազարամյակին վերաբերող հուշարձաններով (Կառնուտ, Հոռոմ, Ֆրանգանոց և Կոշ, Լեհին վերաբերող հուշարձաններով (Կառնուտ, Հոռոմ, Ֆրանգանոց և Կոշ, Լեհին վերաբերող հուշարձանների հետ կան և տարբերիչ հատ-

կուսիցներ (խեցեղենի և մետաղե առարկաների ձևերը և զարդամոտիվները): Նյութական մշակույթի զարգացման հետագա շրջանը՝ մ. թ. ա. երկրորդ հազարամյակը Արագած լեռան լանջերին ներկայացված է հնագիտական բրնձրոջ և ինքնատիպ հուշարձաններով (Քաֆթաուլու, Ոսկեվազ, Պարնի գեղ, Ապարան, Գեղարոտ, Արթիկ, Վարդաքար և այլն): Այս նյութերը իրենց ծագումով կապվում են նախորդ շրջանի հետ, սակայն միաժամանակ ցույց են տալիս որակական այն նոր տեղաշարժերը, որ տեղի են ունեցել տվյալ ժամանակաշրջանի նյութական մշակույթում: Մեծ հետաքրքրություն է ներկայացնում այն բերդերի ու բնակավայրերի ուսումնասիրությունը, որոնք վերաբերում են նյութական մշակույթի տարբեր շրջաններին: Այդ նյութերը սերտորեն կապվում են դամբարաններում հայտնաբերվածների հետ, վկայում նրանց միաժամանակյա գոյության մասին:

Հնագիտական հետազոտությունները Արագածի ստորոտում շարունակվում են և այսօր: Կարելի է հուսալ, որ կհայտնաբերվեն նոր նյութեր, որոնք լույս կսփռեն Հայաստանի հնագույն պատմության վրա:

Ա. Ա. ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ

ՏԱԹԵՎԻ ՎԱՆՔԻ ԶԱՆԳԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1969 թ. ապրիլ-հունիս ամիսներին Մշակույթի հուշարձանների վերականգնման հատուկ գիտա-արտադրական արվեստանոցի արշավախումբը¹ պեղումներ կատարեց միջնադարյան Հայաստանի վանական խոշոր կենտրոններից մեկում՝ Տաթևում (Գորիսի շրջան): Գլխավոր՝ Պողոս-Պետրոս եկեղեցու արևմտյան մասում XIX դ. վերջին—XX դ. սկզբներին կառուցված և 1931 թ. երկրաշարժից փուլ եկած եռահարկ զանգակատան փլատակները մաքրելու ժամանակ գտնվեց երկու մեծ զանգ, որոնք մինչև երկրաշարժը կախված են եղել զանգակատանը: Զանգերը հայտնաբերվեցին զանգակատան սալահատակի վրա, եկեղեցու մուտքի մոտ, հինգ մետր խորությամբ լիցքի մեջ:

Զանգերն ունեն տանձաձև իրան, ստորին մասում դուրս փուլած բերանով: Նրանցից մեկն իր վրա կրում է շուրջանակի ալիքաձև, սրածայր վերջավորությամբ ուռուցիկ զարդեր: Վերին մասում կան ականջաձև բրունակներ՝ կախելու անցքերով: Անցքեր կան և բռնակների երկու կողմերում՝ լեզվակները կախելու համար: Վերջիններս երկաթից են և, հավանաբար, խկականներին փոխարինել են ավելի ուշ ժամանակներում:

Զանգերը պղնձից են, ձուլված կաղապարներում և, ըստ երևույթին, պատրաստվել են Կապանի պղնձի հանքերի մետաղամշակման կենտրոնում: Երկուսն էլ ունեն միևնույն չափերը. բարձրությունը՝ 65 սմ, բռնակի բարձրությունը՝ 20 սմ, տրամագիծը ստորին մասում՝ 80 սմ, հաստությունը՝ 5 սմ, յուրաքանչյուրի քաշը մոտ 250—300 կգ: Զանգերի վրա կան արձանագրություններ: Այն պատրաստել է տվել Սյունիքի եպիսկոպոս, միջնադարյան հայտնի պատմիչ Ստեփանոս Օրբելյանը՝ 1302 և 1304 թվականներին:

Հայաստանի միջնադարյան զանգերի ուսումնասիրությանն առաջին անգամ անդրադարձել է ակադ. Հովսեփ Օրբելին, քննության առնելով պատահական գտնված մի զանգ, իր զարդանախշերով շատ նման Անիի հայտնի զարդաքանդակներին²: Հ. Օրբելին մեծ նշանակություն էր տալիս զանգերի լրիվ ցուցակի հրատարակմանը, իրավացիորեն դրանք կապելով զանգակատանների կառուցման հետ:

¹ Արշավախմբի կազմի մեջ էին տողերիս հեղինակը և կրտսեր գիտական աշխատակից Ա. Ղումբասարյանը:

² Տե՛ս И. А. Орбели, Колокол с аниийскими орнаментальными мотивами XII—XIII века, «Избранные труды», Ереван, 1963, էջ 175—187:

Չանգերի և զանգակատների վերաբերյալ հետաքրքիր վկայություններ են պահպանվել հայկական միջնադարյան աղբյուրներում: Հաղբատի զանգակատան մասին Կիրակոս Գանձակեցին գրում է, որ Համազասպը «շինեաց հրաշալի շինուած, ուր զզանգակս կախէին»³: Նույն զանգակատանը պահպանված մի արձանագրության մեջ ասված է. «Շինեցաւ զեղեցկազարդ տաճարս աստուծոյ՝ զարթուցանող փառաբանչաց տեառն...»⁴: Եղեղնաձորի շրջանի Սպիտակավոր-Աստվածածին վանքի զանգակատան արևմտյան երեսի խորշի պատին գրված է. «Թվիս: 928 (1330): ...ես Յովհաննէս եւ կենակից իմ Թաճն շինացաք զանկակս եւ զտուն նորա տուաք»⁵: 1875 թ. Գնդեվանքի բակում, տնտեսական շինությունների առաջ բացված մի հոր-թաքստոցից հանված պղնձե սպասների և անոթների մեջ եղել է և մի զանգ (մոտ 32 կգ) հետևյալ արձանագրությամբ. «ՉԾԶ: Թվ. զՍարկաւագ քահանայ յիշէք ի Քրիստոս, որ ստացա քսա»⁶: Այդ հավաքածուից, դժբախտաբար, ոչինչ չի պահպանվել:

Արձանագրությամբ զանգեր են եղել Լեոնային Ղարաբաղի Մարդակերտի շրջանում՝ Եղիշ-Առաքյալ կամ Զրվշտիկ վանքում: Զանգերից մեկի վրա (կոտորված է) պահպանվել է շատ հետաքրքիր արձանագրություն. «Յիշատակ ի զանկակս Ղազարին, որ է որդի Քրիզորին, է թոռն Եւարին. Յուսեփի որդի Պապեն, որ է Պողոս թուղբեր (հյուան). Ես Շահնա կարմրեցի (ձուկեցի). գինն է Գ թուման»⁷: Արձանագրությունն ուշ շրջանի է, սակայն մեծապես արժեքավոր, որովհետև այստեղ նշված են կաղապար պատրաստող և ձուլող վարպետները:

Գանձասարի արձանագրություններից մեկում ասված է. «Թվ. ՊԺ (1361) իշխանութեամբ մեծի Իւանէի ես տէր Կոստանդ մեծ փափագանաւք զնեցի զզանկականիս, սուրբ ուխտս բերի»⁸:

Փոքր զանգ գտնվել է և Հաղարծնում, հանրահայտ կաթսայի հետ մեկտեղ, մոտ 32 կգ քաշով⁹: Լեոնային Ղարաբաղի Բանանց գյուղի մոտ գտնվող Թարգմանչաց անապատում հայտնի է XVII դարի մի արձանագիր զանգ հետևյալ տեղեկությամբ. «Յիշատակ է Ասողի որդի Խոճայ Ղազարին ի դուռն Բանանցայ սուրբ Անապատին թվ ՌՃԺԶ (1667)»¹⁰:

³ Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, Երևան, 1961, էջ 115:
⁴ Կ. Ղաֆաղարյան, Հաղբատ, Երևան, 1963, էջ 222:
⁵ Ս. Բարխուդարյան, Դիվան հայ վիմագրության, III, Երևան, 1967, էջ 287:
⁶ Տե՛ս «Փոքր» 1877/78, էջ 358, Ղ. Ալիշան, Սիսական, Վենետիկ, 1893, էջ 107, Ս. Բարխուդարյան, նշվ. աշխ., էջ 20:
⁷ Մակար Բարխուդարյան, Արցախ, Բագու, 1895, էջ 226:
⁸ Նույն տեղում, էջ 177—178:
⁹ Տե՛ս Նույն տեղը, էջ 369:
¹⁰ Նույն տեղում, էջ 285: Զանգերի վերաբերյալ մի հետաքրքիր հանելուկ է պահպանվել Ներսես Շնորհալու մոտ.

«Երկու եղբարք միմեանց նման,
 Որք են շարեալ ի մի գերան,
 Իբր գմահապարտ են ի կախման
 Ժամէ ի ժամ զաղաղակ բառնան»:

Հայկական միջնադարյան զանգերը գրեթե չեն ուսումնասիրվել: Փոքր չափերի մի զանգի լուսանկար է բերված Ս. Փափազյանցի մոտ¹¹ (զանգը գտնվել է Վայոց Ձորի Դայլախլու գյուղում): Հետագայում այդ լուսանկարը մտել է Նախիջևանի փոխանորդ Գրիգոր վարդապետ Հակոբյանի հավաքածուի մեջ:

Տաթևի հին զանգակատան շինությունը վերագրվում է Հովհան Որոտնեցուն: Սակայն Ստեփանոս Օրբելյանի կողմից զանգերի պատվիրման փաստը ցույց է տալիս, որ հենց Ստ. Օրբելյանն է սկսել նրա շինարարությունը, իսկ ավարտել է Որոտնեցին¹²: Մինչև 1931 թ. երկրաշարժը զանգերը կախված են եղել արդեն նոր զանգակատանը:

Տաթևի զանգերից մեկի վրա կա երկու տողանոց, մյուսի՝ վրա՝ երեք տողանոց արձանագրություն, տարբեր բովանդակությամբ: Այդ արձանագրությունները հրապարակված են¹³, սակայն մասամբ թերի, մասամբ էլ՝ սխալաշատ և վրիպակներով:

Բերում ենք այդ արձանագրությունները լրիվ վերծանությամբ: Սովորական հասկանումները բացում ենք առանց նշման, իսկ մյուսները՝ անկյունավոր փակագծերով:

Առաջին զանգ

1. ԱՍԵԼԻ ԱՐԱ ԻՆՁ, ՏԷՐ, ԶԶԱՅՆ ՅՆԾՈՒԹԵԱՆ ԵՒ ԶՈՒՐԱՆՈՒԹԵԱՆ¹⁴
 []¹⁵: ԶԾԱ ԹՎ¹⁶:
2. ԱՆԵՂԷՆ¹⁷ ԾՆՈՒ[Ի]ՆԴԵԱ[Մ]Բ¹⁸ ԶՏԷՐ ՍՏ[Ե]Փ[ԱՆՈՍ] ՍԻՆԵԱՑ
 ԳԱՀԻ¹⁹ ԿՈԶԵԱ Ի ՓԱՌՍԳ ՀԱՅՐԵՆԵԻ²¹:

Տե՛ս Բարկեն Առաքելյան, Քաղաքները և արհեստները Հայաստանում IX—XIII դդ., I, Երևան, 1958, էջ 161:
¹¹ Ս. Փափազյանց, Հնուրիներ վանորդից Հայոց, Գիրք V, Սիւնաց աշխարհ, Վաղարշապատ, 1895, լուսանկար 35113:
¹² Մ. Տեր-Մովսիսյան, Հայաստանի երեք մեծ վանքերի՝ Տաթևի, Հաղարծնի և Դադի եկեղեցիները և վանական շինությունները, Երուսաղեմ, 1938, էջ 40:
¹³ Տե՛ս Ղ. Ալիշան, Սիսական, էջ 236, Ս. Փափազյանց, նշվ. աշխ., Ե. Լալայան, Տաթև, «Ազգ. հանդէս», գիրք Գ, Թիֆլիս, 1898, № 1, էջ 141, Կ. Կոստանեանց, Վիմակաք տարեգիր, Ս. Պետերբուրգ, 1913, էջ 153—154, Մ. Տեր-Մովսիսյան, նշվ. աշխ., էջ 47, Ս. Բարխուդարյան, Դիվան հայ վիմագրության, պրակ II, Երևան, 1960, էջ 37:
¹⁴ Ե. Լալայանի մոտ՝ ՈՒՐԱՆՈՒԹԵԱՆ:
¹⁵ Այստեղ նշան կա, որ չի ընթերցվում, իսկ նախորդ հրատարակիչների մոտ չի հիշատակվում: Մենք հավելած ենք այն դիտելու որպես վարպետի նշան:
¹⁶ Ս. Փափազյանցի մոտ սույն արձանագրությունը պակասում է:
¹⁷ Ալիշան, Լալայան, Կոստանյանց, Բարխուդարյան՝ ԱՆԵՂԷՆ, Փափազյանց, Տեր-Մովսիսյան՝ ԱՆԵՂ ԷՆ:
¹⁸ Նախորդ հրատարակիչներ՝ ԾՆՆԴԵԱՄԲ:
¹⁹ Ալիշան, Լալայան, Կոստանյանց, Բարխուդարյան՝ ԳԱՀԻՆ:
²⁰ Փափազյանց՝ ԿՈԶԵԱՑ:
²¹ Ալիշան, Լալայան, Կոստանյանց, Բարխուդարյան՝ ՀԱՅՐԵՆԵԱՑ:

Երկրորդ զանգ

1. ԼՍԵԼԻ ԱՐԱ ԻՆՁ, ՏԷՐ, ՉՅՆԾՈՒԹԵԱՆ ԵՒ ԶՈՒՐ[Ա.ԽՈՒԹԵԱՆ]²², ԵՒ ՅՆՁ[Ա.ՍՅԵՆ]²³ ՈՍԿԵՐՔ ԻՄ ՏԿԱՐ²⁴, ԳԹԱ ՔՍ ԱԱԾ Ի ՏԷՐ ՍՏ[Ե]Փ[ԱՆՈՍ]²⁵,

2. ՉԾԳ²⁶, ԱՅՍ ՏԷՐ ՍՏ[Ե]Փ[ԱՆՈՍ] ՕՐՊԷԼԵԱՆ ՄԵԾԱԻ ԶԱՆԻԻ ՈՒՂԱՓԱՌ ՊԱՀԵԼ²⁷ ԶԱԻԱՆԳՍ ՅԷԿԵՂԵՑԻՍ ՀԱՅՈՅ²⁸,

3. ՏԷՐ ՍՏ[Ե]Փ[ԱՆՈՍ] ՄԵՏՐԱՊՈԼԻՏ ՍԻՒՆԵԱՅ, ՈՐ Է ՊՐՕՏՈՅՐԱԻՆՏԷՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ:

Երկու զանգերի առաջին արձանագրությունները վերցված են Սաղմոսից (Ծ, 10), սակայն խմբագրված են ազատ կերպով (Սաղմոսում՝ «Լսելի արա ինձ զցնծութիւն եւ զուրախութիւն, եւ ցնծասցեն ոսկերք իմ տառապեալք»):

Արձանագրությունները խիստ հետաքրքիր են տառաձևերի, պատվո նշանների նոր ձևերի, փակագծերի ու հապավումների օգտագործման առումով: Նրանք նոր նյութեր են ընձեռում Ստ. Օրբելյանի կենսագրության որոշ տվյալներ ճշտելու ուղղությամբ:

Իհարկե, այս բոլոր հարցերը կարոտ են լուրջ մասնագիտական քննություն, որ ներկա հրատարակման նպատակը չէ:

А. А. КАЛАНТАРЯН

КОЛОКОЛА ТАТЕВСКОГО МОНАСТЫРЯ И ИХ НАДПИСИ

Резюме

В 1969 г. при чистке-раскопках Татевского монастыря, на полу трехэтажной колокольной, разрушенной землетрясением 1931 г., были обнаружены два колокола с надписями, датируемыми 1302 и 1304 годами.

²² Ալիշան, Լալայան, Կոստանյանց, Բարխուդարյան՝ ԶԶԱՅՆ ՅՆԾՈՒԹԵԱՆ, Փափազյանց, Տեր-Մովսիսյան՝ ԶՅՆԾՈՒԹԻՒՆ ԵՒ ԶՈՒՐԱ.ԽՈՒԹԻՒՆ:

²³ Փափազյանց՝ ՅՆՍԱՍՅԷ:

²⁴ Նախորդ հրատարակիչներից և ոչ մեկը չի ընթերցել արձանագրության այս բառը: Այլ-շանը ուղղակի գրել է «տառ», որը կրկնել է Կոստանյանցը, իսկ Բարխուդարյանը ավելացրել է տ ա ռ [ա պ ե ա լ], ըստ երևույթին հիմք ունենալով Սաղմոսը: «ՏԿԱՐ» ընթերցումը մեզ առաջարկել է Ս. Ավագյանը. «Տ» տառի ստորին ստեղծ փորագրող վարպետի կողմից բաց է թողնվել կաղապարի վրա:

²⁵ Լալայանի մոտ բացակայում է երկրորդ զանգի առաջին արձանագրությունը:

²⁶ Փափազյանցի և Տեր-Մովսիսյանի մոտ՝ ՉԾԳ:

²⁷ Բոլոր հրատարակիչների մոտ՝ ՊԱՀԷ:

²⁸ Փափազյանցի մոտ բացակայում է երկրորդ զանգի երկրորդ արձանագրությունը:

В армянских средневековых первоисточниках сохранилось множество сведений о строительстве колокольных сооружений и о самих колоколах. Татевские колокола отлиты в форме, по инициативе митрополита края Стефана Орбеляна. Надписи этих колоколов опубликованы Алишаном, Папазянцем, Лалаяном, Бархударяном и др., но с некоторыми неточностями и разночтениями. В данной статье впервые предложена полная дешифровка упомянутых надписей, две из которых взяты из Псалтыри, а в остальных трех говорится о митрополите Стефане с его регалиями.

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ
ՏՕՕԲՇԵՆԻԱ

ԴՎԻՆԻ XII—XIII ԴԱՐԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՎԱԾ

ՇՈՂՈՒՆ ՀԱԽՃԱՊԱԿԻՆ

Միջնադարյան Հայաստանի մշակութային և սոցիալ-տնտեսական հարցերը բազմակողմանիորեն ուսումնասիրվել են ահադ. Հ. Մանանդյանի, Կ. Ղաֆադարյանի, Բ. Առաքելյանի, Վ. Աբրահամյանի և այլոց աշխատություններում¹:

Ահադ. Հ. Մանանդյանը գրավոր աղբյուրների և մասամբ Անի քաղաքի պեղումների տվյալների հիման վրա քննել է նաև Հայաստանի առևտրական հարաբերությունների պատմությունը՝ անտիկ շրջանից մինչև մոնղոլական արշավանքները: Այդ խնդրի առավել խոր լուսաբանման համար կարևոր նշանակություն ունեն և Դվին քաղաքի պեղումները²: Այստեղ հայտնաբերված բազմաթիվ առաջնակարգ նյութերի ուսումնասիրությունը պարզեց, որ ապրանքային արտադրությամբ և միջազգային առևտրում իր ունեցած մասնակցությամբ Հայաստանը XII—XIII դդ. պատկանելի տեղ էր գրավում Անդրրկովկասում ու Մերձավոր Արևելքում²: Դվինի բազմամյա պեղումների ընթացքում, ի թիվս այլ առարկաների, հայտնաբերվեցին նաև XII—XIII դդ. բնորոշ ներմուծված շոշուն հախճապակյա հազվագյուտ անոթներ, որոնք իրանական քաղաքների հետ (Ռեյ, Քաշան, Սուլթանաբադ) Դվինի առևտրական կապերը բացահայտելու հետ միաժամանակ իրանական մշակույթի գանձարանը հարստացրին նոր նմուշներով:

Ներկա հոդվածում քննարկվող առարկաները մեծ մասամբ պատրաստված են բարձր որակով և զեղարվեստական մեծ արժեք են ներկայացնում. անոթների խեցին սպիտակ է կամ դեղնավուն, կարծր, որոշ դեպքերում՝ թանձր, իսկ երբեմն՝ նուրբ պատերով, սպիտակ, խուլ ջնարակի վրա նկարազարդված մուգ կամ բաց դարչնագույն և ոսկեգույն շողունով: Նրանք հանդես են բերում ձևերի մեծ բազմազանություն: Կան կարճ, լայն վզով, ուռուցիկ իրանով փարչեր, սկուտեղներ, թասեր, քրեղաններ և այլ տիպի անոթներ²:

¹ Я. А. Манандян, О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времен, Е., 1954, Կ. Գ. Ղաֆադարյան, Դվին քաղաքը և նրա պեղումները, Երևան, 1952, Բ. Ն. Առաքելյան, Քաղաքները և արհեստները Հայաստանում IX—XIII դդ., հ. I, II, Երևան, 1958, 1964, Վ. Ա. Աբրահամյան, Արհեստները Հայաստանում IV—XVIII դդ., Երևան, 1956:

² Շոշուն անոթների պատրաստումը կապված էր երկարատև աշխատանքի և տեխնիկական մեծ դժվարությունների հետ: Այդ է պատճառը, որ նման խեցեղենը համարվել է թանկարժեք և հազվագյուտ, հետևաբար՝ մատչելի միայն վերնախավին:

* Պեղումների ղեկավարն ու քննարկվող նյութերի ընձեռողը պրոֆ. Կ. Ղաֆադարյանն է: (խմբ.):

Հատակին կոկոններից և գծիկներից միահյուսված է մի գեղեցիկ արաբեսկ, Երկու անոթն էլ արտաքուստ ամբողջովին պատած են ոսկեգույն և դարչնագույն շողունով ուրվագծված սխեմատիկ մի զարդամոտիվով, որ բնորոշ է XII—XIII դդ. մանր զարդաձևերով արված գրեթե բոլոր շողուն անոթներին¹⁰ (աղ. I, նկ. 3): Ինչպես տիպական, այնպես էլ գեղարվեստական ձևավորմամբ երկու անոթն էլ շատ ընդհանրություններ ունեն և, հավանաբար, պատրաստվել են Իրանի խեցեգործական միևնույն կենտրոնում: Քննարկվող հավաքածուում կան նաև քրեղաններ, որոնցից մեկն ունի ուղիղ իջնող պատեր, կտրված շուրթ և ցածր օղակաձև նստուկ (ՊՊԹ 1917/331, տրամ. 22 սմ, բարձր. 9 սմ, աղ. III, նկ. 2): Ներքուստ, շուրթից ցած, բաց դարչնագույն և ոսկեգույն շողունով արված երկու գոտին արձանագրություններ են, մեկը՝ քուֆի, մյուսը՝ նասիս գրչությամբ, իսկ անոթի մնացած մասերում պատկերված է ճառագայթաձև ծաղիկ, որի թերթերն ունեն կրկնակի եզրագծեր և հարդարված են գալարներով ու թռչող բալերով: Մաղկաթերթերի արանքներում, բաց դարչնագույն շողունի ֆոնի վրա, բարձրանում են սպիտակ ջրաշուշաններ: Նույնատիպ հարդարանք տնեցող պարսկական որոշ անոթներ և շքաղյուսներ (Թրոչոզ բաղեր, գալարներ և այլն) կրում են թվական հիշատակագրություն¹¹: Ելնելով զուգահեռ նյութերի առկայությունից, Դվինի անոթը նույնպես կարելի է թվագրել XIII դարով:

Արժեքավոր է 1794/365 թվահամարի քրեղանը (14.10,5 սմ), որի եզրերը զարդարված են երկարիրան ոճավորված կենդանիների վազբի տեսարաններով և արաբատառ արձանագրությամբ, իսկ մնացած մասերում՝ վեց թևանի աստղերով և մեղալյոններով¹²: Այն հայտնաբերվել է Դվինի միջնաբերդի 9 Շ քառակուսիում, XII—XIII դարով թվագրվող նյութերի՝ իլդիգիզյան դրամների և գիպսե պատի հարդարանքի բեկորների հետ:

Մյուս քրեղանն ունի ուղղահայաց շուրթ, ուղիղ իջնող պատեր, ցածր օղակաձև նստուկ և թանձր դեղնավուն խեցի: Անոթը ներքուստ ունի երեք գոտի, որոնցից երկուսն արձանագրություններ են: Այդ արձանագրությունների միջև դարչնագույն շողունով ուրվագծված է ոճավորված ծառերից կազմված մի շղթա, իսկ հատակին ներկայացված է միատեսակ ճոխ հագուստ կրող երկու անձնավորություն: Հայտնի հավաքածուների մեջ նման զարդամոտիվներով անոթները և շքաղյուսները թվագրվում են XII դարով¹³ (աղ. III, նկ. 4): Նույն ժամանակաշրջանով է թվագրվում նաև Դվինի քրեղանը:

¹⁰ Այս զարդամոտիվը գրականության մեջ հայտնի է «սելջուկյան» անունով և մասնագետների կողմից թվագրվում է XII—XIII դդ.: M. S. Dimand, A handbook of Muhamedion art, New York, 1944, էջ 180, Heine Wilhelm Frühe, Islamische Keramik im Osterreichischen museum für Augewande Kunst in Wien, Böhlans, 1963, VII աղ., KE 6105:

¹¹ SPAV, V աղ. 710, տրամ. 49,5 սմ: Այս սկուտեղը, որ գտնվում է Ֆիլադելֆիայի համալսարանի թանգարանում, թվագրված է հիջրայի 1211/608:

¹² Աղ. I, նկ. 3:

¹³ S. u. M. Bahrami, La reconstruction des carreaux de Damghan d'après leurs inscriptions, KHA, M.—Л., 1939 էջ 18, աղ. XIV:

Մանր զարդաձևերով, ճոխ հարդարանք ունեցող անոթներից է 1965 թ. Դվինի պեղումներից հայտնաբերված սկուտեղը (ՊՊԹ 2236/127, տրամ. 34 սմ, բարձր. 7 սմ): Ներքուստ այն զարդարված է երեք միմյանց չկրկնող գոտիներով, որոնցից ամենալայնի վրա վերարտադրված է 11 անգամ պարբերաբար կրկնվող մի հեծյալ կնոջ կերպար: Տասնմեկ հատվածներից յուրաքանչյուրն առանձնանում է ճատրակաձև կատարներ ունեցող ծառերով, եզրագծված մանր կետերով (աղ. II, նկ. 3): Անոթը գեղազարդող վարպետին հաջողվել է բացառիկ վարպետությամբ վերարտադրել վազող ձիերն ու հեծյալի լարված ու խուճապահար վիճակը, որն, ասեք, փախչում է ինչ-որ սարսափից: Այդ են ասում թե՛ դեմքի արտահայտությունը, թե՛ օդում ցրված մազերը: Գոտիներից մեկն արձանագրական բնույթի է, իսկ մյուսի վրա պատկերված է ոճավորված երկարիրան կենդանիների վազբը: Հատակին արված են կանացի հինգ դիմանկարներ, որոնք եզրագծված են մեղալյոնների մեջ և առանձնանում են սելջուկյան զարդամոտիվներով:

Չիկագոյի արվեստի թանգարանի անօրինությունը պատկանող սկուտեղը կրկնում է Դվինի սկուտեղի զարդամոտիվը՝ նույն ծառերը, սելջուկյան զարդաձևը, կենդանիների վազբի տեսարանը և այլ մանրամասներ: Բայց միաժամանակ նկատվում են հետևյալ տարբերությունները՝ հեծյալի փոխարեն հեծյալ կին և շուրթի եզրին ոչ թե արձանագրության իմիտացիա է, այլ կենդանիների վազբի տեսարան, հեծյալը պատկերված է մեղալյոնների մեջ և առանձնանում է ոչ թե ծառերով, այլ՝ սելջուկյան զարդաձևերով: Քանի որ Չիկագոյի թանգարանի սկուտեղի չափերը մեծ են, հետևաբար գոտիներն էլ բազմապատիկ: Այս սկուտեղն ունի արձանագրություն, որով թվագրվում է հիջրայի 1191/587¹⁴-ով:

Դվինի սկուտեղը ոճական շատ ընդհանրություններ ունի վերոհիշյալ սկուտեղի հետ և հավանաբար նույնպես թվագրվում է XII դ. վերջով և XIII դ. սկզբով¹⁵:

Դվինի հավաքածուում առանձին խումբ են կազմում սափորները: 1951 թ. պեղումներից հայտնաբերված սափորիկն ունի նեղ, ուղիղ պարանոց, քիչ լայն իրան, նեղ, օղակաձև նստուկ և տափակ բռնակ (ՊՊԹ 1913/145, բարձր. 19 սմ): Իրանի մակերեսն ուռուցիկ է և կազմված է եռաշար ռոմբաձև բաժանմունքներից, որոնց մեջ ոսկեգույն և դարչնագույն շողունով պատկերված է արեգակը՝ մանր ճառագայթներով (աղ. I, նկ. 4): Հար և նման ա-

¹⁴ SPA V, աղ. 638, տրամ. 38 սմ:
¹⁵ Դվինի միջնաբերդի —9—C քառակուսիում հայտնաբերվել են նման զարդերով մի այլ սկուտեղի բեկորներ (1794/398), որ հարակից նյութերով՝ իլդիգիզյան և վրացական դրամներով նույնպես թվագրվում է XII—XIII դդ. (աղ. II, նկ. 4):
 Թերի պահպանված մեկ այլ սկուտեղ կրում է բոլորովին այլ ճառագայթաձև զարդամոտիվ (ՊՊԹ 2048/13, տրամ. 32 սմ): Սկիզբ առնելով անոթի կենտրոնից, ճառագայթներն աստիճանաբար տարափոխվում են իրենց զարդաձևերով, իսկ տափակ շուրթի եզրին կա քուֆի արձանագրություն (աղ. I, նկ. 3): Թեև անոթն իր զարդամոտիվներով եզակի է և տարբերվում է նախորդներից, այնուամենայնիվ՝ գեղազարդման առանձնահատկություններով կարելի է վերագրել Իրանի խեցեգործական կենտրոններից մեկին:

նոթ, քիչ տարբեր զարդաձևերով, հրատարակված է Ե. Քյունեի մոտ և թրվագրվում է XIII դարով¹⁶: Ա. Պոպը նման ուռուցիկ մակերեսով շողուն խեցեղենը թվագրում է XIV դարով: Այդ թվագրումը հիմնավորված չէ, քանի որ այդպիսի խեցեղեն հայտնաբերված է թե՛ Դվինից, թե՛ Փայտակարանից, իսկ XIV դ. այդ քաղաքները գոյություն չունեին:

Մյուս սափորիկն ունի կնոջ դեմքով թռչունի (հուշկապարիկի) ձև (ՊՊԹ 1750, բարձր. 16 սմ): Անոթն իր զուգահեռն է գտնում Իրանում, բայց թվագրված չէ (աղ. II, նկ. 5)¹⁸:

Ինչնիկաձև սափորիկը արտաքին ձևավորմամբ առայժմ հայտնի սափորիկների մեջ եզակի նմուշ է (ՊՊԹ 1913/146, բարձր. 15 սմ): Զարդամոտիվները նույն գծիկներն են ու զալարները, որ հանդիպում են նախորդ շողուն գրեթե բոլոր առարկաների վրա (աղ. III, նկ. 1): Շողուն սափորիկները գտնվել են Դվինի ստորին բերդում, իլդիբիզյան և վրացական դրամներով թվագրվող XII—XIII դդ. շերտերում:

Ինչպես տեսանք, քննարկվող նյութերի մեծ մասը հայտնաբերվել է Դվինում և ստույգ թվագրվում է շերտադրական ու զուգահեռ նյութերով: Նյութերը հայտնի են նաև Անիի պեղումներից¹⁹:

Առավել դժվար և մանրազնին հետազոտության կարոտ է այն խնդիրը, թե Իրանի խեցեգործական ո՞ր կենտրոնում են արտադրվել այդ բարձրարվեստ նյութերը: Իրանում այդ ուղղությամբ համեմատաբար քիչ են պեղումներ կատարվում, իսկ նյութը հիմնականում հայթայթում են հնավաճառները, որոնց տեղեկությունները վստահելի չեն: Սկզբնական շրջանում, երբ նախապատվությունը տրվում էր Ռեյին, բոլոր հնավաճառները իրերը ներկայացնում էին որպես Ռեյ քաղաքի արտադրանք, բայց երբ 1935 թ. հայտնի դարձավ ստամբուլյան ձեռագիրը՝ Քաշանի շողուն խեցեղենի արտադրության վերաբերյալ²⁰, անմիջապես փոխվեց մոտեցումը և իրերի մեծ մասը համարվեց քաշանյան: Ուստի իրանական միջնադարյան խեցեղենի մասնագետները՝ Ա. Պոպը և է. էթինգհաուսը առարկաները ունեյն կամ քաշանյան են համարում զարդարման ոճական առանձնահատկություններից ելնելով: Այդ դասակարգման համաձայն²¹, Քաշանում պատրաստված շողուն խեցեղենին բը-

¹⁶ E. Kühnel, Islamische Kleinkunst, Berlin, 1925, աղ. 50: Այն համարում է Ռեյի արտադրանք:

¹⁷ Կ. Ղաֆադարյան, նշվ. աշխ., Ե. Ա. Պախոմով, Քայտաքար—Բայլական—Օրան—Կալա, МИА, № 67, М.—Л., 1959, էջ 28:

¹⁸ St' u Athar-è-Iran, Annals du service archeologique de l'Iran, 1936 t. 1, p. 183, fig. 27:

¹⁹ St' u Б. А. Шелковников, Поливная керамика из раскопок города Ани, Ереван, 1957.

²⁰ St' u Н. Ritter, I. Ruska, R. Winderlich, Eine persische Beschreibung der Fayencetechnik von Kaschan aus dem Jahre 700 h (1301), Istanbuler Mitteilungen, Heft 3, Istanbul, 1935 էջ 16—56:

²¹ St' u A. U. Pope, Suggestions towards the identification of Medieval Iranian faience, КИА, М.—Л., 1939 էջ 167. R. Ethingausen, Evidence for the identification of Kashan pottery, КИА, էջ 60—66:

նորոշ են մանր զարդաձևերը (զալարներ, թռչող բաղեր, առյուծներ, գայլեր, աղվեսներ), մարդկային դեմքերը պատկերված են մեծ, լայն ծնոտով և բարձր տեղադրված բերանով, իսկ ունյան անոթներին բնորոշ են մեծածավալ բուսական և կենդանական զարդաձևերը, մարդկային դիմագծերն էլ ավելի կանոնավոր են և համաչափ: Ըստ այդ դասակարգման, Դվինում հայտնաբերված շողուն անոթները հիմնականում ունեյն կամ քաշանյան ծագում ունեն: Կարծում ենք, որ երկու քաղաքներն էլ XII—XIII դդ. շողուն խեցեղեն արտադրող խոշոր կենտրոններ են եղել և ունեցել են անոթները գեղազարդելու իրենց առանձնահատուկ ավանդույթները: Հնարավոր է, որ խեցեգործ վարպետները մի կենտրոնից տեղափոխված լինեն մյուսը, որտեղ շարունակել են իրենց աշխատանքը, ելնելով նոր հնարավորություններից, սակայն պահպանելով իրենց ոճը:

Այսպիսով, Դվինում հայտնաբերված շողուն խեցեղենի այս ժողովածուի քննությունը պարզում է, որ Հայաստանը XII—XIII դդ. առևտրական աշխույժ կապեր է ունեցել Իրանի հետ, և հայ ու իրանական վերնախավի կենցաղում և գեղարվեստական ճաշակի մեջ այդ ժամանակաշրջանում եղել են որոշ ընդհանրություններ:

Դվինի պեղումներից հայտնաբերված են նաև տեղական շողուն խեցեղենի բազմաթիվ նմուշներ, որոնք թե՛ խեցու որակով, թե՛ զարդամոտիվներով տարբերվում են ներմուծված խեցեղենից: Այդ մասին կիսոսենք առաջիկայում առանձին հոդվածով:

А. С. ЖАМКОЧЯН

ДВИНСКАЯ РАСПИСАННАЯ ЛЮСТРОМ ПРИВОЗНАЯ ФАЯНСОВАЯ КЕРАМИКА XII—XIII ВВ.

Резюме

Археологические раскопки Двина дают богатый материал для изучения торговых и культурных отношений Армении с сопредельными странами. Среди них определенное значение приобретают и фаянсы, расписанные люстром по белой непрозрачной глазури, изготовленные в керамических мастерских Ирана.

По типологическим особенностям, статиграфическим данным и параллельным материалам эти изделия датируются XII—XIII веками.

Обнаруженные в Двине предметы значительно расширяют наши представления об иранской фаянсовой керамике и ареале их поступления.

И. Р. ДРАМПЯН

ГРУППА АРМЯНСКИХ СЕРЕБРЯНЫХ
ОКЛАДОВ XVII—XVIII ВЕКОВ

Если история армянской книжной живописи предстает благодаря трудам целого ряда ученых, и прежде всего Гарегина Овсепяна, Л. А. Дурново и Сирарпи Тер-Нерсесян, в своем последовательном развитии от ранних веков до позднейшего времени, то этого нельзя сказать о другой области художественного творчества, также теснейшим образом связанной с нашей письменной культурой, с рукописными памятниками—об окладах.

Справедливости ради здесь надо отметить, что в этом повинны не только исследователи, но и сохранность самого материала.

Известно, что рукописи стали заключать в оклады с первых же веков существования армянской письменности. Уже Вртанес Кертол¹ говорит о евангелиях, заключенных в золотые и серебряные оклады и в переплеты из слоновой кости и красной кожи. В последующие века мы находим сведения о существовании золотых и серебряных переплетов, украшенных чеканкой, филигранью, усыпанных драгоценными камнями, во многих трудах средневековых авторов, описывающих содержимое монастырских ризниц, царских и княжеских хранилищ. Часто об окладах говорится и в памятных записях рукописей; в них не только упоминаются имена переплетчиков и ювелиров, но иногда даже описываются и сами оклады. Эти сведения тем более интересны, что многие переплеты из драгоценных материалов до нас не дошли.

Оклад жил единой жизнью с рукописью и разделял ее судьбу. Но понятно, что материальная ценность любого серебряного позолоченного оклада, часто украшенного драгоценными камнями, делала его особенно уязвимым во времена войн и грабежей. Нередко оклады эти отделились от рукописей. Некоторые переплеты Матенадарана еще хранят на себе следы креплений, которыми к ним подсоединялись металлические пластины.

Если не считать нескольких хорошо известных окладов из драгоценных материалов, и среди них, в первую очередь, оклада из слоно-

вой кости на Эчмиадзинском евангелии, серебряного позолоченного киликийского оклада 1255 года², оклада 1347 года на Эрмитажном «Генуэзском евангелии»³, пластины от оклада 1495 года на евангелии XIII в.⁴,—то почти ничего не сохранилось от окладов ранее XVI в. Основная же масса окладов относится к XVII и XVIII векам.

Таким образом, представить себе последовательную картину развития армянской металлопластики, и в частности окладов, можно лишь реставрируя утерянные звенья единой цепи, с помощью аналогий со смежными областями искусства.

Понятно поэтому, что создание целостной истории армянских окладов явится сложной задачей для исследователей⁵. Пока же история армянской металлопластики находится по существу на стадии выявления памятников⁶. Еще очень многое сокрыто от нас, и не только в такой сокровищнице армянского прикладного искусства как коллекция Иерусалимского патриархата, но даже и у нас, в Матенадаране, и в кафедральном музее Эчмиадзинского собора имеется много окладов, до сих пор совершенно неизвестных в научном мире.

Данная статья посвящена небольшой группе ранее не публиковавшихся окладов из собрания Матенадарана. Эти оклады относятся, по-видимому, к одному и тому же периоду—к XVII—XVIII векам. Не-

² Рук. Матенадарана № 7690.

³ УЗ-834 Государственного Эрмитажа.

⁴ Рук. Матенадарана, № 9422.

⁵ На сегодняшний день единственной цельной работой в этой области армянского искусствоведения остается книга Г. Овсепяна «Մի էջ հայ արվեստի և մշակույթի պատմությունները» (Հալեպ, 1930), в которой рассматривается лишь ряд самых значительных окладов из числа тех, которые были известны автору сорок лет назад. Здесь надо указать и на неопубликованную пока диссертацию А. Я. Каковкина «Памятники армянского художественного серебра XI—XV вв.»

⁶ К сожалению, статьи, посвященные окладам, время от времени появляющиеся в периодической печати, носят, как правило, эпизодический характер, и к тому же далеко не всегда публикуемые оклады интересны в художественном отношении.

Отметим здесь ряд наиболее значительных статей, появившихся в последнее время; их не так много: Յ. Քյարտեան, Ազնարկ մը հին հայ արծաթագործութեան վրա, «Գեղուհի», 1950, էջ 76—81; Հ. Տեր-Ղևոնդյան, Մատենադարանի արծաթյա ձեռագրակազմերի մասին, «Էջմիածին» 1961, ժբ., էջ 49—53; Т. А. Измайлова, Армянская рукопись, написанная в Генуе и её серебрянный оклад 1347 года, «Византийский Временник», т. XX, 1961, стр. 248—258. S. Der-Nersessian, Le reliquaire de Skevra et l'orfèvrerie cilicienne aux XIIIe et XIVe siècles, «Revue des Etudes Armeniennes» NS, t. I, 1964 pp. 121—147. А. Я. Каковкин, Серебряный оклад 1255 года евангелия 1249 года, «Բանբեր Մատենադարանի», № 9 էջ 163—172. А. Я. Каковкин, Образец армянского художественного серебра XV в. (на киликийской рукописи 1307 г., № 7691) «Բանբեր Մատենադարանի», № 10, էջ 161—169.

¹ Վրտանես Բերթոլ, Յաղագս պատկերամարտաց, Վենետիկ, 1852, էջ 337:

которые из них датированы, другие же, исходя из их стилистических особенностей, мы датируем тем же периодом. Большинство окладов можно лишь весьма приблизительно локализовать тем или иным районом; но есть и такие, которые имеют указания на место изготовления. Но оклады эти роднит не только время, но и круг. Это—произведения народного искусства, отличающиеся всеми характерными для последнего качествами.

Известно, что, начиная с XV в в армянском искусстве происходит определенный упадок профессионального направления, вызванный социально-политическими и экономическими факторами. Крупные мастерские, не имея постоянных заказов со стороны обеспеченных слоев населения,—ибо прослойка эта постепенно сходит на нет,—хиреют и исчезают. Но потребность народа в искусстве сохраняет деятельность мелких ремесленных мастерских, обслуживающих спрос среднего городского и сельского населения, а также более богатого купечества. Естественно, что ремесленники эти не получают профессионального образования, по существу, это—народные мастера, и продукция их отмечена чертами народного искусства.

Это явление, происходящее в целом, во всем армянском изобразительном искусстве позднего средневековья, находит свое отражение и в искусстве декоративно-прикладном (в частности, в изготовлении окладов). Но т. к. утилитарная функция предметов прикладного искусства обеспечивала им существование даже в наиболее тяжелые исторические эпохи, то последовательная нить развития искусства не прерывалась. Сохранялась традиционная преемственность, а отсюда,—и качество.

Об этом свидетельствует и группа привлеченных в данной статье окладов. При значительных частных особенностях, все они объединены чертами определенной стилистической общности. В них мы не найдем изысканности и утонченности, отличающей такие, скажем, памятники, как киликийский оклад 1255 года, или Скеврский реликварий, или знаменитый Хотакерац Сурб Ншан, но все они исключительно экспрессивны и лаконичны в средствах выражения. Они характеризуются драматизмом образов, грубоватой силой, внешней статичностью и скрытой экспрессией, деформированными пропорциями и условными жестами фигур, а также схематичностью лиц, временами нарушаемой ярко-выраженными национальными типами.

Некоторые из этих окладов исполнены с высоким мастерством, проявляющимся не в тонкости техники, не в ее изощренности, а в том интуитивно прочувствованном равновесии выступающих объемов и не тронутых обработкой частей, в той смелости и живости, которыми отмечены отдельные декоративные элементы, в том чувстве меры, кото-

рое позволяет объединить в компактное целое всю изобразительную плоскость.

К числу интересных переплетов этой группы относится чеканный серебряный оклад, датированный 1725 годом (№ 6795 М), имеющий даже и имя мастера—Киракоса Алипнарци (рис. 1, 2а). Поверхность металлической пластины оклада не загружена деталями. Сдвиг фигуры богоматери от центральной оси вносит динамику в общий композиционный строй. Пропорции несколько необычны для народного направления, которое, как правило, характеризуется укороченными пропорциями и упрощенными крупными формами, что в сумме своей создает монументальность.

Характер обработки поверхности здесь не очень богат разнообразием приемов. Наряду с рельефом выступающих частей мастер применяет также и штрих. Приемы обработки, напоминающие украшения на армянских кувшинах, чашах и блюдах, наводят на мысль, что чеканщик, по-видимому, работал в мастерской, изготовлявшей утилитарные предметы быта.

Иной образ создается другим окладом, заключающим киликийскую рукопись XII века (№ 7718 М), но, несомненно, относящимся уже к XVII—XVIII векам (рис. 2б, 3).

Если пропорции фигур на предыдущем переплете были удлинены, то здесь они, напротив, сильнее обычного укорочены, вызывая в памяти пропорции мексиканской скульптуры. В этом рельефе нет динамики предыдущего памятника, он более статичен и монументален, но при всей статичности пластическая структура его пронизана внутренним напряжением. Сами изобразительные формы, характер пропорций, манера обработки поверхности, типичны для творческого метода народного мастера. Организация поверхности оклада довольно разнообразна. Наряду с выявлением больших цельных объемов мастер разрабатывает также и мелкие детали, обогащающие фактуру крупных масс, которые, однако, не снижают общей монументальности.

В следующем окладе (№ 6792 М) надо отметить не совсем удачную компоновку фигур по горизонтальной оси—им явно тесно, тогда как верх и низ имеют пустующие куски (рис. 4а, б). Художник здесь не справился с композиционным размещением. Но, несмотря на это, характер обработки и пропорции фигур, сама фактура пластин отличаются сочностью и свободой. Чувствуется раскованность мастера в работе над металлом.

В лаконично обрисованном лице богоматери (рис. 5) на другом окладе (№ 5645) угадываются черты реального характера, что редко встречается в памятниках народного направления. И это происходит, быть может, даже независимо от воли художника. Складки одежд, ло-

жающиеся густыми рядами, гармонично сочетаются с ажурной листвой фона.

Оклад этот имеет на торце памятную запись, в которой указывается на то, что рукопись была принесена в дар Лимскому монастырю. Подобные записи мы встречаем и на ряде других окладов Матенадара, чеканные изображения которых и по стилю своему, и по иконографии очень близки предыдущему окладу, хотя и значительно уступают ему в художественном качестве. Это позволяет локализовать данную группу окладов районом Вана.

Но, быть может, больше, чем все приведенные выше оклады, народному творчеству близко Распятие на окладе рукописи XVIII века (№ 8617 М—рис. 6). По своему художественному образу оно напоминает надгробия, лежащие на кладбищах у сельских церквей или во дворах монастырей. При общей пластической остроте и выразительности оклад этот менее совершенен: в нем недостаточно выявлена связь между орнаментальным мотивом фона и изображением самого Христа. Но ценность его в ином: в искренности чувства, благодаря которой художнику удалось одухотворить эту, несколько неуклюжую по пропорциям, фигуру ярко выраженной эмоциональностью.

Нельзя не заметить той стилистической общности, которая роднит представленную нами группу окладов с памятниками народного искусства других областей, с рельефами хачкаров и надгробий, с декоративной скульптурой на стенах некоторых церквей и с образительными формами миниатюр позднего периода. Эта общность не должна удивлять нас, она вызвана стойкостью вкусов и эстетических потребностей народа, общностью черт его художественного мировоззрения.

История декоративно-прикладного искусства—одна из наименее разработанных областей армянского художественного творчества. Изучение ее находится еще в том состоянии, когда первоочередной задачей является выявление и публикация конкретных памятников.

И здесь у армянских историков искусства еще очень много работы, лишь проделав которую мы будем иметь ту основу, на которой можно будет более или менее стройно воссоздать историю армянской металлопластики.

Ի. Ռ. ԴՐԱՄԲՅԱՆ

XVII—XVIII ԳԱՐԵՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՐԾԱԹԱԿԱԶՄԵՐԻ ՄԻ ԽՈՒՄԲ

Ա մ փ ո փ ու մ

Հայկական ձեռագրական հուշարձանների կազմերը տակավին գիտական ամփոփ ուսումնասիրության չեն ենթարկված. շատ նմուշներ նոր են երևան բերվում և դրվում գիտական շրջանառության մեջ:

Ներկա հաղորդումը նվիրված է Մատենադարանում պահվող XVII—XVIII դարերի մի խումբ արծաթակազմերի, որոնք գեղարվեստական հետաքրքրություն են ներկայացնում և խմբավորվում են ոճական որոշակի ընդհանրություններ՝ բացառիկ արտահայտչականությամբ, արտահայտչամիջոցների լակոնիկությամբ, համամասնությունների այլաձևումներով, պայմանական շարժաձևերով, դեմքերի ուրվագծայնությամբ և կերպարների փոքր-ինչ կոպտացող ուժգնությամբ: Նրանց մեկ մասը, ինչպես երևում է, սերում է վանի միջավայրից: Ընդ որում, նշյալ հատկանիշները վկայում են, որ արծարծվող կազմերը ժողովրդական արվեստի կնիք են կրում:

Հ. Ա. ԱՍՄԱՐՅԱՆ

ՆՅՈՒԹԵՐ ԳԼԱԶՈՐԻ ՊԵՂՈՒՄՆԵՐԻՅ*

Պատկերաքանդակներ և խաչքարեր

13—14-րդ դարերում Վայոց ձոր նահանգում գործել է միջնադարյան հայոց ամենանշանավոր կրթական օջախներից մեկը՝ Գլաձորի բարձրագույն դպրոցը կամ համալսարանը, որը գտնվել է Պոռշյան իշխանների հովանավորության տակ: Այդտեղ բազմաթիվ գիտություններ են սովորել և սովորեցրել ժամանակի նշանավոր անձինք՝ Ներսես Մշեցին, Եսայի Նշեցին, Հովհան Ավրայելը, Ստեփանոս Տարսայիճը, Հովհան Որոտնեցին (վերջինս հետո Տաթևի դպրոցի հիմնադիրը եղավ), Մխիթար Սասնեցին, Հովհան Արճիշեցին, Ստեփանոս Օրբելյանը, Տիրատուր Վարդապետը՝ Եսայի Նշեցու աշակերտը, որը Հերմոնի դպրոցի հիմնադիրն էր, նշանավոր Խաչատուր փիլիսոփան, գուցե և միջնադարյան Հայաստանի պարծանքը՝ Ֆրիկը¹:

Գլաձորի մանրանկարչական դպրոցի հիմնադիրներից է նշանավոր քարգործ Մոմիկը²: Այդ նույն դպրոցի սաներ են ժամանակի անվանի մանրանկարիչներ Թորոս Տարոնացին և Ավագը:

Գլաձորի համալսարանի պեղումների ժամանակ³ ի հայտ եկան մարդկային պատկերաքանդակներ ունեցող տապանաքարեր և ավելի քան քսան խաչքար, որոնց նախնական գնահատությունն է նվիրված սույն հաղորդումը:

Թանահատ եկեղեցու մուտքի մոտ հայտնաբերվեց դեռատի աղջկա փոքրաչափ քանդակապատկեր (նկ. 1): Այն ուղղված է արևմուտքից արևելք, իսկ քանդակի արտաքին պատկերաձևի մեջ պահպանված է ժամանակի կրոնական խստությունը: Քանդակը ուռուցիկ դիրքով է, ոտքերը դեպի աջ կողմ ուղղված, դեմքը և աչքերը արտահայտիչ են, բերանի բացվածքը և քիթը փոքր ու համաչափ: Գլուխը ծածկված է շորով, բազուկներին կան գնդերից պատ-

* Հեղինակը Գլաձոր անվան տակ հասկանում է. Թանահատի վանական հաստատությունը: Խմբ.:

¹ Տե՛ս Գ. աբբ. Հովսեփյան, Խաղբակյանք կամ Պոռշյանք հայոց պատմության մեջ, Երևան, 1942, մասն երկրորդ, էջ 199:

² Ա. Ավետիսյան, Հայկական մանրանկարչության Գլաձորի դպրոցը, Երևան, 1971, էջ 30:

³ Գլաձորի պեղումների արդյունքների մասին ավելի մանրամասն տե՛ս պատմական գիտությունների թեկնածու Ի. Ղարիբյանի «Գլաձորի համալսարանի հնագիտական պեղումները» հոդվածը «Բանբեր Երևանի համալսարանի» հանդեսի 1971 թ. № 2-ում:

րաստված օղածե զարդաձևեր, որոնք բնորոշ էին միջնադարի իշխանական ծագման մարդկանց: Պատկերաքանդակը վերցված է ուղղանկյուն փորվածքի մեջ, որպիսին բնորոշ է նույն՝ 12—14-րդ դարերին: Աղջկա պարեգոտ հագուստը հասնում է մինչև ոտքերի ծայրը, իսկ Հայաստանում մինչև ոտքերի ծայրերը հասնող պարեգոտով հագուստները տարածված էին հատկապես 13-րդ դարում: Աղջկա տարազը շատ նման է Ջաբարե և Իվանե եղբայրների իշխանական տարազներին, որ պատկերված են Հառիճի եկեղեցու վրա: Նմանատիպ տարազներ հագնում էին և՛ կանայք, և՛ տղամարդիկ⁴: Նկատելու է նաև, որ միայն վերնախավի մարդիկ և նրանց հարազատները կարող էին թաղվել եկեղեցու մուտքի մոտ (տվյալ դեպքում՝ Թանահատի):

Ջարդաշատ է նաև Ստեփանոս Աբեղայի տապանաքարը: Այն նման է դեռատի աղջկա տապանաքարին, միայն առանց դիմապատկերի: Քանդակի վրա եղած արձանագրությունը վերաբերում է ՉԼԳ (1285) թվականին: Ուրեմն, այս երկու տապանաքարերն էլ գրեթե նույն շրջանի են:

Դեռատի աղջկա տապանաքարի և նրա քանդակազարդի հետ սերտ առնչվում է նաև համալսարանի դիմաց փոքրիկ բլրի վրա գտնվող մի ուրիշ պատկերաքանդակով տապանաքար (նկ. 2). կարմիր գույնի ֆիլզիտ քարի վրա քանդակված է Սմբատ անունով մի մարդ, երկու ձեռքով Ս. գիրքը բռնած: 4—7-րդ դարերի արվեստում հանդիպում է նույն Ս. գրքի կամ Ավետարանի քանդակը՝ Քրիստոսի ձեռքին: Ահա այս ավանդական սյուժեն նոր կենդանություն է ստացել Սմբատի պատկերաքանդակում: Սմբատի գլուխը կտրավուն է, աչքերը և բերանի բացվածքը շատ փոքր են, հագուստը լայն է և իջնում է մինչև ոտքերը: Սմբատի տապանաքարի երկարությունն է 1,95 մ, իսկ լայնությունը՝ 60 սմ: Տապանաքարը կոտրվել, բաժանվել է երկու մասի: Ակնհայտ են աղջկա և Սմբատի այս երկու պատկերաքանդակների նմանությունները. սրանք նույն 13-րդ դարի գործեր են և դրանով է բացատրվում նրանց ոճական ընդհանրությունը:

Հետաքրքրական են նաև Գլաձորում հանդիպող մարդկային դեմքերով պատկերված սիմվոլիկ տապանաքարերը (նկ. 3): Երեքտակ գծային պատկերների միջոցով տրվում է մարդու ընդհանրական դիմապատկերը:

Պեղումների ընթացքում այս պատկերաքանդակ տապանաքարերից բացի գտնվել են նաև ուրիշները (նկ. 4): Դրանցից մեկի վրա երևում են շեղանկյունի զարդաձևեր: Միջնադարյան արվեստում շեղանկյունի և քառակուսի ձևերը ունեցել են սիմվոլիկ իմաստ:

Գլաձորի դպրոցի խաչքարերը յուրահատուկ ձևեր են երևան բերում: Նրանց մեջ հանդիպում են հնագույն ոճով քանդակվածներ, որոնք կարող են վերաբերել 9-րդ դարին (նկ. 5):

Չնայած խաչքարերի հորինվածքում հիմնական սյուժեն, բնականաբար, խաչի պատկերն է (և ոչ միայն խաչքարերի, այլև Գլաձորում պեղումներից

⁴ «Հայկական տարազը հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը», ուսումն. և արտմիջնակարները՝ Ա. Պատրիկի, Երևան, 1967, էջ 31:

բացված շինությունների վրա իշխել են խաչապատկերները), բայց այն վերածվել է դեկորատիվ ձևի, իսկ զարդապատկերների շնորհիվ՝ ձեռք բերել գեղարվեստական նշանակություն, հնչեղություն ստացել:

Գլաձորի եկեղեցու ճեմասրահի արևմտյան պատի մեջ ագուցվել է (պեղումներից հետո բացված) խաչքարերի մի ամբողջական մեծ խումբ:

Խաչքարերի հորինվածքում արմավենու ճյուղերը կազմում են խաչի պատկերագրական սխեմայի ներքևի երկու թևերի անբաժանելի մասերը և Գլաձորի քանդակներում մեծ մասամբ հայտնվում են բլթակներով: Մեր համոզմամբ արմավենու ճյուղերը ևս կապվում են պողաբերության գաղափարի հետ, քանի որ վաղ միջնադարի արվեստում խաչը ևս հանդես է գալիս կենաց ծառի իմաստով և նշանակությամբ (տե՛ս նույնը Մաստարայի հուշարձանի վրա):

Գլաձորի խաչքարերի վրա քանդակված զարդաձևերը բաշխված են հավասարապես և զերծ են ավելորդ մանրամասներից:

Քարգործ վարպետները ընդհանրապես իրենց անունները շատ քիչ են փորագրել խաչքարերի վրա: Գլաձորի պեղումներից գտնված խաչքարերի վրա կան այդպիսի անուններ: Վարդագույն տուֆ խաչքարերից մեկի վրա հանդիպում է Գալուստ քարգործի հիշատակությունը, կամ մի ուրիշ դեպքում՝ Գրիգոր անունը:

Պեղված բազիլիկ եկեղեցու հարավ-արևմտյան անկյունում կանգնեցված սև գույնի տուֆ խաչաքարի վրա կա արձանագրություն.

ԿԱՆԳՆ ԵՅԱԻ Խ—
ԱՉՍ Ի ԲԱՐԵ
ԽԱԻՍ ՈՒԹ [Յ] Ա.-Ն
[ՅՈ] ՎԱՆԻՍԻ

Արձանագրությունից պարզվում է, որ այս խաչքարը կանգնեցվել է Հովհաննիսի բարեխոսության համար: Հարց է առաջ գալիս, ինչն է այդ Հովհաննեսին դրդել կանգնեցնելու նմանատիպ մի խաչքար բազիլիկ եկեղեցու հարավ-արևմտյան անկյունում: Մի՞թե Հովհաննեսը նման խաչքար չէ՞ր կարող կանգնեցնել մի ուրիշ վայրում: Պարզվում է, որ նմանատիպ խաչքարեր կանգնեցրել են քարգործները նվիրված այս կամ այն դեպքին, կամ նըշանավոր շարժառիթին: Հենց այսպիսի բնույթ ունի Հովհաննիսի խաչքարը, թերևս նվիրված Գլաձորի համալսարանին կամ բարձրագույն դպրոցի գործունեությանը:

Գլաձորում գտնված խաչքարերը իրարից տարբերվում են թե՛ շափսերով և թե՛ խաչերի տարբեր հորինվածքային լուծումներով: Խաչքարերի վրա քանդակված խաչերը ևս տարբերվում են իրարից քանդակման որակով. մի դեպքում նրանց վրայի խաչերը կոպիտ են քանդակված և մեծ-մեծ են, մյուս դեպքում՝ արտահայտիչ են և փոքր ծավալների սահմաններում:

Նկարագրենք պեղումներից գտնված խաչքարերից մի քանիսը:

Առաջինը դրված է Գլաձորի եկեղեցու արևմտյան անկյունում, պատի մեջ

(նկ. 6) և սև բազալտ քար է: Հիմնական հորինվածքը կենտրոնի խաչն է, որը գրավում է քարի ամբողջ կենտրոնական շրջանը: Խաչաթևերը իրենց ծայրերին ունեն բողբոջելու պատրաստ եռաթև տերևներ, որոնք երկտակ շրջանների միջոցով միացած են իրար և դրանով էլ ամբողջանում են: Խաչի ուղղահայաց թևը հորիզոնականի համեմատ երկար է: Խաչի կենտրոնական թևի ուղղահայացի վրայի բողբոջները ուղղված են վերև, մինչդեռ նույն թևի ներքևի մասի բողբոջները կամ եռամաս տերևները՝ դեպի ներքև: Այնտեղ, որտեղ երկու թևերը միանում են, քարգործը փոս է արել և դրանով շեշտել խաչի դիրքը: Բացի այդ, քարգործը նույն խաչի թևերին հավասար ուղղություններով երկարավուն, փոքր-ինչ ուռուցիկ գծեր է տարել: Այստեղ խաչի հորինվածքի վերին մասից դուրս են ելնում և դեպի աջ ու ձախ կողմեր ուղղվում փոքր-ինչ ուռուցիկ գծեր, որոնցից կախ է ընկած երկու ողկույզ: Դրանք նըստում են խաչի հորիզոնական թևի բողբոջներից միջինի վրա: Խաչի հորիզոնական թևի եռաթև բողբոջները կատարված են նույն սկզբունքով, ինչ ուղղահայաց թևինը, և մի մասը ուղղված է ձախ կողմ, մյուսը՝ աջ: Խաչի ներքևի թևի աջ և ձախ կողմերից ևս դուրս են գալիս արմավենու իրար հավասարամաս սղոցաձև թփեր: Խաչի ամբողջ հորինվածքը տեղավորված է կամարաձև եզրագծերի միջև: Այդ հորինվածքից դուրս եզրային մասերում ընկած են մանրակրկիտ մշակված, իրար միացող ոլորահյուս շատ բարդ ձևեր, որոնցով շրջափակվում է խաչի հորինվածքը: Դրսի երկտակ շեղանկյունիներ հիշեցնող փոքր-ինչ ուռուցիկ սրտաձև մասերը ընկած են ոլորահյուս գծերի կենտրոնական մասերում, իսկ մյուս ոլորահյուս պտտվող զարդաձևերը միանում են իրար: Նույն ոճի զարդաձևը խաչքարի վրա կարծես անվերջանալի է դառնում:

Մի խաչքարի վրա համատեղ երևան են գալիս մի քանի սիմվոլներ. քրիստոնեությունից սիմվոլ խաչը, խաղողի երկու ողկույզները, արմավենու թփերը: Կողքերից շրջապատող ոլորահյուսները և սրտաձև քանդակազարդերը երկրաչափական են: Նրանք երևում են խաչի սիմվոլի երկրաչափական բարդ ձևի հետ: Բարդ երկրաչափական և պարզ բուսական ձևերը գալիս են ասելու, որ այս խաչքարը կատարված է Գլաձորի համալսարանի ամենածաղկուն շրջանում:

Երկրորդ խաչքարը նույնպես սև բազալտից է (նկ. 6): Կենտրոնում ընկած է խաչի հորինվածքը: Խաչն ունի բողբոջած եռամաս սրտաձև տերևներ՝ խաչաթերթերի ծայրերին: Բայց այս անգամ խաչի ուղղահայաց թևի վրա եղևնաձև զարդաձև ենք տեսնում: Խաչի հորիզոնական թևին նույնպես եղևնաձև զարդ կա: Ձախ կողմում, թևի վերևում, զարդը կրկնվում է, իսկ ներքևի մասը մշակված չէ, հարթ է: Այս դեպքում համամասնությունը խախտվում է. հորիզոնական թևի ծաղկած խաչաթևերը ամբողջությամբ միանում են իրար: Ուղղահայաց թևը նույնպես վերևի մասում այդ ձևով է: Եթե խաչի հորիզոնական թևերի վերին մասերում աջ և ձախ կողմերից երկու փոքր վարդյակներ են քանդակված, ապա խաչի ներքևի կողմում այդ համամասնությունը խախտվում է (ձախ կողմում). վարդյակը շափսերով մեծանում է, իսկ մեծ խա-

չի աջ կողմի թևի տակ երևան է գալիս փոքր շափսի խաչի նշանը, որի ուղղահայաց թևերը 15 սմ են, իսկ հորիզոնականը՝ 10 սմ: Վերին կողմից ամբողջական հորինվածքը ընկած է քարի ուղղանկյուն կտրվածքի մեջ, որին շրջափակում են երկրաչափական ութաձևերը, իսկ քարի աջ և ձախ կողմերից՝ զարդը ավելի խտանում է և փոխվում: Այս խաչքարի վրա ևս երկրաչափական և բուսական քանդակազարդերը հանդես են գալիս համատեղ և լրացնում մեկը մյուսին: Այս երկու խաչքարերը դրված են կողք-կողքի և պատկանում են միևնույն ժամանակին:

Եթե առաջին խաչքարի վրա խաղող և արմավենի է, ապա մյուսի վրա վարդյակ է պատկերված:

Արմավենու թփի մի այլ լուծում տեսնում ենք մեկ ուրիշ համանման խաչքարի վրա, որտեղ արմավենու ամբողջական թփերը շրջբոլորում են խաչին վերևից, երկուական թփերը ուղղվում են դեպի քարի ծայրամասերը և կատարյալ ոճավորման հասնում (նկ. 7): Բայց այստեղ խաչաթևերը ծայրամասերում ոչ թե բողբոջելով եռատերևների են վերածվում, այլ նրանց անկյունային մասերը կլորանում են: Կենտրոնում գտնվում է պարզ մշակված խաչը, իսկ դրանց շուրջ կողմերում խաչեր են տեղավորված:

Գլաձորի մուտքի մասի պեղումների ընթացքում, հարավ-արևմտյան կողմում, շուտ եկած վիճակում, մոտ 50 սմ խորությունից դուրս եկավ մի ուրիշ խաչքար, որը իբրև տապանաքար է ծառայել (նկ. 8): Այս իրողությունը հաստատելու է գալիս Թանահատի եկեղեցու հարավային կողմում գտնված փոքր երեսային հար և նման տապանաքարը, որն ունի նույնանման քանդակներ: Այս տապանաքար-խաչքարը պարզ մշակում ունի: Կենտրոնում խաչի հորինվածքն է, թևերը նույնպես երկուական գնդիկավոր մշակում ունեն, իսկ թևերի տակի մասերում՝ երկու փոքր խաչ է պատկերված, աջ մասում՝ թեք դիրքով մեկ խաչ: Այս ամբողջ հորինվածքը տեղավորված է կամարաձև մրշակված հարթակի մեջ:

Գլաձորի եկեղեցու հարավ-արևմտյան հատվածում պեղումների ժամանակ գտնվեց և մի ուրիշ տիպի խաչքար (նկ. 9): Քարը սև բազալտ է. կենտրոնում մեկ խաչի փոխարեն պատկերված է երկուսը, սիմետրիկ վիճակում, նրանց բաժանող ուռուցիկ գծով: Խաչերի թևերին մեկական գնդեր են պատկերված, իսկ ներքևի կողմից խաչերը միանում են փոս ընկած եզրագծին: Խաչերը պատկերված են ուռուցիկ:

Թանահատի եկեղեցու մուտքի մոտից դուրս եկավ հսկայական խաչքար (նկ. 10), որն իր ձևերով և քանդակման որակով շատ ինքնատիպ է ու հիշեցնում է Գլաձորի պատի մեջ դրված վարդագույն խաչքարը: Նրա վերին մասը կտրված է: Կենտրոնում հիմնականը մեծածավալ խաչի հորինվածքն է: Աջ մասում պահպանվել են միայն սրածայր եռաթև տերևներ՝ խաչի հորիզոնական թևերի վրա: Խաչի երկու կողմերում տարածվում են հավասարաչափ միագնդիկ խաչեր, որոնք իրենց պոչամասերով երկու կողմերից միանում են մարդու ոճավորված ձեռքերին, իսկ վերջիններս հենված են գնդավոր մասերի վրա: Խաչքարի հորինվածքի փոս ընկած մասից դուրս փոքր խաչա-

պատկերներ են քանդակված, որոնք կոթամասերով միանում են իրար: Ունի արձանագրություն:

ԿԱՆ ԳՆԵՅԱԻ ԶԽԱԶՍ ՅԻՇ ԱՏԱԿ ԻՆՁ ԵՎ Ծ[ՆՈՂԱՅ]:

Օ. Ավետիսյանը բերում է նման խաչքարի օրինակներ, պահպանված հին Մազրա գյուղում և Վայոց ձորում⁵: Հին Մազրայի խաչքարի թևերին մեկական գնդիկներ կան, ներքևում երկու կողմերից եկող արմավենու շուրջ բլթակներով:

Գլաձորի պեղված հուշարձանի դիմաց, փոքրիկ բլրի տակ ընկած է սև (նկ. 11) բազալտե մի խաչքար: Կենտրոնում խաչի մեծ հորինվածքն է, նրա թևերին՝ մեկական գնդիկներ: Խաչի հորիզոնական թևից վերև կան երկու ամբողջական խաղողի ողկույզներ, որոնք իրենց մեծ-մեծ պտղահատիկներով համաչափ իջնում են խաչի հորիզոնական թևերի անկյունային մասերի վրա: Խաչի նույն հորիզոնական թևի աջից և ձախից կախ են ընկել խաղողի մեկական թփեր, իսկ ուղղահայաց թևի ներքևի մասից դուրս են գալիս արմավենու խիտ բլթակավոր ճյուղեր և կլորանալով հասնում մինչև թփերը: Այստեղ, բացի խաչի ամբողջական հորինվածքից, համատեղ հանդես են գալիս խաղողի երկու ողկույզներ, խաղողի երկու թփեր և իրար դեմ-դիմաց ուղղված արմավենու խրձաձև հինգ բլթակավոր մասեր: Արմավենու ճյուղերը բաժանվում են երկու մասի, ընդ որում՝ ներսի կողմի մեկ ճյուղը ունի երկու բլթակ, իսկ դրսի կողմինը՝ երեք: Ինչպես երևում է, հնագույն որոշ ձևեր ու ֆեոդալիզմի արվեստում շարունակվում են գոյատևել: Այդ է վկայում խաչի, արմավենու ճյուղերի, խաղողի թփերի և ողկույզների առկայությունը: Խաչքարը թվագրվում է 12-րդ դարով: Քարգործը շատ պարզ ձևերի միջոցով հասել է մեծ առտահայտչականության:

Գլաձորի եկեղեցու արևմտյան կողմի ձորում կա սև բազալտե խաչքարի մի բեկոր (15 սմ) (նկ. 12): Պահպանվել է խաչի հորինվածքի ուղղահայաց թևը, որի մեջ կան եղևնաձև քանդակազարդերի մշակումներ, իսկ նրա վերին մասերում մեկական գնդիկներ են պատկերված: Այս փոքր խաչքարի հորինվածքում աչքի են ընկնում բուսական քանդակազարդերը՝ խաղողի ամբողջական մեկ զույգ ողկույզներ՝ փոքր սրտաձև տերևի (բողբոջի) և խաչի թևի մեջ տեղավորված եղևնաձև քանդակների ընկերակցությամբ: Երկրաչափական ձևերը երևում են խաչաթևից, նրա ծայրերում տեղավորված մեկական գրնդիկներից, կամարաձև մասից, որի քանդակազարդը ուղիղ գծերով մասերի է բաժանված և այլն: Այս խաչքարը տարբերվում է մյուսներից: Այն խաչքարի նոր տարբերակ է:

Մի այլ խաչքար (նկ. 8) վարդագույն տուֆից է: Նրա վրայի նույն զարդաքանդակները իրարից որոշ հեռավորության վրա են գտնվում, թեք դիրքով: Խաչքարը չափսերով ամենամեծն է, երկարությունը՝ 1,40 սմ, լայնքը՝ 80 սմ, խաչի ուղղահայաց մասը 75 սմ է, հորիզոնական թևերը՝ 40 սմ: Կենտրոնում խաչն է պատկերված, եռաթև բողբոջներով, սուր, դուրս ուղղված

⁵ Տե՛ս Onnig Avédissian, Peintre et sculpteur Arménien, 1960, էջ 129:

ծայրերով: Այստեղ հետաքրքիր են երկու կողմերից իրենց պոչերով խաչի թևերի վրա իջնող ամբողջական նուան քանդակազարդերը, որոնցից ձախ կողմինը 11 թերթապսակով է, իսկ աջ կողմինը՝ 13: Նուների կոթամասերի տակ կան արևային խորհրդանշաններ⁶: Կենտրոնի մեծ խաչի թևերի տակ ընկած են երկու վարդյակների պատկերներ, իսկ ավելի ներքևում՝ երկու փոքր խաչ: Աջ կողմի փոքր խաչի ձախ թևի տակ քանդակված է փոքր վարդյակաքանդակի պատկեր: Խաչաթևերը նույնպես մշակված են եղևնածև զարդերով: Թևերի տակի երկու փոքր խաչերը, իրենց ներքևի կոթամասերով միանում են հորինվածքի ծայրամասերին, իսկ հորինվածքը եզրափակում են ոլորահյուս ձևերը: Հետաքրքրական է, որ թևերի տակի խաչերը ոչ թե բաղկացած են եռաբողջ բոջներից, այլ ունեն երկգնդիկավոր մշակումներ: Բոլոր թևերը մշակված են ալյուրով: Շատ բարդ երկրաչափական ձևերի հետ մեկտեղ այս խաչքարի վրա տեղ են գրավում նուան քանդակազարդերը: Ավելի նուրբ են կատարված ամենավերին եզրային մասի զարդերը, որտեղ մեծ-մեծ շրջանների, շեղանկյունների հետ միահյուսված են հյուսածո ձևեր և կարծես ամբողջությամբ են կազմում⁷: Խաչի թևերի միջի եղևնածև մշակումները, եռաբողջ ծայրամասերի հարդարանքը, վարդյակների սիմետրիկ կրկնությունը, փոքր խաչերի բազմազան ձևերով հանդես գալը, եզրազարդերում իրար միացված քառակուսիների առկայությունը բերում են այն եզրակացություն, որ սա միևնույն (Գլաձորյան) դպրոցի վարպետների ստեղծագործություն է:

Թերևս այս կատարյալ խաչքարի քանդակողը եղել է Մոմիկը, որովհետև քանդակման եղանակով այն նմանություններ է ի հայտ բերում Ամաղուի եկեղեցում գտնվող Մոմիկի հյուսածո խաչքարերի հետ:

Գլաձորի խաչքարերի վրա գտնում ենք արմավենու ճյուղի մշակման յոթ օրինակ, խաղողի՝ հինգ, վարդյակի՝ երեք, նուան՝ երկու, եռաթև բողբոջների՝ չորս, երկրաչափական զարդերից խաչերի՝ վեց, անսահմանության զարդաձևով՝ մեկ, հավերժության խորհրդանիշի՝ երկու, երկրագնդի խորհրդանիշի (ներկայացվում է խաչի տակ շրջանագծի միջոցով)՝ մեկ, միագնդիկավոր խաչերի թևերի վրա երևան եկող զարդերի՝ երկու, եռագնդիկավոր զարդաձևերի՝ երկու տարբերակներ և այլն:

Գլաձորում խաչաձևերը գնալով բարդանում են: Խաչքարերի թևերի վրա պատկերված են մեկ կամ եռագնդիկանի մանրամասներ, իսկ որոշ դեպքերում էլ՝ տերևներ, մի դեպքում չափից շատ ոճավորված, մյուսում՝ կլորացած, երրորդում՝ սրտաձև մասերով և այլն: Եվ հենց այս մանր թվացող մանրամասները և նրանց տարբեր մշակումները (ներառյալ եռատերև խաչաթևերի մի խմբի բազմազան տարբերակները) հիմք են տալիս կարծելու, որ սրանք միևնույն դպրոցից դուրս եկած քարգործների ձեռքի արդյունքներ են: Լինելով

⁶ Մեզ թվում է, որ ամբողջական նուները զարդաքանդակներում հանդես են գալիս իբրև պողաբերության խորհրդանիշեր:

⁷ Խաչքարի ներքևի եզրամասը ամբողջովին բալթայվել է: Կարելի է ենթադրել, որ այստեղ նույնպես պետք է կրկնվեին վերին եզրազարդային ձևերը:

միևնույն դպրոցից, ամեն մի քարգործ խաչքարի քանդակների բազմազանություն մեջ դրսևորել է իր անհատականությունը, որ ակներև է խաչքարերի քանդակների ամենափոքր մանրամասների մշակումից: Այս դպրոցը շատ գծերով տարբերվում է Անիի և Վասպուրականի ինքնատիպ դպրոցներից:

Գլաձորի պեղումներից գտնված պատկերաքանդակները և բազմազան խաչքարերը թվագրվում են 12—14-րդ դարերով, իսկ այդ շրջանում իր ծաղկումն է ապրել համանուն համալսարանը:

Г. А. АСМАРЯН

МАТЕРИАЛЫ ИЗ РАСКОПОК ГЛАДЗОРА

(Надгробные памятники и крестные камни)

Резюме

В Вайоцдзоре находился один из крупнейших средневековых просветительных очагов — Гладзорская Высшая школа или университет. Историю этого очага обстоятельно исследовал Г. Овсепян (см. его «Княжество Халбакаянов или Прошянов в истории Армении»).

В 1970 году производились раскопки Гладзорского университета на территории Танаатской церкви. Особую ценность представляют найденные в результате раскопок разукрашенные надгробные памятники. Были обнаружены также более 20 крестных камней (хачкаров), разнообразных своей декоративной отделкой.

В Гладзоре встречаются хачкары старинного образца (с IX века), отличающиеся своей примитивной обработкой. Однако, наряду с ними, выявлены и более совершенствованные, изваянные в XII—XIV веках, в обработке которых есть множество черт, характерных для этой местной школы (например, хачкары с очень крупными гроздьями винограда).

Хачкары Гладзорской искусствоведческой школы находятся в весьма тесной связи с хачкарами, которые встречаются в Вайоцдзоре.

Գ. Ե. ԱՐԵՇՅԱՆ

ՄՈՒՐԱՎՈՒՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՍՏՈՐԻՆ ՇԵՐՏԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐՄԱՆ ՇՈՒՐՁ

Ոչ ոք չէր կարող ենթադրել, որ 1913 թվականին Ե. Կալայանի կողմից կատարված էջմիածնի մոտ գտնվող Շրեշ-բլուրի պեղումներից¹ հայտնաբերված նյութերը պատկանում են այնպիսի մի մշակույթի, որի ուսումնասիրությունը կարող էր լինել այդքան առեղծվածային Մերձավոր Արևելքի հնագիտության մեջ:

1936—1937 թվականներին Ե. Բայբուրթյանի կատարած Շենգավիթի պեղումները իրենց նոր հայտնագործումներով՝ շրջադարձային հանդիսացան Հայաստանի պատմության հնագույն ժամանակաշրջանների (վաղ բրոնզեդարյան մշակույթ) ուսումնասիրության բնագավառում²: Այդ տարիներին, Բայբուրթյանը մի շարք հետազոտական աշխատանքներ է կատարել տարբեր հնավայրերում, այդ թվում 1935 թվականին էջմիածնից հարավ գտնվող Քյուլ-թափա (այժմ՝ Մոխրաբլուր) կոչվող բլուրում, որտեղից հայտնաբերված նյութերը մեծ նմանություն ունենին Շրեշ-բլուրի և մասամբ Շենգավիթի նյութերին:

Խոսելով տվյալ մշակույթի մասին, անհրաժեշտ է պատմագրական մի էքսկուրս կատարել դեպի 1930-ական թվականների վերջը, երբ Բեշտաշենի ամրոցում Բ. Ա. Կուֆտինը հայտնաբերեց Թրիալեթի հնագույն դամբանաբլուրների մշակույթին նախորդող հնագույն շերտը³, որից հայտնաբերված նյութերի մեծամասնությունը նմանվում էր Շենգավիթի և Շրեշ-բլուրի գյուտերին: Բ. Ա. Կուֆտինի մեծագույն ծառայություններից մեկը Բեշտաշենի կիկլոպյան ամրոցի ստորին շերտի և նման հուշարձանների՝ իրականությունը խիստ մոտեցող թվագրումն է մ. թ. ա. 3-րդ հազարամյակով⁴:

¹ Տե՛ս Ե. Կալայան, Դամբանների պեղումներ Խորհրդային Հայաստանում, Երևան, 1931, Վ. 61—62:

² Ե. Բայբուրթյանի Շենգավիթի պեղումների նկարագրությունը տե՛ս Ե. Ա. Байбуртян, Культурный очаг из раскопок Шенгавитского поселения в 1936—1937 гг., «Вестник древней истории», 1938, № 4, էջ 255, Բ. Բ. Пиотровский, Поселения медного века в Армении, «Советская археология» (ստորև СА), XI, 1949, էջ 171—174:

³ Տե՛ս Բ. Ա. Куфтин, Археологические раскопки в Триалети, Тбилиси, 1941, էջ 106—118:

⁴ Տե՛ս նույնի՝ «К вопросу о выявлении памятников культуры шумерской и протохеттской эпохи на территории Грузии», Научная сессия по археологии АН Груз. ССР, Тезисы, Тбилиси, 1947: Հմմ. նույնի՝ «Урартский колумбарий у подошвы Арарата и Куро-Аракский энеолит», Вестник Гос. музея Грузии, т. XII В, 1944, էջ 2:

Մ. թ. ա. 3-րդ հազարամյակի Անդրկովկասի մշակույթը անվանվեց Քուտ-Արաֆայան (Բ. Ա. Կուֆտին) կամ Շենգավիթյան (Ե. Բայբուրթյան), որը մի քանի տարի անց Բ. Բ. Պիոտրովսկու ընդհանրացնող աշխատության մեջ մտավ որպես առանձին բաժին⁵:

Ետպատերազմյան տարիներին Անդրկովկասում պեղվել են այդ մշակույթի մի շարք կարևորագույն հուշարձաններ՝ Նախիջևանի Քյուլ-թեփեն, Ամիրանիս-Գորան, Կվացխելեբին և այլն: Արևմտյան Հայաստանի նույնատիպ հուշարձանները Ուինֆրիդ Լեմբի աշխատության մեջ անվանվեց Արևելյան Անատոլիայի մշակույթ⁶: Այդ հուշարձաններին բնորոշ գծերը ի հայտ են եկել Կարազի (էրզրոմի մոտ), Գյոյ-թեփեի և Յանիկ-թեփեի (Պարսկահայք) պեղումների շնորհիվ⁷:

Այս բոլորը ուրվագծեցին Հայկական լեռնաշխարհի մ. թ. ա. 3-րդ հազարամյակի մշակույթի աշխարհագրական միջուկը⁸:

1944—1946 թվականներին Մ. Մայսլերի, Մ. Շտեկելիսի և Մ. Ավի Յոնահի պեղումները Բեթ-յերահում (Քիրբեթ-էլ-կերակ) տվեցին այդ տիպի հարուստ նյութեր⁹, որոնք Պաղեստինի վաղ բրոնզե դարի մեջ առանձին փուլ համարվեցին: Քիրբեթ-կերակի մշակույթը հաստատագրվել է Պաղեստինի հարավում Հերիբոնի A և F₂ դամբարաններում¹⁰:

Ս. Հուդի պեղումներից հայտնաբերված նյութերը Տաբարա-էլ-Ակրադում (Ասորիք) հիմք հանդիսացան Գ. Չայլդի համար եզրակացնելու, որ մ. թ. ա. 3-րդ հազարամյակում տեղի է ունեցել ցեղերի ներխուժում Անդրկովկասից Պաղեստին¹¹: Նույն հյուսիսային Ասորիքում՝ Թեյլ-էլ-Ջուդեյդեհ հնավայրում կատարված պեղումների ժամանակ Ռ. Բրեյդվուդի կողմից հայտնաբերված թանձր շերտը (Ամուկ—H) իր հարուստ նյութերով սերտորեն կապվում էր մի կողմից՝ Հայկական լեռնաշխարհի մ. թ. ա. 3-րդ հազարամյակի մշակույ-

⁵ Տե՛ս Բ. Բ. Пиотровский, Археология Закавказья, Л., 1949, էջ 32—42:
⁶ Տե՛ս W. Lamb, The culture of North-East Anatolia and its neighbours, „Anatolian Studies“ (ստորև AnSt), h. IV, 1954, էջ 21—32:
⁷ Նախիջևանի, Քյուլ-թեփեի, Ամիրանիս-Գորայի, Կվացխելեբի, Կարազի, Գյոյ-թեփեի և Յանիկ-թեփեի պեղումների և հայտնաբերված նյութերի համառոտ վերլուծությունը տե՛ս К. Х. Кушнарева, Т. Н. Чубинишвили, Древние культуры Южного Кавказа, Л., 1970, էջ 60—102, Т. Чубинишвили, К древней истории Южного Кавказа, Тбилиси, 1971, էջ 55—74, 90—95, 110—111, 129—134, 140—147:
⁸ Տե՛ս B. Maisier, M. Stekelis, M. Avi Yonah, The Excavations at Beth Yerah (Khirbet el Kerak) 1944—46. „Israel Exploration Journal“, 1952, Գ. II, էջ 165—173, 218—229, աղ. 17—19:
⁹ Տե՛ս R. Amiran, Yanik Tepe, Shengavit and the Khirbet Kerak Ware. AnSt, Գ. XV, 1965, էջ 165—167:
¹⁰ Տե՛ս S. Hood, Excavations at Tabara el Akrad, 1948—49. AnSt. Գ. I, 1951, էջ 113—147, Գ. Чайлд, Древнейший Восток в свете новых раскопок (թարգմ. անգլերենից), М., 1956, էջ 331:

թի, մյուս կողմից՝ Քիրբեթ-կերակի նյութերի հետ: Այս վերջին մշակույթը Ռ. Բրեյդվուդի կողմից անվանվեց Կարմրասև կոկված խեցեղենի մշակույթ: (Red-Black Burnished Ware)¹²:

Այսպիսով, Քուռ-Արաքսյան, Շենգավիթյան, Արևելա-Անատոլական, Քիրբեթ-կերակյան անվանումներին ավելացավ ևս մեկը: Բոլոր այս անվանումները պատկանում են միևնույն մշակույթին. «Ես պետք է ընդգծեմ, որ նմանատիպ խեցեղենի ակնհայտ առկայությունը կարելի է կապել էթնիկական տեղաշարժերի հետ: Թվում է, որ այս տիպի խեցեղենի հայրենիքն է Արևելյան Անատոլիան և Անդրկովկասը, կենտրոնական անատոլիական և Սիրիո-Պաղեստինյան տարածքներում»,—իրավացիորեն գրում է Ռ. Ամիրանը¹³:

Նոսելով այս մշակույթի տարածման մասին, չի կարելի սահմանափակվել վերոհիշյալ աշխարհագրական շրջանակներով, եթե նկատի ունենանք, որ սովետական հնագետները պարզել են այդ մշակույթի առկայությունը Դաղըստանի տարածքում¹⁴, իսկ Տ. Յանգի ուսումնասիրությունները Գոդին-թեփեում հասցնում են միանգամայն մի նոր միջավայր՝ կենտրոնական Իրան (Կանգավառ, Քերմանշահի հովտում)¹⁵:

Այսպիսով, այս մշակույթի տարածման ոլորտները կարելի է պարզված համարել: Այնուհանդերձ, մինչև օրս (նյութի սղություն հետևանքով) Քուռ-Արաքսյան մշակույթի ժամանակագրական սահմանների, զարգացման փուլերի, տեղական տարատեսակների մասին չկան միասնական հիմնավոր կարծիքներ (զլխավոր պատճառն այն է, որ քիչ են պեղվել այդ մշակույթը տեսականորեն կրող հուշարձաններ):

Թվում է, այս բացը մասամբ ապագայում լրացնելու են Մոխրաբլուրի հետիճիտ պեղումները, որոնք սկսված են 1970 թվականից Երևանի պետական համալսարանի հնագիտության և աղբյուրագիտության ամբիոնի հնագիտական արշավախմբի կողմից: Մոխրաբլուրում պեղված շերտագրական (2) տեղամասը պարզեց, որ գոյություն ունեցող 10 մետր հաստության շերտը հիմնականում պատկանում է Քուռ-Արաքսյան մշակույթի զարգացման տարբեր հաջորդական փուլերին: Մոխրաբլուրի շերտագրությունը շատ պարզ է և ցայտուն արտահայտված, որը հնարավորություն է ընձևում խոսելու բազմաթիվ շինարարական շերտերի մասին և ընդհանրացնելու նրանց պարունակությունը մի քանի մշակութային շերտերի մեջ: 1971—72 թթ. պեղումները շարու-

¹² Տե՛ս R. J. Braidwood, L. S. Braidwood, Excavations in the Plain of Antioch. I, Chicago. Oriental Institute Publications. 5. LXI, 1960, էջ 358.

¹³ Տե՛ս R. Amiran, Chronological Problems of the Early Bronze Age. Early Bronze I—II: The City of Arad. Early Bronze III: The Khirbet Kerak Ware. „American Journal of Archaeology“ (ստորև AJA), 1968, No. 4, էջ 317—318:

¹⁴ Տե՛ս P. M. Мунчаев, Древнейшая культура Северо-восточного Кавказа, М., 1961, նույնի՝ Кавказ в эпоху энеолита и ранней бронзы (V—III тыс. до н. э.), автореферат, Тбилиси, 1971:

¹⁵ Տե՛ս T. C. T. Young, Godin Tepe, „Iran“, 5. V, 1967, էջ 139—140, R. H. Dyson, Annotations and Corrections of the Relative Chronology of Iran, AJA, 1968, № 4, էջ 309—311:

նակվել են հուշարձանի կենտրոնական մասում (1 տեղամաս), որտեղ ուսումնասիրվել է 3-րդ (վերևից հաշված) շինարարական շերտը և հայտնաբերվել է մ. թ. ա. 3-րդ հազարամյակի տաճարական կառույցը: Այդ տարիներին Մոխրաբլուրի ստորին շերտերը անհրաժեշտ ծավալով չեն պեղվել, ուստի սույն հաղորդման մեջ հրապարակվում են շերտագրական տեղամասում 1970 թ. հայտնաբերված ստորին շերտերի նյութերը¹⁶:

Այս շերտերում եղած ճարտարապետական մնացորդները զգալիորեն լավ են պահպանված (չնայած այն բանին, որ պեղված տարածությունը սահմանափակ է): Շինությունների պատերը կառուցված են խոշոր, հում աղյուսներից, շարված են լայնակի մեկ կամ երկու շարքով: Պեղումների ժամանակ աղյուսները հեշտությամբ զանազանվում են շրջապատող հողից, ինչպես իրենց կարծրությամբ, այնպես էլ դեղնավուն գույնով: Աղյուսները պատրաստված են խմորված կավից և ավազախառն են: Թեպետ շերտագրական տեղամասի պեղված սահմանափակ տարածության (32 քառ մ.) պատճառով չեն ուսումնասիրվել շինարարական ամբողջական համալիրներ, սակայն դատելով առանձին պահպանված պատերի հատվածներից, կարելի է եզրակացնել, որ այդ շերտերի կառույցներում զուգակցվել են կլոր և ուղղանկյուն հատակածեկերը: Որոշ շինարարական շերտերում պատերը պահպանվել են մինչև 80 սմ բարձրության: Բնակարանների հատակին հայտնաբերված են ընկած ծածկի ամբողջական կտորներ (կավով միակողմանի ծածկված եղեգյա շերտեր):

Մոխրաբլուրի ստորին շերտերի ճարտարապետությունը սերտորեն կապված է Նախիջևանի Քյուլ-թեփեի 2-րդ շերտի շինարարական մնացորդների հետ¹⁷:

Մեծ հետաքրքրություն են ներկայացնում Մոխրաբլուրի 5,5—9 մետր խորքից հայտնաբերված նյութական մշակույթի առարկաները, որոնց մեջ հիմնական տեղը պատկանում է խեցեղենին: Եթե նկատի չունենանք մրածածկ, կոպիտ խոհանոցային խեցեղենը, խեցու մակատեսքի առումով Մոխրաբլուրի ստորին շերտերի ամանեղենը բաժանվում է երեք խմբի: Առաջին խումբը սև փայլեցված կամ գույնզգույն փայլեցված խեցեղեն է (սովորաբար խեցու կավը լավ է խմորված, թրծումը բավական հավասար է, խեցին բա-

¹⁶ Ստորին շերտերը (1971 թ. բլուրի շերտերի խորությունը չափելու համար ընդունվեց միասնական պիկետների բարձրություն, որը կազմում է 9,22 մետր: Այսուհետև Մոխրաբլուրի խորությունների վերաբերյալ բոլոր տվյալները տրվում են այդ բարձրությունից), ընդգրկում են 5—5,5 մետրից մինչև 9 մետր խորությամբ պեղված մշակութային նստվածքները, հաշված պիկետների միասնական բարձրությունից: Այս խորությամբ մենք հասել ենք մայր հողին: Վերին շերտերի 1970 թ. նյութերի համառոտ բնութագրումը տրված է այլ հոդվածներում. տե՛ս Գ. Ե. Արեշյան, Մոտացված բնակավայրեր Երասխի ափին, «Երևանի համալսարան», № 11, 1971, էջ 28—31: նույնի՝ Материалы из раскопок Мохраблур 1970 г. „Вестник Ереванского университета“, 1972, № 1, էջ 253—258:

¹⁷ Տե՛ս O. A. Абибуллаев, Остатки жилищ во втором слое поселения Кюль-тепе, около Нахичевани, Труды азербайджанской экспедиции, т. II, «Материалы и исследования по археологии СССР» (ստորև՝ МИА), № 125, М.—Л., 1965, էջ 40—64:

րակ), երկրորդ խումբը՝ վարդագույն խեցեղենը, որի խեցին ավելի կոպիտ է և հաստ, երրորդ խումբը՝ կրեմագույն-դեղնավուն անգորբապատ խեցեղենը:

Առաջին խմբին պատկանող սև փայլեցված խեցին կարող է ունենալ, բայց ոչ միշտ, վարդագույն աստառ: Խեցեղենի վերոհիշյալ տեսակներին յուրահատուկ են ամանեղենի համապատասխան ձևերը: Սև փայլեցված խեցուց են պատրաստված ոչ խոշոր և միջին չափսի կճուճները: Այդ կճուճները լայնաբերան են, ունեն ուղղաձիգ պատերով շուրթ, շուրթից խիստ անշատվող ուռուցիկ իրան և փոքր հատակ: Այս տիպի կճուճների շուրթային մասում կա մեկ կիսաբոլորակ կանթ, իսկ իրանի վերին մասը զարդարված է սիմետրիկ փոսիկավոր նախշերով: Բռնակի հակադիր կողմը զարդարված է զույգ պարույրներով (նկ. 3): Երկու փոսիկներից դուրս ոլորվող այս տիպի խոր ակոսված և փոքրաթիվ պտուտակներով պարույրները որակապես տարբերվում են Մոխրաբլուրի վերին շերտերի խեցեղենի պարույրաձև զարդերից:

Մի այլ խոշոր կաթսայատիպ սև փայլեցված, լայնացող բերանով և մեծ տափակ հատակով երկկանթ կավամանի վրա ավելի ցայտուն է արտահայտված կապը փոսիկավոր նախշի և խորաքանդակ գծերի միջև (նկ. 2), որի հետևանքով է առաջացել Քուռ-Արաքսյան պարույրը: Այդ զարգացումը ավելի ակնառու դարձնելու նպատակով բերենք մի կճուճ (նկ. 10), որը գտնված է Մոխրաբլուրի վերին շերտում և իր զարդաձևերով պատկանում է Երեշ-բլուրի և Քյուլ-թափայի խեցեղենի բնորոշ օրինակների շարքին:

Մոխրաբլուրի ստորին շերտերից հայտնաբերված սև փայլեցված, նուրբ, մանր խեցանոթների թիվը շատ ավելի քիչ է, քան վերին շերտերում: Հարկ է նշել, որ 6,5—7 մետր խորությունից հայտնաբերված խեցեղենի միակ զարդաձևն են նախատիպ հանդիսացող զույգ պարույրները, իսկ ամբողջությամբ վերցրած ստորին շերտերին հատուկ է փոսիկավոր նախշը:

Հայտնաբերված խեցեղենի հետաքրքիր ձևերից են խոշոր ու միջին չափսի քրեղանները, որոնք ունեն լավ արտահայտված դուրս ծալվող շուրթ և դեպի փոքր հատակը կոնաձև նեղացող իրան (նկ. 4): Հրատարակվող քրեղանը զարդարված է երկու փոսիկներով: Գտնված են կատարյալ ձևով պատրաստված սև փայլեցված կափարիչներ, կիսաբոլորակ կանթով (նկ. 1): Մոխրաբլուրի կափարիչներին շատ նման կափարիչներ են գտնվել էլարի դամբարանների պեղումներից¹⁸:

Մոխրաբլուրի ստորին շերտերի սև փայլեցված խեցեղենը մեծ նմանություն է ցուցաբերում Իրանական Ադրբեջանում պեղված Գյոյ-թեփեի K1 շերտից հայտնաբերված նյութերին¹⁹: Սև փայլեցված խեցեղենի խմբին է մոտենում նաև գույնզգույն (սև և վարդագույն) մակերես ունեցող փայլեցված խեցեղենը, որի նմուշներից է ստորև ներկայացվող լայն բերանով և բարձր շուրթով կճուճը (նկ. 5):

18 Տե՛ս Է. Վ. Խանգալյան, Հայկական լեռնաշխարհի մշակույթը մ. թ. ա. 3-րդ հազարամյակում, Երևան, 1967, նկ. 19:

19 Տե՛ս T. Burton Brown, Excavations in Azarbaijan, 1948, London, 1951, էջ 34—

Մոխրաբլուրի ստորին շերտերում վարդագույն խեցեղենի տիրող ձևերից են խոշոր և միջին չափսի ջրամանները: Այդ ջրամաններն ունեն նեղ և բարձր վզիկ, առանց արտահայտված շուրթի, ուռուցիկ իրան և փոքր հատակ: Խեցու այս տիպի համար պարտադիր են երեք կիսաբոլորակ կանթերը, որոնք տեղադրված են լինում կամ իրանի ամենալայն մասում, կամ դրանից ներքև (նկ. 6):

Շերտագրական տեղամասի ստորին շերտերից հայտնաբերված ջրամանները լավագույն զուգահեռներ ունեն Նախիջևանի Քյուլ-թեփեի 2-րդ շերտի նյութերի հետ²⁰: Այս տիպի ջրամանները նախատիպն են հանդիսանում Մոխրաբլուրի վերին շերտերից հայտնի ավելի կատարյալ ջրամանների, որոնց մոտ լավ է արտահայտված շուրթը, գլանաձև վզիկին փոխարինում է վերևում ավելի լայնացող վզիկը, ինչպես նաև փոփոխության են ենթարկվում իրանի պրոպորցիաները: Մոխրաբլուրի շերտագրական տեղամասի վերին շերտերից հայտնի ջրամանների լավագույն զուգահեռներ մենք տեսնում ենք Կվաջիս-լեթիում²¹:

Նկարագրվող շերտերի վարդագույն խեցեղենի հաջորդ խումբն են կազմում գլանաձև պատեր և մեծ, տափակ հատակ ունեցող կաթսայաձև ամանները: Այդ ամաններից մի քանիսը ունեն մեկ կիսաբոլորակ կանթ: Խեցին խիստ կոպիտ է, որը վկայում է, թե այդ կաթսաները, ամենայն հավանակա-նությամբ, ծառայել են խոհանոցային օգտագործման նպատակներին: Վերջին-ներիս լավագույն զուգահեռները նույնպես տեսնում ենք Նախիջևանի Քյուլ-թեփեի պեղումների երկրորդ շերտում²²:

Կրեմագույն անգորբ ունեցող խեցեղենը ներկայանում է լայնացող բերանով երկկանթ կճուճներով: Նմանօրինակ ձևերը ևս հայտնաբերված են Քյուլ-թեփեի երկրորդ շերտում: Նկարագրվող շերտերի պեղումների ժամանակ հայտնաբերված նյութերի մեջ իր ուրույն տեղն է գրավում կրեմագույն սկահակը (նկ. 7): Սկահակը, իրանի մասում նեղանալով, մի փոքր լայնա-նում է ստորին մասում, որի վրա և հենվում է: Իրանի մասում այն ունի բո-լորակ կանթ: Ընդհանուր առմամբ այս տիպի սկահակները շատ խոր չեն լինում: Այստեղ նկարագրված նմուշը «հենակավոր սկահակների» («кубки на поддоне» կամ «вазы для фруктов») յուրահատուկ օրինակ է հանդիսանում: Հենակավոր սկահակները լայն տարածում են ստացել Մեր-է ճանդիսանում: Հենակավոր սկահակները մշակույթների զարգացած շրջանում, ձավոր Արևելքի վաղ հողագործական մշակույթների զարգացած շրջանում, սկսած Դեհկանի սարահարթից²³ մինչև Բալկանները: Հունաստանում գուճա-զարդ հենակավոր սկահակները հայտնի են Օձակիի ժամանակաշրջանից

20 Տե՛ս Օ. Ա. Абибуллаев, նշվ. աշխ., աղ. 2-րդ, նկ. 4:

21 Տե՛ս Ս. Ջոջոբիթցով, Լ. ԸԼՈՅԾԻ, ՄՈՃԵՏԻ, I, 1962, աղ. IV, № № 241, 254:

22 Տե՛ս Օ. Ա. Абибуллаев, նշվ. աշխ. աղ. 3, նկ. 2—3:

23 Տե՛ս օրինակ А. Я. Щетенко, Древнейшие земледельческие культуры Декана, Л., 1968, նկ. 5(8), 6(3), 27:

(նեոլիթ) և էլատեայից²⁴: Այդ սկահակների յուրահատուկ տեսակ հայտնաբերված է հալաֆյան մշակույթի հնավայրերի պեղումներից²⁵:

Նմանօրինակ նյութերը բավական բնորոշ են հարավային Ուբեյդի մշակույթի համար, գտնված Տելլուհի հետախուզահորում²⁶: Միջազեռում Հարավային Ուբեյդի վերջին՝ 4-րդ փուլը ավարտվել է մոտ 3500 թվականին մ. թ. ա.²⁷:

Հենակավոր սկահակների ինքնատիպ ձևերը հատուկ են Մերսինի (Կիլիկիա) 12 A շերտին²⁸: Այդ շերտը այժմ թվագրվում է մ. թ. ա. 4-րդ հազարամյակի երկրորդ կեսով²⁹: Հենակավոր սկահակները Միջազեռում տարածված էին վաղ դինաստիական դարաշրջանում. այդպիսիք գտնվել են Կիլիկիա A դամբարանադաշտում: Հայտնի են նրանք նաև Խառապպայի մշակույթից (մ. թ. ա. 3-րդ հազարամյակ)³⁰:

Մերձավոր Արևելքում հենակավոր սկահակները զգալիորեն բազմազան են, ուստի առայժմ մենք դժվարանում ենք տեսնել նրանց ընդհանրական նախատիպերը: Մոխրաբլուրի հենակավոր սկահակը նույնպես առանձնահատուկ տեղ է զբաղում վերոհիշյալ սահմանափակ զուգահեռների շրջանում: Ներկայումս հենակավոր սկահակները պետք է բնորոշ համարել նաև Քուռ-Արաքսյան մշակույթի համար: Այդ են վկայում Կվադրիսիբի C շերտից³¹ և 1971 թվականին Մոխրաբլուրի վերին շերտերից հայտնաբերված հենակավոր սկահակները: Հայկական լեռնաշխարհում նման առարկաների նախատիպն են հանդիսացել Յանիկ-Թեփեի ու խալկոլիթյան շերտից հայտնաբերված հենակավոր սկահակները³²: Այդ առարկաների հանդես գալը Մերձավոր Արևելքի վաղ հողագործական տարբեր մշակույթներում բացատրվում է ստադիալ ընդհանրություններով:

Խեցեգործության բնորոշ առարկաներից են նաև Մոխրաբլուրի շերտագրական տեղամասի ստորին շերտերից գտնված կավե պայտածե «պատվանդանները»: Այս տիպի պատվանդանները լինում են փոքր և մեծ չափսերի:

²⁴ Տե՛ս В. С. Титов, Неолит Греции, М., 1969, էջ 75—76, նկ. 29, 55(2), 59(2):

²⁵ Տե՛ս А. L. Perkins, The Comparative Archaeology of Early Mesopotamia, „Studies in Ancient Oriental Civilisation“, № 25, 3-րդ հրատ. Chicago, 1959, էջ 18, աղ. 1, նկ. 6:

²⁶ Տե՛ս Н. De Genouillac, Fouilles de Telloh. Vol. I, Epoques présargoniques, Paris, 1934, աղ. II, 5736:

²⁷ Տե՛ս E. Porada, The Relative Chronology of Mesopotamia, Part I, „Chronologies in Old World Archaeology“, ed. by R. W. Ehrich, Chicago, 1965, աղ. 1:

²⁸ Տե՛ս J. Garstang, Prehistoric Mersin. Oxford, 1953, էջ 181—192, նկ. 118 (2, 5, 9), 119 (1, 3, 4, 20):

²⁹ Տե՛ս J. Meilaart, The Chalcolithic and Early Bronze Ages in the Near East and Anatolia, Beirut, 1966, էջ 105—106:

³⁰ Տե՛ս Г. Чайлд, նշվ. աշխ. էջ 250, 273, նկ. 97, 101:

³¹ Տե՛ս А. И. Джавахишвили, Л. И. Глонти, նշվ. աշ. աղ. 4-րդ, նկ. 313:

³² Տե՛ս С. А. Burney, The Excavations at Yanik Tepe, Azerbaijan, 1961, Second Preliminary Report, „Iraq“, vol. XXIV, part 2, 1962, աղ. XLIII, նկ. 5:

Մոխրաբլուրի պայտածե պատվանդանները ունեն երեք ոտիկ և մեկ կիսաբլուրակ կանթ: Այդ պատվանդանների զուգահեռները հայտնի են Արևելի բնակավայրից³³, Նախիջևանի Քյուլ-Թեփե 2-րդ շերտից, Խիզանահատ-Գորայից³⁴ և այլ վայրերից: Միանգամայն նույնատիպ կավե պայտածե պատվանդաններ մեր կողմից գտնված են Ղարա-Թափայի մակերեսից հավաքած նյութերի մեջ: Ղարա-Թափան (գտնվում է Հոկտեմբերյանի շրջանի Մրզաշատ, Նախկին Գեչլու գյուղից հյուսիս-արևելք, 2,5 կմ հեռավորության վրա) ուսումնասիրվել է Ե. Բայբուրթյանի կողմից 1938 թվականին: Ելնելով մեր ուսումնասիրություններից, կարելի է ենթադրել, որ Ղարա-Թափան ժամանակակից է Մոխրաբլուրի ստորին շերտերին (5 մետրից խորը), որտեղից հայտնաբերված պայտածե պատվանդանները և Նախիջևանի Քյուլ-Թեփեի 2-րդ շերտի նույնանման առարկաները, ըստ երևույթին, նախատիպն են հանդիսացել Ամիրանիս-Գորայից, Կարազից, Տիգնիսից հայտնաբերված³⁵ ավելի ուշ ժամանակաշրջանի տարբեր տիպերի պայտածե պատվանդանների:

8 մետր խորության վրա գտնվել է եղջյուրից պատրաստված և հղկված գավազանի մի գլուխ, որն ունի գլանաձև, գայլիկոնված անցք (նկ. 8):

Մեծ հետաքրքրություն է ներկայացնում 2-րդ տեղամասի ստորին շերտերից հայտնաբերված որձաքարե կացինը, փայտե բռնակի ամրացման ակոսիկով (նկ. 9): Այս կացիններն ունեն շատ արխայիկ ձև: Նման «կացինները» լայն տարածում ունեին Ավստրալիայում, որտեղ օգտագործվել են զանազան նպատակներով (կացին, մուրճ և այլն)³⁶: Սակայն շատ ավելի հավանական է, որ Մոխրաբլուրի մուրճ-կացինը օգտագործվել է մետաղամշակման մեջ որպես մուրճ, հանքանյութը մանրացնելու համար: Օրինակ, նման մուրճեր հայտնաբերված են Վադի-Տիմնեյում (Պաղեստին), որը թվագրվում է մ. թ. ա. 4-րդ հազարամյակով³⁷: Հայաստանում նման մուրճերը հայտնի են Շրեշ-բլուրից, Զվարթնոցից, Շենգավիթից, Կողբի աղահանքից, Արմավիրից և այլն³⁸: Հարկ է նշել, որ Մոխրաբլուրի վերին շերտերից ևս հայտնաբերվել է մի ակոսավոր մուրճ, որի լավագույն զուգահեռն է Զվարթնոցի օրինակը: Շերտագրական տեղամասի ստորին շերտերից հայտնաբերված հրապա-

³³ Տե՛ս Э. В. Ханзадян, Раннебронзовое поселение близ с. Аревик, СА, 1969, № 4, նկ. 6(1—7):

³⁴ Տե՛ս О. А. Абибуллаев, նշվ. աշ., աղ. 3-րդ, նկ. 6: К. Х. Кушнарева, Т. Н. Чубинишвили, նշվ. աշխ., նկ. 26 (46):

³⁵ Տե՛ս Т. Чубинишвили, Амиранис Гора, Тбилиси, 1963 (վրացերեն), էջ 95, նկ. 7(2). նույնի՝ К древней истории Южного Кавказа, Тбилиси, 1971, աղ. XXII, նկ. 4—5, Н. Kosay, K. Turfan, Erzurum-Karaz kazisi raporu, „Türk Tarih Kurumu Belleten“ 1959 № 91, էջ 395—396, է. Վ. Խանգաղյան, Հայկական լեռնաշխարհի մշակույթը մ. թ. ա. 3-րդ հազարամյակում, Երևան, 1967, նկ. 18:

³⁶ Տե՛ս В. Р. Кабо, Происхождение и ранняя история аборигенов Австралии, М., 1969, էջ 247—252:

³⁷ Տե՛ս Х. А. Кинк, Восточное Средиземноморье в древнейшую эпоху, М., 1970, էջ 114:

³⁸ Տե՛ս է. Վ. Խանգաղյան, նշվ. աշխ., էջ 46:

րակվող մուրճն իր լավագույն զուգահեռն է գտնում հանձին Քյուլ-թեփե 2-րդ³⁹ շերտից գտնվածի: Հետաքրքիր է նշել, որ այդ տիպի գործիքները մետաղամշակման մեջ օգտագործվել են շատ երկար ժամանակ: Այդ է վկայում նման մուրճի գյուտը Կարմիր բլուրի մինչուրարտական ժամանակաշրջանի համալիրից⁴⁰:

Հայտնաբերված են բազմաթիվ նուրբ մշակված տուֆի սալիկներ:

Վերոհիշյալ նյութերը մեծ հետաքրքրություն են ներկայացնում ինչպես իրենց ինքնատիպությամբ, այնպես էլ զգալի զուգահեռների առկայությամբ:

Այսպիսով, Մոխրաբլուրի շերտագրական տեղամասի պեղումներից բացման տվյալների հիման վրա կարելի է եզրակացնել, որ Մոխրաբլուրի 6 մետրից խոր գտնվող շերտերը ժամանակագրական տեսակետից շատ մոտ են Քյուլ-թեփե 2-րդի՝ 9—13 մետր խորության վրա գտնվող շինարարական շերտերին: Այս եզրակացությունը հիմք է տալիս պնդելու, որ Քյուլ-թեփեի 9—13 մետր խորության շերտերի նյութերը նախորդում են ճակատային խորաքանդակ օրնամենտալ կոմպոզիցիաներով զարդարված խեցեղենին, քանի որ Մոխրաբլուրում Քյուլ-թեփեի երկրորդ շերտի տիպի նյութերը հայտնաբերված են անմիջապես Շրեշ-բլուրյան տիպի դասական խեցեղենով հարուստ շերտերի տակ: Այս հարցը ավելի հանգամանորեն լուսաբանվելու է Մոխրաբլուրի շերտագրությանը նվիրված աշխատանքի մեջ:

Ելնելով նախնական տվյալներից, կարելի է ենթադրել, որ Մոխրաբլուրի ստորին շերտերի, նախիջևանի Քյուլ-թեփեի 2-րդ շերտի 9—13 մետր խորությանից հայտնաբերված նյութերը և նրանց ժամանակակից հուշարձանները արտացոլում են Քուռ-Արաքսյան մշակույթի զարգացման հնագույն ձևավորված փուլը, որը նախորդել է ոչ միայն Շրեշ-բլուրյան փուլին, այլև Ամիրանիս-Գորայի 2-րդ շերտի նյութերին:

Մոխրաբլուրի բացարձակ թվագրման համար անհրաժեշտ է հիշատակել Քյուլ-թեփեի 2-րդ շերտի ուղիղ-ածխածնային անալիզը (ՊԵ—163), որը հավասար է 2930 ± 90 տարի մ. թ. ա.: Քյուլ-թեփեի երկրորդ շերտի նյութերի մեծամասնությունը, որը համեմատվում է Մոխրաբլուրի ստորին շերտերի նյութերի հետ, հայտնաբերվել է ավելի խորքում, քան Քյուլ-թեփեի 8,5 մ. խորությանից հանված ածուխը: Հետևաբար, նրանք պետք է թվագրվեն այդ տարիքին նախորդող ժամանակաշրջանով: Դրան չի հակասում Գյուլ-թեփե K_3 շերտի թվագրությունը, որը հավասար է 2574 ± 146 (Ք—199) տարի մ. թ. ա., եթե նկատի ունենանք, որ Մոխրաբլուրի ստորին շերտերի նյութերը կապված են ոչ թե K_3 շերտի հետ, այլ՝ K_1 -ի և մասամբ՝ K_2 -ի:

Այսպիսով, Մոխրաբլուրի բնակավայրի հիմնադրումը (հնագույն շինարարական շերտեր) անհրաժեշտ է թվագրել մ. թ. ա. 4-րդ և 3-րդ հազարամյակների սահմանագլխով, իսկ վերին շերտերի թվագրման համար մեծ

հետաքրքրություն են ներկայացնում վերջերս Պուլուրում (Արածանիի ափին) կատարված պեղումները. այստեղի հնագույն շինարարական շերտերը (9—11) տվել են խորաքանդակ զարդարանքով սև փայլեցված խեցեղեն, որն այնքան բնորոշ է Շրեշ-բլուրին և Մոխրաբլուրի վերին շերտերին: Պուլուրում ժամանակագրապես 9-րդ շերտին հաջորդող 8-րդ շինարարական շերտի ուղիղ-ածխածնային թվագրումը հավասար է 2470 ± 150 տարի մ. թ. ա.⁴¹:

Ելնելով մի շարք նախնական տվյալներից, կարելի է ենթադրել, որ Մոխրաբլուրի վերին շերտերը թվագրվում են ոչ ուշ քան մ. թ. ա. 24-րդ դարով:

Մոխրաբլուրի հնագիտական պեղումները շարունակվում են, որի արդյունքները լույս կսփռեն Անդրկովկասի հնագիտության մի շարք սովորույթ հարցերի վրա:

Г. Е. АРЕШЯН

К ХАРАКТЕРИСТИКЕ НИЖНИХ СЛОЕВ МОХРАБЛУРСКОГО ПОСЕЛЕНИЯ

(Резюме)

Важным археологическим памятником, относящимся к последнему периоду раннеземледельческой культуры Армянского нагорья, является Мохраблур, расположенный в Араратской долине в четырех километрах к югу от г. Эчмиадзина, на берегу древнего, ныне сухого, русла реки Касак. Ранее в специальной литературе этот памятник неоднократно упоминался под именем Эчмиадзинской Кюль-тапы. Систематические раскопки Мохраблурского поселения, остатки которого дошли до наших дней в виде «жилого холма» — телля, занимающего площадь более 3,5 га, были начаты в 1970 году экспедицией Ереванского государственного университета. Раскопки продолжаются, но уже в 1970 году стратиграфический раскоп, заложенный в западной части холма, выявил последовательность культурных напластований Мохраблур. Материк был достигнут на глубине около 10 м от вершины холма.

В сообщении кратко рассмотрены некоторые вопросы стратиграфии и находки из нижних строительных горизонтов, вскрытых на сравнительно небольшой площади в стратиграфическом раскопе. Установлено, что нижний слой Мохраблур, содержащий в себе остатки нескольких строительных периодов, в существенных чертах аналогичен второму слою Нахичеванского Кюль-тепе. Этот факт позволяет определить стратиграфическое и хронологическое взаимоотношения кера-

⁴¹ Անձնական հաղորդում Զ. Մելլաբարտից:

³⁹ Տե՛ս Օ. Ա. Աբիбуллаև, նշվ. աշխ., աղ. 1-ին, նկ. 86:

⁴⁰ Տե՛ս Ա. Ա. Մարտիրոսյան, Армения в эпоху бронзы и раннего железа, Ереван, 964, էջ 184, աղ. XVII:

мического комплекса Кюль-тепе II и керамики с лицевыми рельефно-орнаментальными композициями «типа Шреш-блур» и утверждать, что кюльтепинский комплекс предшествует шрешблурскому, так как нижние слои Мохраблуря перекрыты мощными культурными напластованиями, для которых характерна керамика «типа Шреш-блур». Никаких остатков, предшествующих т. н. «куро-араксской» культуре, в нижних слоях Мохраблуря не зафиксировано.

Р. А. БУБУШЯН

НЕКОТОРЫЕ ПРЕДМЕТЫ УКРАШЕНИЙ ЭПОХИ ПОЗДНЕЙ БРОНЗЫ АРМЕНИИ

Предметы украшения составляют существенную часть находок в могильниках Армении эпохи поздней бронзы. Они представляют большую часть дошедших до нас убранных и могут быть разделены на две основные категории: 1) украшения одежды (пуговицы, нашивки, позднее фибулы и т. д.) и 2) самостоятельные украшения (браслеты, подвески, гривны, ожерелья, булавки и пр.).

В могильниках Армении обнаружены десятки всевозможных художественно оформленных пуговиц. Основная часть их изготовлена из бронзы и имеет сферондальную форму. С внутренней стороны к ним прикреплены одно или несколько ушек. Крупные экземпляры этих художественных пуговиц, как например обнаруженные в погребениях Артика, как правило являются выпукло-вогнутыми. Эти пуговицы украшены клиновидным орнаментом (рис. 1, 2). Более мелкие пуговицы бывают как выпукло-вогнутыми, так и массивными. Вторая форма пуговиц представлена коническими экземплярами. Помимо бронзовых пуговиц найдены сурьмяные, оловянные и из других металлов.

Бронзовые нашивки представлены различными вариантами. Из раскопок Лчашенских курганов известны плоские, квадратные ажурные бляхи с изображениями свастик. Плоские ажурные бляхи получили широкое распространение в Закавказье значительно позднее—в античную эпоху.

Основным видом украшений были браслеты и бусы. По форме материала, из которого изготовлены бронзовые браслеты, они делятся на пластинчатые и проволочные круглого сечения. И те и другие бывают точками и легкими или же массивными. Браслеты круглого сечения как правило гладкие и незначительно орнаментированы. Так же и тонкие пластинчатые браслеты, часто имеющие закрученные концы, небрежно украшены гравировкой или насечками. С точки зрения искусства наиболее совершенным массивные широкие пластинчатые браслеты с разомкнутыми концами. Они отливались каждый в отдельности в литейной форме и имели разнообразные рельефные украшения. Хотя подобные браслеты пока что немногочисленны, они безусловно яв-

ляются характернейшими предметами позднебронзового периода. Несколько экземпляров их происходит из Арктикского могильника, в частности найдены в погребении № 89 (рис. 3). Аналогичный браслет найден недалеко от Артика в селении Арич (бывший Кпчах)¹. Еще один подобный предмет недавно обнаружен в местности Кирза в Ереване². К таким же изделиям относится и массивный браслет, обнаруженный Е. Лалаяном еще при раскопках на побережье оз. Севан. Он отличается от предшествующих отсутствием рельефной орнаментики и украшен только лишь выступающими валиками. Как отмечал Е. Лалаян, эти браслеты очень редки³.

Описанные браслеты обнаружены в Арктикских погребениях второй группы, которая в настоящее время датируется Т. С. Хачатряном XII—XI вв. до н. э.⁴ На наш взгляд, материал опубликованных трех погребений с предметами этого типа следует отнести к наиболее раннему инвентарю второй группы Арктикских погребений. Таким образом рельефно орнаментированные плоские массивные браслеты можно рассматривать как датирующие для XII в. до н. э.

Однако наиболее часто среди браслетов эпохи поздней бронзы встречаются проволочные браслеты с разомкнутыми или заходящими друг на друга концами, которые несмотря на большое количество являются второстепенным объектом для изучения.

Шейные гривны из перевитой бронзовой проволоки, хорошо известные нам по некрополям эпохи широкого освоения железа (VII—VI вв. до н. э.) и обнаруженные еще Ж. де Морганом в Ахтале, Уч-Килисе, Шейтан-даге, Мусиери⁵, а позднее в Хртаноце⁶ и других местах, практически не известны в памятниках Армении эпохи поздней бронзы.

В отличие от гривны кольцевидные височные кольца с змеевидным перехватом, широко распространенные в начале I тысячелетия до н. э., были уже известны и в эпоху поздней бронзы. Эти височные кольца изготавливались из проволоки круглого сечения. Пара этих пред-

¹ Материал хранится в ГМИА, инв. № 1271.

² См. С. Амирян, Новая археологическая находка на территории Еревана (на арм. яз.). ИФЖ АН Арм. ССР, 1963 г., № 3, стр. 274, табл. II, рис. 12.

³ См. Е. Лалаян, Раскопки могильников в Советской Армении (на арм. яз.), стр. 177, рис. 149.

⁴ См. Т. С. Хачатрян, Арктикский могильник и его хронология. Тезисы докладов, посвященных итогам полевых археологических исследований в 1970 году в СССР, Тбилиси, 1971, стр. 54.

⁵ См. J. De Morgan, Mission scientifique au Caucase. Paris, 1889, т. I, стр. 105, рис. 68.

⁶ См. А. А. Мартиросян, Раскопки в Головине. табл. VII.

метов найдена в Арктикском погребении № 67. Нам кажется интересным тот факт, что если в эпоху поздней бронзы на территории Арагацотна бытовали небольшие височные кольца, то в Нагорном Карабахе они достигали очень крупного диаметра. Как было отмечено выше, характерной формой оружия и орудий, найденных на территории Грузии, Армении и Азербайджана, являются секиры Закавказского типа, размеры которых уменьшаются с запада на восток, тогда как в размерах височных колец мы сталкиваемся с обратным явлением.

Другим распространенным предметом головных украшений были диадемы. Они представляют собой бронзовую, реже серебряную тонкую, сравнительно широкую пластину, которая иногда украшалась точечным орнаментом.

К невыразительным предметам украшения относятся многочисленные, повсеместно находимые бронзовые кольца. Эти кольца, в большинстве своем гладкие без орнамента, изготавливались, подобно браслетам нештучного литья, из круглой в сечении проволоки или из плоской бронзовой пластины.

В погребениях позднебронзовой эпохи в значительном количестве обнаружены также серьги. Зачастую они изготовлены из тонкой бронзовой проволоки. В Артике же обнаружены серьги в виде архаичных завитков. Иногда серьги украшались дополнительными элементами—подвесными кольцами или раковинами⁷. Как в эту эпоху, так и позднее серьги украшались отдельными бусинами, как об этом свидетельствуют находки из Мусиери⁸.

С XIII—XII вв. до н. э. существенной составной частью одежды и украшения становятся булавки с художественно выполненными головками. Отдельные булавки, как предметы роскоши, дошли до нас еще от эпохи средней бронзы.

Так, среди золотого инвентаря курганов Триалети мы видим булавки с золотыми шаровидными головками, украшенные зернью и вставленными полудрагоценными камнями⁹. В эпоху поздней бронзы наблюдается большое разнообразие в оформлении булавок. Они становятся весьма массовыми. Как можно судить по находкам из Артика, головки этих булавок украшаются круговой резьбой в виде серии кружков или зигзаговидных линий или же четырех крестообразно расположенных спиралевидных лопастей (рис. 4). Оригинальны в этом отношении булавки из раскопок Е. А. Лалаяна. На вершине одной из них представлено в виде человеческой головы (рис. 5), другая же

⁷ См. Е. Лалаян, Раскопки могильников в Советской Армении, стр. 174.

⁸ См. I. De Morgan, Mission scientifique au Caucase, стр. 104, рис. 65.

⁹ См. Б. А. Куфтин, Археологические раскопки в Триалети, табл. XCVII.

имеет очень изящную и крупную головку в виде лиры, украшенную точечным орнаментом¹⁰.

Не менее своеобразная булавка происходит из погребения раскопанного в Лусакерте эпохи перехода от бронзы к железу. Головка ее оформлена в виде креста, ось которого параллельна штырю булавки, а его концы украшены дисками¹¹ (рис. 6). В эпоху раннего железа в памятниках Северной Армении получили распространение стандартные серии булавок с призматическими, коническими и пирамидальными головками. Среди находок Ж. де Моргана в Мусиери обнаружена булавка, головка которой украшена фигуркой птицы, по-видимому утки, со сложенными крыльями¹². Бронзовые фигурки птиц являлись характерными для другой группы украшений-подвесок, к крайне сжатой характеристике которых мы и переходим.

Среди многочисленных и не поддающихся точной классификации подвесок рассматриваемой эпохи выделяются две характерные группы: подвески ажурного литья и медальоны.

Среди ажурных подвесок в большом количестве обнаружены шаровидные, а также грушевидные и конусовидные экземпляры с треугольными или иной формы прорезями. Таковые в большом количестве обнаружены в бассейне оз. Севан, в Мингечауре¹³, Кармир-берде и других местах. Способ их подвешивания стал частично ясен после находок в склепах Артика, где рассматриваемые подвески иногда прикреплены парами к общей основе бронзовыми цепочками¹⁴. На цепочках также укреплялись ажурные подвески в виде фигурок птиц. Такие фигурки вместе с прикрепленными к ним цепочками стали известны уже из раскопок А. А. Ивановского¹⁵. Позднее подобные фигурки птиц были обнаружены в бассейне оз. Севан, Зангезуре¹⁶, а также в Артике. От ажурных подвесок принципиально отличаются медальоны. Если первые изготовлялись путем литья и в дальнейшем не украшались, то вторые украшались гравировкой и выпуклой чеканкой. Известны также ажурные и штампованные подвески. Цельноотлитые медальоны—амулеты, отлитые по восковым моделям, в значительной час-

¹⁰ См. Е. Лалаян, Раскопки могильников в Советской Армении, стр. 181, рис. 156—159.

¹¹ См. Л. Карапетян, Новый памятник эпохи бронзы и раннего железа в бассейне реки Раздан (на арм. яз.), ИФЖ АН Арм. ССР, 1969, № 4, стр. 282, табл. 1, рис. 12.

¹² См. I. De Morgan, Mission scientifique au Caucase. Paris, 1889, стр. 118—123, рис. 98.

¹³ См. Г. М. Асланов, Р. М. Ваидов, Г. И. Ионе. Древний Мингечаур, табл. XVIII.

¹⁴ См. Т. С. Хачатрян, Материальная культура древнего Артика, стр. 75—77, табл. 6.

¹⁵ См. А. А. Ивановский, По Закавказью, МАК, в. VI, М., 1911, табл. IX.

¹⁶ См. Е. Лалаян, Раскопки могильников..., стр. 183, рис. 163, 164.

ти украшены крестовидными фигурами и свастиками. Они обнаружены в Туманяне, в Редкин-Лагере, Джархече, Кировакане. С. А. Есаян вполне справедливо связывает их с культом Солнца¹⁷.

Следующей важнейшей группой украшений, повсеместно находимых в древних могильниках, являются бусы, изготовленные из трех основных материалов: камня, пасты и металла. Среди огромного числа их особенно выделяются бусы из полудрагоценных камней—сердолика и агата. Классические формы сердоликовых бус представлены миндалевидными ограниченными о бочонковидными экземплярами. Достаточно вспомнить великолепные миндалевидные бусы из Лчашенских курганов или из катакомбы № 53 Арктикского некрополя, где они найдены вместе с пастовой хурритской цилиндрической печатью. Хорошо известная и типичная бусина была найдена на Ходжалинском курганном могильнике и несла на себе гравированное клинописью имя ассирийского царя Ададнирари¹⁸.

Изготовление каменных бус в Закавказье в конце II—начале I тысячелетия до н. э. стояло на очень высоком техническом уровне. Интересующегося этим вопросом по причине нашего краткого изложения отсылаем к трудам Г. Г. Леммлейна о каменных бусах Закавказья¹⁹. По мнению Г. Г. Леммлейна сверление бус производилось на маленьких ручных станках лучкового типа, причем при сверлении каменных бус оно было односторонним, а шлифовка по всем данным производилась с помощью кварцевых песков и наждачного камня.

Пастовые бусы XIV—XII вв. до н. э. представлены большим разнообразием форм. Среди них наименее выразительны шаровидные бусы из голубой, зеленой и белой пасты. Они обнаружены в позднебронзовых погребениях Лчашена, Артика, Гехарота и Кармир-берда. В значительном числе встречены цилиндрические бусы с гравированным сетчатым орнаментом. Большой интерес представляют трубчатые многочисленные пастовые бусы-разделители, которые изготовлялись из нескольких параллельно соединенных трубочек.

¹⁷ См. С. А. Есаян, Амулеты, связанные с культом солнца из Армении, СА, 1968 г., № 2, стр. 259—260.

¹⁸ См. И. И. Мещанинов, К вопросу об ассирийской бусине из Ходжалинского могильника. «Изв. Об-ва обслед. и изучен. Азерб.», в. 3, Баку, 1926, а также К. Х. Кушнарева, Ходжалинский могильник. Историко-филологический журнал АН Арм. ССР, 1970 г., № 3, стр. 121.

¹⁹ См. Г. Г. Леммлейн, Техника сверления каменных бус из раскопок на Кавказе. КСИИМК, в. XVIII, 1947, стр. 22—30. Его же, Каменные бусы Самтаврского некрополя. Материалы по истории Грузии и Кавказа, в. 29, Тбилиси, 1951, стр. 183—232. Его же, Основные типы каменных бус Мингечаурского некрополя. «ДАН Азерб. ССР», т. V, № 2, 1949 г., стр. 83—88.

Наконец, в значительном числе представлены металлические бусы. В простейшем виде они представлены трубчатыми рублеными цилиндрическими бусами, тогда как самые совершенные и высокохудожественные экземпляры, как например найденные в курганах Лчашена, изготавливались с высоким мастерством из золота²⁰. Среди металлических бус Лчашена особенно выделяются художественным вкусом цилиндрические экземпляры с парными спиральными завитками, выходящими из концов бусины. Эти находки характерны для ювелирного дела Древнего Востока. Так, они обнаружены в раннеассирийских могилах XIV в. до н. э. в Мари²¹.

Разнообразные предметы украшений несут на себе совершенные образцы орнаментального искусства. Важнейшим мотивом, представленным на пуговицах и булавах Артика, бусах Толорса и Лчашена, является двойная спираль, распространенная на предметах искусства Древнего Востока. Булавки с парноспиральными головками имели широкое распространение в древних культурах Ирана. Так они обнаружены в слоях Сиалк IV²², а также в Гиссаре II В и III А²³. Мотив парной спирали является традиционным и для Армянского нагорья. С начала III тысячелетия до н. э. они являлись важнейшим элементом керамической орнаментации т. н. «куро-арксской» культуры. Особенно хорошо парные спирали представлены в материалах из Мохраблур и отчасти Шреш-блур и других памятников²⁴.

Вышеприведенная характеристика предметов украшения, естественно, не исчерпывает всего многообразия данной темы. Однако наш обзор был бы неполон если бы мы не остановились на других предметах убранства, не относящихся к украшениям. Среди таковых следует прежде всего отметить конскую упряжь, важнейшим археологическим типом которой являются удила. Основной вид удила, распространенных в то время были удила с дисковидными псалиями. Они обнаружены в бассейне оз. Севан при раскопках Е. Лалаяна в Лчашене, Артике, Квемо-Сасирети, причем Артикские из погребения № 79 имеют различные псалии. Один из псалиев имеет форму креста, а другой—розетки. Позднее форма удила меняется. В эпоху раннего железа они приобре-

²⁰ См. А. О. Мнацаканян, Раскопки курганов на побережье оз. Севан в 1956 г. стр. 148, 152, рис. 4, 11.

²¹ См. А. Parrot, Mari, une ville perdue. Paris, 1945, рис. 39.

²² См. D. E. McCown, The Comparative Stratigraphy of Early Iran. Studies in Ancient Oriental Civilization, № 23, Chicago, 1942, стр. 52, рис. 15.

²³ См. E. F. Schmidt, Excavations at Tepe Hissar, Damghan, Philadelphia, 1937 табл. XXIX № Н 4856.

²⁴ См. Э. Ханзадян, Керамика Шреш-блур и Кюль-тапы и ее искусство (на арм. яз.). ИФЖ АН Арм. ССР, 1964 г., № 3, стр. 222—226, табл. I, рис. 7, табл. II, рис. 7.

тают на концах массивные кольца, а дисковидные псалии заменяются стержневыми с отверстиями. Известны и роговые псалии. Один из них обнаружен при раскопках Е. Лалаяна. Он покрыт резьбой. Автор ошибочно принимал его за свирель²⁵.

Наши сведения о металлической декорировке эпохи поздней бронзы крайне отрывочны. В Лчашене обнаружены бронзовые детали трона, а боевые колесницы и, в частности их дышла, украшались литыми фигурами зверей, моделями боевых колесниц и пр. Эти предметы должны привлечь пристальное внимание историка древнего искусства и выходят за рамки предлагаемого исследования. На то, каким благородным материалом являются эти находки, указывает статья В. Б. Блэк²⁶.

Предметы украшений являются важным объектом археологического изучения в комплексе материальной культуры Армении эпохи поздней бронзы.

Ռ. Հ. ԲՈՒԲՈՒՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՈՒՇ ԲՐՈՆԶԵՎԱՐՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՁԱՆԻ ՉԱՐԴԱՐԱՆՔՆԵՐԻ ՄԻ ՔԱՆԻ ՏԵՍԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ա մ փ ո փ ու մ

Հողվածում քննության առարկա են դարձել Հայաստանի ուշ բրոնզե դարի զարդարանքների հիմնական ձևերը: Վերոհիշյալ ժամանակաշրջանում դրանք բաժանվում են երկու հիմնական խմբի՝ 1) զգեստի զարդարանքների և 2) ինքնուրույն զարդարանքների:

Հանգամանորեն ուսումնասիրության են ենթարկվել զարդարուն կոճակները, ապարանջանները, հուլունքները, շքասեղները և այլն: Ընդգծված է միաձույլ, զանգվածային, պարույրներով զարդարված ապարանջանների թվագրող նշանակությունը (մ. թ. ա. 12-րդ դար): Նկարագրված են նաև զարդարանքին պատկանող առանձին արձանիկները, գեղարվեստական սանձերը, որոնց կրած պատկերները ունեցել են պաշտամունքային նշանակություն:

²⁵ См. Е. Лалаян, Раскопки могильников в Советской Армении, стр. 121, рис. 30.

²⁶ См. В. Б. Блэк, Памятники декоративно-прикладного искусства из Лчашена, ИФЖ АН Арм. ССР, 1968 г., № 3, стр. 249—256.

Ռ. Ա. ՆԱՀԱՊԵՏՅԱՆ

ԱՂՁՆԻՔ

(Պատմա-ազգագրական ակնարկ)

Աղձնիքը հայ ժողովրդի կազմավորման հնագույն օջախներից մեկն է: Գիտական զբաղմունքների մեջ ընդունված է այն տեսակետը, թե ուրարտական Alzini երկիրը համապատասխանում է ասորեստանյան արձանագրությունների Alzi, խեթական սկզբնաղբյուրների՝ Alše (Alza) և հին հայկական Աղձնիք ձևերին¹: Այն բազմիցս է հիշատակվել հայ և օտար մատենագիրների երկերում: Հայկական սկզբնաղբյուրներում վկայակոչվում է որպես «Տունն Աղձնեաց»², «Երկիրն Աղձնեաց»³, «Աշխարհն Աղձնեաց»⁴, «Կողմն Ասորեստանի»⁵, իսկ օտար սկզբնաղբյուրներում՝ որպես Արգանենե (Արգանենի) կամ Արգանենե (Արգանենի)⁶: Ամիանոս Մարկելինոսի մոտ հիշատակվում է Arzanena, Arzianena, արաբական աղբյուրներում՝ Arzan: Երբեմն

¹ Տե՛ս И. М. Дьяконов, Ассиро-вавилонские источники по истории Урарту (=АВИИУ), ВДИ, 1951, №№ 2—4 (1, прим. 18; 3 и прим. 6; 4—7, 10 (I, 62 сл.; II, 89 сл.); 11; 12; 21 и прим. 4; 23, прим. 61; 28 (35 сл.) и прим. 1; 40 (д, е); 50 (4); /В2/, Г. А. Меликишвили, Урартские клинообразные надписи, ВДИ, 1971, № 3, стр. 235, Г. А. Меликишвили, Наири—Урарту, Тбилиси, 1954, стр. 89, 90, Г. А. Меликишвили, Урартские клинообразные надписи, М., 1960, стр. 417, (հմմտ. Գր. А. Халатян, О некоторых географических названиях Древней Армении в связи с данными Ванских надписей (6. м. и г.). В. К. Хачатрян, Восточные провинции Хетской империи, Ереван, 1971, стр. 110, 114, 115, 119, 143. АВИИУ, № 23, прим. 61. Խ. Սամուելյան, Հին Հայաստանի կուլտուրան, Երևան, 1941, հ. 2, էջ 7, Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, Երևան, 1940, հ. 1, էջ 192: «Աղձնիք» անունը Հ. Հյուբշմանը հին բնիկ երկրանուն է համարել: Նա գրում է, որ «Աղձնիք միշտ նահանգի անուն է, որովհետև Աղձնիք անունը, որ հոգնակի միայն գործածված կա, երկիր կցուցանե և Աղձնի եղակին շունի, ուստի դեթ պատմական ժամանակներուն մեջ կերևա, թե ժողովրդի մը անուն համարված չէ և կրնան բնիկ երկրանուն համարիլ»: Հ. Հյուբշման, Հին հայոց տեղվո անունները, Վիեննա, 1907, էջ 74—76: Համաձայն մի ուղեգրության հեղինակի, Աղձնիք անունը ծագել է Արգև և Քեղ գավառներում գտնվող աղի հանքերից, որը, անշուշտ, սխալ է (տե՛ս Պետրոս Կալիսկեցի, Ասիական ճանապարհորդությունից ի հայրենիս, Կ. Պոլիս, 1881, էջ 63):

² Փ. Բուզանդ, Պատմություն հայոց, Թիֆլիս, 1913, էջ 33, Թ. Արժրունի, Պատմություն տան Արժրունեաց, Թիֆլիս, 1917, էջ 484:

³ Փ. Բուզանդ, Պատմություն հայոց, էջք 316, 331:

⁴ Նոյն, Վասն Վարդանյայ և հայոց պատերազմին, Երևան, 1957, էջք 10, 51, 93, 132, Հովհաննես Գրախանյանի, Պատմություն հայոց, Թիֆլիս, 1912, էջք 18, 26, 34, 106:

⁵ Տե՛ս Ագաբանգեղոս, Պատմություն հայոց, աշխատասիրությունը Գ. Տեր-Մկրտչեան և Ստ. Կանայեանց, Տիֆլիս, 1909, էջ 460, Մ. Խոբեկանցի, Պատմություն հայոց, աշխատասիրությունը Մ. Աբեղեան և Ս. Հարությունեան, Տիֆլիս, 1913, էջք 70, 116, 263:

⁶ Տե՛ս Պրոկոպիոս Կեսարացի, Թարգմանությունը բնագրից Հրաչ Բարթիկյանի (Բյուզանդական աղբյուրներ, Հ. Ա.), Երևան, 1967, էջք 19, 115, 192:

Աղձնիքը հիշատակվում է նաև Արձն կամ Արգև՝ իր առաջին և նշանավոր գավառի անվամբ⁷:

«Աշխարհացոյց»-ում երրորդ տեղը հատկացված է Աղձնիք նահանգի նկարագրությանը. «Երրորդ աշխարհ Աղձնիք յեկից կայ Միջագետաց եւ հիւսիսեաւ առ Դիղաթով, ունի գաւառս տասն՝ զնփոետ, զԱղձն, ընդ որոց մէջն իջանէ գետն Քաղիթթ, զոր Շիթիթմա կոչեն Տաճիկք, այսինքն՝ արինարբու, յետ որոյ Քաղ գաւառ, եւ ի լերինն ունի (գաւառս)՝ զԿեթիկ, զՏաւրիկ, զԱղնուացձոր, զԵրխեթս, զԳեղ(իս), զՍալնաձոր, զՍանասուն»⁸: Ակադ. Մ. Տ. Երեմյանը Աղձնիքի տասը գավառների շարքում գետեղում է նաև «Անգնդատուն» գավառը, որը այլ ուսումնասիրողների մոտ համարվում է Մոսիքի գավառներից մեկը⁹:

Աղձնիքը գտնվում է Չորրորդ Հայքի, Տուրուբերանի, Մոկքի և Միջագետքի միջև: Նրա սահմանները կազմում են հյուսիսում՝ Հայկական Տավրոս լեռները, արևելքում՝ Բաղեշ և Արևելյան Տիգրիս գետերի ջրբաժան լեռնաշղթաները, հարավում՝ Արևմտյան Տիգրիս գետը, իսկ արևմուտքում՝ Տիգրիս գետի ակունքները համարվող լեռնային աղբյուրները: Աղձնիքի հյուսիսային մասը (Հայկական Տավրոսի բարձրագույն շրջանները) ունի խստաշունչ բնակլիմայական պայմաններ, իսկ հարավը՝ հարթավայրային մասը՝ օժտված է տաք բնակլիմայական պայմաններով¹⁰:

Աղձնիքը պատված է հարուստ ջրային ցանցով: Հայկական Տավրոսից սկսվում են բազմաթիվ գետեր, որոնք կազմում են Մոկք լեռնային լճից (այժմ՝ Գյուլջուկ) սկզբնավորվող Արևմտյան Տիգրիսի վտակները: Դրանցից առավել նշանավորներն են Քաղիթթը, որը կոչվում էր նաև Շիթիթմա (այժմ՝ Բաթման-սու) և Խարզանը կամ Արզանը: Իսկ Կեցան և Բաղեշ (Բիթլիս-սու) գետերը թափվում են հարավ-արևելյան սահմանով ձգվող Արևելյան Տիգրիսի (Ջերմ) մեջ:

Աղձնիքը Մեծ Հայքի առավել հարուստ նահանգներից մեկն էր: Հին ժամանակներից ի վեր այստեղ հիշատակվում են նավթի, երկաթի և կապարի հանքավայրեր¹¹: Հին հայկական սկզբնաղբյուրներում հիշատակվում է, որ

⁷ Ստեփան Կանայանց, Անհատ գավառներ հին Հայաստանի, Վաղարշապատ, 1914, էջ 17—28, Դուխա Իճիճյան, Ստորագրություն հին Հայաստանից, Վենետիկ, 1822, էջ 62,

Saint-Martin, Mémoires historiques et géographiques sur l'Arménie, Paris, 1818, էջ 156:

⁸ Տե՛ս Arsen Soukry, Géographie de Moïse de Corène d'après Ptolemée, Venise 1881, հայերեն բնագիր, էջ 30—31 (հմմտ. պրոֆ. Ա. Գ. Արքանյան, Շիրակացու մատենագրությունը, Երևան, 1944, էջ 349):

⁹ Տե՛ս Մ. Տ. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Երևան, 1963, էջ 107:

¹⁰ Աղձնիքի լեռնաբազուկներն են՝ Սիմ (2689 մ), Անդոք (2830 մ), Մովասար, Մարաթուք (2150 մ): Այդ հսկա լեռնաբազուկները կտրվում են արևմուտքում՝ Կեցանոքի, իսկ արևելքում՝ Բաղեշի (այժմ՝ Ռահվա) լեռնանցքներով, որոնցով Հայաստանի ներքին շրջանները կապվում էին Աղձնիքի և Միջագետքի երկրների հետ (տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, ՀՍՍՀ ՔԱ հրատարակչություն, հ. 1, Երևան, 1971, էջ 23):

¹¹ Б. Б. Пиотровский, Ванское царство (Урарту), М., 1959, էջ 163—164. Նաև տե՛ս Saint-Martin, Mémoires historiques et géographiques sur l'Arménie, էջ 361, 429:

Աղձնիքի հայ բնակչության հիմնական զբաղմունքները եղել են՝ երկրագործությունը, անասնապահությունը և արհեստները, ինչպես նաև շերամապահությունը: Այդ զբաղմունքների մեջ առաջատարը երկրագործությունն էր. հիմնական մշակույթներն էին՝ ցորենը, գարին, սիսեռը, տարեկանը, գլգիլը և կորեկը: Վերջին երկուսը մշակվում էին լեռնային սակավահող շրջաններում, հատկապես Սասունում: Նախալեռնային և մանավանդ լեռնային վայրերում այդ մշակույթները պահանջում էին նուրբ ու դժվարին աշխատանք: Լեռնային հողագործության և ապրուստի մասին Թովմա Արծրունին ուշագրավ վկայություն է թողել՝ «Աստանօր սակաուր բացահայտեցից գորպիսութիւն բնակչաց լերինն. թէ՛ զիս՞րդ կամ ո՞րպիսի ոք են և ո՞րպէս՞ հնարաւորեալ յապրուստ անձանց վճարեն զկարևոր պէտս իւրեանց լի աշխատութեամբ և սաստիկ տառապանօք... և զպէտս կերակրոցն վճարեն ի սերմանց ինչ, առաւել ի կորեակ կոչեցեալ սերմանէն, զոր ոմանք ի սով ժամանակ հոց անուանեն»²¹: Մինչդեռ Աղձնիքի հարավի դաշտավայրերը հին ժամանակներից սկսած հանդիսացել են Առաջավոր Ասիայի «ամբարներից» մեկը²²:

Աղձնիքում բավական տարածված էին այգեգործությունը, պտղաբուծությունն ու բոստանային մշակույթների մշակությունը: Մ. Միրախորյանն իր ուղեգրություններում հաղորդում է, թե Բաղեշի վիլայեթում այգեգործությամբ զբաղվում էին Բաղեշի, Մուշի, Սղեբդի և Գենջի սանջակներում. Բերվարի, Նարզանի և Շիրվանի կազաններում աճում էր խաղողի այնպիսի քաղցր տեսակ, որ «շաքարի պատվույն կրնա դպչիլ»²³: Իրոք, Աղձնիքը օտար և հայկական սկզբնաղբյուրներում հիշատակվում է իբրև այգեգործության, պտղաբուծության և գինեգործության երկիր: Այս նահանգի գինու մասին հիշատակվում է անգամ ուրարտական արձանագրություններում²⁴, իսկ պատմահայր Հերոդոտի հաղորդման համաձայն, արմենների երկրից կաշեպատ նավերով գինի է արտահանվել Բաբելոն²⁵: Պատմաբանները հաստատում են, որ Հերոդոտի վկայած արմենների այդ երկիրը Մոփքն է և Աղձնիքը:

Այգեգործության հետ մեկտեղ, Աղձնիքի հայերը համարյա ամենուրեք զբաղվում էին նաև բանջարա-բոստանային մշակույթների՝ ձմերուկի²⁶, սեխի²⁷, կաղամբի, վարունգի, բամիայի, շաղգամի, ճակնդեղի, լոբու, սիսեռի,

²¹ Թովմա Արծրունի, նշվ. աշխ., էջ 202—203:
²² Գ. Ա. Քյոռոլյան, Լճե, «Բյուրակն», 1899, էջ 166 (հմտ. էլիզե Ռեկլյու, կադիստան, Հայաստան և Քուրդիստան..., Վաղարշապատ, 1893, էջ 78):
²³ Մ. Միրախորյան, Նկարագրական ուղևորություն ի հայաբնակ գավառս Արևելյան Տաճկաստանի, Կ. Պոլիս, 1884, մասն Ա, էջ 63:
²⁴ Տե՛ս Н. В. Арутюнян, Земледелие и скотоводство Урарту, Ереван, 1964, էջ 116:
²⁵ Տե՛ս Հ. Մաննդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. Ա, Երեւան, 1945, էջ 58:
²⁶ Տիգրան Մկունդը հավաստում է, թե ձմերուկի քաղը երբեմն հասնում է 60—96 հոխայի. այս ձմերուկի վրա նստող 8—10 տարեկան երեխայի ոտքերը գետին չէին հասնում (տե՛ս Տ. Մկունդ, Ամխտայի արձագանքները, Ուիճոքն Նյու Ճերզի, 1950, էջ 466):
²⁷ Տե՛ս Տիգրան Մկունդ, նշվ. աշխ., էջ 53 (հմտ. էլիզե Ռեկլյու, կադիստան, Հայաստան և Քուրդիստան..., էջ 55):

ոսպի, բակլայի մշակմամբ²⁸: Լեռնային շրջաններում, հողի սակավության պատճառով, ցանքաշրջանառություն գոյություն չունեն, իսկ հողի պարարտացումը կատարվում էր «ուժելու» կամ «գարնհոգ» անելու եղանակով²⁹:

19—20-րդ դարերի ստույգ տվյալների համաձայն, Աղձնիքն իր հողը վարող տեխնիկայի կառուցվածքով, ինչպես նաև իր տարածքային առանձնահատակություններով ազգագրական մի առանձին շրջան էր:

Ազգագրագետ Վ. Բդոյանը Հայաստանի տարածքում առանձնացրել է երկրագործական վեց շրջան: Դրանք են՝ Այրարատը, Սյունիքը, Վասպուրականը, Բարձր Հայքը, Աղձնիքը և Չորրորդ Հայքը: Նա, նկատի առնելով այն հանգամանքը, որ վարող տեխնիկայի կառուցվածքային տարբերությունները պատմական զարգացման արդյունք են, դրանք դասակարգել և ուսումնասիրել է ըստ առանձին լոկալ խմբերի³⁰, Աղձնիքի, ինչպես նաև Սյունիքի, բնիկ արորներն անթուր են, որով խստորեն տարբերվում են մյուս ազգագրական շրջանների վարող տեխնիկայից: Ինչպես հավաստում է Վ. Բդոյանը, Աղձնիքի Սանասուն գավառը հարևան Մոփքից փոխ է առել բոչիգ հյւրօրը և Տարոնից՝ ըռաղամ հյւրօրը, երկուսն էլ թրավոր:

Ինչպես մատնանշվեց, պատմական Հայաստանի հարավային շրջաններում, հատկապես Աղձնիքում և Մոփքում, հայերի հետ ապրում էին նաև այլ ժողովուրդներ, որոնք անշուշտ, թողնելու էին իրենց ազդեցությունը հայկական տեղական գործիքաշինության վրա: Դրանով պետք է բացատրել, որ Աղձնյաց հարօրների արտաքին ձևը մասամբ նման է միջագետքյան ժողովուրդների արորներին, որ բնավ նույնություն չի նշանակում, որովհետև հարօրների գործող մասերն ու կցորդման ձևերը բացարձակորեն այլ սկզբունքներով են կատարվել:

Աղձնիքում նոր հողատարածություններ յուրացնելու նպատակով կիրառվում էր նաև անտառահատման երկրագործական միջոցը, որով և բացատրվում է հարվածային գործիքների լայն տարածումը:

Այսուհանդերձ երկրագործական հիմնական գործիքը արորն էր, իր տարատեսակներով: Արորային և բրիչային տեխնիկայի միավորները հետևյալներն էին.

1. Վարող գործիքներ, որոնք տարբեր գավառներում հայտնի էին հարօր կամ խարօր (բոչիգ հարօր) և ըռաղամ հարօր անուններով (տախտակ 1, նկ. Ա. Բ, Գ, Դ): Աղձնիքում գուլթան չի գործածվել³¹:

²⁸ Տե՛ս Մ. Ն., Միլիան գավառակ (Միլիթրաղին), «Բյուրակն», 1899, էջք 166, 362, էլիզե Ռեկլյու, նշվ. աշխ., էջ 78—80, Տիգրան Մկունդ, նշվ. աշխ., էջք 141, 466—469:
²⁹ «Ուժել» և «գարնհոգ» անել, նշանակում է գոմաղբով արտը պարարտացնել: Ձմռանը գոմաղբը արտերն էին տեղափոխում դահուգներով: Պարարտացման նպատակով աշնանը կամ վարուցանքից առաջ գոմերից հեռու ընկած արտերում նաև մակաղեցնում էին խոշոր ու մանր եղջերավոր անասունները, 2—3 շաբաթ տևողությամբ:
³⁰ Վ. Բդոյան, Երկրագործական մշակույթը Հայաստանում, Երևան, 1972, էջ 207—212:
³¹ Աղձնիքից դեպի Պոնտոս արտագաղթած հայերի արորից առաջացել է հայկական այն գուլթանը, որի առը շուռ տվող թև-տախտակը դրվում էր ձախ կողմում: Թևի այդպիսի տեղադրման հետևանքով առը շրջվում էր աչից ձախ ուղղությամբ այն պարագայում, երբ Հայաստանում և Քուրդիստանում...

2. Գաղղիգ, ֆաղևանֆի ուրագ, որով «լցնում» (փխրեցնում) էին զլզլի արտերը (տախ. 2, նկ. 7):

3. Մէգ պէրնէն փիղաղ, ուրագաբերան քլունգ (տախ. 2, նկ. 5), որով փորում էին ջրի առունները, արտի խամ մնացած տեղերը, բացում առուների խոտակալած եզրերը, օգտագործում անտառահատման ժամանակ:

4. Էրգու պէրնէն փիղաղ (տախ. 2, նկ. 6), որի երկու բերաններն էլ ուրագած են և որոնցից մեկը բուխ է՝ փորելու, իսկ մյուսը սուր՝ արմատները կտրելու, ոչնչացնելու համար:

5. Էրկրե քիագ, որով հող էին փորում, առուններ մաքրում, կարտոֆիլի և շաղգամի բանջարանոցներում փխրեցում և բուկլից կատարում:

6. Ճրառունֆ, փայտե թիակ (տախ. 2, նկ. 3), որի խիստ երկար կոթը հարմարեցված էր մի կորուց մյուս կորուն հեռվից ջուր կապելու, ջրի հոսքը կարգավորելու, շիբջված տեղերը ջրելու նպատակին:

7. Սեխ, փայտե մալուխած, 23 սմ երկարության սրած բրիչ (տախ. 2, նկ. 1), որով փխրեցնում էին զլզլի արտերը և բանջարանոցները:

8. Շեղբ, (տախ. 2, նկ. 2), երկաթե տափակ, դրած կործիք էր, 33,5 սմ երկարությամբ, որով քաղհանում էին չորացած արտը, միաժամանակ փափկացնում արտի կեղևակալած երեսը:

9. Ցաֆ, հասարակ տափան (տախ. 1, նկ. 1), որ հանպատրաստից շինում էին արտերում և տափանում ցանքերը:

10. Չափուգ և գողով, կողովներ, որոնցով արտից քար և գոմից աղբ էին տեղափոխում:

11. Մանգաղ, որով քաղում էին խոտը և հնձում արտը (տախ. 1, նկ. 2):

12. Լուգ, մանգաղածև հոտոց, որով ծառի բարակ ճյուղեր ու տերևներ էին կտրում (տախ. 1, նկ. 3):

13. Գեռ, կտուցածև կեռիկ, տրը Հայաստանի տարբեր վայրերում խոտկեռ էր կոչվում: Դրանով ցորենի, կորեկի և այլնի խրձացու էին հավաքում և բարձելիս խուրձ վերցնում (տախ. 2, նկ. 4):

Կամը լեռնային շրջաններում հայտնի չէր, մինչդեռ հովտային շրջաններում այն հայտնի է եղել հնագույն ժամանակներից ի վեր: Կալսումը կատարվում էր գոռի³² միջոցով: Իսկ կալսված բերքը նախ մաղվում էր սըռատ մաղով³³, վերջինիս մաղածը ֆարմաղով³⁴ և վերջապես՝ փոկեմաղով³⁵:

տանի բոլոր գովանների թևերը դետեղվում էին դրանց աջ կողմերին ու առը շրջում էին ձախից աջ ուղղությամբ (տես Վ. Հ. Բղոյան, Պոնտոսի հայերի վարող գործիքները, ՊԲՀ, 1971, № 4, էջ 197—202:

32 Գոռին. 8—10 եղների կամ գոմեշների խումբն էր, կողբ-կողբի, միմյանցից կապված, որոնք շարքով պտտվում էին կալի վրա՝ կենտրոնում, կանգնած կամ տեղում պտտվող եղան շուրջը: Այդ դեպքը կոչվում էր բընդոր (Սասուն) կամ գում (այլ շրջաններ): Մայրերին լծվածները կոչվում էին սարդորի եզ, որոնք ամենից ավելի արագ էին պտտվում:

33 Սըռատը ամենամեծ անցքերով մաղն էր, որով առաջինը մաղում էին նոր երնած ծանծախտան հատիկը:

34 Քարմաղը միջին անցքեր ունեցող մաղն էր:

35 Փոկեմաղն ուներ ավելի փոքր անցքեր:

Ահա սրանք էին այն գործիքներն ու միջոցները, որոնցով կատարվում էին վարուցանքը, բերքահավաքը և կալսումը, արդյունքների վերամշակումը:

Աղձնիքի տնտեսության երկրորդ կարևոր բնագավառը անասնապահությունն էր, որի զարգացածության մասին վկայում են աղբյուրները և հնագիտությունը: Այսպես, Ասորեստանի թագավոր Ասարխադոնի արձանագրություններից մեկում խոսվում է Շուպրիա (Սասուն) երկրի խոշոր եղջերավոր անասունների նախիրների, ոչխարի հոտերի և հովիվների մասին³⁶: Իսկ ուրարտական արձանագրություններում հաճախ ուղղակի և անուղղակի հիշատակվում է «Ալզի» երկրի՝ մանր և խոշոր եղջերավոր անասուններով հարուստ լինելը³⁷:

Ունեոր տնտեսություններում 19-րդ դարի վերջերին և 20-րդ դարի սկզբին կային անասնապահությամբ հատուկ զբաղվող անձնավորություններ. տան փորձառու անդամներից մեկն ստանձնելով այդ աշխատանքը, դառնում էր հովիվների անձնակազմի ընդհանուր ղեկավարը: Մայրիս ամսի սկզբին, երբ սկսվում էր գյուղատնտեսական աշխատանքների ետուն շրջանը, ընտանիքի մի մասը մնում էր վարուցանք կատարելու, իսկ անասնապահները, կաթնամշակ կանանց հետ, իրենց անասուններով բարձրանում էին ամառային արոտավայրերը: Ամառանոց բարձրանալը հայտնի էր «զոզան գնալ» անունով, որպիսի երևույթը արդի ազգագրական գիտությունը հեռագնաց անասնապահությունն է համարում³⁸: Անասնապահության այս տիպը պայմանավորված էր Հայկական Տավրոսի հարավահայաց լանջերի ալպյան հարուստ բուսականությամբ և սարահարթերի մարգագետիններով: Արոտ բարձրանալիս մի քանի տնտեսություններ միանալով իրար կազմում էին օբաներ: Մեծ գյուղից դուրս էր գալիս մինչև 10—15 օբա, որոնցից յուրաքանչյուրը կազմվում էր 10—12 տնտեսությունից: Ոչխարի մեծ հոտ ունեցողները դառնում էին օբաների ղեկավարներ: Զոզաներում օբաները սովորաբար մնում էին մինչև աշուն և, արոտը բարելավելու համար, ամեն ամիս տեղափոխվում տեղից տեղ³⁹: Հովիվ էին դառնում օբաների ղեկավար ընտանիքների առանձին անդամները կամ վարձում այլոց: Վերջիններս բնամթերային կամ դրամական վարձատրությամբ պահում էին նաև օբայի մյուս անդամների ոչխարները⁴⁰: Զոզաներում ամեն մի ընտանիք ուներ իր կացարանը, որը

36 Տե՛ս АВИИУ, 67:
37 Տե՛ս АВИИУ, 23, 26:

38 Տե՛ս Ю. И. Мкртумян, Некоторые формы сообществ в армянской деревне (Պատմա-բանաս. հանդես, 1967, № 4, էջ 289), Ю. И. Мкртумян, Формы скотоводства в Восточной Армении (автореферат), М., 1968:

39 Տե՛ս Ե. Կարապետյան, Սասուն, ազգագրական նյութեր, Երևան, 1962, էջ 23:

40 Հովիվներին վարձատրելու կարգը տարբեր տեղերում տարբեր էր: Այսպես, Բոնաշենում հովիվն 3 ոչխարի համար տալիս էին 1 շափ կորեկ (1 շափը 14 կգ է), երեք փառու (շափիկ, վարտիք, արբա, մի զույգ բուճ-գուլպա) և մի զույգ տրեխ: Ոչխարատերերը պարտավոր էին հովիվին ապահովել սննդով (պատմեց Սասունի Դաշտադեմ գյուղի նախկին բնակիչ 93-ամյա Խաչատուր Խափլանյանը, որն այժմ ապրում է Թալինի շրջանի Իրինդ գյուղում): Շատախի շրջանում 20 ոչխարի համար տրվում էր 1 գառ, յուրաքանչյուր տնից՝ 1 զույգ տրեխ,

հայտնի էր կոն և խուղ անուններով: Կոնը պատրաստվում էր մազե գործվածքից, իսկ խուղը հյուսում էին քթոցի ձևով, ծառի ճյուղերից և ծածկում տերևավոր ճյուղերի տրցակներով՝ կաթիլքը և ցուրտը կանխելու նպատակով: Կոնի և խուղի ներսում շքե միջնորմներով ստեղծում էին ննջարան, որը կոչվում էր գոնտակ, և կաթնամթերքների բաժին, որը հայտնի էր կուլին անունով: Քրդական ավարառությունների հաճախակիության պատճառով, օբաները համախմբված կուռ բնակավայրի էին նմանվում, իսկ խուղերի դռնակները բացվում էին միևնույն կողմի վրա: Ավարառությունը կանխելու նպատակով անասուններին իրար էին կապում: Մազից կամ բրդից հյուսած երկար պարանի վրա օղվակ էին անում՝ 1,5 մ հեռավորության վրա օղակներ էին ըստեղծում: Յղվակն անցկացվում էր յուրաքանչյուր անասունի առաջի ոտքը և պնդացվում: Եվ այսպես՝ պարանի երկայնքով անասունները շարվում էին: Անասուններին տեղում պահելու համար պարանի կենտրոնում սրկաա էր վարսվում գետնի մեջ⁴¹: Անասնապահ ընտանիքներն անասունների կորուստ չունենալու համար դիմում էին սնտախապաշտական զանազան միջոցների⁴²:

Աղձնիքում լայն տարածում ունեին տնայնագործությունն ու արհեստները: Տիրապետելու օտար և հայկական աղբյուրներում հիշատակվում է իբրև արհեստագործության, առևտրի և մշակույթի խոշոր կենտրոն: Հետագա քաղաքական ու տնտեսական աննպաստ պայմանների հետևանքով կասեցվում է երկրի արտադրողական ուժերի զարգացումը, և արդյունաբերությունը հիմնականում ընթանում է տնայնագործական ձևերով: Ամենատարածված արհեստներն էին երկաթագործությունը, կաշեգործությունը, կավագործությունը, ոստայնանկությունը և այլն: 19-րդ դարի 80-ական թվականներին Դիարբեքի քաղաքն իր տեղական արտադրանքներով և ներմուծած եվրոպական ապրանքների ճոխությամբ համեմատվում էր Առաջավոր Ասիայի խոշորա-

հարուստ ոչխարատերերը տալիս էին նաև 1 այծենակաձ, շապիկ, բումբաճ, ապա և բուճե: Հովիվը 100 ոչխարի համար ստանում էր 10 օրվա սնունդ: Եստ ոչխարատերեր հովիվներին շներ էին տալիս, որոնք պետք է կերակրվեին տերերի ոչխարի կաթով: Հովիվն օգտվում էր յուրաքանչյուր տան 1 ոչխարի կաթից: Եթե գառնարածն էլ վարձովի էր լինում, ապա նա 30 ոչխարի դիմաց ստանում էր միայն 1 գառ: (Պատմեց Քալինի Կաթավաճոր գյուղի բնակչուհի, 1871 թ. ծնված Մարթա Մարկոսյանը):

⁴¹ Պատմեց Մարթա Մարկոսյանը:
⁴² Անասուններին շարքից ազատ պահելու համար զիպ էին պահում, որ նշանակում էր փետրվարի վերջի երեք և մարտ ամսի առաջին չորս օրերին անից ոչ մի բան դուրս չտալ: Եթե այդ օրերին մազ, բուրդ կամ որևէ գործիք ուրիշին տրվեր կամ դուրս հանվեր, հավատում էին, թե անասուններն ամռանը կորոզնոտեին: Անասունների զանազան հիվանդությունների (ժան, տաքակ, բալա, դեղվով, հաբ, Բուս և այլն) դեմ կիրառվում էին կախարդական միջոցառումներ (տե՛ս Վ. Պետրյան, Սասնա ազգագրությունը, Երևան, 1965, էջ 110):

Գյուղատնտեսության մեջ, իբրև օժանդակ տնտեսություններ, մտնում էին որոտորությունը և շերամապահությունը: Մամուլում և գրականության մեջ Արևմտյան Հայաստանի շերամապահության հարուստ շրջաններ համարվում են Դիարբեքի և Բաղեշի վիլայեթները («Մշակ», 1895, մարտի 16 և Ս-Դո, Վանի, Բիթլիսի և էրզրումի վիլայեթները, Երևան, 1912, էջ 132—133):

գույն քաղաքների հետ: Միայն քաղաքում բանող ոստայնանկների հենքերի թիվը, նշում է էլիզե Ռեկլյուն, մոտ հազար հինգ հարյուր էր⁴³:

Բաղեշն իր նպաստավոր դիրքի շնորհիվ այն միակ կետն էր, որի վրայով Վանի հյուսիսային շրջանները կապվում էին Դիարբեքի, Մոսուլի և Միջագետքի հետ: Այնտեղից երկրի տարբեր կողմերին մատակարարվում էր տեղական, «պատվական» համարվող կտավը, որը հայտնի էր բաղեշու շիլե անունով⁴⁴: Բացի կտավագործությունից, այս քաղաքը հայտնի էր ոսկերչությամբ, կոշիկակարությամբ, դերձակությամբ, երկաթագործությամբ և այլն, նրանում հիշատակվում է 1115 վաճառատուն և կրպակ, գրեթե բոլորն էլ հայերին պատկանող: Ինչպես թուրքական տիրապետության տակ գտնվող հայկական մյուս շրջաններում, այնպես էլ Աղձնիքում «առևտրական և արվեստից հրապարակներում»⁴⁵ գործողների մեծամասնությունը եղել են հայերը:

Աղձնիքում առևտուրը կատարվում էր գրաստային քարավաններով և այլ փոխադրամիջոցներով: Դաշտային մասերում տարածված էին անիվավոր, լեռնային մասերում՝ անանիվ փոխադրամիջոցները: Անիվավոր փոխադրամիջոցներից էր այսպես կոչված ԲՕՆ սելը, որը գործածվում էր մատչելի թեթույններում ու հարթություններում: Չմեռային փոխադրամիջոցներից մեկը դահուզ կամ բալխիբ կոչված սահնակն էր: Լեռնային շրջաններում հիմնական գրաստներն էին՝ բարձկան եզը, էշը և ջորին, իսկ հարթավայրում՝ նաև ձին: Փոխադրամիջոցների սույն ձևերը, ինչ խոսք, անմիջական կապ ունեին երկրի տեղադիրքի և բնակավայրերի տեղադրության հետ, իսկ բնակավայրերը, բնակլիմայական և աշխարհագրական տարբեր պայմաններում, ընդունել էին զանազան ձևեր, որոնց առաջացման վրա ազդել էին նաև հասարակական ու քաղաքական հարաբերությունները: Լեռնային շրջաններում հատկանշական է եղել գյուղական տների ցրվածությունը, իսկ հարթավայրում՝ կծկվածությունը: Լեռնային շրջաններում տների ցրվածության մասին է ակնարկում Ք. Արծրունին, գրելով. «Եւ բնակեն առանձին ըստ տունս ազգաց, և այնչափ ի բացեալ են ի միմեանց՝ մինչ թէ ոք յարանց զօրաւորաց ի բարձրաբերձ տեղաց ուժգին խանչիցէ՝ հազիւ թէ ուրեք կարիցէ առնուլ զբոմբին ձայնին, իբրև ի վիմաց ինչ արձագան լինելոյ կարծիս բերելով»⁴⁶: Սույն պարագան հակված ենք բխեցնել հետևյալ պատճառներից.

⁴³ Էլիզե Ռեկլյու, նշվ. աշխ., էջ 79, Ս. Ն., Սլիվան գաւառակ, «Բուրակն», 1899, էջ 544:

⁴⁴ «Արձագանք», 1882, № 35, էջ 544:

⁴⁵ «Մշակ», 1883, օգոստոսի 25 (հմմտ. «Արծուի Վասպուրականի», 1858, էջ 182, Գ. Արվանձտյանց, Քորոս Աղբար, մ. Բ, էջ 211):

⁴⁶ Ք. Արծրունի, Պատմութիւն տանն Արծրունեաց, Թիֆլիս, 1917, էջ 203: Այդպիսի ցրվածությունը, Մասունից բացի, հատուկ էր Համշենին: Ս. Հայկունին գրում է, որ Տրապիզոնի շրջակա լեռների և անտառների մեջ բնակություն հաստատած համշենահայերի գյուղերը «զետեղված են բարձր ու ցած լեռներու, ընդարձակ անտառներու մեջ, մեծավ մասամբ զառիվայր դիրքերու վրա: Կան տներ, որոնց շուրջը դժվարությամբ մարդ կը քայլե: Գյուղ մի 30—40 տնե կրաղկանա. քիչ բացառությամբ գյուղի տներ 1—2 ժամ երկարություն ունեցող տարածության վրա զետեղված են, ամեն մի տուն իրարմե 1—3 կամ 5 վերստ հեռուն շինված է, կան տներ,

ա. Տեղավայրի կտրտվածությունը և ավարառուների համար անմատչելիությունը, սասունցիների դարավոր պայքարով ձեռք բերված կիսանկախ վիճակը, հետևապես՝ կենցաղային ինքնապաշտպանություն սակավ անհրաժեշտությունը:

բ. Տնամերձ հողամասերի վրա տուն կառուցելու և անտառահատական երկրագործությունը զբաղվելու ավանդական սովորությունը:

Հարթավայրային շրջաններում (Արզն, Նփրկերտ և այլն) գյուղերի կրճեկրվածությունը, ազգակցական և հարևանական կցաթաղերի կազմումը բացատրվում է համայնքային պաշտպանական նկատառումներով:

Ձեռքի տակ եղած նոր նյութերը, որոնք վերաբերում են Աղձնիքի դաշտային ու լեռնային բնակավայրերին և շենքերի համալիրներին, ներկայանում են համապատասխան տարբերակներով: Սասունում, հակառակ Աղձնիքի մյուս գավառների, թոնիրն անծանոթ էր, դրան փոխարինում էր օջախը, որը հայտնի էր քվեք անունով, իսկ այն տունը, որտեղ գտնվում էր թվեքը, կոչվում էր խորընդուն (խորընտուն): Թոնրի գտնված տեղը կոչվում էր բորվանտուն: Գրեթե ամբողջ Աղձնիքում ամենաուշագրավը թորվանտան կամ խորընտան և հախոռի համատեղ լինելն էր, բաժանող մտորքի ցածրիկ պատով, 100, նույնիսկ ավելի քառակուսի մետր տարածություն: Ընդհանրապես թորվանտունը կամ խորընտունը ունիվերսալ բաժին էր, որը ծառայում էր իբրև հացատուն, ննջարան, աշխատանոց և անասուններին հսկելու տեղ: Ընդ որում, անասունների գլուխներն ուղղված էին դեպի բնակելի մասը, որը բնորոշ է Հայաստանի և ոչ մի շրջանի: Այս առումով ևս Աղձնիքն իրենից ներկայացնում է առանձին ազգագրական շրջան:

Աղձնիքի ժողովրդական տարազը, դժբախտաբար, տակավին չի ուսումնասիրված: Պատմական Աղձնիք նահանգում ավատական հին հարաբերությունների երկարաձգման և նահապետական ընտանիքի ավանդապահություն հետևանքով ազգային տարազը նույնպես պահպանել էր կարածների և նախազգարդման ցեղային շրջանից բերած առանձնահատկություններ, որոնք համապատասխանեցված էին բնակչության զբաղմունքներին և բարոյական ավանդներին:

Աղձնիքի հնագույն տարազի վերաբերյալ գրավոր առաջին վկայությունը մեզ է հասել դարձյալ թուվմա Արծրունու միջոցով, որ Սասուն գավառը նկատի ունենալով գրում է. «Եւ է զգեստ նոցա ասուխ ի ծածկոյթ մերկութեանն և օդ ոտիցն հնարաւորեն զձև կաւշկաց, ի մորթոց այծից կազմեալ, և միով կերակրով և միով հանդերձիւ բաւականանան զամառն և զձմեռն»⁴⁷:

Այդ նկարագրությունից գրեթե մեկ հազարամյակ անց, տոնական տարազի որոշակի զարգացմամբ հանդերձ, պահպանվում էր տղամարդկանց և

(որ) գրացու տունը արձակված հրացանի ձայնը անգամ չլսեր, իսկ կան միայն մի քանի գյուղեր, որոնց բնակիչները... ավազակներու երկյուղից տներն իրար մոտ շինած են» («Արարատ», 1905, էջ 738):

47 Թ. Արծրունի, էջ 203:

կանանց աշխատանքային զգեստների տարրերի՝ շալից պատրաստելու հնամենի սովորությունը: Աղձնիքի ժողովրդական ավանդական տարազը, ինչպես դիտեցինք, համապատասխանում էր նաև նահանգի աշխարհագրական դիրքին, կլիմայական փոփոխական պայմաններին: Լեռնային շրջաններում խրատաշունչ ձմռան առկայության պատճառով գերիշխում էր բրդյա, իսկ դաշտային շրջաններում՝ բամբակյա գործվածքներից կարված զգեստների գործածությունը: Կանացի տարազի մեջ իշխող ձևը երկար շրջագգեստներն էին գոգնոցի հետ, իսկ տղամարդու տարազի մեջ՝ շալե զոլավոր անդրավարտիքը, կոպիտ շալից կամ մազե գործվածքից կարված քաղախիկը՝ Թ. Արծրունու հիշատակած այժմեու տարրերով հանդերձ: Կարճ իշիկի և անդրավարտիքի վրա կապվում էր շալե թանձր գոտի: Քարքարոտ վայրերում գործածական էր դիմացկուն խառով կոշված ոտնամանը, որը պատրաստում էին կանեփի թելից⁴⁸: Որպես ազանելիքներ ծառայում էին գուլնգուլն նախշերով զարդարված բուճեքը (գուլպա), ինչպես նաև խարուկներն ու սուլերը: Տղամարդու տարազին, բացի թաղիքե քոլոզ կոշված գլխարկից, հատուկ էր նաև բրդյա գունավոր թելերով, ասեղնագործ զարդանախշերով զգալիք:

Այդ տարազն Աղձնիքում լիովին համապատասխանում էր նահապետական ընտանիքի վարք ու բարքին և բարոյական նորմերին, որոնք անցան նաև փոքր ընտանիքներին և պահպանվեցին մինչև եղեռնը:

Աղձնիքում մինչև 19-րդ դարի վերջերը և նույնիսկ 20-րդ դարի սկիզբը (հատկապես նրա լեռնային շրջաններում) փոքր ընտանիքների հետ մեկտեղ շարունակում էին գոյատևել նաև սակավաթիվ նահապետական գերդաստաններ: Այդ մեծ ընտանիքների կայունությունը պայմանավորված էր ինչպես ավատական տնտեսություններում ու մշակույթով, այնպես էլ կոնկրետ քաղաքական պայմաններով: Տնտեսությունը ուներ բնատնտեսային բնույթ, ուստի պահպանվում էին նահապետական ներփակվածության մնացորդները: 20-րդ դարի սկզբին արդեն քայքայում ապրող գերդաստանները իսպառ վերացան առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում հայերի զանգվածային կոտորածների և տեղահանության հետևանքով:

1971—73 թթ. ընտանեկան և ազգակցական հարաբերությունների վերաբերյալ մեր ուսումնասիրությունները բացահայտեցին Թալինի, Աշտարակի, Արարատի, Մասիսի և Էջմիածնի շրջաններում հաստատված աղձնիքյան բնակչության մեջ դեռևս ամուր պահպանված տեղային ավանդներ: Գաղթից հետո, մինչև կոլեկտիվացումը, նախկինում բաժանված ընտանիքների ողջ մնացած անդամները, նույնիսկ հեռավոր ազգականները, համախմբվեցին և փոքր խմբերով ժամանակավոր տնտեսություններ հիմնեցին: Վերամիավորված ընտանիքները դարձան որբերի և այրիների օջախներ: Դրանք երբեմնի ված ընտանիքները դարձան որբերի և այրիների օջախներ: Դրանք երբեմնի ված ընտանիքները հիշեցնող տնտեսություններ էին: Մինչև կոլեկտիվացումը, քանի դեռ պահպանվում էին հողային սեփականատիրական հարավացումը, քանի դեռ պահպանվում էին հողային սեփականատիրական հարաբերությունները, եռաստիճան ընտանիքները մեծամասնություն էին կազմում,

48 Վ. Պետոյան, Սասնա ազգագրությունը, էջ 169:

որոնք պահպանում էին գերդաստանական հարաբերությունների որոշ տարրեր: Սակայն կոլտնտեսությունների կազմակերպման շրջանում, փոփոխված հողային հարաբերությունների հետևանքով, գյուղական ընտանիքներն սկսեցին մանրանալ, և գերդաստանական տների մնացուկները վերջնականապես անցան պատմության գիրկը:

Այսպես, ուրեմն, Աղձնիքը իրենից ներկայացնում է առանձին ազգագրական շրջան: Այս բնորոշման համար հիմք են ծառայում բացառապես Աղձնիք նահանգին ներհատուկ հետևյալ երևույթները՝ երկրագործությունն իր ինքնուրույն տեխնիկայով ու մշակույթներով, անասնապահությունն իր առանձնահատկություններով, ինչպես նաև յուրօրինակ բնակավայրերը՝ շենքերի անկրկնելի տիպերով, տարազի ձևերով, որոնք համառոտակի նկարագրվեցին վերևում:

Р. А. НАГАПЕТЯН

АЛДЗНИК

(Историко-этнографический очерк)

Резюме

Алдзникская область—страна Алзи доармянского периода, которая впоследствии стала одним из центров образования армянского народа. В период армянских династий Арташесидов и Аршакидов Алдзник стал главным из 4 бдешхств Великой Армении с центром Тигранакерт. Эта область находилась между Четвертой Арменией, Туруберамом, Моксом и Междуречьем и имела 10 гаваров.

Главным занятием армянского населения Алдзника были земледелие во всех его отраслях, скотоводство, ремесла и кустарное производство. Причем в области сельского хозяйства для полевых территорий Алдзника было характерно земледелие и садоводство, а для горных мест—скотоводство. Ремесла, в частности металлообработка и ткачество, были широко распространены в Тигранакерте и в других крупных породах и центрах гаваров, что и обусловило оживленную торговую связь с различными областями Армении и странами Междуречья.

Для равнинных территорий Алдзника были характерны типы образованных от смешноквартальных поселений («свернутые»), а для горных районов—разбросанные типы сел.

Национальный костюм Алдзника сохранил чисто местные особенности рисунка форм и украшений.

В статье дается краткое описание представляющих важнейшую сторону социальных отношений—типов семей (гердастан, малая семья).

Հ Ը Մ Ա Ը Մ Վ Ո Ւ Մ Ն Ե Ր
Ս Մ Բ Լ Ի Կ Ա Կ Կ Ի Ի

ՕԳԵՐԵՎՈՒԹԱՐԱՆԱԿԱՆ ՄԻ ՔԱՆԻ ԲՆԱԳՐԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՁԵՌԱԳՐԵՐՈՒՄ

Հին և միջին դարերում հողագործ և անասնապահ մարդն ամբողջապես կախված է եղել բնության քմահաճույքից. ինչպիսի՞ն է լինելու եղանակն ամառնը՝ անձրև պիտի գա՞, թե՞ երաշտ է լինելու, ձմեռը կա՞րճ է տևելու, թե՞ երկարելու է: Եղանակի հետ կապված այս հարցերն աշխատավոր մարդու համար ունեցել են կենսական նշանակություն: Այդ է պատճառը, որ մարդկությունը հարկադրված է եղել որոնումներ կատարել՝ գտնել նշաններ, տրոնց հիման վրա կարող լինե՞ր գուշակություններ կատարել գալիք եղանակի մասին:

Մարդիկ բազում դարերի ընթացքում լուսնեղջյուրների գույնի և ձևերի, արեգակի շողարձակումների, կենդանիների ենթադրվող նախազգացողական ինչ-որ շարժումների և այլ երևույթների հիման վրա սահմանել են նշաններ, որոնք և հիմք են դարձել գուշակությունների համար: Եվ տարբեր դարաշրջաններում գտնվել են առանձին հեղինակներ, որոնք ժողովրդից հավաքել են գուշակողական այդ նշանները, գրի առել և նրանցից ժողովածուներ կազմել¹:

Ուշագրավ է, որ տարբեր ժողովուրդների մոտ տարբեր ժամանակներում կազմված օդերևութաբանական այդ ժողովածուները զգալի չափով նմանվում են իրար թե՛ կառուցվածքով և թե՛ պարունակած նյութի բովանդակությամբ: Եվ այդ բնական է. ժողովուրդների ստեղծագործական աշխարհում շին եղել շինական պարիսպներ, ժողովուրդները գտնվել են համագործակցության մեջ, և ամեն մի ուշագրավ նորույթ, որն օգտակար է համարվել, արագ տարածվել և բոլորի սեփականությունն է դարձել:

Օդերևութաբանական բովանդակությամբ բնագրեր են հայտնի մի շարք ժողովուրդների մատենագրություն մեջ՝ հունական, ասորական, արաբական և այլն: Նմանատիպ այդ ժողովածուները վերագրվել են տարբեր ժամանակներում ապրող մի քանի հեղինակներին:

¹ Օդերևութաբանական այդ ժողովածուներն իրենց բնույթով նմանվում են առակգրքերին. հայտնի է, որ ժողովրդի մեջ տարբեր ժամանակներում ստեղծվում են առակներ, որոնք և առանձին հեղինակների կողմից հավաքվում, ամբողջացվում են ինքնուրույն ժողովածուների մեջ: Տվյալ դեպքում ժողովածուն կազմող անձինք հանդես են գալիս ոչ թե իրրև նրա հորինողներ, այլ այն հավաքող, կազմող հեղինակներ: Այդ ճանապարհով են ստեղծվել նաև մեզ հասած և հայտնի օդերևութաբանական բնույթի ժողովածուները:

ների մասին եղած հատվածներին և եզրակացնում. «Եթե նույնիսկ այդ բնագիրը թարգմանություն է, այդ դեպքում այն հետաքրքրություն է ներկայացնում որպես «Տիեզերագիտության» աղբյուրներից մեկը»¹¹:

Հայկական և հունական բնագրերի՝ Բարթիկյանի կողմից կատարված զուգադրությունից հետո այլևս կասկածել չի կարելի, որ հայերենը, եթե չասենք ամբողջապես, ապա մեծ մասով հունական թարգմանություն է. Շիրակացին բաղել է հունական բնագրից և որոշ լրացումներ կատարել: Մեր կարծիքով, այն բոլոր «նշանակները», որոնք բացակայում են Արատոս Սուլացու բնագրում (իսկ դրանք բավականին մեծ թիվ են կազմում) հայ հեղինակը կամ վերցրել է այլ աղբյուրներից և կամ՝ լրացրել տեղական նյութերով:

Նպատակ շունենալով այժմ ըստ էության քննության առնել «Յաղագս ամպոց և նշանացի» աղբյուրների հարցը, մենք ուզում ենք մեր վերապահությունը հայտնել այն խնդրում, թե հայ հեղինակը օգտվել է Արատոսի այն բնագրից, որի ընդօրինակությունը նա վերահրատարակել է իր հոդվածի հավելվածում¹²:

Արատոս Սուլացու աշխատության առաջին մասը հիմնականում Զևսի գովերգումն է, որն, անշուշտ, անընդունելի կարող էր համարվել քրիստոնեության մատենագիրների համար: Սակայն այդ աշխատության այն մասերը, որոնք պարունակում էին զուտ օդերևութաբանական «նշանակներ», Շիրակացու շատ առաջ օգտագործվել և մեկնաբանության առարկա էին դարձել քրիստոնեության հույն, ասորի և լատին հեղինակների կողմից: Օդերևութաբանական այդ նյութերը, ինչպես պարզված է, մուծված են եղել IV դարում կազմված հանրահայտ «Գյուղատնտեսական հանրագիտարանի» մեջ, որը գիտությունը հայտնի է «Γεωπονικά» անունով: Այդ հանրագիտարանի առաջին գրքի երկրորդ գլխի՝ «Հավ եղանակի նշանակները», երրորդ գլխի՝ «Վատ եղանակի նշանակները» և չորրորդ գլխի՝ «Զմրան երկարատևությունը ցուցանող նշանակները» պարունակած բոլոր նյութերը վերցված են եղել Արատոս Սուլացուց¹³: Հայտնի է նաև, որ հունարեն այդ հանրագիտարանը վեցերորդ դարում ասորերեն է թարգմանվել ասորի գիտնական Սարգսի (Սերգիոսի) կողմից¹⁴: Ասորական այդ բնագիրը IX դարում հիմք է ծառայել արաբական թարգմանության համար, որից և սկիզբ է առնում հայկական «Գիրք վաստակոց»¹⁵: Ասել, թե Անանիա Շիրակացին ծանոթ չէր «Գեոպոնիկայի» IV—VII դարերում հունարեն և ասորերեն լայն տարածում ստացած բնագրին, թե նա շրջանցել է վաղ քրիստոնեական շրջանում մշակված ու քաղաքացիությունը ըս-

11 Анания Ширакаци, Космография, перевод с древнеармянского, предисловие и комментарии К. С. Тер-Давтян и С. С. Аревшатян, Ереван, 1962, стр. 26.

12 «Բանբեր մատենադարանի», № 7, էջ 333—357:

13 Տե՛ս «Геопоника» перевод Е. Э. Липшица, М.—Л., 1960, էջ 40—42:

14 Նույն տեղում, էջ 6—7:

15 «Գիրք վաստակոց» Γεωπονικά — թարգմանություն նախնեաց յարաբացի լեզուէ, Վենետիկ, 1877 թ.:

տացած այդ բնագիրը և դիմել իրենից ավելի քան ինը դար առաջ գրված հեթանոս հեղինակի բնագրին, այն է հիմք վերցրել և թարգմանել ըստ իր նախասիրությունների, դժվարանում ենք: Մեր այս կասկածանքն ավելի հավանական կդառնա, եթե նկատի ունենանք, որ այդ նույն «Գեոպոնիկա»-ից Շիրակացին թարգմանել է այլ նյութեր ևս: Դրանցից է, օրինակ, Գիոնիսիոսին վերագրվող մի աշխատություն, որը վերնագրված է «Հողմերի անունները և այն մասին, թե ինչպիսին են նրանք և որտեղից են նրանք փչում»¹⁶: Այդ բնագիրը Շիրակացու «Տիեզերագիտության» մեջ հայտնի է «Յաղագս հողմոց» վերնագրով¹⁷:

Այսպիսով, հավանականն այն է, որ Շիրակացին օգտվել է ո՛չ թե անմիջապես Արատոս Սուլացու՝ Բարթիկյանի մատնացույց արած չափածո բնագրից կամ նրանից առաջ ապրած Եվդոքոսու Կնիդացու մեզ չհասած աշխատությունից, այլ «Γεωπονικά»-ի մեջ Արատոսից բերված բնագրի ընդարձակ մի ընդօրինակությունից:

Հ. Բարթիկյանը փորձել է մերժել նշված աշխատության առնչությունը Անանիա Շիրակացու հետ: Քննադատելով Գ. Արքայազանին այն բանի համար, որ նա տվյալ աշխատության թարգմանիչ-հեղինակ է համարել Անանիա Շիրակացուն, նա պահանջում է հրաժարվել այդ մտքից. «...ժամանակը չէ՞ արդյոք,—գրել է նա,—որ վերջապես ձերբազատվենք ողջ հայ միջնադարի ճշգրիտ գիտությունների մասին խոսելիս սոսկ Անանիա Շիրակացու անունը հղովելուց»¹⁸:

Գ. Տեր-Մկրտչյանը, ինչպես հայտնի է, «Յաղագս ամպոց և նշանաց» աշխատությունը Շիրակացու հեղինակությունն է վերագրել ոչ անհիմն նախասիրություններով: Նա հանգամանորեն ուսումնասիրել է բնագիրը և Շիրակացուն վերագրելու համար մատնացույց արել հետևյալ փաստերը.

ա. Տվյալ երկը հանդիպում է Շիրակացու աշխատությունների մեջ. «ՄԱ—ՀԳ հոդվածներն ամբողջապես թվում են լինել Շիրակացունը: Համենայն դեպս եր[ես] 5բ ՀԳ-րդ հոդվածի վերնագրում կարգում ենք Անանիայի անունը»¹⁹:

բ. «Այդ բանին երկրորդ ապացույց կարող են համարվել գրությունն նյութը և լեզուն»²⁰:

գ. «Բայց վերջնական և ավելի դրական ապացույց այս գրության Շիրակացունը լինելուն գտնում եմ ես նույն հեղինակի գլխավոր երկասիրության («Յաղագս երկնի» Հր. Պատ. եր. 34) մեջ»²¹:

16 «Геопоника», էջ 46:

17 ՄԱՄ, ձեռ. № 3082, Բ. 473:

18 Հ. Մ. Բարթիկյան, Դարձյալ Շիրակացուն վերագրված «Յաղագս ամպոց և նշանաց» աշխատության մասին (տե՛ս ՊԲԶ, 1971 թ., № 4, էջ 144):

19 Գ. Տեր-Մկրտչյան, Անանիա Շիրակացի (առանձնատիպ), էջ 1:

20 Նույն տեղում, էջ 2:

21 Նույն տեղում:

դ. Շիրակացու այլ աշխատությունից բերված հատվածների համեմատությունը «Յաղագս ամպոց և նշանաց» բնագրի հետ²²:

Հ. Բարթիկյանը փորձել է գիտականորեն խախտել անվանի բանասերի առաջ քաշած այս կովաններից մեկն ու մեկը: Պիտի ասենք՝ ոչ, ուստի նրա եզրակացությունը ինչ-որ տեղ հայտարարության բնույթ ունի:

Չենք ժխտում, Անանիա Շիրակացին մեծ շափով օգտվել է անտիկ գիտնականների աշխատություններից: Հայաստանում VII դարում բնական գիտությունների գծով չկային դեռ շատ ու քիչ հասուն աշխատություններ և ուսումնասիրություններ կատարելու նպատակով պայմաններ: Շիրակացին, որ անտիկ առաջավոր գիտության երկրպագուներից մեկն է, բնական է, պետք է օգտվեր նրանից՝ հիմք դնելու համար բնական գիտություններին իր հայրենի երկրում: Ի՞նչ շափով է Շիրակացին օգտվել անտիկ գիտնականներից, այդ հարցը պետք է ուսումնասիրել առանց նախապաշարման ու կրքի, առանց այս կամ այն հայ հեղինակի վրա սովեր նետելու միտումի²³:

Օգտվելով առիթից, կուզենայինք բարեկամական մի քանի դիտողություններ անել Հ. Բարթիկյանին՝ նրա կիրառած աղբյուրագիտական մեթոդի առթիվ: Գովելի համարելով նրա խստապահանջությունը ուրիշների նկատմամբ՝ աղբյուրները հարազատորեն և անթերի ներկայացնելու խնդրում, ցանկալի էր, որ նույն խստապահանջությունը նա կիրառեր նաև իր նկատմամբ: «Պատմա-բանասիրական հանդեսի» 1971 թվականի № 4-ում տպագրված հոդվածում բերված գրաբար մեջբերումներում, կարելի է ասել, չկա մի նախադասություն, որ ուղղագրական սխալ կամ նախադասության աղճատում չունենա: Անհրաժեշտ ենք համարում նրանցից մատնացույց անել մի քանիսը:

135-րդ էջում, տող 7—8, բերված է. «...թէ սուրբ են եղջերքն և շիկագոյն՝ հողմային նշանակէ»: Պետք է լինի՝ «...թէ սուրբ են եղջերքն և շիկագոյն՝ հողմային նշանակեն»:

Նույն նախադասության վերջից, առանց կախման կետերի, կրճատված է նախադասության շարունակությունը, ուր նշված է լուսնի նման ձևով երևա-

²² Նույն տեղում, էջ 2—3:

²³ Կար ժամանակ, երբ հայագիտության մեջ քննադատության հիմնական թիրախը Մովսես Խորենացին էր. հասնողն իր գիտականությունը ցույց տալու համար վերցնում էր նրա «Հայոց պատմությունից» որևէ հարց և տեղի-անտեղի քննադատում Պատմահորը: Այժմ փոխվել են դերերը. Շիրակացին է քննադատության տակ վերցվել. «Աշխարհացոյցը» Շիրակացունը չէ, այլ անանուն և անծանոթ մի հեղինակի, «Ժամանակագրությունը» Շիրակացունը չէ, այլ Փիլոն Տիրակացունը, «Աստղաբաշխական երկրաչափությունը» Շիրակացունը չէ, այլ անծանոթ մի հեղինակի և այլն:

Յավալի է ասել, որ Շիրակացու աշխատությունները հեղինակազրկողներից շատերը, ըստ էության, քաջածանոթ չեն Շիրակացու մատենագրությանն ամբողջության մեջ և նրա գործածած լեզվին, չեն թերթել նրա աշխատությունների ձևագիր ընդօրինակությունները, հանդես են գալիս խախտա աղբյուրագիտական կովաններով և արդյունքը լինում է այն, որ նրանք ոչ միայն չեն օգնում մով հարցերի լուսաբանմանը, այլ խանում և խճճում են արդեն պարզաբանված հարցերը:

լու պատճառը «...վասն խառնուածոյ սեալ քաննը ամպոյն ի հայելիս պայծառութեան լուսոյն շիկագոյն երեւի»:

Նույն էջում, տող 15 ներքևից. «Յորժամ. Գ. օրեայ է լուսինն և եղջերքն ոչ ի ներքս խոնարհեալ...»: Պետք է լինի. «Յորժամ, Գ. օրեայ է լուսին եւ եղջերք ոչ ի ներքս խոնարհեալ...»:

Նույն նախադասության միջից «հողմոց նշանակ է» բառերից հետո, առանց կախման կետերի, պոկված և դուրս է թողված հետևյալ պարբերությունը. «Վասն որոյ ի սկզբանէ կանգնեն եղջերքն վերածգեալ յաւոցն, որպէս երեւի քե յաւոցն ձգի ի վե», ոչ քեր հողմոց նշան, այլ սեալոյս հողմոց նշան, որ է հիւսիսային և լիւփայի»:

Նույն էջում, տող 13—14 ներքևից. «հողմոյ», փոխ. «հողմոց», «թէ», փոխ. «թե», «այլ», փոխ. «այդ», «երևին», փոխ. «երևին»:

Նույն էջում, տող 1—3 ներքևից. «զյուզմունս», փոխ. «զյուզմունս», «զառաջինն», փոխ. «զառաջին[ն]», «և աւոց» «և աւոց»:

էջ 136, տող 17 ներքևից. «հեցգետնոյն» փոխ. «հեցգետ[ն]ոյն», Նույն էջում, տող 18 «Մսուր»-ը շղատառ:

Նույն էջում, տող 15 «...էջ կոչին՝ երևին» փոխ. «էջն կոչին՝ երևին»:

Այդ նույն նախադասության վերջից կտրված և դուրս են թողնված հետևյալ բառերը. «զյուզմունս ամպոց նշանակէ»:

Նույն էջում, տող 3 ներքևից. «մրտխղճին», փոխ. «մոտխղճին», «անձրև», փոխ. «անձրև», «նշանակէ», փոխ. «նշա[նակ է]»:

Նույն էջի տող 2 ներքևից. «Յորժամ ծիծառունք» նախադասությունը պետք է լինոր նոր տողից: «...և զթևան ի ջուր հարկանեն...», փոխ. «...եւ զթևան ի ջուրն հարկանեն...»:

Նույն էջի տող 1 ներքևից. «նշանակէ», փոխ. «նշա[նակ է]»:

Ավելորդ ենք համարում մատնացույց անել նման կարգի այլ տառասխալներ և նախադասության աղճատումներ: Դրանք, իհարկե, էական նշանակություն չունեն վիճելի հարցի խնդրում, բայց ներելի չեն բնագրի հետ գործ ունեցող մասնագետի համար, մանավանդ՝ երբ նման սխալանքների համար այլոց քարկոծում ես:

* * *

Շիրակացու «Յաղագս ամպոց և նշանաց» աշխատությունը հայոց գյուղատնտեսության պատմության համար բացառիկ արժեք ներկայացնող բնագիր է: Մեր մատենագրության մեջ, ինչպես ասացինք, հանդիպում են օղբերգիկ վեպաբանական բովանդակությամբ այլ բնագրեր ևս: Յանկանալով այդ նյութերը դնել լայն շրջանառության մեջ, անհրաժեշտ նկատեցինք նրանցից մի քանիսը հրատարակել նույն հոդվածի հավելվածում:

Օրերնութարանակամ այդ նյութերից արժեքավորը Մաշտոցի անվան մատենադարանի № 1973 ձեռագրի պարունակած բնագիրն է (թ. 225 ա—228 բ), որը Շիրակացու «Յաղագս ամպոց և նշանացի» տարբերակներից մեկն է:

Այդ բնագրի մասին առաջին անգամ տեղեկություն հրատարակել է Գ. Աբգարյանը՝ նրանից հրատարակելով 14 օգերևութաբանական նշաններ, որոնք բացակայում են Շիրակացու թերի բնագրում²⁴: Ձեռագիրը գրված է Երզրնկայում, 1342 թվականին, Գրիգոր գրչի կողմից: Օգերևութաբանական այդ բնագիրը խորագիր չունի: Լուսանցքում միայն երևում են «վս... նայ... դա... լու... տյ» տառերը՝ կողքից կտրած էջի վրա, որոնք հնարավոր չեղավ ամբողջացնել: Այժմ այդ բնագիրը հրատարակվում է ամբողջությամբ:

Այդ նույն ձեռագրի թ. 253 բ—254 բ-ից հրատարակում ենք օգերևութաբանական մի այլ բնագիր, որն ունի «Ամպի նշան այս է, որ թոն կոչի» խորագիրը:

Ձեռագրերում մի շարք ընդօրինակություններով հանդիպում է «Յաղագս ամպոց և երկնից նշանաց» վերտառությամբ օգերևութաբանական փոքրիկ մի բնագիր: Այն ընդօրինակված է Մաշտոցի անվան մատենադարանի հետևյալ ձեռագրերում.

1. № 679, թ. 210ա—211բ. «Յաղագս ամպոց և երկնից նշանցն այս է.— յորժամ արևմտից կողմն կարմիր տեսանես, մինչև ի վաղն անձրև գայ...»: Ընդօրինակել է Գրիգոր Երևանցին, 1660 թ.:

2. № 35, թ. 168 բ—169ա. «Յաղագս ամպոց յերկնից նշան» (նման նախորդ բնագրին): Ընդօրինակել է Յակոբ գրիչը XVII դարում (1642 թվականից առաջ):

3. № 3206, թ. 169 բ—170ա. «Յաղագս ամպոց և երկնից նշանացն:— Յորժամ յարևելից կողմն կարմիր տեսանես...» (նմանվում է № 679 ձեռագրի բնագրին): Ընդօրինակված է Խաչատուր Երեցի կողմից XVI դարում:

4. № 3260, թ. 801բ—803բ. «Յաղագս ամպոց և երկնից նշանաց:— Յորժամ ի յարևելից կողմն կարմիր տեսանիս...»: (նմանվում է № 679 ձեռագրի բնագրին): Ընդօրինակված է XVII դարում, Մարկոս գրչի կողմից:

5. № 8255, թ. 31ա—32ա. «Յաղագս ամպոց և երկնից նշանաց:— Յորժամ յարևմտից կողմն կարմիր տեսանես...»: (նմանվում է № 679 ձեռագրի բնագրին): Ընդօրինակել է Մինաս քահանան 1756—1792 թվականներին:

6. № 8507, թ. 179ա—180ա. «Յաղագս ամպոց և նշանաց:— Յորժամ ի յարևմտից կողմն կարմիր տեսանես...» (նմանվում է № 679 ձեռագրի բնագրին): Ընդօրինակել է Մինաս գրիչը, 1671—1673 թվականներին:

7. № 8611, թ. 91բ—93ա. «Յաղագս ամպոց և երկնից նշանացն:— Յորժամ յարևմտից կողմն կարմիր տեսանես...» (նմանվում է № 679 ձեռագրի բնագրին): Ընդօրինակված է XVII դարում (հավանական է 1634 թվականին): Գրիչը հայտնի չէ:

8. № 8613, թ. 33բ—34ա. «Յաղագս ամպոց երկնից և նշանաց:— Յորժամ

²⁴ Գ. Աբգարյան, նշվ. աշխ.: Ի դեպ, № 1973 ձեռագիրը մեզ ծանոթ ժողովածուներից է այդ ձեռագրից մի քանի բնագիր ենք հրատարակել, բայց չենք նկատել Գ. Աբգարյանի մատնացույց արած «Յաղագս ամպոց և նշանաց»-ի այս նոր ընդօրինակությունը: Այս փաստը կրկին անգամ վկայում է, թե դեռ ինչքան նոր խոսք ունեն ասելու հայկական ձեռագիր ժողովածուները, որոնք վրիպել են հայագետների ուշադրությունից:

ժամ յարևմտից կողմն կարմիր տեսանես...» (նմանվում է № 679 ձեռագրի բնագրին): Ընդօրինակված է Հովհաննես գրչի կողմից, 1751 թվականին:

Չորրորդ օգերևութաբանական բնագիրը հրատարակվում է ՄԱՄ-ի № 2678 ձեռագրից (թ. 311բ—312ա): Այդ փոքրիկ բնագիրն ամբողջությամբ հրատարակել է Գ. Տեր-Մկրտչյանը և ցույց տվել նրա աղբյուրը Շիրակացու «Յաղագս ամպոց և նշանաց» աշխատությանը: Ձեռագիրն ընդօրինակված է XV դարում, Մատթեոս գրչի կողմից:

Այդ նույն ձեռագրից (թ. 341ա—341բ) հրատարակում ենք օգերևութաբանական մի այլ բնագիր, որն ունի «Յաղագս եղջերաց լուանի» խորագիրը:

Ա. Գ. ԱՐԲՍՆԱՍՅԱՆ

ՄԱՄ, ձեռ. № 1973, թ. 225ա—228ա

Յորժամ ծագէ ամպ յարևմտից՝ անձրև նշանակէ:

Յորժամ ընդ երեկս երկինք կարմրանան՝ զպարզ գուշակեն:

Յորժամ ընդ առաւաւտս՝ զանձրև գուշակեն:

225բ

Յորժամ ընդ ծագել արեգական մթազոյն ելանէ և արեւագոյն՝ արեւն և կայծակն նշանակք ունիցին ճառագայլթք՝ ըստ փոփոխմանց խոտաշունչ աւոոց: Եւ եթէ ի նմին կերպարանս կայցցէ, և աւղն պղտորեալ և յուզեալ, և ոչ յստակասցի, և գոյնն մթազոյն, ոչ լրթուասցի, և հողմքն ևս խոտաշունչը յաւելցին և ամպքն ևս քան զևս բազմասցին՝ յերկար խոնաու և զսաստիկ անձրևաց նշանակէ:

Յորժամ այս ամենայն կերպարանք միաժողով երևեսցին, և յորժամ շուրջ բակ ունիցի լուսին յամպոց և մոայլ յարեգակն, յաւոոց յերկիր առաքին և կամ զարամուրս՝ բքոց և զդառնաշունչ հողմոց ամբոխելոց նշանակեն:

Յորժամ ամպոյ յամպ մտանէ և ելանէ արեգակն և ջերմակիժ շող ամպն յերկիր առաքելով՝ զխոնաուութիւն աւոոց նշանակէ:

Յորժամ աղեղն յամպն երևեսցի երփն-երփն գունով, և զամպսըն որպէս զգաւազանս ձգեալ, զսաստիկ անձրև և զ[յ]որդութիւն նշանակէ:

Յորժամ ի մահեկի յեղջիրսն զնշան կարմրութեան կամ մըթար ունիցի, շուրջ բազում հոսի և հարաւ յորդաշունչ բռնութեամբ յաւոոց բարբառի:

Յորժամ աստեղքն, որ պիղազէսն կոչին խաւարտազոյն երևին, ձմերային աւղ նշանակէ:

Յորժամ անդունդը շրջանս առնուն և խորն պայծառ երևի՝ զհարաւ նշանակէ:

Յորժամ կրնակմարն ընդ արևմուտս կրկնակ երևի՝ զանձրև նշանակէ:

Յորժամ արագիլ ի ծովէ կողմանէ յանկարծակի փախչի զարհուրելով և ձայնս արկանելով՝ զամպ նշանակէ: Եւ վասն էր՝ փախչի. զի նախ ճանաչէ զխռովութիւնն:

Յորժամ կեփիկս ի մայրիս ընդդէմ միմեանց թռչին զարհուրելով՝ զհողմ նշանակէ: Եւ կեփիկս այս փոքրիկ մի հաւ է խլիկ՝ ի շնչմանէ աւդոյ շարժի:

Յորժամ մրտմունք և սագք ի ցամաք ելանեն և զթևսն կուտեն՝ հողմ նշանակէ:

Յորժայ ծովային կամ գետային հավք անդադար մրխողճին որպէս թէ հաւասար ջրոցն լինին՝ անձրև նշանակէ:

Յորժամ ծիծուներ առ լճով թռչին և թևան ստէպ ի ջուրսն հարկանեն՝ զյուզմունս նշանակէ:

228ա

Յորժամ/գորտք ժողովին և գոչիցեն՝ զամպս նշանակէ:

Յորժամ աղաղանջք ձայն առնեն ընդ առաւառս՝ ձմեռն նշանակէ:

Յորժամ ագուար գետս մխրճին ուսովքն հետ և կամ լուանին՝ զամպս նշանակէ:

Յորժամ արջառք յերկինս գլխամբարձեն և զցուկունսն ի վեր ունին և զաւղն հոտոտեն՝ զանձրև նշանակէ:

Յորժամ ընդանի հաւք կտուին և գոչեն՝ անձրև նշանակէ:

Յորժամ ճանճք սրագոյնս խածանեն և զնոյն արիւնս ծծեն յորդորելով՝ զանձրև նշանակէ:

Յորժամ ի ծայրս լերանց միայն նստիցի ամպ և այլ ամենայն աւդքն անամպ են՝ յորմէ կողմանէ թերի երևի՝ թէ գոյ ամպ՝ անդի կողմանէ լինելոց է հողմ:

Յորժամ աստեղք որպէս պտուպողակ երևին և շարժին երկար և ի շարժելոյ շիկանան՝ սաստիկ հողմ նշանակէ:

Յորժամ ճրագի հուրն հանդարտ ելանէ և յորժամ բուէճք հանդարտաձայն են՝ զսպառումն ձմերան նշանակէ:

Յորժամ պարզ է և աստեղքն խաւարչուտ երևին առանց ամպո տեսանելո, այլ միայն ի մլարէ առագաստեալ լինի և ոչ լուսին ինչ լեալ պատճառ թխութեանն, զոր արժան է կարծել՝ չէ խաղաղութեան նշան, այլ՝ ձմերան:

Յորժամ ագուար ցայգ ձայնեն՝ զամբ նշանակէ:

Յորժամ խոյք յերեկ աւրեայ բառաչեն՝ զամպ նշանակէ:

Յորժամ պարզ է և սարդի ոստայնն նուրբ երևին՝ յանաւոր աւդոց լինին:

228բ

Յորժամ հուր թխագոյն ելանէ ի ճրագացն առ պատրոյկովն՝ կորեկի նման հիւթ լեալ, որպէս զձիւն անաւորեալ, զձմեռն նշանակէ:

Յորժամ կայծինքն պայծառ և ի միջին թուխ՝ զամպ նշանակէ: Յորժամ արջառ և այլ անասունք զերկիր փորեն՝ զդէմս ի հարաւ արարեալ՝ զձմեռն նշանակէ, վասն որոյ յԱստուծոյ խնդրելի է, զի մի շատ փորեսցեն, զի զսաստիկ ձմեռ նշանակէ:

Եւ յորժամ սակաւ փորեն՝ շլինի սակաւ շափաւոր ձմեռն. ոչ կարի ցամաքին և ոչ կարի ձիւնաբեր:

Յորժամ եզինք ջոկեալ զուղորդն՝ ճանապարհն կայտուելով երթան՝ տլարածականացն հանդիստ ցուցանելով՝ զձմեռն նշանակէ:

Յորժամ մկունք կայտուելով ստէպ ստէպ երթան ի տուն՝ ձմեռն նշանակէ:

Յորժամ շունք զերկիր փորեն՝ զձմեռն նշանակէ:

ՄԱՄ, ձեռ. № 1973, ք. 233բ—234բ

Ամպի նշան այս է, որ թան կոչի:

Զի լուսինն թէ կարմիր կա և հրագոյն երակն, խիստ ցուրտ գա: Իսկ եթէ զամենայն աւուրսն լուսինն թ կարմիր բակ ձգի ամպագոյն՝ թան սաստիկ գայ, մանաւանդ թէ մթար ևս իցէ երակն լուսին:

254ա

Թէ հիւսաւային կտուցն ի վեր է և հարաւայինն ի խոնարհ, որպէս թէ ընդ հարաւ հայի լուսին՝ զանձրև նշանակէ:

